1941.
1942
1943
1944

Քսան տարի
Ետք

1-ին հատոր - Կ

84
Դ-60

1925

ԱՂԵՔՍԱՆԴՐ ՏԻՒՄԱ

Քսան Տարի Ետք

ԵՐՐՈՐԴ ՀԱՏՈՐ

Թիւ 6
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ
Ե. Մ. ՍԷԹԵԱՆ

1926
Կ. ՊՈԼԻՍ

Յ. Մ. ՍԷԹԵԱՆ
ՏՊԱՐԱՆ
ԿԱԶՄԱՏՈՒՆ
ԹՂԹԱՎԱՃԱՌԱՏՈՒՆ
Կ. ՊՈԼԻՍ, ԶԱՔՄԱՔՃԸԼԱՐ
N° 63

ՔՍԱՆ ՏԱՐԻ ԵՏՔ

Ա.

ՍՈՒՐԲ ԷՕՍԴԱՇԻ ՄՈՒՐԱՑԿԱՆԸ

Տ'Արդանեան հաշուեր էր թէ անմիջապէս Բալէ Րուայեալ չերթալով, ի՛նչ արդիւնք պիտի ստանար. Քոմէնժի ժամանակ առեր էր իրմէ առաջ հոն երթալու, և հետեւապէս Կարտինալին իմացնել թէ ինք տ'Արդանեան և իր բարեկամը ինչ մեծ ծառայութիւններ մատուցեր են նոյն առաւօտ Թագուհիին կուսակցութեան։

Ուստի երկուքն ալ շատ սիրով ընդունեց Մազարէն, որ մեծ գովեստներ շռայլեց և յայտնեց թէ իւրաքանչիւրը իրենց փափաքներուն ճամբուն կէսը հասեր են արդէն, այսինքն տ'Արդանեան իր հրամանատարութեան և Բորթոս ալ իր սեպուհութեան,

Տ'Արդանեան այս ամէն բաներէն աւելի դրամը նախադաս պիտի համարէր, վասնզի գիտեր որ Մազարէն շուտով կը խոստանար և դժուարաւ կը կատարէր. հետեւաբար Կարտինալին խոստումները իբրև պարապ յոյսեր կը նկատէր. սակայն դարձեալ Բորթոսի առջև գոհունակ երես մը ցուցուց, վասնզի չէր ուզեր զանիկա վհատեցնել։

Մինչդեռ երկու բարեկամներն Կարտինալին քովն էին, Թագուհին զանիկա իր մօտ հրաւիրեց. Կարտինալը մտածեց որ իր պաշտպաններուն եռանդը կրկնապատկած պիտի ըլլայ եթէ Թագուհիին շնորհակալիքը ստանալ տայ. ուստի նշմար ըրաւ անոնց որ ետեւէն երթան։ Տ'Արդանեան և Բոր-

թօս իրենց փոշոտ և պատռտած հագուստը ցոյց տուին անոր, բայց Կարտինալը գլուխը ցնցեց։

—Այս հագուստները, ըսաւ Մազարէն, աւելի կ'արժեն քան թէ այն պալատականներունը՝ զոր Թագուհիին մօտ պիտի գտնէք, վասնզի ատոնք ճակատամարտի զգեստներ են։

Տ'Արդանեան և Բօրթօս հնազանդեցան։

Աւստրիոյ Տան Աննայի արքունիքը բազմամարդ էր, զուարթ ու աղմկալի, վասնզի հարկ էր գիտել որ՝ Սպանիացիին վրայ յաղթութիւն մը տանելէն ետք՝ ժողովուրդին վրայ ալ յաղթութիւն մը շահեր էին։ Պրուսէլ Բարիզէն դուրս տարուեր էր առանց ընդդիմութեան և նոյն պահուն Սէն-Ժէրմէնի բանտարանը պիտի գտնուէր անշուշտ, և Պլանմէնիլ որ անոր բռնուած միջոցին ձերբակալուեր էր, և տար ալ ձերբակալութիւնը անշշուկ և ծածուկ կատարուեր էր, Վէնսէնի ամրոցը փակուած էր։

Բօմէնժ Թագուհիին մօտ էր, որ անոր արշաւանքին մանր պարագաներուն վրայ հարցուփորձ կ'ընէր. ամէն մարդ անոր պատմութիւնը մտիկ կ'ընէ. երբ Կարտինալին ներս մտած միջոցին՝ անոր ետեւը տեսաւ տ'Արդանեանը ու Բօրթօսը, Բօմէնժ տ'Արդանեանի կողմը վազելով.

—Ո՛հ, տիկին, ըսաւ, ահա մարդ մը որ ինձմէ աւելի լաւ կրնայ պատմել այս բաները, վասնզի իմ ազատարարս է ան։ Եթէ անիկա չըլլար, հաւանաբար հիմա Սէն-Գլուի ուռկաններէն բռնուած պիտի ըլլայի, վասնզի ապստամբներուն հաստատ միտքն էր զիս գետը նետել։ Տ'Արդանեա՛ն, խօսէ՛, դո՛ւն խօսէ։

Հրացանակիրներու տեղակալ ըլլալէն ի վեր՝ տ'Արդանեան թերեւս հարիւր անգամ Թագուհիին նոյն սենեակին մէջ գտնուեր էր, բայց ան երբեք իրեն խօսք ուղղած չէր։

—Լա՛ւ, ուրեմն, պարոն, այնպիսի ծառայութիւն մը ինծի ընելէն ետք ի՞նչպէս լուռ կը կենաս, ըսաւ Աննա Թագուհին։

—Տիկի՛ն, պատասխանեց տ'Արդանեան, ուրիշ բան մը չունիմ ըսելու, եթէ ոչ կեանքս Ձեր Վեհափառութեան նուիրած ըլլալս, և երջանիկ պիտի ըլլամ զայն ձեզի համար կորսնցուցած օրս։

—Գիտեմ ատիկա, պարոն, գիտեմ, ըսաւ Թագուհին, և շատոնց ի վեր գիտեմ, հետեւապէս սաստիկ ուրախ եմ որ իմ համարման ու երախտագիտութեան այս նշանը հրապարակաւ քեզի կը յայտնեմ։

—Ներեցէք ինծի, տիկին, ըսաւ տ'Արդանեան, որ անոր մէկ մասը իմ բարեկամիս դարձնեմ, ան որ ինծի պէս Դրէվիլի գունդին վաղեմի հրացանակիրն էր (և այս խօսքը շեշտեց) և հրաշքներ գործեց։

—Ի՞նչ է պարոնին անունը, հարցուց Թագուհին։

—Հրացանակիրներուն մէջ, ըսաւ տ'Արդանեան, Բօրթօս կը կոչուէր (Թագուհին դողդղաց), բայց իր ճշմարիտ անունը Տիւ Վալլօն ասպետ։

—Տը Պրասիէօ տը Բիէրֆօն, աւելցուց Բօրթօս։

—Այս անունները շատ են և չպիտի կրնամ յիշել ամէնն ալ և միայն առաջինը պիտի յիշեմ, ըսաւ Թագուհին շնորհալիօրէն։

Տ'Արդանեան երկու քայլ ետ քալեց։

Նոյն պահուն Տեղապահին գալուստը իմաց տուին։

Զարմացման ճիչ մը ելաւ արքունական այս խումբին մէջ։ Թէև Պ. Տեղապահը նոյն առտուն իսկ քարոզ տուեր էր, սակայն ամէն մարդ գիտէր որ Պարսատիկի կողմը շատ կը հակէր, և երբ Մազարէն խնդրեց Բարիզի արքեպիսկոպոսէն որ իր քեռորդին քարոզի ղրկէ, անշուշտ Պ. Ռէցի իտալական ձեւով հարուած մը տալ էր միտքը, հարուած՝ որ իրեն մեծ զուարճութիւն կը պատճառէր։

Արդարև՝ Նօթր-Տամէն ելնելուն՝ Տեղապահը դէպքը իմացեր էր։ Թէև գլխաւոր Պարսաւորներու հետ գրեթէ միացեր էր, սակայն այնչափ առաջ չէր գացեր, և կարող էր արքունական կողմը դառնալ եթէ արքունիքը իր փառասիրած առաւելութիւնները շնորհէր, և որոնց հասնելու համար տեղապահութիւնը ճամբայ մըն էր։ Պ. Ռէց իր մօրեղբօր տեղ Բարիզի

արքեպիսկոպոս ըլլալ կ'ուզէր, և միանգամայն Մազարէնի պէս Կարտինալ։ Արդ՝ ժողովրդական կուսակցութիւնը դըժուարաւ այս բոլորովին արքայական շնորհները անոր կրնար տալ։ Ուստի Պ. Ռէց պալատ կուգար Լէնսի ճակատամարտին վրայ Թագուհին շնորհաւորելու, և կանխաւ որոշեր էր արքունիքին ի նպաստ կամ ընդդէմ գործելու, եթէ իր շնորհաւորութիւնը լաւ կամ գէշ ընդունելութիւն մը գտնէ։

Ուստի Տեղապահին գալուստը իմաց տուին, և երբ այս յաղթական արքունիքը զանիկա տեսաւ՝ անոր խօսքը մտիկ ընելու համար հետաքրքրութիւնը սաստկացաւ։

Տեղապահը ինք միայն գրեթէ այնքան խելք ունէր որքան անոնք որ այնտեղ գումարուեր էին զինքը ծաղրելու համար։ Հետեւաբար այնչափ ճարտար կերպով խօսեցաւ որ ներկայ գտնուողները՝ թէև շատ փափաք ունէին ծիծաղելու, բնաւ կնճիռ մը չի գտան։ Իր խօսքը վերջացուց ըսելով թէ իր տկար իշխանութիւնը Վեհափառ Թագուհիին համար գործածելու պատրաստ է։

Թագուհին այնպէս ցուցուց որ շատ ախորժելի կը գտնէ տեղապահին խօսքերը, բայց վերջին խօսքը լսելուն՝ խօսք մը որ բռնախօսութեան առիթ կ'ընծայէր, Թագուհին գլուխը դարձուց և իր մտերիմներուն կողմը ակնարկ մը նետելով իմացուց որ Տեղապահը իրենց կը յանձնէ։ Իսկոյն արքունեաց զուարճախօսները կատակաբանութեանց մէջ ինկան՝ Նոժան-Պօթէն, արքունի տան միմոսը, գոչեց թէ Թագուհին ուրախ է որ այնպիսի միջոց մը քարոզներ կը լսէ։

Ամէն մարդ քահ քահ խնդաց։

Վիլրուա կոմսը ըսաւ թէ ի՛նչպէս պահ մը երկիւղ կրեր են երբոր արքունիքը Բարլամէնդի և Բարիզի ժողովրդեան դէմ պաշտպանելու համար Պ. տեղապահը ունէին, որ միայն նշմարով կրնար երէցներու, բարապաններու և ժամկոչներու բանակ մը կազմել։

Մէյլրէ մարէշալը յարեց թէ, երբ որ կռուի պէտքը տեսնուի, և Պ. Տեղապահը առաջին հրացանը պարպէ, ցաւալի

է միայն որ խառնուրդի մէջ Պ. Տեղապահը կարմիր գդակով մը պիտի ճանչցուի, ինչպէս որ Հանրի Դ. ճանչցուեր էր Իվրիի ճակատամարտին մէջ իր սպիտակ փետուրէն։

Տեղապահ Կօնդի՝ այս մրրիկին առջև՝ զոր կրնար հեգնողներուն համար մահաբեր դարձնել, հանդարտ և դաժան կերպարանք մը ցուցուց։ Այն ատեն Թագուհին հարցուց անոր թէ խօսած գեղեցիկ ճառին ուրիշ բան մը ունի՞ աւելցնելիք։

—Այո՛, տիկին, ըսաւ Տեղապահը, ըսելիքս սա է որ կըրկին խորհիս այս մասին տէրութեան մէջ քաղաքային պատերազմ գրգռելէն առաջ։

Թագուհին կռնակը դարձուց և ծիծաղները նորէն սկսան։

Տեղապահը բարև տուաւ, և դուրս ելլելով Կարտինալին երեսը նայեցաւ և անոր ա՛յնպիսի ակնարկ մը նետեց որ միայն անհաշտ թշնամիներու հասկնալի է։

Այս ակնարկը ա՛յնքան կծու ու սուր էր որ Մազարէնի սրտին խորը իսկ թափանցեց և որ զգալով թէ պատերազմի յայտարարութիւն մըն էր այն, տ'Արդանեանի թևը բռնեց և անոր ըսաւ.

—Ի հարկին սա դուրս ելնող մարդը պիտի կարենաս ճանչնալ, պարոն, այնպէս չէ՞։

—Այո՛, տէր իմ, ըսաւ հրացանակիրը։

Յետոյ՝ իր կարգին Բօրթօսի կողմը դառնալով։

—Սատանա՛յ, ըսաւ, գործը կը գէշնայ, եկեղեցականնաց մէջ բացուած վէճերը չեմ սիրեր.

Կօնդի քաշուեցաւ գնաց իր ճամբուն վրայ օրհնութիւններ սփռելով և իր թշնամիներուն սպասաւորները մինչև իր ոտքը ձգել տալու նենգալի զուարճութիւնը զգալով։

—Ո՛հ, մրմռաց ան պալատէն դուրս ելլելով, ապաշնո՛րհ արքունիք, նենգաւոր արքունիք, վա՛տ արքունիք, վաղը պիտի սորվեցնեմ քեզ թէ ի՛նչպէս կը խնդան, բայց ուրիշ եղանակով մը։

Մինչդեռ Բալէ-Ռուայեալի մէջ ուրախութեամբ կը խաղային Թագուհիին զուարթութիւնը գերազանցելու համար,

Մազարէն, զգօն մարդ էր և այսու հանդերձ երկիւղի նախատեսութիւնը ունէր, իր ժամանակը մնոտի և վտանգաւոր կատակներ ընելով չէր անցներ, Տեղապահին ետեւէն ելեր էր, իր հաշիւները կը տուգէր, իր ոսկին կը ծրարէր, և հաւատարիմ գործաւորներու ձեռքով իր պատերուն մէջ ծածուկ պահարաններ բանալ կուտար։

Երբ իր տունը դարձաւ Տեղապահը իմացաւ որ երիտասարդ մը իր մեկնելէն ետք եկեր էր և իրեն կը սպասէր. այս երիտասարդին անունը հարցուց և ուրախութեան դող մը զգաց իմանալով որ ան Լուվիէր կ'անուանուէր։

Իսկոյն իր դահլիճը վազեց. արդարև Պրուսէլի որդին՝ Թագաւորին զօրականներուն դէմ մղած կռիւէն դեռ ևս բոլորովին զայրացած և արիւնլուայ, հոն էր։ Արքեպիսկոպոսարանը գալու համար զգուշութիւն մը միայն ըրեր էր, այս է բարեկամի մը տուն թողուլ իր մեծ հրացանը։

Տեղապահը անոր մօտ գնաց և ձեռքը կարկառեց։ Երիտասարդը անոր նայեցաւ որպէս թէ անոր սրտին խորը կարդալ կ'ուզէր։

—Սիրելի Պ. Լուվիէր, ըսաւ Տեղապահը, հաւատա՛ որ ճշմարտապէս կը վշտակցիմ քեզի հասած դժբախտութեան համար։

—Միթէ իրա՞ւ է և արդեօք անկեղծօրէն կը խօսիք, ըսաւ Լուվիէր։

—Սրտիս խորէն ըսաւ Կօնդի։

—Ուրեմն, տէր իմ, խօսքի ժամանակը անցաւ, և գործելու ժամը հասած է։ Տէր իմ, եթէ ուզէք, հայրս երեք օրէն բանտէն դուրս պիտի ելնէ, և վեց ամիսէն դուք կարտինալ պիտի ըլլաք։

Տեղապահը դողդղաց։

—Ո՛հ, խօսինք բացարձակ, ըսաւ Լուվիէր, և սեղանին վրայ հաշիւ տեսնենք։ Մարդ երեսուն հազար սկուտ ողորմութիւն չտար, ինչպէս որ դուք ըրիք վեց ամիսէ ի վեր միայն քրիստոնէական զուտ ողորմասիրութենէ, այսպիսի բան մը

չափազանց վսեմ պիտի ըլլար։ Դուք փառասէր էք, շատ պարզ բան է. դուք հանճարի տէր մարդ էք և ձեր արժանիքը կը ճանչնաք։ Ես արքունիքը կ'ատեմ, և այս միջոցիս փափաք մը միայն ունիմ, այն է վրէժխնդրութիւն։ Տուէք մեզի կղերը ու ժողովուրդը՝ որ իշխանութեանդ ներքև են, ես ալ կուտամ ձեզի ուսանողները և Բարլամէնդը. այս չորս տարրերով, Բարիզը ութը օրէն մեր ձեռքը կ'անցնի. և հաւատացէ՛ք ինծի. Պ. Տեղապահ, արքունիքը վախնալէն պիտի շնորհէ ինչ որ բարեսրտութեան համար չպիտի տայ ընաւ։

Տեղապահը իր կարգին, իր սուր աչքովը Լուվիէրին երեսը նայեցաւ։

—Բայց, Պ. Լուվիէր, գիտե՞ս արդեօք որ պարզապէս քաղաքային պատերազմ կ'առաջարկես ինծի։

—Այդ քաղաքային պատերազմը շատ ատենէ ի վեր դուք կը պատրաստէք, տէր իմ, և այժմ չէք կարող զայն մերժել։

—Ի՛նչ և է, ըսաւ Տեղապահը, լաւ կը հասկնաս որ այս բանը խորհրդածութեան կը կարօտի։

—Եւ խորհրդածութեան համար քանի՞ ժամ կը խնդրէք։

—Տասներկու ժամ, պարո՛ն։ Միթէ շա՞տ է։

—Կէս օր է. կէս գիշերին տունդ պիտի գամ։

—Եթէ եկած չըլլամ, ինծի սպասէ։

—Բա՛ջ է, կէս գիշերին, տէր իմ։

—Կէս գիշերին, իմ սիրելի Լուվիէր։

Կօնդի մինակ մնալով՝ իրեն հետ յարաբերութիւն ունեցող բոլոր երէցները կանչել տուաւ։ Երկու ժամ ետք՝ Բարիզի ամէնէն բազմամարդ և հետեւապէս ամէնէն դղրդող թաղերու երեսուն առաջնորդները իրեն քով ժողուեր էր։

Կօնդի պատմեց անոնց Բալէ Րուայեալի մէջ ընդունած նախատինքը, Պօտրիւի, Վիլրուա կոմսին և Մէյլրէյ մարէշալին կատակները պատմեց։ Երէցները հարցուցին անոր թէ ինչ պէտք է ընել։

—Այդ շատ դիւրին է ըսաւ Տեղապահը. խիղճերը կ'ուղ-

ղէք, լա՛ւ, Թագաւորնիս յարգանաց երկիւղի ողորմելի նախապաշարումը անկից վանեցէք. իմաց տուէք ձեր հօտին որ Թագուհին բռնաւոր մըն է և այնքան կրկնակի և ուժով կրկնեցէք այդ որ գիտնան թէ Ֆրանսայի դժբախտութիւնները Մազարէնին՝ իր սիրողին և պաշտպանիչին երեսէն են. այսօր անմիջապէս գործի սկսէք և երեք օրէն յետոյ՝ արդիւնքը ձեզմէ կը սպասեմ: Ասկէ զատ՝ եթէ ձեզմէ մին ինծի լաւ խորհուրդ մը ունի տալու, թո՛ղ հոս մնայ, պատրաստ եմ խօսքերը մտիկ ընելու:

Երեք երէցները մնացին. Սէն-Մէրիի, Սէն-Սիւլբիսի և Սէն-Էօսդաշի երէցները:

Միւսները քաշուեցան գացին:

—Միթէ կը կարծէ՞ք թէ դուք ձեր պաշտօնակիցներէն աւելի ազդու կերպով ինծի պիտի կարենաք աջակցիլ, ըսաւ Կօնդի:

—Կը յուսանք, ըսին երէցները:

—Տեսնենք, նախ դուն սկսէ, Սէն-Մէրիի երէց:

—Տէր իմ, Թաղիս մէջ մարդ մը ունիմ որ կարող է ձեզի մեծապէս օգնել:

—Ո՞վ է այդ մարդը:

—Լօնպար փողոցի մէկ վաճառականը որ մեծ ազդեցութիւն ունի իր թաղին ծուխերուն վրայ:

—Ի՞նչ է անոր անունը:

—Անունը Բլանշէ է. ինքը առանձին խռովութիւն մը հաներ էր գրեթէ վեց շաբաթ առաջ, բայց այս խռովութենէն ետքը՝ որովհետև զանիկա բռնելու համար ամէն տեղ կը փնտռէին, աներեւոյթ եղաւ:

—Եւ միթէ պիտի կրնա՞ս գտնել զայն:

—Կը յուսամ, չեմ կարծեր որ ձերբակալուած ըլլայ և որովհետև իր կնկան խոստովանահայրն եմ, եթէ ան գիտնայ թէ ո՛ւր է, ես ալ պիտի գիտնամ:

—Լա՛ւ, յարգելի երէց, գնա փնտռէ այն անձը և եթէ գտնես, առ ինծի բե՛ր:

—Ժամը քանի՞ն, տէր իմ:

—Ժամը վեցին:

—Ժամը վեցին տունդ պիտի գտնուինք, տէր իմ:

—Գնա՛ ուրեմն, սիրելիդ իմ երէց, գնա՛ և Աստուած օգնական ըլլայ:

Երէցը դուրս ելաւ:

—Հապա դո՞ւն, պարոն, ըսաւ Տեղապահը Սէն-Սիւլբիսի երէցին կողմը դառնալով:

—Ե՛ս տէր իմ, ըսաւ այս վերջինը, մարդ մը կը ճանչնամ որ ժողովրդային իշխանի մը մեծ ծառայութիւններ մատոյց. այս մարդը կրնայ ապստամբներուն պատուական պարագլուխ մը դառնալ և զայն ձեր հրամանին տակ դնելու կարող եմ:

—Ի՞նչ է այդ մարդուն անունը:

—Ռօչֆոր կոմս:

—Ես ալ կը ճանչնամ զայն. դժբախտաբար Բարիզ չէ այժմ:

—Տէր իմ, Բասէդ փողոցը կը գտնուի անիկա:

—Քանի՞ ատենէ ի վեր:

—Երեք օրէ ի վեր:

—Եւ ինչո՞ւ համար զիս տեսնելու չեկաւ:

—Ըսին անոր թէ...: Տէր իմ, պիտի ներէք ինծի...:

—Անշո՛ւշտ, ըսէ՛:

—Թէ արքունեաց հետ հաշտուելու վրայ էք:

Կօնդի շրթները խածաւ:

—Զայն խաբեր են. ժամը ութին ինծի բեր զայն, արքայ երէց, և Աստուած քեզ օրհնէ ինչպէս որ ես կ'օրհնեմ:

Երկրորդ երէցն ալ խոնարհութիւն ընելով դուրս ելաւ:

—Հիմակ քու կարգդ եկաւ, պարոն, ըսաւ Տեղապահը վերջին մնացող երէցին դառնալով: Դուն ալ միթէ այս երկու մեկնող պարոններուն առաջարկութեան պէս բան մը ունի՞ս ըսելու:

—Լաւագոյն բան մը, տէր իմ:

—Կրօ՛ղ, գիտցիր որ սոսկալի խոստում մը կ՚ընես ինծի. մէկը ինծի վաճառական մը առաջարկեց, ուրիշ մը կոմս մը առաջարկեց, ուրեմն դուն եւս իշխա՞ն մը պիտի առաջարկես արդեօք։

—Ձեզի մուրացկան մը պիտի տամ, պարոն:

—Հա՛, հա՛, բացագանչեց Կօնդի մռմռալով, իրաւունք ունիս, յարգելի երէց. եթէ մէկը կարող ըլլայ Բարիզի քառուղիները խռնող աղքատները ոտք հանել եւ բաւական բարձր ձայնով պոռալ տալ որ բոլոր Ֆրանսա լսէ թէ Մազարէնն է որ զիրենք անանկութեան մղեց...։

—Ճիշտ ձեր ուզած մարդը ունիմ։

—Ապրի՛ս, եւ ո՞վ է այդ մարդը։

—Ինչպէս որ ըսի, տէր իմ, պարզ մուրացկան մըն է որ կը մուրայ Սուրբ-Էօսթաշ եկեղեցիին աստիճաններուն վրայ օրհնած ջուր տալով գրեթէ վեց տարիէ ի վեր։

—Զըսի՞ր թէ իր նմաններուն վրայ մեծ ազդեցութիւն ունի:

—Տէր իմ, միթէ գիտէ՞ք որ մուրացկանութիւնը կազմակերպուած արհեստ մըն է, տեսակ մը ընկերութիւն է որ կը բաղկանայ չունեւորներէ եւ կը գործէ ունեւորներու դէմ, եւ ընկերութիւն մը որուն մէջ ամէն ոք իր բաժինը կը բերէ, եւ պարագլուխ մը կախուած ունի։

—Այո՛, արդէն այսպիսի բան մը իմացեր եմ, պատասխանեց Տեղապահը։

—Լա՛ւ, այս ձեզի ընծայած մարդս ընդհանուր գործակալ մըն է։

—Եւ ի՞նչ գիտես այս մարդուն վրայ։

—Ո՛չ ինչ, տէր իմ, միայն կը կարծեմ թէ խղճի խայթով մը կը տագնապի։

—Ուսկի՞ց գիտես։

—Ամէն ամսու 28ին, պատարագ մը ընել կու տայ բռնի մահուամբ մեռնող անձի մը հոգիին համար. դեռ եւս երէկ այս պատարագը ըրի։

—Եւ ի՞նչ է անունը:

—Մայար. բայց չեմ կարծեր որ ճշմարիտ անունը այս ըլլայ։

—Եւ միթէ կը կարծես որ այս ժամուս իր յատուկ տեղը կարենանք գտնել զինքը։

—Անտարակո՛յս։

—Երթանք ուրեմն մուրացկանդ տեսնելու, յարգելի երէց. եւ եթէ ըսածիդ պէս է, իրաւունք ունիս, դուն գտած պիտի ըլլաս ճշմարիտ գանձը։

Եւ Կօնդի ձիաւորի մը պէս հագուեցաւ, կարմիր փետուրով լայն թաղիքէ գլխարկ մը դրաւ գլուխը, մէջքէն երկար սուր մը կախեց, իր կօշիկներուն բիտերը անցուց, ընդարձակ վերարկուով մը փաթթուեցաւ եւ երէցին ետեւէն գնաց։

Տեղապահը ու իր ընկերը Սուրբ-Էօսթաշի եկեղեցիէն արքեպիսկոպոսարանը զատող փողոցներէն անցան, ժողովրդեան ոգին ուշադիր քննելով, ժողովուրդը յուզուած էր, սակայն չուարած մեղուներու երամի մը պէս, կարծես չէր գիտեր թէ ո՛ւր տեղ երթայ հանգստանայ, եւ ան յայտնի կ՚երեւէր որ եթէ այս ժողովրդեան պարագլուխներ չգտնէին, ամէն ինչ բզզալով պիտի անցնէր։

Բուրվէր փողոցը հասնելով՝ երէցը եկեղեցիին դաւիթին կողմը երկարեց ձեռքը:

—Ահաւասի՛կ, ըսաւ, իր որոշեալ տեղը նստած է։

Կօնդի նշանակեալ կողմը նայեցաւ, եւ աղքատ մը տեսաւ աթոռի մը վրայ նստած ու կռնակը դարբնանդի մը տուած, իր քովը փոքրիկ դոյլ մը կար եւ ձեռքը մշտիկ մը բռնած։

—Միթէ յատուկ արտօնութեա՞մբ կը նստի հոն, հարցուց Կօնդի։

—Ո՛չ, տէր իմ, ըսաւ երէցը, իր նախորդին հետ օրհնած ջուր տալու պատուոյ տեղը սակարկութեամբ առաւ։

—Սակարկութեա՞մբ մը։

—Այո՛, այս տեղերը ծախու կ՚առնուին. կարծեմ թէ այս իրենին համար յիսուն ոսկի վճարեց։

—Ուրեմն թշուառականը հարուստ է։

—Այս մարդիկներէն ոմանք կը մեռնին երբեմն քանքանըհինգ, երեսուն հազար ֆրանք թողլով։

—Հը՛մ, ըրաւ Կօնդի ծիծաղելով, չէի կարծեր որ ողորմութիւններս այսպէս ապահով տեղ մը շահու կուտամ։

Սակայն Տեղապահը ու իր ընկերը դէպի գաւիթը կը յառաջանային, այն միջոցին որ երկուքնին ալ եկեղեցիին սանդուղին առաջին աստիճանին վրայ կը դնէին իրենց ոտքը, մուրացկանը ելաւ և իր մշտիկը երկնցուց։

Վաթսունվեցէն վաթսունըութը տարեկան մարդ մըն էր, փոքր, բաւական գիրուկ, ալեխառն մազերով և չէկ աչքերով։ Իր դէմքին վրայ երկու հակառակ սկզբունքի նշանները կային, կամքի ուժով, թերեւս զզջմամբ նուաճեալ յոռի բնութիւն մը։

Երբ մուրացկանը երէցին ընկերացող ձիաւորը տեսաւ, թեթեւ մը դողաց և զարմանքով անոր երեսը նայեցաւ։

Երէցը ու Տեղապահը իրենց մատերուն ծայրով մշտիկին դպան և խաչ հանեցին. Տեղապահը գետինը դրուած գլխարկին մէջ արծաթէ դրամ մը նետեց։

—Մայո՛ր, ըսաւ երէցը, ես և պարոնը եկանք որ քեզի հետ պահ մը խօսակցինք։

—Ինծի՞ հետ, ըսաւ մուրացկանը, խեղճ օրհնած ջուր տուողի մը համար մեծ պատիւ մըն է այս։

Աղքատին ձայնին մէջ հեգնութեան շեշտ մը կար զոր չկրցաւ լռելին զսպել և որ Տեղապահին ցաւ պատճառեց։

—Այո՛, շարունակեց երէցը որ այս շեշտին վարժուած կ'երեւէր, այո՛, ուզեցինք իմանալ թէ ի՞նչ կարծիք ունիս այսօրուան դէպքերու վրայ, և եկեղեցին մտնող ելլող անձերէն ի՞նչ բան իմացար այս մասին։

Մուրացկանը գլուխը ցնցեց։

—Տխուր դէպքեր են ասոնք, պարոն երէց, ասոնք ինչպէս միշտ՝ աղքատին վրան կը ծանրանան, ուրիշներուն խօսքին գալով՝ կ'երեւի թէ ամէնքը դժգոհ են, ամէն մարդ կը գանգատի, բայց ամէն մարդ բառը ոչ ոք չըսեր։

—Բացատրէ միտքդ, սիրելի բարեկամ, ըսաւ Տեղապահը։

—Կ'ըսեմ թէ բոլոր այս աղաղակները, բոլոր այս տրտունջները, բոլոր այս անէծքը միայն փոթորիկ և փայլակներ կ'արտադրեն և այլ ոչինչ, բայց որոտումն այն ատեն պիտի պայթի երբ զայն ուղղելու համար պարագլուխ մը գտնուի։

—Բայց, բարեկամ, ըսաւ Կօնդի, դուն ճարպիկ մարդ մը կ'երեւիս. արդեօք տրամադի՞ր ես փոքրիկ քաղաքային պատերազմի մը մասնակցիլ եթէ երբեք պատերազմ մը ունենանք, և այն պարագլխին հրամանին տակ դնել, եթէ գլուխ մը գտնենք. քու անձնական իշխանութիւնդ և քու ընկերներուդ վրայ ստացած ազդեցութիւնդ։

—Այո՛, պարոն, բաւական է որ եկեղեցին այս պատերազմին հաւանութիւն տայ, հետեւապէս իմ ուզած նպատակիս տանելու կարող ըլլայ, այսինքն իմ մեղքերուս թողութեան։

—Այս պատերազմին ոչ միայն հաւանութիւն պիտի տրուի, այլ և անոր կողմէ պիտի ուղղուի։ Իսկ մեղքերուդ թողութեան գալով՝ Բարիզի արքեպիսկոպոսը ունինք որ Հռոմի արքունեաց կողմէ մեծ իշխանութիւն կը վարէ և մինչեւ անգամ Պ. Տեղապահը որ լիուլի ներողամտութեան արտօնագրեր ունի, ի հարկին քեզի անոր կը յանձնարարենք։

—Մտածէ, Մայոր, ըսաւ երէցը, որ ես քեզի համար յանձնարարեցի այս պարոնին որ զօրաւոր իշխան մըն է և կերպով մը քեզի համար պատասխանատու մնացի անոր առջեւ։

—Գիտեմ, պարոն երէց, ըսաւ մուրացկանը, որ ինծի համար միշտ բարերար եղած ես, ուստի ես ալ իմ կողմէ տրամադիր եմ լիովին հաճելի ըլլալ քեզի։

—Եւ միթէ քու պաշտօնակիցներուդ վրայ պարոն երէցին քիչ մը առաջ ըսած ազդեցութեան չափ մե՞ծ է ներգործութիւնդ։

—Կարծեմ թէ մասնաւոր յարգ մը ունին ինծի համար, ըսաւ մուրացկանը հպարտութեամբ, և թէ ոչ միայն իմ հրամաններս պիտի կատարեն, այլ և ո՛ւր որ երթամ ետեւէս պիտի գան։

—Եւ միթէ կարո՞ղ ես յիսուն անվեհեր մարդիկ, անգործ և եռանդուն հոգիներ գտնել ինձ, որ Բալէ-Ռուայեալի պատերը կործանելու կարող շաղակրատներ ըլլան գոչելով. Անկցի՛ Մազարէն, ինչպէս որ երբեմն Երիքովի պարիսպները կը կործանէին։

—Ես կը կարծեմ թէ, ըսաւ մուրացկանը, աւելի դժուարին և կարեւոր գործեր կարող եմ կատարել։

—Հա՛, հա՛, ըսաւ Կոնդի, միթէ յանձնառու կ'ըլլա՞ս տասնի չափ պատնէշներ կանգնել գիշերուան մը մէջ։

—Յանձնառու կ'ըլլամ յիսուն հատ կանգնելու, և երբ ցերեկ ըլլայ զանոնք պաշտպանելու։

—Աստուա՛ծ վկայ, ըսաւ Կոնդի, ա՛յնչափ ապահովութեամբ կը խօսիս ինծի որ հաճոյք կ'զգամ, և որովհետև յարգելի երէցը քու մասիդ պատասխանատու կը մնայ...։

—Կը մնամ, ըսաւ երէցը։

—Ահաւասիկ պարկ մը որ երկու հարիւր յիսուն ոսկի կը պարունակէ, բոլոր պատրաստութիւններդ ըրէ, և ըսէ ինծի թէ այս գիշեր ժամը վեցին ո՞ւր կրնամ գտնել քեզ։

—Պէտք է որ բարձր տեղ մը ըլլայ, և երբ անկից նշան մը տրուի բոլոր թաղերը կարող ըլլան տեսնելու զայն։

—Միթէ կ'ուզես որ հրաման մը տամ Ս. Ժաք լա Պուշըրիի փոխանորդին համար։ Քեզ աշտարակին մէկ սենեակին մէջ կրնայ մտցնել, ըսաւ երէցը։

—Աքանչելի՛ է, ըսաւ մուրացկանը։

—Ուրեմն, ըսաւ Տեղապահը, այս իրիկուն ժամը տասնին, և եթէ քեզնէ գոհ ըլլամ, քեզի պիտի յանձնեմ երկու հարիւր յիսուն ոսկիի ուրիշ պարկ մը։

Մուրացկանին աչքերը ընչասիրութեամբ փայլեցան, բայց այս այլայլութիւնը զսպեց։

—Պարո՛ն, այս իրիկուն ամէն բան պատրաստ պիտի գտնես, պատասխանեց մուրացկանը։

Եւ իր աթոռը դարձեալ եկեղեցի տարաւ և անմիջապէս դուրս ելաւ։

Բ.

ՍԷՆ ԺԱՔ ԼԱ ՊՈՒՇՐԻԻ ԱՇՏԱՐԱԿԸ

Ժամը վեցը երեք քառորդ անցած՝ Պ. Կոնդի իր երթալիք տեղերը գացեր և արքեպիսկոպոսարանը դարձեր էր։

Ժամը վեցին ձայն տուին որ Սէն-Մէրիի երէցը եկեր է։

Տեղապահը աշխուժով անոր ետեւը նայեցաւ և տեսաւ որ ուրիշ մարդ մը անոր կը հետեւէր։

—Ներս հրամցուր, ըսաւ։

Երէցը ներս մտաւ, և իր հետն ալ Բլանշէ։

—Տէ՛ր իմ, ըսաւ երէցը, ահաւասիկ այն անձը որուն վրայ ձեզի խօսելու պատիւը ունեցայ։

Բլանշէ ողջունեց այնպիսի մարդու մը դէմքով որ լաւ տուներ յաճախած է։

—Եւ միթէ տրամադի՞ր ես ժողովրդեան դատը պաշտպանել, հարցուց Կոնդի։

—Անշո՛ւշտ, ըսաւ Բլանշէ, ես հոգւով չափ պարսաւոր եմ։ Ինչպէս որ կը տեսնես, տէր իմ, դատապարտուած եմ կախուելու։

—Եւ ի՞նչ առթիւ։

—Մազարէնի յիմնապետներուն ձեռքէն խլեցի ազնուական մը զոր Պասթիլ կը տանէին, ուր հինգ տարիէ ի վեր բանտարկուած էր։

—Ի՞նչ է անունը։

—Ո՛հ, տէր իմ, ա դուք ը ճանչնաք. Ռոշֆոր կոմս է։

—Ա՛հ, այո՛, ճիշդ է, ըսաւ Տեղապահը, այս գործը ականջիս հասած է, ըսին ինձ որ բոլոր թաղը ոտք հաներ ես։

—Գրեթէ, ըսաւ Բլանշէ ինքնագոհ դէմքով մը։

—Եւ ի՞նչ արհեստ կը գործես...։

—Լօմպարտ փողոցը շաքարագործ եմ։

—Բացատրէ ինծ թէ ի՞նչպէս այնպիսի խաղասիրական արհեստ մը ունենալով՝ այդպիսի պատերազմասէր յօժարութիւններ ունիս։

—Ի՞նչպէս, տէր իմ, եկեղեցական ըլլալովդ ձիաւորի հագուստով կ'ընդունիք զիս, սուրը քովէդ կախած և խթաններ ձեր կօշիկին դրած։

—Արդարև, դէշ պատասխան չէ, ըսաւ Կոնդի ծիծաղելով, բայց գիտես որ իմ գրպանիս նայելով՝ մարտական զգացումներ ունեցեր եմ։

—Լա՛ւ ուրեմն, տէր իմ, շաքարագործ ըլլալէն առաջ Բիէմօնդէի գունդին մէջ երեք տարի յիսնապետ եղեր էի և Բիէմօնդէի գունդին մէջ երեք տարի անցնելէն առաջ՝ տասնըութ ամիս Պ. տ'Արդանեանի սպասաւոր եղայ։

—Հրացանակիրներու տեղակա՞լը, հարցուց Կոնդի։

—Նոյն ինքն է, տէր իմ։

—Բայց կ'ըսեն թէ կատաղի Մազարէնեան մըն է ան։

—Բարէ՛, ըսաւ Բլանշէ։

—Ի՞նչ ըսել կ'ուզես։

—Ոչի՛նչ, տէր իմ։ Պ. տ'Արդանեան զօրական է. Պ. տ'Արդանեան Մազարէնը պաշտպանելով իր պաշտօնը կը կատարէ և անկէ վարձք կ'ընդունի, ինչպէս որ մենք տատանիկներ, պարտք կը սեպենք Մազարէնի վրայ յարձակիլ, որ մեզ կը կողոպտէ։

—Ուշիմ տղայ մըն ես, բարեկամդ իմ, միթէ կրնա՞նք քու վրադ վստահիլ։

—Կը կարծէի, ըսաւ Բլանշէ, որ յարգելի երէցն իմ մասին վստահեցուց ձեզ։

—Իրաւ է, բայց այս վստահութիւնը քու բերնէդ ընդունիլ կ'ուզեմ։

—Կարող էք վրաս վստահիլ, տէր իմ, բաւական է որ բոլոր քաղաքը տակնուվրայ ընելու հարկ ըլլայ։

—Ճիշդ այդ պէտք է։ Ո՞րչափ մարդիկ հաւաքել կը կարծես այս գիշեր։

—Երկու հարիւր հրացան և հարիւր գեղարդ։

—Եթէ ամէն թաղի մէջ այսչափ մարդիկ հաւաքելու գլուխ մը գտնուի, վաղը բաւական զօրաւոր բանակ մը կ'ունենանք։

—Հապա՛։

—Միթէ տրամադի՞ր ես Ռօշֆոր կոմսին հնազանդելու։

—Դժոխքն անգամ անոր կը հետևիմ և այս խօսքս չափազանց չէ, վասնզի գիտեմ որ կարող է դժոխք իջնել։

—Ապրի՛ս։

—Վաղը ի՞նչ նշանով կարելի է զանազանել բարեկամները թշնամիներէն։

—Ամէն պարտաւոր իր գլխարկին կրնայ յարդէ կապ մը դնել։

—Լա՛ւ, ուրեմն այս նշանը տուէք։

—Ստակի պէտք ունի՞ս։

—Տէր իմ, ստակը որ և է բանի մէջ վնաս մը չունի։ Եթէ չկայ, փոյթ չէ, եթէ կայ, գործերը աւելի շուտ ու լաւագոյն ընթացք մը պիտի առնեն։

Կոնդի արկղի մը մօտ գնաց և պարկ մը հանեց։

—Ահա քեզի երկու հարիւր յիսուն ոսկի, ըսաւ, և եթէ գործը յաջողի, վաղը նոյնչափ գումար մը եւս պիտի ընդունիս։

—Տէր իմ, այս գումարին հաշիւը հաւատարմօրէն պիտի տամ ձեզ, ըսաւ Բլանշէ պարկը թևին տակ դնելով։

—Լա՛ւ է, քեզի կը յանձնեմ Կարտինալը։

—Հանգիստ եղէք, ապահով մարդու ձեռք է։

Բլանշէ դուրս ելաւ, երէցը քիչ մը ետեւը մնաց։

—Միթէ գո՞հ էք, տէր իմ, ըսաւ ան։

—Այո՛. այս մարդը ինծի աներկիւղ թշուառական մը կ'երևի։

—Լա՛ւ, խոստացածէն աւելի պիտի գործէ։

—Ուրեմն սքանչելի է։

Եւ երէցը Բլանշէի միացաւ, որ սանդուղին վրայ անոր կը սպասէր։

Տասը վայրկեան ետք՝ Սէն-Սիւլփիսի երէցը իմաց տուին։

Հազիւ թէ Կոնդիի դահլիճին դուռը բացուեցաւ, մարդ մը ներս սրացաւ, Ռօշֆոր կոմսն էր։

—Դո՛ւն ես ուրեմն, սիրելի կոմս, ըսաւ Կոնդի ձեռքը երկնցնելով։

—Վերջապէս որոշում ըրի՞ր, տէր իմ, ըսաւ Ռօշֆոր։

—Մինչ որոշումս որոշում է, ըսաւ Կոնդի։

—Այլ եւս այն մասին չխօսինք, այդպէս կ'ըսես, և քեզի կը հաւատամ, ուրեմն Մազարէնին պարահանդէս մը պիտի տանք։

—Բայց... կը յուսամ։

—Եւ ե՞րբ պիտի սկսի պարը։

—Այս գիշեր հրաւէրներ կը ղրկուին, ըսաւ Տեղապահը, բայց վինները վաղը առտու պիտի սկսին։

—Կարող ես իմ և յիսուն զինուորի վրայ ապահով ըլլալ, զօրս Հիւմիէր ասպետը ինծի խոստացաւ, երբ անոնցմէ պէտք ունենամ։

—Յիսուն զինուորի՞ վրայ։

—Այո՛, զինուորները կը կը գրէ և ինծի փոխ կուտայ, երբ հանդէսը աւարտի, եթէ զինուոր պակսի, անոնց տեղ պիտի լեցնեմ։

—Լա՛ւ, սիրելի Ռօշֆոր, բայց ամէն բան ասով չլրանար։

—Ուրիշ ի՞նչ կայ ուրեմն, հարցուց Ռօշֆոր ժպտելով։

—Պ. Պօֆորն ի՞նչ ըրիք։

—Վանսօնուա մը գտնուի, ուր կը սպասէ իրեն գրել Բարիզ վերադառնալու։

—Ժամանակ է, գրէ՛ անոր։

—Ուրեմն գործիդ վրայ ապահո՞վ ես։

—Այո՛, բայց պէտք է որ շտապի. հազիւ թէ Բարիզի ժողովուրդը պիտի ապստամբի, որ մէկ հատի տեղ տասը իշխան պիտի ունենանք որ անոր գլուխը անցնիլ պիտի ուզէ. եթէ Պ. Պօֆոր ուշանայ, տեղը բռնուած պիտի գտնէ։

— Միթէ կարո՞ղ եմ քու կողմէդ աղճարարել։

—Այո՛, բոլորովի՛ն։

—Կարո՞ղ եմ ըսել որ քու վրադ վստահի։

—Եւ միթէ ամէն իշխանութիւն անոր պիտի թողո՞ւս։

—Պատերազմի համար, պիտի թողում, բայց քաղաքականութեան գալով...

—Գիտես որ այս մասին տկար է։

—Իմ գիտցած կերպովս Կարտինալի գդակիս համար բանակցելու գործը ինծի պիտի թողու։

—Միթէ այդ փափաքը ունի՞ս։

—Քանի որ կը բանադատեն գիս կրել գլխարկ մը որուն ձեւը ինծ չյարմարիր, ըսաւ Կոնդի, գէթ կը փափաքիմ որ այս գլխարկը կարմիր ըլլայ։

—Պէտք չէ վէճ բանալ ճաշակի և գոյներու վրայ, ըսաւ Ռօշֆոր ծիծաղելով, կ'ապահովեմ քեզ իր հաւանութիւնը։

—Եւ միթէ այս իրիկուն պիտի գրե՞ս անոր։

—Գրելէն լաւագոյն բան մը պիտի ընեմ, պատգամաբեր մը պիտի ղրկեմ անոր։

—Քանի՞ օրէն կրնայ հոս գտնուիլ։

—Հինգ օրէն։

—Թո՛ղ գայ և փոփոխութիւն մը պիտի գտնէ։

—Կը փափաքիմ զայն։

—Այս մասին քեզ կը վստահեցնեմ։

—Ա՞յսպէս։

—Գնա՛ քու յիսուն զինուորներդ հաւաքէ՛ և պատրաստ գտնուէ՛։

—Ի՞նչ բանի։

—Ամէն բանի։

—Միթէ միաւորութեան նշան մը կա՞յ։

—Ցարդէ կապ մը գլխարկի վրայ։

—Լա՛ւ է, մնաս բարով տէր իմ։

—Երթաս բարով, սիրելի Ռօշֆոր։

—Ա՛հ, պարո՛ն Մազարէն, պարո՛ն Մազարէն, ըսաւ Ռօշֆոր հետը առնելով երէցը որ այս տրամախօսութեան ժամանակ միջոց մը չէր գտած իր կողմէն ալ բառ մը ըսելու, պիտի տեսնես թէ շատ ծեր եմ և գործի մարդ չեմ կրնար ըլլալ։

Ժամը ինն ու կէսն էր. Տեղապահին կէս ժամ պէտք էր եպիսկոպոսարանէն Ս. Ժագ-լա Պուշրի աշտարակը երթալու համար:

Տեղապահը գիտեր որ լոյս մը չփայլիր աշտարակին բարձրագոյն մէկ պատուհանը:

—Լա՛ւ, ըսաւ ան, մեր խօսնակը տեղն է:

Դուռը զարկաւ, եկան բանալու: Նոյն իսկ փոխանորդը իրեն կ'սպասէր և անոր լոյս ցուցնելով մինչև աշտարակին վերի կողմը տարաւ զանիկա. երբ հոն հասաւ, անոր փոքրիկ դուռ մը ցուցուց, պատին մէկ անկիւնը դրաւ լոյսը որպէսզի Տեղապահը դուրս ելնելու ատեն զայն գտնէ, և վար իջաւ:

Թէև բանտին դրան վրայ էր, Տեղապահը զարկաւ:

—Նե՛րս մտիր, ըսաւ ձայն մը որ մուրացկանին ըլլալը Տեղապահը ճանչցաւ:

Կոնդի ներս մտաւ: Արդարև Սէնդ-Ժօզդուշի գաւթին օրհնած ջուր տալու մարդն էր: Տեսակ մը խշտիկի մը վրայ պառկած կ'սպասէր:

Երբ Տեղապահին ներս մտնելը տեսաւ ոտք ելաւ:

Ժամը տասը զարկաւ:

—Լա՛ւ ուրեմն, ըսաւ Կոնդի, միթէ խօսքդ պահեցի՞ր:

—Ո՛չ, բոլորովին, ըսաւ մուրացկանը:

—Ինչպէ՞ս:

—Ինձմէ հինգ հարիւր մարդ խնդրեցիր, այնպէս չէ՞:

—Այո՛. վերջը:

—Լա՛ւ, քեզի երկու հազար հոգի պիտի տամ:

—Միթէ կը գովուի՞ս:

—Փորձ մը կ'ուզե՞ս:

—Այո՛:

Երեք կանթեղ կային վառուած. ամէն մէկը պատուհանի մը առջև կը վառէր, որմէ մին Միջնաքաղաքին վրայ կը նայէր, միւսը Բուլէ-Բուայալի վրայ, երրորդը Սէն-Տընի փողոցին վրայ:

Մարդը լուռ գնաց ամէն մէկ կանթեղին առջև, և զանոնք զատ զատ մարեց:

Տեղապահը մութը մնաց. սենեակը կը լուսաւորուէր միայն լուսնին աղօտ նշոյլովը որ խոշոր սև ամպերու մէջ կը կորսուէր և անոնց ծայրը արծաթագոյն կը ներկէր:

—Ի՞նչ ըրիր, ըսաւ Տեղապահը:

—Նշանը տուի:

—Ի՞նչ նշան:

—Պատնէշները շինելու:

—Հա՛, հա՛:

—Երբ մեկնիս ասկից, պիտի տեսնես գործի վրայ իմ մարդիկս: Միայն զգոյշ եղիր որ շղթայի մը զարնելով, կամ փոսի մը մէջ իյնալով ոտունքդ չկոտրես:

—Լա՛ւ, ահաւասիկ գումարդ, արդէն ընդունած գումարիդ չափ է: Հիմակ յիշէ որ պարագլուխ մը ես և արբենալու մի՛ երթար:

—Քսան տարիէ ի վեր միայն ջուր կը խմեմ:

Մարդը Տեղապահին ձեռքէն պարկը առաւ. Տեղապահը լսեց անոր ձեռքին ըրած աղմուկը երբ ոսկին կը խառնէր և կը չոյէր:

—Հա՛, հա՛, ըսաւ Տեղապահը, թշուառակա՛ն, դուն ագահ ես

Մուրացկանը հառաչ մը հանեց և պարկը մէկ կողմ նետեց:

—Միթէ միշտ նոյնը պիտի մնա՞մ, ըսաւ ան, և միթէ չէ՞ պիտի յաջողիմ հին մարդը մերկանալ. Ոսկի՛, թշուառութիւն, ունայնութիւն:

—Եւ սակայն զա՛ն կ'առնես զայն:

—Այո՛, բայց ահա ուխտ կ'ընեմ քու առջևդ իմ ունեցածս բարեպաշտական գործերու նուիրել:

Իր դէմքը գունատ էր և կարկամ, ինչպէս որ է այն որ ներքին կռիւ մը կը մղէ:

—Զարմանալի՛ մարդ, մռմռաց Կոնդի:

Եւ իր գլխարկը առաւ որ մեկնի, բայց դառնալու ատեն մուրացկանը իր և դրան մէջ տեսաւ:

Իր առաջին մտածումը սա եղաւ թէ այն մարդը իրեն չարիք մը պիտի հասցնէ:

Բայց շատ չանցաւ դիտեց որ ան իր երկու ձեռքերը կցելով առջեւը ծունր դրաւ:

—Տէր իմ, ըսաւ անոր. մեկնելէ առաջ օրհնութիւնդ տուր ինծի, կ'աղաչեմ։

—Տէ՛ր իմ, գոչեց Կօնդի, բարեկա՛մ, դուն զիս ուրիշ տեղ կը դնես։

—Ո՛չ, տէր իմ, ձեզ ինչ որ ես կը համարիմ, այսինքն Գ. Տեղապահը, ձեզ առաջին նայուածքով ճանչցայ։

Կօնդի ժպտեցաւ:

—Եւ հիմակ իմ օրհնութիւնս կ'ուզես, ըսաւ:

—Այո՛ պ ոք ունիմ անոր։

Մուրացկանը ա՛յնպիսի հեզ ձայնով և խորին զղջով արտասանեց այս խօսքը որ Կօնդի իր ձեռքը անոր վրայ երկընցուց և կարող եղածին չափ սրբութեամբ իր օրհնութիւնը տուաւ։

—Հիմակ, ըսաւ Տեղապահը, մեր մէջ հաղորդութիւն կայ: Ես քեզ օրհնեցի, և դուն ինծի նուիրական ես, ինչպէս որ ես ալ քեզի համար եմ ըստ կարգի: Նայինք, միթէ մեղք մը գործեցի՞ր, որու համար մարդկային արդարութիւնը քեզ հալածէ և ես ալ քեզ պահպանելու կարող ըլլամ:

Մուրացկանը գլուխը ցնցեց։

—Իմ գործած մեղքս, տէր իմ, մարդկային արդարութեան չպատկանիր բնաւ, և չես կարող զիս ազատել բայց եթէ քիչ մը առաջ ըրածիդ պէս զիս ստէպ չօրհնես:

—Տեսնենք, բացարձակ խօսէ՛, ըսաւ Տեղապահը, միթէ բոլոր կեանքիդ մէջ այս արհեստը կը բանիս:

—Ո՛չ, տէր իմ, վեց տարիէ ի վեր է որ միայն այս գործով կը զբաղիմ։

—Այս գործով զբաղելէդ առաջ ո՞ւր էիր:

—Պասթիյլ:

—Եւ Պասթիյլ երթալէդ առա՞ջ։

—Պիտի յայտնեմ, տէր իմ, այն օրը իմ խոստովանութիւնս լսելու հաճիս:

—Շա՛տ լաւ։ Յիշէ միայն որ ցերեկուան որ կամ գիշերուան ո՛ր ժամուն որ ներկայանաս պատրաստ եմ քեզի արձակում տալու։

—Շնորհակալ եմ, տէր իմ, ըսաւ մուրացկանը խուլ ձայնով մը, բայց տակաւին պատրաստ չեմ զայն ընդունելու:

—Շա՛տ լաւ։ Մնաս բարեաւ։

—Երթաս բարեաւ, տէր իմ, ըսաւ մուրացկանը՝ դուռը բանալով և եպիսկոպոսին առջև խոնարհելով։

Տեղապահը կանթեղը ձգեց և վար իջնելով բոլորովին մտախոհ դուրս ելաւ։

Գ.

ԽՌՈՎՈՒԹԻՒՆ

Գիշերուան գրեթէ ժամը տասներմէկն էր։ Կօնդի երբ քսան քայլ առաւ Բարիզի փողոցներուն մէջ որ տեղի ունեցած զարմանալի փոփոխութիւնը տեսաւ:

Կարծես թէ քաղաքին բոլոր բնակիչները աններեւոյթ ճակներ էին. լոյն սաւաններ կ'երեւային որ փողոցներուն սալաքարերը կը հանէին, այլք սայլեր կը քաշէին և կը դարձնէին. ուրիշներ ալ փոսեր կը բանային որ այրուձիի ամբողջ գումարտակներ ընկղմին։ Բոլոր այս անձերը անդուլ գործունէութեամբ կ'երթային, կուգային, կը վազէին սատանաներու նման որ անծանօթ գործ մը կը կատարեն։ Հրաշալեաց բակին մուրացկաններն էին ասոնք, Սէնդ. Էօսդաշի գաւիթին օրհնած ջուր տուող մարդուն գործակալներն էին որ հետեւեալ օրուան պատնէշները կը պատրաստէին։

Կօնդի մութին կը նայէր այս մարդոց, այս գիշերային գործաւորներու տեսակ մը երկիւղով. ինքնիրեն կը հարցնէր

թէ՛ բոլոր այս ողտեղի արարածները իրենց որջերէն դուրս հանելէ ետք՝ արդեօք զօրութիւն պիտի ունենա՞ն զանոնք վերստին ներս մղելու: Երբ այս մարդերէն մին իրեն մօտենար, իսկոյն խոյս հանելու տրամադիր էր:

Սէնթ-Օնորէ փողոցը հասաւ և շարունակեց դէպի Ֆէրրոնըի փողոցը յառաջանալով: Տեսարանը փոխուեցաւ, հոն խառնաթխպաններն էին որ կրպակէ կրպակ կը վազէին. փայտեայ փեղկերու պէս դուռները գոցուած կ'երեւէին, բայց միայն գաղձուցեր էին, այնպէս որ իսկոյն կը բացուէին և կը գոցուէին որպէսզի ներս ընդունին այնպիսի մարդիկներ որ կարծես թէ կը փախնային որ իրենց կրած բաները չտեսնեն. այս մարդիկը խառնաթխպաններ էին որ աւելորդ զէնքեր ունենալով՝ չունեցողներուն փոխ կուտային:

Մարդ մը՝ դուռնէ դուռ կ'երթար սուրեր, հրացաններ և ամէն տեսակ զէնքեր կռնակը առած, և զորս հետզհետէ կը տեղաւորէր: Լապտերի մը նշոյլէն՝ Տեղապահը Բրանչէն ճանչցաւ:

Տեղապահը Մօնէյի փողոցէն քարափը հասաւ. քարափին վրայ սև և մոխրագոյն վերարկուներով ոստանիկներ, որ այնպէս հագուեր էին իրենց վերին և ստորին աստիճանին համեմատ, անշարժ կը կենային, մինչդեռ ուրիշ մարդիկ մէկ խումբէն միւսը կ'անցնէին: Բոլոր այս մոխրագոյն սև վերարկուները ետեւէն վերցուած էին ասուի մը ծայրով, իսկ առջեւէն հրացանի մը փողէն:

Բօն-Նէօֆի վրայ գալով՝ Տեղապահը նոյն կամուրջը պահուած գտաւ մարդէ մը որ անոր մօտեցաւ:

—Ո՞վ ես դուն, հարցուց այս մարդը, չեմ կարծեր որ մեզմէ ըլլաս:

—Վասնզի քու բարեկամներդ չես ճանչնար, իմ սիրելի Լուվիէր, ըսաւ Տեղապահը իր գլխարկը հանելով:

Լուվիէր զանիկա ճանչցաւ և խոնարհութիւն ըրաւ:

Կօնդի իր ճամբան շարունակեց և մինչև Նէսլի աշտարակը իջաւ: Հոն տեսաւ մարդոց երկայն շարք մը որ պատերուն երկայնքը կը սահէին: Կարծես թէ ճիւաղներու թա-

փոր մըն էր այն, վասնզի ամէնքը սպիտակ վերարկուով փաթթուած էին: Երբ տեղ մը հասաւ, ամէն այս մարդիկը կարծես թէ իրարու ետեւէ անհետ կ'ըլլային որպէս թէ երկիրը իրենց ոտքերուն ներքև կը բացուէր: Կօնդի անկիւնի մը վրայ դրաւ իր արմուկը և դիտեց որ առաջինէն մինչև վերջինը աներեւոյթ եղաւ:

Վերջինը իր աչքերը վերցուց դիտելու համար անշուշտ թէ արդեօք զիրենք լրտեսող կա՞յ, թէև մութ էր տեսաւ Կօնդին: Շիտակ անոր վրայ քալեց և հրացանը անոր կոկորդին վրայ դրաւ:

— Հօ՛, Պ. Բօչֆոր, ըսաւ Կօնդի ծիծաղելով, հրացանով կատակ չընենք:

Բօչֆոր այս ձայնը ճանչցաւ:

—Ա՛հ, դո՞ւք էք, տէր իմ, ըսաւ ան:

—Ես ինքս եմ: Ի՞նչ տեսակ մարդիկ այսպէս երկրին խորը կ'անցընես:

— Հիւմիէր ապարանին ինձ տուած յիսուն զօրականները, որ հեծելազօրաց գունդին մէջ մտնելու սահմանուած են, և երեւ կազմած միայն իրենց սպիտակ վերարկուները ունին:

— Եւ ո՞ւր կ'երթաք:

— Իմ մէկ քանդակագործ բարեկամիս տունը. միայն կը մտնենք այն կափարիչէն ուսկից իր մարմարները կը մտցնէ:

— Շա՛տ լաւ, ըսաւ Կօնդի:

Եւ Բօչֆորին ձեռքը ուժգին սեղմեց, որ ըստ կարգի վար իջաւ և իր ետեւէն կափարիչը գոցեց.

Տեղապահը իր տունը դարձաւ: Առաւօտեան ժամը մէկն էր: Պատուհանը բացաւ և գլուխը ծռեց որ մտիկ ընէ:

Բոլոր քաղաքին մէջ այլանդակ, այլուր. անյայտ ժխոր մը կը տիրէր. կ'երեւէր որ անդունդի պէս խաւարին բոլոր փողոցներուն մէջ տարօրէն և սոսկալի բան մը կ'անցնէր: Ատեն ատեն պատրաստուող փոթորիկի կամ բարձրացող ծովու նման, մռնչիւն մը լսելի կ'ըլլար. բայց որոշ, յայտնի և իմանալի բան մը չէր երեւար միտքերու. կարծես թէ գետ-

նաշարժէ առաջ պատահող խորհրդաւոր և ստորերկրեայ աղմուկներ էին։

Ապստամբութեան գործը այսպէս բոլոր գիշերը տեւեց. հետեւեալ օրը՝ Բարիզ արթննալով կարծես թէ իր յատուկ տեսքէն դողդողաց։ Կ'երեւար թէ պաշարեալ քաղաք մըն է։ Զինուած մարդիկ՝ սպառնալից աչքերով, հրացանը ուսերնուն վրայ կը կենային. կարգախօսներ, գիշերապահ զօրքեր, ձերբակալութիւններ, հրամաններ, ահա այս բաները կը գտնէր անցորդը ամէն մէկ քայլին։ Փետրաւոր փեղոյրներ, և ոսկեզօծ սուրեր կը կեցնէին որպէսզի անոնց պոռալ տան. Կեցցէ՛ Պռուսէլ, Անկցի Մազարէն, և ո՛վ որ այս արարողութեան դիմադրէր կը նախատուէր, կ'անարգուէր և մինչև անգամ ծեծ կուտէր։ Դեռ ևս չէին սպաններ բայց կ'երեւար այս ալ փափաքի պակասութենէ չէր։

Պատնէշները մինչև Բալէ-Րուայալի մօտ տարածեր էին։ Պօնդ-Անֆանի փողոցէն մինչև Ֆէրրօնի, Սէն-Թօմաս-տիւ-Լուվրը փողոցէն մինչև Բօն-Նէօֆ, Ռիշլիէօ փողոցէն մինչև Սէնդ-Օնորէի դուռը, տասն հազարէ աւելի զինեալ մարդիկ կային, որոնց յառաջադէմները պահակաց գունդին պահնորդներուն պատերազմի հրաւէր կը կարդային, մինչ ասոնք Բալէ-Րուայալի բոլորտիքը իբրև դէտեր կեցեր էին, դոց վանդակներուն ետև, զգուշութիւն մը որմէ իրենց վիճակին տկարութիւնը կը յայտնուէր։ Այս ամէնուն մէջ կը շրջէին, հարիւր, հարիւր յիսուն, երկու հարիւր մարդէ բաղկացեալ գունդեր, լղար, կապտագոյն, ծուիկ ծուիկ հագուստներով մարդիկ, որոնք տեսակ մը դրօշներ կը կրէին, որոնց վրայ սա խօսքերը գրուած էին. Տեսէ՛ք ժողովրդեան թշուառութիւնը։ Այս մարդիկն ո՛ւսկից որ անցնէին, մոլեգին աղաղակներ լսելի կ'ըլլային, և ասոնց նման ո՛րչափ գունդեր կային որ ամէն տեղ աղաղակներ կը լսուէին։

Աննա Թագուհիին և Մազարէնի զարմանքը մեծ եղաւ, երբ արթնցան և եկան իմաց տուեին իրենց որ Միջնաքաղաքը, որ առջի իրիկուն այնքան խաղաղ վիճակի մէջ ձգեր էին,

սաստիկ վրդովեալ և խռովեալ ոտք ելած է. ուստի ո՛չ մին և ոչ միւսը չէին ուզեր հաւատալ տրուած տեղեկութիւններուն, ըսելով որ իրենց աչքով տեսնել և իրենց ականջովը լսել կ'ուզեն որպէսզի հաւատան։ Ուստի պատուհան մը բացին. ու տեսան, լսեցին եւ համոզուեցան։

Մազարէն ուսերը վերցուց և այն խուժանը քամահրելու կերպ մը ցուցուց. բայց յայտնապէս գոյնը նետեց և, սաստիկ դողալով, իր դահլիճը վազեց, իր արկղիկներուն մէջ փակեց ոսկին և բոլոր գոհարները, և ամէնէն աղուոր ադամանդէ մատանիները մատը դրաւ։ Իսկ Թագուհին, կատղած և միայն իր կամաց ձգուած Մէյլրէյ մարէշալը կանչել տուաւ, հրամայեց անոր որ որ ուզածին չափ մարդ առնէ իր հետը և երթայ տեսնէ թէ ի՞նչ կը նշանակէ այս կատակը։

Մարէշալը շատ ինքնավստահ էր և բանէ մը չէր երկնչեր, խուժանին դէմ ունենալով այն սաստիկ քամահրանքը, զոր կը տածեն զօրականներ. հարիւր յիսուն հոգի հետը առաւ և Լուվրի կամուրջէն դուրս ելնել ուզեց, բայց հոն Ռօշֆօրի և իր յիսուն այրուձիին հանդիպեցաւ, որոնց հինգ հարիւրէն աւելի մարդիկ կ'ընկերանային։ Կարելի չէր վանել այսպիսի պատնէշ մը։ Մարէշալը այս փորձը չփորձեց և քարափէն վեր ելաւ։

Բայց Բօն-Նէօֆի վրայ Լուվիէրը գտաւ իր ոստանիկներով։ Այս անգամ մարէշալը կրակ ընելու փորձեց, բայց հրացանի հարուածներով ընդունուեցաւ, մինչդեռ քարերը կարկուտի պէս կ'իջնէին պատուհաններէն։ Այն տեղ երեք մարդ թողուց մեռած։

Վաճառականներու կողմը նահանջեց մարէշալը, բայց այն տեղ ևս Բլանշէն գտաւ իր տիգաւորներով։ Գեղարդները սպառնալից իր կողմը դարձան, ուզեց բոլոր այս մոխրագոյն վերարկու հագած մարդիկը վանել, անոնք անվրդով մնացին և մարէշալը դէպի Սէնդ-Օնորէ փողոցը ընկրկեց, պատերազմի դաշտին վրայ թողուց իր զինուորներէն չորս հոգի՝ զոր դաշոյնով կամացուկ մը սպաններ էին։

Այն ատեն Սէնդ-Օնորէ փողոցը զարկաւ. բայց հոն տեսաւ Սէնդ-Էօսդաշի մուրացկանին պատնէշները զորս, ոչ միայն զինեալ մարդիկ, այլ և կիներ ու տղաք կը պաշտպանէին: Վարպետ Ֆրիքէ՝ Լուվիէրի տուած մէկ հրացանակով և սրով զինուած, իրեն պէս ստահակներու գունդ մը կազմեր էր և առաջին վիրաւոր կը հանէր:

Մարէշալը կարծեց թէ այն կողմը միւսներէն աւելի տկար կերպով պաշտպանուած է և ուզեց բռնի անցնիլ: Քանի հոգի ձիէն վար իջեցնել տուաւ որպէսզի այն պատնէշը քանդեն և տապալեն, մինչդեռ ինք և գունդին միւս մասը յարձակողները պաշտպանէին ձիով: Քանի հոգի շիտակ անցքը վերցնելու գացին, բայց հոն գերաններուն ետին, անկիւններուն և սալերուն մէջ, տակառներուն բարձունքէն՝ սոսկալի հրացանի տարափ մը սկսաւ, և անոնց պայթիւնէն, Բրիւնէլի տիգաւորները Իննոսանի գերեզմանատան անկիւնը երեւցան, իսկ Լուվիէրի մարդիկն ալ Մօնէ փողոցին անկիւնը:

Հետեւապէս Մէյլրէյ մարէշալը երկու կրակի մէջ մնացեր էր:

Բայց Մէյլրէյ մարէշալը քաջասիրտ էր, ուստի միտքը դրաւ գտնուած տեղը մեռնիլ: Հարուածի փոխարէն հարուած հասցուց և այսպէս ցաւագին ճիչեր սկսան ամբոխին մէջ հնչել: Պահակները եւս քաջ վարժուած ըլլալով, աւելի ճիշտ նշան կ՚առնէին, բայց ստահակները՝ աւելի եւս բազմաթիւ ըլլալով՝ զանոնք ճշմարիտ երկաթէ մրրիկի մը ներքեւ կը ճզմէին: Մարդիկ անոր բոլորտիքը կ՚իյնային ինչպէս որ պիտի իյնային Ռօքրուայի կամ Լէրիտայի ճակատամարտին մէջ: Մէյլրէյի թիկնապահ՝ Ֆօնդրայլի թեւը խորտակեցաւ, իր ձին գնդակ մը ընդուներ էր վիզէն և ձիաւորը, չէր կարող զայն զսպել, վասնզի ցաւէն կենդանին գրեթէ ցնորած կ՚երեւէր: Վերջապէս այս ծայրայեղ վայրկեանին մէջ էր որ և արիասիրտն իսկ երակներուն մէջ սարսուռ կը զգայ ճակտին վրայ քիրտ, և ահա յանկարծ ամբոխը բացուեցաւ, Արբր-Սէք փողոցին կողմէն գոչելով Կեցցէ՛ Տեղապահը, Կոնդի վտաւակն ու թիկնացակը դրած՝ երեւցաւ, օրհնութիւնները բաշխելով այնպէս անվրդով որպէս թէ թափօրը կ՚առաջնորդէր:

Ամէն մարդ գետին ինկաւ:

Մարէշալը ճանչցաւ զայն և անոր վազեց:

—Յանո՛ւն Աստուծոյ, քաշէ հանէ՛ զիս ասկից, ըսաւ ան, թէ ոչ իմ մարդոցս դիակը պիտի մնան այս տեղ:

Այնչափ մեծ էր դղրդիւնն որ կարելի չէր նոյն միջոցին երկինքի որոտումն իսկ լսել: Կոնդի ձեռքը վեր վերցուց և և լռութիւն պահանջեց: Ամէնքը լռեցին:

—Տղա՛քս, ըսաւ ան, ահաւասիկ Մէյլրէյ մարէշալը՝ որուն դիտաւորութիւնը ծուռ կը մեկնէք, և որ կը խոստանայ, Լուվր դառնալուն ձեր կողմէն թագուհիէն խնդրել, ձեր Պրուսէլի ազատութիւնը: Միթէ կը խոստանա՞ս, մարէշալ, յարեց Կոնդի Մէյլրէյի կողմը դառնալով:

—Գլո՛ւխս վկայ, գոչեց ան, յօժարակամ կը խոստանամ: Չէի յուսար ըսաւ այսչափով ազատիլ:

—Ձեզի իր ազնուորդի խօսքը կուտայ, ըսաւ Կոնդի:

Մարէշալը ձեռքը վերցուց ի նշան հաւանութեան:

—Կեցցէ՛ Տեղապահը, գոչեց ամբոխը: Քանի մը ձայներ Կեցցէ՛ մարէշալն իսկ ըսին, բայց ամէնքը միաձայն կրկնեցին. Վա՛ր Մազարէնը:

Ամբոխը ճամբայ բացաւ, Սէնդ-Օնորէի փողոցինը ամէնէն կարճ էր: Պատնէշները բացին, մարէշալը և իր մնացած խումբը նահանջեցին, որոնց առջեւէն կ՚երթային Ֆրիքէ և իր ստահակները, որոնցմէ ոմանք թմբուկ զարնելու ձեւեր կ՚ընէին, ուրիշներ՝ իբր փողոցի պէս կը հնչէին:

Գրեթէ յաղթական թափօր մըն էր. միայն պահակներուն ետեւէն պատնէշները կը գոցուէին, մարէշալը իր կռուփները կը կրծէր:

Նոյն միջոցին, ինչպէս ըսինք, Մազարէն իր դահլիճն էր և մանր մունր գործերը կարգի կը դնէր: Տ՚Արդանեանը կանչել տուեր էր, բայց նոյն ժխորին մէջ չէր յուսար տեսնել

գայն, վասնզի տ'Արդանեան նոյն պահուն պաշտօն չունէր: Տասը վայրկեանէն տեղակալը սեմին վրայ երեւցաւ, իր անբաժանելի Բօրթօսը ետեւը ձգած:

—Ա՛հ, եկո՛ւր, Պ. տ'Արդանեան գոչեց Կարտինալը և բարի՛ եկար, նոյնպէս քու բարեկամդ: Բայց այս անիծեալ Բարիզի մէջ ինչե՛ր կ'անցնին:

—Տէր իմ, լաւ բաներ չեն անցներ, ըսաւ տ'Արդանեան գլուխը օրրելով, քաղաքը բոլորովին ապստամբած է երբ քիչ մը առաջ երբ Մօնդօրկէօյլ փողոցէն կ'անցնէի, իմ համազգեստս չյարգելով և թերեւս իմ համազգեստին պատճառաւ, մեզ ստիպել ուզեցին որ պոռանք. Կեցցէ՛ Պրուսէլ. և պէ՞տք է ըսել, տէր իմ, թէ ուրիշ ինչ բան պոռալ տալ ուզեցին:

—Ըսէ՛, ըսէ՛:

—Եւ Անկցի՛ Մազարէն: Իրաւ որ, այս է ամէնուն աղաղակ:

Մազարէն ժպտեցաւ, բայց գոյնը նետեց:

—Եւ միթէ դուք ալ պոռացի՞ք, ըսաւ ան:

—Հաւա՛տս վկայ, չպոռացի, ըսաւ տ'Արդանեան, պոռալու փափաք չունէի. Պ. տիւ Վալլօն հարբուխ եղած է և այն ալ չպոռաց: Այն ատեն, տէր իմ...:

—Այն ատեն, ի՞նչ, հարցուց Մազարէն:

—Տեսէ՛ք իմ գլխարկս և վերարկուս:

Եւ տ'Արդանեան ցոյց տուաւ վերարկուին չորս և գըլխարկին երկու գնդակի ծակերը: Իսկ Բօրթօսի զգեստին գալով՝ գեղարդի հարուած մը կողին կողմէն պատռեր և հրացանակի հարուած մը իր փետուրը կտրեր էր:

—Կրա՛ղ, ըսաւ Կարտինալը մտախոհ և միամիտ սքանչացումով մը երկու մարդոց երեսը նայելով, ես ձեր տեղը պիտի պոռայի:

Նոյն միջոցին թնդիւնն աւելի մօտէն բարձրացաւ: Շատ

Մազարէն իր չորս դին նայելով ճակատը սրբեց: Շատ կը փափաքէր պատուհանը ելնել՝ բայց չէր համարձակեր:

—Նայինք ի՞նչ կը դառնայ, Պ. տ'Արդանեան ըսաւ ան:

Տ'Արդանեան պատուհանը գնաց իր սովորական անհոգութեամբը:

—Հօ՛, հօ՛, ըսաւ ան, ի՞նչ է այս: Ահաւասիկ Մէյլրէյ մարէշալը որ առանց գլխարկի կուգայ, Ֆօնդրայլն ալ թեւը կապեր է, վիրաւոր պահակներ կան, արիւնլուայ ձիեր... է՛հ, բայց ի՞նչ կ'ընեն պահնորդները, նշան կ'առնեն, հիմակ պիտի պարպե՛ն:

—Անոնց հրաման եղաւ որ ժողովրդեան վրայ քաշեն, գոչեց Մազարէն, եթէ ժողովուրդը Բալէ-Ռուայալի մօտենայ:

—Բայց եթէ հրացան պարպեն, ամէն բան տակնուվրայ պիտի ըլլայ, գոչեց տ'Արդանեան:

—Վանդակներն ունինք:

—Այս հինգ վայրկեանի համար միայն, վանդակնե՛րը. պիտի քակեն, ծռեն, փշրեն զանոնք...: Մի՛ քաշէք, թշուառականնե՛ր, գոչեց տ'Արդանեան պատուհանը բանալով:

Այս պատուէրին հակառակ՝ որ դղրդիւնին ատեն չէր լըուած, երեք չորս հրացանի հարուածներ հնչեցին. յետոյ սասկալի հրացանի պայթիւններ անոնց յաջորդեցին. Բալէ-Ռուայեալի ճակտին վրայ գնդակներուն շաչիւնը լսուեցաւ, անոնցմէ մին տ'Արդանեանի թեւին տակէն անցաւ և գնաց հայելի մը կոտրեց որուն մէջ ինքնահաճութեամբ Բօրթօս ինքզինքը կը նայէր:

—Վա՛յ ինձ, գոչեց Կարտինալը, վենետիկի հայելին գնա՜ց:

—Օ'հ, տէր իմ, ըսաւ տ'Արդանեան, պատուհանը գոցելով հանդարտօրէն, դեռ եւս մի՛ լար, չարժեր որ լաս, վասն զի հաւանական է որ մէկ ժամէն հայելի մը անգամ չպիտի մնայ Բալէ-Ռուայալի մէջ, թէ՛ Վենետիկի հայելի ըլլայ և թէ Բարիզի:

—Ուրեմն ի՞նչ է քու կարծիքդ, հարցուց Կարտինալը դողահար:

—Է՛հ, գլխո՛ւս վկայ, պէտք է անոնց յանձնել Պրուսէլը, քանի որ կը պահանջեն: Ի՞նչ պիտի ընես խորհրդական մը Պառլամէնդի մէջ. բանի մը օգուտ չունի:

—Իսկ դո՛ւ, Պ. Վալլօն, ի՞նչ կարծիք ունիս. ի՞նչ կ'ընէիր։

—Պրուսէլը կը յանձնէի, ըսաւ Բօրթօս։

—Եկէ՛ք, եկէ՛ք, պա՛րոններ, գոչեց Մազարէն, երթամ պիտի Թագուհիին խօսիմ այս մասին։

Նրբագաւթին ծայրը Մազարէն կանգ առաւ։

—Կարող եմ ձեր վրայ անկասկած ըլլալ, այնպէս չէ՞, պարոններ ըսաւ ան։

—Երկու անգամ մէկու մը անձնուէր չենք ըլլար, ըսաւ տ'Արդանեան, մենք ձեզի յարեցանք, հրամայեցէ՛ք և պիտի հնազանդինք։

—Լա՛ւ ուրեմն, ըսաւ Մազարէն, այս գահլիճը մտէք և սպասեցէք։

Եւ պտոյտ մը ընելով՝ սրահը մտաւ տարբեր դռնէ մը։

Դ.

ԽՌՈՎՈՒԹԻՒՆՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹԻՒՆ ԿԸ ԴԱՌՆԱՅ

Այն գահլիճը ուր մտցուցեր էին տ'Արդանեան և Բօրթօսը Թագուհիին գտնուած սրահէն զատուած էր միայն սրահակներէ։ Այս վարագոյրը շատ խիստ չըլլալով կարելի էր այդ խօսուածը լսել, մինչդեռ երկու վարագոյրներու մէջ գտնուած բացուածքը, թէև շատ նեղ էր, տեսնելու կը ներէր։

Թագուհին սրահին մէջ ոտքի վրայ էր, բարկութենէն աժգունած. բայց սակայն իր իշխանութիւնը իր անձին վրայ այնքան մեծ էր որ կարծես թէ բնաւ այլայլութիւն մը չէր զգար։ Իր ետեւը կեցեր էին Բոմէնժ, Վիլքիէ և Կիդօ, մարդոց ետեւն ալ կիները։

Իր առջեւը կանգուն՝ Սէկիէ օրինապետը, այն որ՝ քսան տարի առաջ այնչափ հալածեր էր Թագուհին, կը պատմէր

թէ իր կառքը ջարդեր էր, թէ զինքը հալածեր էին, թէ Օ... ապարանը նետեր էր ինքզինքը, թէ ապարանն իսկոյն արշաւեր, կողոպտեր թալլեր էին. բարեբախտաբար վարագոյրին ետեւը ծածուկ գահլիճ մը գտնելու ժամանակ գտեր էր, ուր պառաւ մը զինքը փակեր էր իր Մօ եպիսկոպոս կրօնակից եղբօր հետ։ Այնտեղ այնպէս մեծ վտանգ մը հասեր էր, կատաղի ապստամբները նոյն գահլիճին այնպիսի սպառնալիքով մօտեցեր էին, որ օրինապետը կարծեր էր թէ իր եղբօրը խոստովանանք ըներ էր որպէսզի մեռնելու պատրաստ գտնուի եթէ երեւան ելնէ։ Բարեբախտաբար զինքը չեն գտեր, ժողովուրդը կարծեր էր թէ իր յետին ժամը հասեր էր և թէ փախուստ տուած է ետեւի դուռնէ մը, և քաշուելովն ինք կարող եղեր է ճամբայ գտնել և խոյս տալ։ Այն ատեն Օ... մարքիզուհիին հագուստով ծպտեալ ապարանէն դուրս ելեր, իր պահնորդ հարիւրապետին և երկու պահակներու դիակին վրայէն անցնելով, որ փողոցին դուռը պահպանելու ատեն զարնուեր սպաննուեր էին։

Այս պատմութեան ատեն՝ Մազարէն ներս մտեր էր, և առանց աղմուկ հանելու Թագուհիին մօտ սպրդեր մտիկ կ'ընէր։

—Լա՛ւ ուրեմն, հարցուց Թագուհին երբ օրինապետը խօսքը աւարտեց. ի՞նչ կը խորհիք այս մասին։

—Կը խորհիմ որ գործը շատ ծանրակշիռ է, տիկին։

—Բայց ի՞նչ խորհուրդ կուտաս ինծի։

—Խորհուրդ մը ունիմ տալու Ձեր Վեհափառութեան, բայց չեմ համարձակիր։

—Համարձակէ՛, համարձակէ, պարոն, ըսաւ Թագուհին դառն ժպիտով մը, դուն ուրիշ ծանրագոյն բաներ ընելու համարձակած ես։

Օրինապետը կարմրեցաւ և քանի մը բառ թոթովեց։

—Խնդիրն անցեալին վրայ չէ, այլ ներկային, ըսաւ Թագուհին։ Ըսիր թէ խորհուրդ մը ունիս ինծի տալու, ի՞նչ է այդ խորհուրդը։

—Տիկի՛ն, ըսաւ օրինապետը վարանելով, Պրուսէլի ազատութիւն տալ է։

Թագուհին՝ թէև շատ դեղնած էր, ակներև աւելի եւս դեղնեցաւ և դէմքը կարկամեց։

—Ազա՛տ թողում Պրուսէլը, ըսաւ ան, երբե՛ք:

Նոյն պահուն դուրսի սրահին մէջ ոտքի ձայներ լսուեցան, և Մէյլրէյ մարքիզը առանց իր գալուստը իմացնելու, դրան սեմին վրայ երեւցաւ։

—Հա՛, եկա՞ր, մարքիզ, գոչեց Աննա Թագուհին ուրախութեամբ, յուսամ որ բոլոր այն սինլքորները կարգի բերիր՝

—Տիկին, ըսաւ մարքիզը, Բօն-Նէօֆի վրայ երեք մարդ թողուցի, վաճառանոցը՝ չորս հատ, Արպր-Սէքի փողոցին անկիւնը՝ վեց հատ և երկու հատ ալ ձեր պալատին դրան առջև. ընդամէնը տասնըհինգ հոգի։ Տաս կամ տասներկու հատ վիրաւոր հետս բերի: Իմ գլխարկս չգիտեմ ուր մնաց, գնդակ մը առաւ տարաւ զայն, և շատ հաւանական է որ իմ գլխարկիս քովը պիտի երթայի եթէ Պ. Տեղապահը չըլլար, որ եկաւ զիս վտանգէ ազատեց։

—Ա՛հ, ճիշտ է, ըսաւ Թագուհին, շատ պիտի զարմանայի եթէ այն կարճոտն ու ոլորած սրունքով մարդը այս գործին մէջ մաս չունենար:

—Տիկին, ըսաւ Մէյլրէյ ծիծաղելով, շատ մի՛ բանբասեր զանիկա իմ առջեւս, վասնզի ինձ... ծառայութիւնը դեռ շատ նոր է:

—Լա՛ւ, ըսաւ Թագուհին, ո՛րչափ ուզես անոր երախտագէտ եղիր, բայց ե՛ս, ես այս մասին ազատ եմ։ Ահաւասիկ ողջ առողջ եկար, և իմ միակ փափաքս այս էր. ոչ միայն բարի եկար. այլ և բարի վերադարձար։

—Այո՛, տիկին, բայց բարի վերադարձայ պայմանաւ մը, այսինքն ժողովրդեան կամքը ձեզի յայտնելու պաշտօն ունիմ։

—Ժողովրդեան կա՛մքը, ըսաւ Աննա Թագուհին ունքը պռստելով։ — Հօ՛, հօ՛, պարոն մարքիզ, կ'երեւայ թէ մեծ վտանգի մը մէջ գտնուած ես որ այդպիսի այլանդակ պատգամաւորութիւն մը յանձն առեր ես:

Եւ այս խօսքերը հեգնական շեշտով մը արտասանեց, որ մարքիզին ուշադրութենէն չվրիպեցաւ:

—Ներեցէք, տիկին ըսաւ մարքիզը, ես փաստաբան չեմ, պատերազմի մարդ եմ և հետեւապէս չեմ ըմբռներ թերեւս բառերուն արժէքը. պէտք էր ըսել, չէ թէ ժողովրդեան կամքն այլ փափաքը։ Իսկ ձեր տուած պատասխանին նայելով, կարծեմ թէ ըսել կ'ուզէք որ վախցայ։

Թագուհին ժպտեցաւ։

—Լա՛ւ, ճիշտ է, տիկին, վախցայ. երրորդ անգամն է որ այս բանը կը պատահի կենացս մէջ, և սակայն տասն երկու ճակատամարտի և չգիտեմ ո՛րչափ կռիւներու մէջ գտնուած մարդ մը եմ. այո՛, վախցայ, և աւելի լաւ կը համարեմ Ձեր Վեհափառութեան առջեւը գտնուիլ, թէև սպառնալից ըլլայ իր ժպիտը, քան թէ այն դժոխոց սազաններու առջև որոնց մինչև այս տեղ ինծի ուղեկից եղան և չգիտեմ թէ ուստի՛ ելան։

—Ապրիս, ըսաւ կամացուկ մը տ'Արդանեան, լաւ պատասխան մը տուիր։

—Լա՛ւ ուրեմն, ըսաւ Թագուհին շրթները խածնելով մինչդեռ պալատականները իրարու երես կը նայէին զարմանօք, ի՞նչ է ժողովրդեանս այդ փափաքը։

—Կը փափաքի որ Պրուսէլ իրեն յանձնուի, տիկին, ըսաւ մարքիզը։

—Երբե՛ք, ըսաւ Թագուհին, երբե՛ք։

—Ձեր Վեհափառութիւնն ազատ է, ըսաւ Մէյլրէյ ողջունելով և քայլ մը ընկրկելով։

—Ո՞ւր կ'երթաս, մարքիզ, հարցուց Թագուհին։

—Պիտի երթամ, Վեհափառ Թագուհի ձեր պատասխանը հաղորդել անոնց որ կ'սպասեն:

—Կեցի՛ր, մարքիզ, չեմ ուզեր ապստամբներու հետ բանակցելու կերպարան մը առնուլ։

—Տիկին, ես խօսք տուի, ըսաւ մարքիզը։

—Ասով ըսել կ'ուզես...։

—Թէ ստիպուած եմ վար իջնելու եթէ չարգիլէք:

Աննա Թագուհւոյն աչքերը փայլակներ արձակեցին։

—Ո՛հ, պարոն, այդ բան մը չէ, ըսաւ ան, քիչնէ աւելի մեծ մարդիկ արգիլել տուած եմ. կ'իդօ.

Մազարէն առաջ նետուեցաւ։

—Տիկին ըսաւ, արդեօք ես ես ձեզի խորհուրդ մը տալու իշխե՞մ...

—Արդեօք Պրուսէլը հո տալո՞ւ խորհուրդ մըն է քուկդ ալ, պարոն։ Եթէ այդ է կրնաս զանց ընել:

—Ո՛չ ըսաւ Մազարէն, թէեւ ան որ ուրիշ խորհուրդի չափ արժէք ունի։

—Ի՞նչ է ուրեմն։

—Այս է Տեղապահը կոչել:

—Տեղապա՛հը, գոչեց Թագուհին, այն անհելի խառնաբա՞րը. ան պատճառեց բոլոր այս ապստամբութիւնը։

—Այդ այլ նոր պատճառ մըն է, ըսաւ Մազարէն եթէ ան ըրաւ, կրնայ աւրել։

—Եւ ահա, տիկին, ըսաւ Գոմէնժ որ պատուհանի մը մօտ կենալով դուրս կը նայէր, ահա՛, պատեհ առիթ է, վասնզի իր օրհնութիւնը կուտայ Տեղապահը Բոլէ-Րուայալի հրապարակը:

Թագուհին դէպի պատուհանը վազեց։

—Ճշմարիտ է, ըսաւ, վարպետ կեղծաւորը նայեցէ՛ք, ծունր կը դնէ, թէեւ լոկ Տեղապահ մըն է. մինչդեռ եթէ անոր տեղը ըլլայի գիս կտոր կտոր պիտի ընէին, թէեւ կարդինալ եմ։ Ուստի կը պնդեմ տիկին, իմ փափաքիս վրայ (Մազարէն այս բառը չեշտեց) որ Ձեր Վեհափառութիւնն Տեղապահը ընդունի։

—Եւ ինչո՞ւ համար, դուն ես, չես ըսեր քու կամաց վրայ, պատասխանեց Թագուհին ցած ձայնով։

Մազարէն ծռեցաւ:

Թագուհին պահ մը մտմտած. յետոյ գլուխը բառնալով,

—Պարո՛ն մարէշալ ըսաւ նա, գնա՛ Պ. Տեղապահը գտի՛ր եւ ինծի բեր:

—Եւ ի՞նչ ըսեմ ժողովրդեան, հարցուց մարէշալը՝

—Ըսէ որ համբերութիւն ունենայ, պատասխանեց Աննա Թագուհին, ես արդէն բաւական կը համբերեմ։

Հպարտ Սպանուհւոյն ձայնին մէջ այնպէս հրամայական՝ շեշտ մը կար որ մարէշալը դիտողութիւն մը չըրաւ, ծռեցաւ եւ դուրս ելաւ։

Տ'Արդանեան Բօրթօսի կողմը դարձաւ։

—Այս ամէնն ինչպէս պիտի լմննայ, ըսաւ նա։

—Պիտի տեսնենք անշուշտ, ըսաւ Բօրթօս իր հանդարտ կերպովը։

Նոյն միջոցին Աննա Թագուհին Գոմէնժի մօտ երթալով անոր մեղմիկ կը խօսէր:

Մազարէն՝ մտայոյզ, տ'Արդանեանի եւ Բօրթօսի կողմը կը նայէր։

Միւս հանդիսականները մեղմաձայն իրարու հետ խօսք կը փոխանակէին:

Դուռը նորէն բացուեցաւ, մարէշալն երեւցաւ, իր ետեւէն կուգար Տեղապահը։

—Ահա, տիկին ըսաւ, Պ. Կօնդի որ Ձեր Վեհափառութեան հրամանին համեմատ փութաց գալու:

Թագուհին քանի մը քայլ առաւ զանիկա դիմաւորելու համար եւ ապա կեցաւ՝ պաղ, խստադէմ, անշարժ եւ ստորին շուրթն արհամարհանօք դուրս ցցուած։

Կօնդի յարգանօք խոնարհութիւն մը ըրաւ։

—Լա՛ւ, պարոն, ըսաւ Թագուհին, ի՞նչ կ'ըսես այս խռովութեան վրայ:

—Թէ այլեւս խռովութիւն չէ, տիկին պատասխանեց Տեղապահը, այլ ապստամբութիւն մը։

—Ապստամբութիւնը այն անձերուն մէջն է որ կը կարծեն թէ ժողովուրդս կարող է ապստամբիլ, գոչեց Աննա Թագուհին որ անկարող էր կեղծել Տեղապահին առջեւ քանի որ զանիկա՝ Թերեւս իրաւամբ՝ բոլոր այս վրդովման գրգիռը կը սեպէր։ Ապստամբութի՞ւն, ահա ինչպէս կ'անուանեն նոյնը փափաքողներն իրենց գրգռած շարժումը. բայց, սպասէ՛,

Թագաւորին իշխանութիւնն ամէն բան կարգի պիտի բերէ։

—Միթէ այդ ըսելո՞ւ համար է, տիկին, պատասխանեց Կոնդի պաղութեամբ, որ Ձեր Վեհափառութիւնը զիս իր ներկայութեան ընդունելով պատուեց։

—Ո՛չ, սիրելիդ իմ Տեղապահ, ըսաւ Մազարէն այլ կարծիք հարցնել է մեր միտքն այս ցաւալի պարագայիս մէջ։

—Միթէ իրա՞ւ է, հարցուց Կոնդի զարմացող մարդու մը կերպարան ցոյց տալով, որ Նորին Վեհափառութիւնը զիս կանչել տուաւ խորհուրդ մը հարցնելու համար։

—Այո՛, ըսաւ Թագուհին, այսպէս կամեցանք։

Տեղապահը ծռեցաւ։

—Ուրեմն, Վեհափառ տիկին, կը կամիք․․․։

—Որ ըսէիր թէ ի՞նչ կ՚ընէիր անոր տեղ, փութաց պատասխանելու Մազարէն։

Տեղապահը Թագուհւոյն նայեցաւ, որ հաստատական նշան մը ըրաւ։

—Եթէ ես Նորին Վեհափառութեան տեղը ըլլայի, ըսաւ Կոնդի պաղութեամբ, չպիտի վարանէի. Պրուսէլը պիտի յանձնէի։

—Եւ եթէ չյանձնեմ, գոչեց Թագուհին, ի՞նչ կարծէք որ պատահի։

—Կարծեմ թէ վաղը քար քարի վրայ չպիտի մնայ ի Բարիզ, ըսաւ մարէշալը։

—Ես քեզի չեմ հարցներ այս բանս, ըսաւ Թագուհին չոր ձայնով մը և առանց գլուխն իսկ դարձնելու, այլ խօսքս Պ. Կոնդիին կ՚ուղղեմ։

—Եթէ, Վեհափառ տիկին, ինծի կը հարցնէք, պատասխանեց Տեղապահը նոյն հանդարտութեամբ, պիտի ըսեմ ձեզի որ ամենայն մասամբ Պ. մարէշալին համամիտ եմ։

Թագուհւոյն երեսը կարմրեցաւ, իր գեղեցիկ կապոյտ աչերը գլխէն դուրս ելնելու մօտ երեւցան. իր կարմրուն շրթները՝ զոր ժամանակին բոլոր քերթողները նուռի ծաղկի հետ համեմատեր էին, դեղնեցան և կատղութենէ դողացին. նոյնիսկ

Մազարէնին երկիւղ ազդեց թէև սա՛ սովորած էր այս վրդովեալ տան ներքին զայրոյթներուն։

—Պրուսէլը յանձնեմ, գոչեց նա վերջապէս սոսկալի ժպիտով մը. Աստուա՛ծ վկայ, ի՞նչ ազուոր խորհուրդ է այս. յայտնի կ՚երեւի որ քահանայ մըն է տուողը։

Կոնդի անվրդով մնաց։ Նոյն օրուան նախատինքն առաջինին հեգնութեանց պէս իր վրայէն կարծես թէ կը սահէին. բայց ատելութիւնն ու վրէժխնդրութիւնը իր սրտին մէջ լռին և կաթիլ առ կաթիլ կ՚ամփոփուէր։ Պաղ դէմքով Թագուհւոյն նայեցաւ, որ Մազարէնը կը գրգռէր թէ իր կողմէ ևս բան մը ըսէ։

Մազարէն՝ իր սովորութեան համեմատ՝ շատ կը խորհէր և քիչ կը խօսէր։

—Հէ՛, հէ՛, աղուո՛ր խորհուրդ, բարեկամի՛ խորհուրդ։ Ես ալ այն Պ. Պրուսէլը կը յանձնէի մեռած կամ կենդանի, և ամէն բան վերջ կ՚առնուր։

—Եթէ մեռած յանձնէիր, ամէն ինչ վերջ կ՚առնէր ինչպէս որ կ՚ըսես, տէր իմ, բայց քու սպասածէդ տարբեր կերպով մը։

—Մեռած կամ կենդանի՞ ըսի, վրայ բերաւ Մազարէն, խօսելու կերպ մըն է այս. գիտէք որ շատ լաւ չեմ իմանար գաղիերէնը։ Մինչդեռ դու այնչափ լաւ կը խօսիս և կը գրես, դո՛ւ, Պ. Տեղապահ։

—Ահաւասիկ պետութեան խորհուրդ մը, ըսաւ տ՚Արդանեան Բօրթօսի, բայց լաւագոյններն ունեցանք ի Ռօշէլ Աթօսի և Արամիսի հետ։

—Սէն-Ժէրվէի մարտկոցը, ըսաւ Բօրթօս։

—Անդ և այլուր։

Տեղապահը թողուց որ փոթորիկն անցնի և վրայ բերաւ՝ միշտ նոյն անսասանութեամբ։

—Տիկին, եթէ Ձեր Վեհափառութիւնն իմ առաջարկած խորհուրդս իր ճաշակին համեմատ չգտներ, պատճառն անշուշտ հետեւելու համար լաւագոյններն ունի. ես Թագուհւոյն ու իր

խորհրդակիցներուն իմաստութիւնը քաջ գիտնալով չեմ կրնար երեւակայել որ մայրաքաղաքս այսպէս խռովութեան մէջ թողուն որ վաղը կրնայ յեղափոխութիւն մը բերել:

—Այսպէս ուրեմն՝ ըստ քու կարծեաց, վրայ բերաւ Սպանուհին հեգնելով՝ որ բարկութենէ չըթները կ'ուռէր. այս իրիկուան խռովութիւնը, որ այսօր արդէն ապստամբութիւն մըն է, կրնայ վաղը յեղափոխութեան դառնալ:

—Այո՛, տիկին, ըսաւ տեղապահը ծանրօրէն:

—Բայց խօսքիդ նայելով, պարոն, միթէ ժողովուրդները ամէն սանձ կտրե՞ր են:

—Այս տարի թագաւորներու համար ձախորդ է ըսաւ Կոնտի գլուխը ցնցելով, նայեցէք Անգլիոյ, տիկին:

—Այո՛, բայց բարեբախտօրէն Գաղղիոյ մէջ Օլիվիէ Գրոմվէլ մը չունինք, պատասխանեց թագուհին:

—Ո՞վ գիտէ, ըսաւ Կոնտի, այս մարդիկ չանթի կը նմանին. երբ զարնեն այն ատեն միայն կը ճանչցուին:

Ամէն մարդ սարսուռ մը զգաց և պահ մը լռութիւն տիրեց:

Նոյն պահուն թագուհին իր երկու ձեռքը կուրծքին վրայ յեներ էր. կ'երեւէր որ իր սրտին ուժգին բաբախումները կը ճնշէր:

—Բորթո՛ս, մրմռաց տ'Արդանեան, քաջ նայէ սա քահանային:

—Լա՛ւ, կը նայիմ, ըսաւ Բորթոս, ի՞նչ կայ:

—Լա՛ւ, խօսք մարդ մըն է:

Բորթոս զարմացած դէմքով տ'Արդանեանի նայեցաւ. ակն յայտնի էր որ լիապէս չէր ըմբռներ իր բարեկամին բանը:

—Ձեր Վեհափառութիւնը, շարայարեց Տեղապահն անգթօրէն, ուրեմն պարտ ու պատշաճ միջոցները պիտի ձեռք առնէ. բայց կը գուշակեմ որ անհարկաւ են անոնք և ըմբոստներն աւելի եւս գրգռելու պիտի ծառայեն:

—Լա՛ւ ուրեմն, դո՛ւ, Պ. Տեղապահ, որ այնչափ իշխանութիւն ունիս անոնց վրայ և մեր բարեկամն ես. ըսաւ թագուհին հեգնօրէն, դուն պիտի խաղաղես զանոնք օրհնութիւններդ տալով:

—Կարելի է շատ ուշ պիտի լինի, ըսաւ Կոնտի միշտ սառնութեամբ, և կարելի է իմ ալ ամէն ազդեցութիւնս կորսուի, մինչդեռ անոնց Պրուսէլը յանձնելով՝ Ձեր Վեհափառութիւնը շարիքը իր արմատէն կը կտրէ և՝ իրաւունք կ'ստանայ ապստամբութեան նոր փորձ մը անխնայ պատժելու:

—Եւ միթէ այս իրաւունքը չունի՞մ, գոչեց թագուհին:

—Եթէ ունիք, գործածեցէք, պատասխանեց Կոնտի:

—Կրո՛ղ, ըսաւ տ'Արդանեան Բորթոսին, անհաւատի իմ սիրած բնութիւնս, ինչո՞ւ համար պաշտօնեայ չէ, և ինչո՞ւ իր տ'Արդանեանը չեմ, փոխանակ սա դատարկ Մազարէնին ըլլալու: Ա՛հ, թշուառական, ինչ աղուոր հարուածներ պիտի տայինք միասին:

—Այո՛, ըսաւ Բորթոս:

Թագուհին նշան մը ընելով՝ պալատականները ճամբեց, Մազարէնէն զատ. Կոնտի գլուխը ծռեց և միւսներուն պէս քաշուիլ ուզեց:

—Կեցի՛ր, պարոն, ըսաւ թագուհին:

—Լա՛ւ, ըսաւ Կոնտի իւրովի հիմակ պիտի զիջանի:

—Հիմակ զանիկա պիտի սպաննել տայ, ըսաւ տ'Արդանեան Բորթոսին, բայց սա իրաւ է որ իմ ձեռօքս չպիտի սպաննէ: Կ'երդնում ես Աստուծոյ ընդհակառակն. որ եթէ վրան քալեն, ես ալ վրայ քալողներուն վրայ պիտի յարձակիմ:

—Ե՛ս ալ, ըսաւ Բորթոս:

—Լա՛ւ, մրմռաց Մազարէն աթոռ մը առնելով, նոր բաներ պիտի տեսնենք:

Թագուհին դուրս ելնող անձերուն ետեւէն կը նայէր: Երբ վերջինը դուռը գոցեց, գլուխը դարձուց նա: Կ'երեւէր որ [illegible]ուր ճգամբ իր զայրոյթը զսպելու կը ջանար, կը հովահարէր, հոտաւէտ աղեր կը հոտոտէր, վեր վար կը քալէր: Մազարէն իր աթոռին վրայ կը մնար, և կարծես թէ կը մտմըտար: Կոնտի, որ սկսեր էր անհանգիստ ըլլալ, բոլոր վիժակներն աչքը կը զննէր, իր երկար պարեգօտին ներքև կրած զրահը կը շօշափէր, և ատեն ատեն իր թիկնոցակին ներքև

կը փնտռէր թէ արդեօք սպանիական ընտիր դաշոյնը զոր պահեր էր իր ձեռքին մօ՞տ էր։

—Նայինք, ըսաւ Թագուհին վերջապէս կանգ առնելով, նայինք հիմակ որ առանձին ենք, կրկնէ խորհրդդ, Պ. Տեղապահ։

—Ահաւասիկ տիկին մտածութիւն մը կեղծել, հրապարակաւ սխալմունք մը խոստովանիլ, և այս է ուժեղ կառավարութեանց ոյժը, Պրուսէլը իր բանտէն հանել և ժողովրդեան յանձնել։

—Ո՜հ, գոչեց Աւստրիոյ տան Աննան, այսչափ նուաստանամ։ Թագուհին ե՞մ, այո՛ թէ ոչ։ Բոլոր այս սինլքորներն որ կ'ոռնան, չե՞ն միթէ իմ հպատակաց ամբոխը։ Միթէ չունի՞մ բարեկամներ, պահակներ։ Ա՜հ, Նոտր-Տա՛մ վկայ, ինչպէս կ'ըսէր Կաթերին Թագուհին, չարայարեց նա իր խօսքէն բորբոքելով, փոխանակ այն վատազգի Պրուսէլը յանձնելու լաւ եւս ունիմ իմ ձեռօքս զանիկա խեղդել։

Եւ կարկամած բռունքով Կոնդիի վրայ սրացաւ, զոր նոյն պահուն գէթ Պրուսէլն ատելուն չափ զանիկա եւս կ'ատէր։

Կոնդի անշարժ մնաց, իր դէմքին և ոչ մէկ մկանունքը չթրթռաց. միայն իր սառնագին ակնարկը սլաքի պէս զարկաւ Թագուհւոյն զայրագին ակնարկին։

—Ահա մեռած է այս մարդը, թէ որ տակաւին արքունիքը Վիդրի մը կը գտնուի, և Վիդրին ներս մտնէ այս պահուն, ըսաւ Կասքոնը։ Բայց ես, այս բարի եպիսկոպոսին մօտ չհասած այն Վիդրին, զանիկա պիտի սպաննեմ, և իրաւ, Պ. Կարտինալ Մազարէնն իմ ըրածս չափազանց պիտի հաւնի։

—Լաւութիւն, ըսաւ Բորթոս, մտիկ ըրէ ուրեմն։

—Տիկին, գոչեց Կարտինալն Աննա Թագուհին բռնելով և ետև քաշելով, տիկի՛ն, ի՞նչ կ'ընէք։

Յետոյ սպանիական լեզուով աւելցուց.

—Աննա՛, միթէ յիմա՞ր էք. այս տեղ, դուք թէև Թագուհի, ստորին անձի պէս կը վիճիք, և միթէ չէք տեսներ որ ձեր առջև, այս քահանային անձին մէջ, բոլոր Բարիզի ժողովուրդը ունիք, որուն նախատինք մը ընել վտանգաւոր է այս

պահուս, և եթէ այս քահանան կամենայ, մէկ ժամու մէջ ձեր թագը կը կորսնցընէք։ Ո՜հ, ուրեմն, վերջէն, ուրիշ պարագայի մէջ անյողդողդ և կորովի երևցէք. բայց այսօր ժամը չէ. այսօր շողոքորթեցէք և գգուեցէք եթէ ոչ գռեհիկ կին մը կը դառնաք։

Այս խօսքին առաջին բառերը լսելուն՝ տ'Արդանեան Բորթոսին թևը բռներ և սաստիկ սեղմեր էր. յետոյ երբ Մազարէն լռեց։

—Բորթոս, ըսաւ մեղմիկ, մի՛ ըսէր բնաւ Մազարէնի առջև թէ սպանիական լեզուն կը հասկնամ, թէ ոչ կորսուած մարդ մըն եմ, նոյնպէս դուն։

—Լա՛ւ, ըսաւ Բորթոս։

Այս ծանր կշտամբանքը, որ Մազարէնի յատուկ ճարտասանութեան դրոշմն ունէր, երբ իտալերէն կամ սպանիացի լեզուն խօսէր և զոր ամբողջովին կը կորսնցընէր երբ գաղղիերէն խօսէր, անթափանցելի դէմքով մը արտասանեց. սա գուշակեց միայն Կոնդի, թէև ճարտար դիմագէտ էր, թէ այն սաստը աւելի չափաւոր ըլլալու ազդարարութիւն մըն էր։

Միւս կողմէ Թագուհին յանդիմանուելով յանկարծ մեղմացաւ. կերպով մը իր աչքերէն կրակը, այտերէն արիւնը և շրթներէն թըրթռուն բարկութիւնը վանեց։ Նստաւ ան, և արտասուաթոր ձայնով մը իր վհատ թևերն երկու կողմը ձգելով։

—Ներէ ինձ, Պ. Տեղապահ, ըսաւ ան, և այս ցասումս իմ վիշտերուս վերագրէ։ Կին՝ և հետևապէս իմ սեռիս տկարութիւններուն ենթակայ ըլլալով՝ քաղաքային պատերազմէն կը սոսկամ, թագուհի և ամէն հնազանդութիւն տեսնելու վարժ ըլլալով ամենաթեթև ընդդիմութենէ կը բարկանամ։

—Տիկին, ըսաւ Կոնդի ծռելով, Ձեր Վեհափառութիւնը կը սխալի իմ անկեղծ խորհուրդս ընդդիմութիւն անուանելով։ Ձեր Վեհափառութիւնը միայն հլու և ակնածու հպատակներ ունի։ Ժողովուրդը Թագուհիէն դժգոհ չէ բնաւ. Պրուսէլը կ'ուզէ միայն Ձեր Վեհափառութեան օրինաց ներքև ապրելու երջանիկ սեպելով ինքզինքը, եթէ սակայն Ձեր Վեհափառութիւնը անոր յանձնէ Պրուսէլը, յարեց Կոնդի ժպտելով։

Մազարէն՝ որ սա խօսքին՝ ժողովուրդը թագուհիէն դրժգոհ չէ բնաւ, ականջները անկեր էր, կարծելով թէ Տեղապահը, Անկցի՛ Մազարէն, աղաղակները պիտի յիշէ Կոնդիի շնորհապարտ մնաց այս զանցառութենէն և իր խիստ աղու և ամէնէն շնորհալի դէմքով ըսաւ.

—Տիկին, հաւատա՛ Տեղապահին, որ մեր ունեցած քաղաքագէտներուն մէջ ամէնէն ճարտարն է. Կարտինալի առաջին գդակը որ պարապ կը մնայ իր ազնիւ գլխուն համար շինուած կ'երեւի։

—Ա՛հ, ո՛րչափ պէտք ունիս ինծի, խորամանկ ապիրա՞տ, ըսաւ Կոնդի։

—Եւ ի՞նչ պիտի խոստանայ մեզ, ըսաւ տ'Արդանեան, այն օրը որ զանիկա սպաննել ուզեն։ Կրո՛ղ, եթէ այսպէս գդակներ կը շնորհէ, պատրաստուինք, Բօրթօս և վաղուընէ մէն մի զօրագունդ պահանջենք։ Անզգա՛մ, թո՛ղ քաղաքային պատերազմը տարի մը միայն տեւէ, և սպարապետի սուրը ինծի համար ոսկեզօծել պիտի տամ։

—Հապա ե՞ս, ըսաւ Բօրթօս։

—Քեզի՛, Պ. Մէյլրէյ մարէշալի գաւազանը տալ պիտի տամ, քանի որ այս պահուս արքունեաց աչքէն ելած կ'երեւի։

—Այսպէս, պարոն, ըսաւ թագուհին, իրօք ժողովրդային վրդովումէ կը վախնա՞ս։

—Իրօք, տիկին, վրայ բերաւ Կոնդի զարմանալով որ տակաւին նոյն տեղն էր, կը վախնամ որ երբ հեղեղը իր թումբը տապալէ մեծ աւերումներ չպատճառէ։

—Եւ ես, ըսաւ թագուհին, կարծեմ թէ այս պարագայիս մէջ պէտք է նոր թումբերով դիմակալել անոր։ Գնա՛, պիտի մտածեմ։

Կոնդի Մազարէնի նայեցաւ զարմացած դէմքով մը։ Մազարէն թագուհւոյն մօտեցաւ որ անոր խօսի։ Նոյն պահուն սոսկալի դղրդիւն մը լսուեցաւ Բալէ-Ռուայալի հրապարակին վրայ։

Կոնդի ժպտեցաւ, թագուհիին աչքը բորբոքեցաւ, Մազարէնի երեսը մոխիր դարձաւ։

—Նորէն ի՞նչ կայ, ըսաւ։

Նոյն պահուն Գոմէնժ սրահը վազեց՝ շտապաւ։

—Ներեցէք, տիկին, ըսաւ Գոմէնժ թագուհիին. ներս մտանելով, ժողովուրդը երկաթէ ձողերուն դէմ պահանորդները խորտակեց, և այս միջոցիս դուռները կը խորտակէ. ի՞նչ հրաման ունիք։

—Մտիկ ըրէք, տիկին ըսաւ Կոնդի։

Ալիքներու մռնչիւնը, կայծակին շառաչիւնը, հրաբուխի մը ռմբիւնը կարելի չէր բաղդատել այն աղաղակներու մրրիկին որ նոյն պահուն երկինք բարձրացաւ։

—Ի՞նչ հրաման ունիմ, ըսաւ թագուհին։

—Այո՛, ժամանակը ստիպողական է։

—Բալէ-Ռուայեալի մէջ վեր ի վերոյ ո՞րչափ մարդ ունիս։

—Վեց հարիւր մարդ։

—Հարիւր հոգի թագաւորին չորս կողմ կեցո՛ւր, և մնացածով բոլոր այս խուժանը ասկէ վանէ։

—Տիկին, ըսաւ Մազարէն, ի՞նչ կ'ընէք։

—Դուն գնա՛, ըսաւ թագուհին։

Գոմէնժ դուրս ելաւ զինուորի կրաւորական հնազանդութեամբ։

Նոյն պահուն ահռելի ճայթիւն մը լսուեցաւ, դուռներէն մին սկսեր էր տեղի տալ։

—Է՛հ, տիկին, ըսաւ Մազարէն, ամենքնիս ալ ի կորուստ կը մատնէք, թագաւորը, ձեզ և զիս։

Աննա թագուհին՝ ինքն ալ սկսաւ վախնալ և Գոմէնժը ետ կանչել։

—Շա՛տ ուշ է, ըսաւ Մազարէն մազերը փետտելով. շատ ուշ։

Դուռը բացուեցաւ և խուժանին ցնծութեան ողողանջները լսելի եղան։ Տ'Արդանեան սուրը ձեռքը առաւ և Բօրթօսին ալ նշան ըրաւ որ նոյնը ընէ։

—Ազատէ՛ թագուհին, գոչեց Մազարէն Տեղապահին դառնալով։

Կօնդի դէպի պատուհանը վազեց, բացաւ, ճանչցաւ Լուվրերը որ երեք կամ չորս հազար հոգիի գլուխը անցած էր։

—Չեմ ուզեր որ քայլ մըն ալ առնէք, աղաղակեց ան. Թագուհին կ'ստորագրէ։

—Ի՞նչ կ'ըսես, գոչեց Թագուհին։

—Ճշմարտութիւնը, Տիկին, ըսաւ Մազարէն, գրիչ և թուղթ տալով, պէ՛տք է։ Ցետոյ յարեց. ստորագրեցէ՛ք, Աննա՛, կ'աղաչեմ, կը պահանջեմ։

Թագուհին աթոռի մը վրայ ինկաւ, գրիչը առաւ և ստորագրեց։

Ժողովուրդը՝ Լուվրերի միջոցաւ զսպուելով, ուրիշ քայլ մը անգամ չէր առած. բայց այն մռնչիւնը որ ամբոխին բարկութիւնը կը յայտնէր, միշտ կը շարունակուէր։

Թագուհին գրեց.

«Սէն-Ժերմէնի բանտին տնօրէնը Պրուսէլ խորհրդականը պիտի արձակէ». և ստորագրեց։

Տեղապահը՝ որ անոր թեթեւագոյն շարժումները ակնապիշ կը դիտէր, Թագուհին թուղթը ստորագրելու պէս զայն առաւ, պատուհանը դարձաւ և ձեռքը շարժելով.

—Ահաւասիկ հրամանագիրը ըսաւ.

Բոլոր Բարիզ կարծես թէ ցնծութեան ահագին գոռ ու գոչում մը արձակեց. յետոյ սա աղաղակները թնդացին. կեցցէ Պրուսէլ, կեցցէ՛ Տեղապահը։

—Կեցցէ՛ Թագուհին, ըսաւ Տեղապահը:

Քանի մը աղաղակներ իրենին պատասխան տուին, բայց տկար ու սակաւաթիւ։

Թերեւս Տեղապահը այս աղաղակը արձակեր էր Աննա Թագուհիին տկարութիւնը զգացնել տալու համար։

—Եւ հիմակ որ ուզածդ ձեռք ձգեցիր, ըսաւ Թագուհին, գնա՛, Պ. Կօնդի։

—Երբ Թագուհին ինծի պէտք ունենայ, ըսաւ Տեղապահը ծռելով, Նորին Վեհափառութիւնը թող գիտնայ որ իր հրամանին պատրաստ եմ։

Թագուհին գլուխով նշան մը ըրաւ. Կօնդի քաշուեցաւ։

—Ա՜հ, անիծեա՛լ քահանայ, գոչեց Աննա Թագուհին հազիւ գոցուած դրան կողմը իր ձեռքերը տարածելով, այսօր ինծի տուած թոյնիդ մնացորդը օրին մէկը քեզի պիտի խմցնեմ։

Մազարէն անոր մօտենալ ուզեց։

—Թո՛ղ տուր ինծ, ըսաւ ան, դուն մարդ չես։ Եւ Թագուհին դուրս ելաւ։

—Դուք կին չէք, մրմռաց Մազարէն։

Ցետոյ պահ մը մտածելէ վերջ՝ Մազարէն յիշեց որ տ'Արդանեան ու Բորթոս հոն պիտի ըլլային, և հետեւապէս ամէն բան լսած էին։ Ունքը պռստեց և շիտակ սրահին կողմը գնաց վարագոյրը վերցուց. դահլիճը պարապ էր:

Տ'Արդանեան Թագուհիին վերջին խօսքին Բորթոսին ձեռքէն բռներ և դէպի արտաքին սրահը տարեր էր։

Մազարէն ալ սրահը մտաւ և տեսաւ որ երկու բարեկամները կը պտտէին:

—Ինչո՞ւ համար դահլիճէն ելաք, Պ. տ'Արդանեան ըսաւ Մազարէն:

—Վասնզի, ըսաւ տ'Արդանեան, Թագուհին հրամայեց ամէնուն որ դուրս ելնեն, և մտածեցի որ այն հրամանն ինչպէս ուրիշներուն նաև մեզի համար էր:

—Ուրեմն այս տե՞ղ կը գտնուիք այն ատենէն ի վեր որ...։

—Գրեթէ քառորդէ մը ի վեր ըսաւ տ'Արդանեան Բորթոսին նայելով և նշան ընելով անոր որ զինքը սուտ չհանէ։

Մազարէն այս նշանը դիտելով գաղտնի և համոզուած մնաց որ տ'Արդանեան ամէն բան տեսեր և լսեր է, բայց աչք գոցեց այս սուտին համար։

—Իրաւի, Պ. տ'Արդանեան, դուն իմ փնտռած մարդս ես և կրնաս յոյսդ վրաս դնել, ինչպէս նաև բարեկամդ։

Ցետոյ երկու բարեկամներուն իր ամէնէն սիրուն ժպիտով բարև տալով, աւելի հանդարտ իր դահլիճը մտաւ, վասնզի Կօնդի դուրս ելնելուն աղմուկը դադրեր էր իբրև հմայութեամբ մը։

Ե.

ԴԺԲԱԽՏՈՒԹԻՒՆԸ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ ԿՈՒՏԱՅ

Աննա Թագուհին իր աղօթարանը մտեր էր զայրագին։

—Ի՛նչ, կը գոչէր ան աղուոր թեւերը ոլորելով, ի՛նչ, ժողովուրդը տեսած է երբեմն որ Մարի Մէտիսի, իմ գոքանչս, արքայատոհմ առաջին իշխան Գ. Գոնտէն ձերբակալել տուաւ, տեսած է Կարտինալը որ իր հին խնամակալուհին վռնտեց, տեսած է որ Գ. Վանտօմը, այսինքն Հանրի Դ.ի որդին՝ Վէնսէնի մէջ գերի, և բան մը ըսած չէ, մինչդեռ այն երեւելի անձինքը թշնամանք կ'ընդունէին, բանտ կը դրուէին, հապա Պրուսէլի համար, Յիսո՛ւս, ուրեմն ի՛նչ եղաւ թագաւորական իշխանութիւնը։

Աւստրիացի Աննան առանց գիտնալու հրատապ խնդիր մը կը յուզէր։ Ժողովուրդը բան մը ըսած չէր իշխաններուն համար, և սակայն ժողովուրդը Պրուսէլի համար ոտք կ'ելնէր, վասնզի խնդիրը ժողովրդականի մը վրայ էր, և ժողովուրդը Պրուսէլը պաշտպանելով բնազդումով կը զգար որ ինքզինքը կը պաշտպանէր։

Նոյն պահուն Մազարէն իր գահլիճին մէջ վեր վար կը պտտէր, ատեն ատեն իր Վենետիկի տասեղազարդ հայելին նայելով։

—Է՛հ, կ'ըսէր ան, տխուր բան է, քա՛ջ գիտեմ, այսպէս տեղի տալու ստիպուիլը. բայց, վա՛չ, մեր վրէժը պիտի հանենք. Ի՛նչ փոյթ է Պրուսէլը, անուն մըն է այն, բան մը չէ։

Որչափ որ ճարտար քաղաքագէտ էր, Մազարէն այս անգամ կը սխալէր. Պրուսէլ բան մըն էր և չէ թէ անուն մը։

Ուստի երբ հետեւեալ օրը Պրուսէլ մեծ կառքով մը Բարիզ մտաւ, իր Լուվիէր որդին իր մօտ և Ֆրիքէն կառքին ետեւը ունենալով, բոլոր ժողովուրդը զինեալ անոր ճամբուն վրայ թափեցան. Կեցցէ՛ Պրուսէլ, կեցցէ՛ մեր հայրը,

աղաղակները ամէն կողմէ կը թնդային և Մազարէնի ականջին մահ կը պատճառէին. Կարտինալին և Թագուհիին լրտեսները ամէն կողմէ տխուր լուրեր կը բերէին, որով պաշտօնեայն չափազանց կը վրդովէր և Թագուհին անհոգ կը մնար։ Թագուհին իր գլխուն մէջ մեծ խորհուրդ մը կը մտածէր և այս բանը Մազարէնի տագնապը կ'աւելցնէր։ Կը ճանչնար ան գոռոզ իշխանուհին և շատ կ'երկնչէր Աննա Թագուհիին խորհուրդներէն։

Տեղապահը Բարլամէնդը մտեր էր աւելի թագաւոր քան թագաւորը. Թագուհին և Կարտինալը միասին չէին. Իր առաջարկութեան վրայ՝ Բարլամէնդը հրովարտակ մը հանեց հրաւիրելով ոստանիկները որ զէնքերը թողուն և պատնէշները կործանեն. հիմակ գիտէին որ ժամ մը միայն պէտք էր զէնք առնելու վերստին և գիշեր մը միայն պատնէշներ շինելու համար։

Բլանշէ իր կրպակը մտեր էր. յաղթութիւնը յանցանաց արձակում կուտայ, ուստի Բլանշէ կախաղան ելնելու վախ չունէր այնուհետեւ, համոզուած էր որ եթէ փորձ մը միայն փորձեն զինքը ձերբակալելու համար, ժողովուրդը իրեն համար ոտք պիտի ելնէր ինչպէս որ Պրուսէլի համար ելեր էր։

Ռօշֆօր իր այրուձին Հիւմիէր ասպետին դարձուցեր էր. Իրաւ է որ երկու հոգի պակսեր էր կոչումին, բայց ասպետը որ հոգւով Պարսաւոր էր, չէր ուզած փոխարինութեան առաջարկութիւն մը ընդունիլ։

Մուրացկանը իր տեղը գացեր նորէն նստեր էր Սէնդ-Էօսթաշի գաւիթին մէջ, միշտ մէկ ձեռքով իր օրհնած ջուրը բաշխելով և միւսով ողորմութիւն կորզելով և ոչ ոք կ'երկբայէր որ այն երկու ձեռքը օգներ էր ընկերական շէնքէն թագաւորութեան հիմնական քարը խլելու։

Լուվիէր հպարտ էր և գոհ. Մազարէնէն վրէժը լուծեր էր, զոր կ'անգոսնէր, և իր հայրը բանտէն հանելու գործին շատ օժանդակեր էր. Իր անունը Բալէ-Ռուայեալի մէջ սարսափելով կրկներ էին, և իր ընտանեաց ծոցը դարձող խորհրդականին կ'ըսէր ծիծաղելով.

—Միթէ կը կարծե՞ս, հայր իմ, որ եթէ հիմակ Թագուհիէն գումարտակ մը ուզեմ ինծ տայ։

Տ'Արդանեան Ռաուլը ճամբելու համար այս հանդարտութեան ժամէն օգուտ քաղեր էր, վասնզի կ'երկնչէր որ խռովութեան ժամանակ չպիտի կարենայ զայն փակուած պահել, և կ'ուզէր ան սուր քաշել այս կամ այն կուսակցութեան համար։ Նախ Ռաուլ քիչ մը դժուարութիւն ցոյց տուեր էր, բայց տ'Արդանեան յանուն Լա Ֆէր կոմսին խօսեր էր։ Ռաուլ տիկին Շէվրէօզի այցելութիւն ընելու գացեր էր և բանակին միանալու համար ճամբայ ելեր էր։

Ռոշֆոր միայն կը կարծեր թէ գործը դէշ լմնցաւ. Պօֆոր դուքսին գրած էր որ գայ. դուքսը պիտի դառնար և Բարիզը հանդարտ պիտի գտնէր։

Ուստի գնաց Տեղապահը գտնելու, որպէսզի հարցունէ թէ արդեօք պէտք չէ՞ իշխանին իմաց տալ որ ճամբան չշարունակէ. բայց Կոնդի պահ մը մտածեց և ըսաւ.

—Թո՛ղ որ իր ճամբան շարունակէ։

—Ապա ուրեմն գործը լմնցած չէ՞, հարցուց Ռոշֆոր։

—Լա՛ւ, սիրելի կոմս, տակաւին երկանց սկիզբն է:

—Ո՞վ քեզի այսպէս կարծել կուտայ։

—Թագուհիին սրտին ունեցած ծանօթութիւնս, աննկուն մնալու չպիտի հանդուրժէ։

—Միթէ բան մը կը պատրաստէ՞:

—Կը յուսամ:

—Տեսնենք, ի՞նչ գիտես։

—Գիտեմ որ իշխանին գրեց բանակէն արտօրնօք դառնալու։

—Հա՛, հա՛, ըսաւ Ռոշֆոր, իրաւունք ունիս, պէտք է թողուլ որ Պօֆորը վերադառնայ:

Այս խօսակցութեան երեկոն իսկ ձայն ելաւ թէ Իշխանը հասած է։

Խիստ պարզ և բնական լուր մըն էր, և սակայն անհագին դղրդիւն մը հանեց. կ'ըսէին թէ անխոհեմ կերպով վար-

ուեր է տիկին Լօնկվիլ, որուն արդէն գաղտնիքներ յայտներ էր Իշխանը, զոր կ'ամբաստանէին, որպէս թէ իր քրոջ համար այնպիսի գորով մը ունէր որ եղբայրական բարեկամութեան սահմանէն կ'անցնէր։

Այս գաղտնիքը Թագուհիին չարագուշակ խորհուրդները երեւան կը հանէին։

Իշխանին եկած իրիկունն իսկ՝ ոստանիկները միւսներէն աւելի յանդուգն, ոտիկաններ, Թաղին հարիւրապետները իրենց բարեկամներուն կ'երթային ըսելով.

—Ինչո՞ւ համար Թագաւորը չպիտի առնէինք և Օթէլ տը Վիլ չպիտի նստեցնէինք։ Անպատեհ է թողուլ զանիկա որ մեր թշնամիները մեծցնեն, որոնք վատ խորհուրդներ կուտան անոր, մինչդեռ՝ եթէ Տեղապահին հսկողութեան ներքև գտնուէր, օրինակի համար, ազգային սկզբունք պիտի ծծէր և ժողովուրդը պիտի սիրէր։

Նոյն գիշերը խուլ վրդովում մը կը տիրէր. հետեւեալ օրը մոխրագոյն և սև վերարկուները տեսնուեցան, նոյնպէս զինեալ խանութպաններու պահնորդներ և մուրացկաններու խումբեր։

Թագուհին գիշերը անցուցեր էր առանձին խորհրդակցելով Իշխանին հետ, կէս գիշերին իր աղօթարանը մտեր և ժամը հինգին միայն անկից դուրս ելեր էր։

Ժամը հինգին, Թագուհին գնաց Կարտինալին դահլիճը։ Եթէ ինքը աչքը գոցած չէր, Կարտինալն ալ արդէն անկողնէն ելեր էր։

Քրոմվէլի պատասխան մը կը խմբագրէր, արդէն Մորտօնդէն պահանջած տասը օրէն վեցը անցեր էր։

—Է՛հ, կ'ըսէր ինքիրմէ, քիչ մը սպասել պիտի տամ զանիկա, բայց Պ. Քրոմվէլ քաջ գիտէ թէ ինչ են յեղափոխութիւնները և ի հարկէ ինծի պիտի ներէ։

Երբ իր նամակին առաջին տունը ուշադրութեամբ կը կարդար՝ Թագուհիին սենեակներուն հետ հաղորդակցութիւն ունեցող դուռը կամաց մը զարնուեցաւ։ Աննա Թագուհին

միայն կարող էր այն դուռնէն գալ։ Կարտինալը ոտք ելաւ և բանալու գնաց։

Թագուհին տնական հագուստով էր, բայց այս հագուստը դեռ եւս անոր կը վայլէր, վասնզի, Բուաքիէի, Անտհիոփի և Նինոնի պէս, Աննա Թագուհին միշտ գեղանի մնալու արտօնութիւնը պահեց. մինակ այս անգամ սովորականէն աւելի գեղանի էր, վասնզի իր աչքերը ունէին այն փայլը զոր ներքին խնդութիւն մը կուտայ։

—Ի՞նչ ունիս Տիկին, ըսաւ Մազարէն մտայոյզ, վէս կերպարանք մը կը կրես։

—Այո՛, Ժիուլիօ, պատասխանեց Թագուհին հպարտութեամբ և խնդալից, վասնզի այն հիգրան խնդրելու հնարքը գտայ։

—Դուն մեծ քաղաքագիտուհի մը ես, Թագուհիս, ըսաւ Մազարէն, նայինք ի՞նչ հնար է այդ։

Եւ իր գրածը պահեց սկսած գիրը ճերմակ թուղթի տակ սահեցնելով։

—Թագաւորը ձեռքէս առնել կ'ուզեն, գիտե՞ս, ըսաւ Թագուհին։

—Ափսո՛ս, և զիս ալ կալել։

—Թագաւորը չպիտի առնեն։

—Եւ զիս ալ չպիտի կալեն սիրականս։

—Մտի՛կ ըրէ, իմ որդիս և ինքզինքս, և դուն ալ ինծի հետ փախցնել կ'ուզեմ. կ'ուզեմ որ այս դէպքը մէկ օրուան մէջ ամէն բաներու կերպարանքը պիտի փոխէ, քեզմէ, ինծմէ և երրորդ անձէ մը զատ՝ ուրիշը չգիտնայ։

—Եւ ո՞վ է այն երրորդ անձը։

—Իշխանը։

—Ուրեմն հասա՞ւ, ինչպէս որ ըսեր էին ինծ։

—Երէկ իրիկուն։

—Եւ միթէ տեսա՞ր զանիկա։

—Հիմակ քովէն կուգամ։

—Միթէ այս խորհուրդին աջակից կ'ըլլա՞յ։

—Այս խորհուրդը իրմէ է։

—Հապա Բարի՞զը։

—Սովի պիտի բռնէ և անձնատուր ըլլալու պիտի ստիպէ։

—Այդ խորհուրդը բաւական յանդուգն է, բայց արգելք մը միայն կը տեսնեմ։

—Ի՞նչ արգելք։

—Անկարելիութիւն։

—Պարա՛պ խօսք։ Անկարելի բան չկայ։

—Խօսքի մէջ։

—Գործադրութեան մէջ։ Միթէ ստակ ունի՞նք։

—Քիչ մը ըսաւ Մազարէն՝ վախնալով որ Աննա Թագուհին իր քսակները պարպելու չելնէ։

—Միթէ զօրք ունի՞նք։

—Հինգ կամ վեց հազար հոգի։

—Միթէ քաջութիւն ունի՞նք։

—Շա՛տ։

—Ուրեմն գործը դիւրին է։ Ո՛հ, կ'իմանա՞ս, Ժիուլիօ, Բարիզ, այս զզուելի Բարիզը՝ որ առտու մը առանց Թագուհիի և Թագաւորի արթննալով՝ ինքզինքը պաշարուած, սովալլուկ պիտի տեսնէ, և միակ օգնական պիտի ունենայ իր ապուշ Բարլամէնդը և ոլորտոն նիհար Տեղապահը։

—Աքանչելի՛, աքանչելի գոչեց Մազարէն, կ'ըմբռնեմ հետեւութիւնը, բայց անոր հասնելու միջոցը չեմ տեսներ,

—Ես զայն պիտի գտնեմ, այո՛։

—Գիտես որ այս ուրիշ բան չէ բայց եթէ պատերազմ, քաղաքային պատերազմ, հրատապ, կատաղի, անողոքելի պատերազմ։

—Ո՛հ, այո՛, այո՛, պատերազմ, ըսաւ Աննա Թագուհին, այո՛, այս ապստամբ քաղաքը մոխիր պիտի դարձնեմ, կ'ուզեմ որ կրակը արեան մէջ մարեմ, կ'ուզեմ որ սոսկալի օրինակ մը յաւիտենական գործէ յանցանքը պատուհասին հետ։ Բարիզը, կ'ատե՛մ, կ'անգոսնե՛մ զայն։

—Մի՛ շտապեր, Աննա, ահա արիւնարբու կը դառնաս։

Զգուշացի՛ր, Մոլատէսդաններու և Գասդրագանիններու ատենը չենք. գլուխդ կորել պիտի տաս այս ընթացքով, գեղանի Թագուհիս, և արդարև մեղք պիտի ըլլայ։

—Կը ծիծաղի՞ս.

—Շատ քիչ կը ծիծաղիմ, պատերազմը վտանգաւոր է ամբողջ ժողովրդեան մը հետ. նայէ՛ անգամ մը Շարլ Ա. Եղբայրդ, շատ գէշ, գէշ վիճակի մէջ։

—Մենք Ֆրանսա ենք, և ես սպանիացի եմ։

—Աւելի գէշ, խա՛չ վկայ, աւելի՛ գէշ աւելի լաւ էր որ գաղղիացի ըլլայիր, և ես ալ. աւելի քիչ պիտի ատէին մեզ։

—Սակայն իմ խորհուրդիս կը հաւնի՞ս։

—Այո՛, եթէ գործը կարելի գտնեմ։

—Կարելի է, ե՛ս եմ ըսողը. մեկնելու համար պատրաստութիւններդ ըրէ։

—Ե՛ս, միշտ պատրաստ եմ մեկնելու, միայն, ինչպէս գիտես, երբեք չեմ մեկնիր... և այս անգամ առաջիններուն պէս հոս պիտի մնամ։

—Ի վերջոյ եթէ մեկնիմ, պիտի մեկնի՞ս։

—Պիտի ջանամ։

—Հոգիս բերանս կը բերես այդ վախերովդ. Ժուլիօ, ուրեմն ի՞նչ բանէ կը վախնաս։

—Շատ բաներէ։

—Որո՞նք են։

Մազարէնի դէմքը որ հեգնալի էր՝ տխուր երեւոյթ մը առաւ։

—Աննա՛, ըսաւ Մազարէն, դուն կին մըն ես միայն, և իբրև կին, ըստ հաճոյս կրնաս մարդիկը թշնամանել, անպատիժ մնալդ գիտնալով. կ՚ամբաստանես զիս որպէս թէ կ՚երկնչիմ, քեզի չափ վախ չունիմ, քանի որ խոյս չեմ տար։ Որո՞ւ դէմ կ՚աղաղակեն։ Միթէ՞ քեզի թէ ոչ ինծի դէմ։ Զո՛վ կախել կ՚ուզեն, քեզի թէ ոչ ինծի։ Լա՛ւ. ես [illegible] դէմ երկչոտ անվրդով կը մնամ, ե՛ս, թէև կը մեղադրես զիս որ [illegible], բայց և եմ, չէ թէ իբրև պարծանք, այս բնութիւնս չունի՞,

այնպէս կը մնամ։ Հետեւէ՛ ինծի, այսչափ վիլլուկ պէտք չէ, այլ արդիւնք։ Շատ բարձր կը պոռաս և նպատակի մը չես հասնիր։ Փախչելու խօսք կ՚ընես. Մազարէն ուսերը բարձրացուց, Թագուհիին ձեռքը բռնեց և պատուհանը տանելով, նայէ՛ ըսաւ։

—Լա՛ւ. ի՞նչ կայ, ըսաւ Թագուհին իր կամակորութենէն կուրացած։

—Լա՛ւ, ի՞նչ կը տեսնես այս պատուհանէն։ Եթէ չեմ սխալիր, անոնք զրահաւոր, սաղաւարտաւոր և լաւ հրացաններով զինեալ ոստանիկներ են, ինչպէս դաշնաւորութեան ժամանակ, և որոնք այնպէս լաւ կը նային այս պատուհանին ուստի դուն կը նայիս, դուն որ անշուշտ պիտի տեսնուիս եթէ այդպէս վարագոյրը շատ վերցնես։ Հիմակ սա միւս պատուհանը եկուր, ի՞նչ կը տեսնես. ժողովրդեան մարդիկ գեղարդներով զինեալ որ դռներդ կը պահպանեն։ Այս պալատին որ պատուհանը որ քեզ տանիմ նոյն բանը պիտի գտնես. դուռներդ բռնուած են և ես ալ իմ կողմէս պիտի ըսեմ ինչ որ այն բարի Լա Ռամէն Պ. Պոֆորի համար կ՚ըսէր, չպիտի դուրս ելնես, միայն թէ թռչուն կամ մուկ չի դառնաս։

—Եւ սակայն դուրս ելաւ ան։

—Միթէ կը յուսա՞ս նոյն կերպով ելնել։

—Ուրեմն կալանաւո՞ր եմ։

—Զարմա՛նք, ըսաւ Մազարէն, ժամէ մը ի վեր այս բանը կ՚ապացուցանեմ։

Եւ Մազարէն ընդմիջած տեղէն գիրը վերստին գրելու սկսաւ։

Աննան՝ բարկութենէն դողահար, նուաստանալուն կարմրած՝ դահլիճէն դուրս ելաւ իր ետեւէն դուռը զարնելով ուժգին։

Մազարէն գլուխն իսկ չդարձուց։

Երբ իր սենեակը դարձաւ, Թագուհին աթոռի մը վրայ ինկաւ և սկսաւ լալ։

Յետոյ յանկարծ միտքը խորհուրդ մը գալով. Ո՛հ, այո՛,

—Պիտի ազատիմ, ըսաւ ան ոտքի ելնելով։

այո՛, մարդ մը կը ճանչնամ որ զիս Բարիզէն հանելու միջոցը պիտի գտնէ, այն մարդը՝ զոր երկար ատեն մոռցայ։

Եւ խորհելով՝ թէեւ խնդութեան զգացմամբ մը.

—Որքա՛ն ապերախտ եմ, ըսաւ ան, այս մարդը քսան տարի մոռցայ, թէեւ պարտաւոր էի Ֆրանսայի մարէշալ մը ընել։ Իմ զօքանչս՝ ոսկի, պատիւներ, գգուանք շռայլեց Քօնսինիին, որուն երեսէն կորսուեցաւ։ Թագաւորը Վիթրին Ֆրանսայի մարէշալ ըրաւ մարդասպանութեան մը համար. և ես մոռացման, թշուառութեան մէջ ձգեցի այն ազնիւ տ'Արդանեանը որ զիս ազատեց։

Եւ թագուհին սեղանի մը մօտ վազեց, որու վրայ թուղթ ու մելան կար և սկսաւ գրել։

Զ.

ՏԵՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Այն առտու տ'Արդանեան Բորթօսի սենեակը պառկեր էր։

Խռովութեան օրերէն ի վեր երկու բարեկամներն այսպէս սովոր էին ընելու։ Իրենց բարձերնուն տակ կը դնէին սուրերնին, և սեղանին վրայ՝ իրենց ձեռքերնուն տակ հրացանակները դրուած էին։

Տ'Արդանեան կը քնանար տակաւին և կ'երազէր թէ երկինք դեղնորակ ամպով մը կը գոցուէր, թէ այս ամպէն ոսկի անձրեւ մը կը վազէր և թէ իր գլխարկը ուրդի մը տակ կ'երկընցնէր։

Բորթօս ալ կ'երազէր թէ իր կառքին տախտակները բաւական լայն չէին որ նկարել տուած զինանշանները պարունակեն։

Ժամը եօթին առանց պճնազգեստ սպասաւոր մը եկաւ

զինք արթնցուց և տ'Արդանեանի նամակ մը տուաւ։

—Որո՞ւ կողմէ է, հարցուց Կասքօնը։

—Թագուհիին կողմէ, պատասխանեց պայիկը։

—Հէ՞յ, ըրաւ Բորթօս անկողնին մէջ ելնելով, ի՞նչ կ'ըսէ այս մարդը։

Տ'Արդանեան խնդրեց սպասաւորէն որ մօտակայ սրահը անցնի, և դուռը գոցելով՝ անկողնէն վար ցատկեց և արագօրէն կարդաց նամակը, մինչդեռ Բորթօս զայն կը դիտէր կլորցած աչքերով և առանց հարցում մը ուղղել իշխելու։

—Բորթօս բարեկամ, ըսաւ տ'Արդանեան երկնցնելով նամակը, ահա այս անգամ պիտի ստանանք ալ դուն սեպուհութեան տիտղոսդ և ես հրամանատարութեան արտօնագիրս։ Առ կարդա՛ և դատէ՛։

Բորթօս ձեռք երկարեց, առաւ նամակը և դողդոջուն ձայնով սա խօսքերը կարդաց.

«Թագուհին տ'Արդանեանի խօսիլ կ'ուզէ, թո՛ղ գրաբերիս հետ գայ»։

—Լա՛ւ ուրեմն, ըսաւ Բորթօս, սովորական բան մը կ'երեւի այդ իմ աչքիս։

—Ե՛ս, ընդհակառակը, անսովոր կը գտնեմ զայն, ըսաւ տ'Արդանեան։ Եթէ զիս կը կանչեն, պատճառը սա է որ գործերը խառնաշփոթ եղած են. Մտածէ անգամ մը թէ ի՛նչ ներքին խրարանցում պատահած և թագուհիին միտքը խռոված է որ քսան տարիէ ետք՝ զիս կը յիշէ։

—Ճի՛շդ է ըսաւ Բորթօս։

—Սրէ՛ սուրդ, սեպուհ, լեցուր հրացանակներդ, ձիերուն գարի տուր. հիմակուընէ կ'ըսեմ քեզի որ վաղուընէ սկսեալ նոր բաներ պիտի տեսնենք։

—Ա՛հ, արդեօք ծուղակ մըն է այս որ մեզ ճամբ[illegible], յարեց Բորթօս, որ կը կարծէր թէ իր ապագայ մեծութիւնը ուրիշին հոգ կը պատճառէր։

Եթէ որոգայթ մըն է, վրայ բերաւ տ'Արդանեան, զայն պիտի չօչափեմ, անհոգ եղիր։ Եթէ Մազարէն իտալացի մըն է ես ալ Կասքօն եմ։

Եւ տ՚Արդանեան անմիջապէս հագուեցաւ։

Մինչդեռ Բօրթօս՝ միշտ պառկած՝ անոր վերարկուն կը կոճկէր, երկրորդ անգամ դուռը զարկին։

—Նե՛րս մտէք, ըսաւ տ՚Արդանեան։

Երկրորդ սպասաւոր մը երեւցաւ։

—Նորին Բարձրութեան Մազարէնին կողմէ կուգամ ըսաւ սպասաւորը։

Տ՚Արդանեան Բօրթօսի նայեցաւ։

—Ահա գործը կը խառնակի, ըսաւ Բօրթօս, ուսկից սկսիմ։

—Շա՛տ յարմար կը հանդիպի, ըսաւ տ՚Արդանեան։ Նորին Բարձրութիւնը կէս ժամէն զիս տեսնել կ՚ուզէ։

—Լա՛ւ։

—Բարեկա՛մ, ըսաւ տ՚Արդանեան դէպ ի սպասաւորը դառնալով, ըսէ Նորին Բարձրութեան որ կէս ժամէն իր հրամանին պատրաստ պիտի գտնուիմ։

Սպասաւորը բարեւեց և դուրս ելաւ։

—Բարեբախտաբար միւս սպասաւորը չտեսաւ, յարեց տ՚Արդանեան։

—Միթէ կարծե՞ս թէ երկուքնին ալ միեւնոյն բանին համար քեզ չեն ուզեր։

—Չեմ կարծեր, և հաւաստի եմ։

—Է՛հ ուրեմն, տ՚Արդանեան, չո՛ւտ. մտածէ որ թագուհին քեզի կ՚սպասէ, թագուհիէն ետք՝ Կարտինալը, և Կարտինալէն ետք ե՛ս։

Տ՚Արդանեան Աննա թագուհիին սպասաւորը կանչեց՝

—Անհամբեր եմ, բարեկամ, ըսաւ ան, զիս առաջնորդէ։

Սպասաւորը զայն առաջնորդեց Բըղի Շանի փողոցէն, և ձախին դառնալով Ռիշլիէօ փողոցին վրայ նայող պարտէզին փոքրիկ դռնէն մտցուց, յետոյ ծածուկ սանդուղ մը հասան, և տ՚Արդանեան աղօթարանը մտաւ։

Այլայլութիւն մը զոր չէր կարող բացատրել տեղակալին սիրտը կը բախէր. այլեւս երիտասարդական վստահութիւն չունէր, և փորձառութիւնն անոր սորվեցուցեր էր անցեալ

դէպքերու բոլոր ծանրութիւնը։ Գիտէր թէ՝ ինչ էր իշխանաց ազնուականութիւնն և թագաւորաց վեհափառութիւնը, իր չափաւորութիւնը հարուստ և տոհմիկ երեւելի մարդկանց վար դասելու սովրած էր։ Ատենօք Աննա թագուհւոյն մօտենար թերեւս իբրև երիտասարդ մը որ կին մը կը ողջունէ։ Այսօր ուրիշ կերպ էր. անոր քով կ՚երթար իբրև խոնարհ զինուոր մը իր երեւելի պարագլուխին մօտ։

Թեթև շշուկ մը աղօթարանին լռութիւնը վրդովեց։ Տ՚Արդանեան դողաց և սպիտակ ձեռք մը տեսաւ որ վարագոյրը կը վերցնէր, և անոր ձեւէն, ճերմակութենէ, գեղեցկութենէ ճանչցաւ այն արքունական ձեռքը զոր օր մը իրեն համբուրելու տուեր էր։

Թագուհին ներս մտաւ։

—Դո՞ւ ես, Պ. տ՚Արդանեան ըսաւ ան սպային վրայ սիրուէտ տրտմութեան ակնարկ մը ձգելով, դո՛ւ ես և քեզ քաջ կը ճանչնամ։ Դուն ալ ինծի նայէ մէկ անգամ, թագուհին եմ, միթէ զիս կը ճանչնա՞ս։

—Ո՛չ, տիկին, պատասխանեց տ՚Արդանեան։

—Բայց միթէ չես գիտե՞ր ուրեմն, շարունակեց Աննա թագուհին իրեն ձայնին զմայլելի շեշտ մը տալով՝ ինչպէս որ թագուհին երբեմն քաւոր էր երբ կ՚ուզէր, չե՞ս գիտեր որ թագուհին երբեմն պէտք ունեցաւ, ջասիրտ և անձնուէր նորատի ձիաւորի մը, և թէև ան պիտի կարծէր թէրեւս որ այն ձիաւորը գտաւ, ինքը մոռցած եմ, իմ սրտիս խորը անոր տեղ մը պահած եմ։

—Ո՛չ, տիկին, այդ չգիտեմ, ըսաւ հրացանակիրը։

—Ջախո՛ղ բան, պարոն, ըսաւ Աննան, ձախող գէթ թագուհւոյն համար, վասնզի թագուհին այսօր մի և նոյն քաջասրտութենէ և անձնուիրութենէ պէտք ունի։

—Լա՛ւ ուրեմն, ըսաւ տ՚Արդանեան, թագուհին թէև այնչափ անձնուէր սպասաւորներով, իմաստուն խորհրդականներով, վերջապէս թէ իրենց առաժմեայ քաջութեան կողմէ այնչափ մեծ մարդերով շրջապատուած է, կը բարեհաճի անարժան զինուորի մը վրայ աչք նետել։

Աննա ըմբռնեց այս թագուն յանդիմանութիւնը որ իրեն աւելի յուզմունք պատճառեց քան զայրոյթ։ Այնչափ անձ-

նուիրացութիւն և անշահախնդրութիւն Կասքօնի ազատորդիի մը կողմէ միշտ զինքը խոնարհեցուցեր էին, վեհանձնութեան կողմէ անոր առջև նկուն մնացեր էր։

—Ամէն ինչ որ կ'ըսես գիս շրջապատողներուն վրայ, պարոն տ'Արդանեան, թերևս ճշմարիտ է, ըսաւ Թագուհին, բայց ես քու վրադ միայն վստահութիւն ունիմ։ Գիտեմ որ դուն Պ. Կարտինալին յարած ես, բայց ինծի ևս յարէ և քու բախտդ չինելու կը խոստանամ։ Նայինք այսօր պիտի ընե՞ս արդեօք ինչ որ երբեմն քեզ անծանօթ ազատորդին ըրաւ Թագուհիին համար։

—Ինչ որ Ձեր Վեհափառութիւնը հրամայէ պիտի ընեմ, ըսաւ տ'Արդանեան։

Թագուհին պահ մը մտմտաց, և հրացանակրին շրջահայեաց դիրքը տեսնելով։

—Կարելի է հանգստութիւն կը սիրես, ըսաւ։

—Չգիտեմ. վասնզի երբեք հանգիստ չեմ վայելած, տիկին։

—Մի՞թէ բարեկամներ ունի՞ս։

—Երեք հատ ունէի. երկուքը Բարիզէն հեռացան և չգիտեմ թէ ո՛ւր գացին։ Բարեկամ մը միայն ունիմ իմ քովս և այս ալ Ձեր Վեհափառութեան ինծի խօսելու պատիւ ըրած ձիաւորը ճանչցողներէն մին էր, կարծեմ։

—Լա՛ւ է, ըսաւ Թագուհին, դուն և քու բարեկամդ, բանակ մը կ'արժէք։

—Ի՞նչ կ'ուզէք որ ընեմ, տիկին։

—Ժամը հինգին եկէք և ձեզ պիտի ըսեմ. բայց, պարոն, ոչ ոքի խօսք մի՛ բանար քեզի տուած ժամադրութեանս վրայ։

—Ոչ, տիկին։

—Քրիստոսի վրայ երդում ըրէ։

—Տիկին, երբեք իմ խօսքս չեմ դրժած, երբ ո՛չ կ'ըսեմ, ո՛չ է։

Թագուհին՝ թէև այս լեզուէն զարմացած՝ լեզու մը որուն իր պալատականները չէին վարժեցուցած, յաջող նշան մը գուշակեց իր խորհուրդին գործադրութեան համար տ'Արդանեանի ցոյց տուած եռանդէն։ Կասքօնին մէկ հնարն էր երբեմն իր խորին նրբութիւնը անկեղծ կոշտութեան երևոյթներուն ներքև սքօղել։

—Մի՞թէ ուրիշ հրաման մը չունի՞ք ինծի տալու առայժմ, Վեհափառ Թագուհի, ըսաւ ան։

—Ո՛չ պարոն, պատասխանեց Աննա Թագուհին, և կրնաս մինչև որոշեալ ժամը քաշուիլ երթալ։

Տ'Արդանեան ողջունեց և դուրս ելաւ։

—Սատանա՛յ, ըսաւ երբ դուռը հասաւ, կ'երևի թէ ինծի շատ պէտք ունին այս տեղ։

Ցերոյ, ըստ որում կէս ժամ անցեր էր, որ սրահէն անցաւ և գնաց Կարտինալին դրան զարկաւ։

Պէրնուէն զանիկա ներս մտցուց։

—Հիմա ձեր հրամանին եկայ, Տէր իմ, ըսաւ ան։

Եւ իր սովորութեան համեմատ՝ տ'Արդանեան իր չորսդին արագ նայուածք մը նետեց և գիտեց որ Մազարէն իր առջև կնքուած նամակ մը ունէր։ Մինակ գիրը գրասեղանին վրայ դրուած էր գրուած կողմէն, այնպէս որ անկարելի է տեսնել թէ որո՛ւ ուղղեալ է։

—Մի՞թէ Թագուհիին քովէն կուգաս, ըսաւ Մազարէն տ'Արդանեանի նայելով ակնապիշ։

—Ե՞ս, տէր իմ, ո՞վ ըսաւ ձեզի այդ բանը։

—Ո՛չ ոք. բայց գիտեմ։

—Չափազանց կը վշտանամ ըսելով ձեզի, տէր իմ, որ կը սխալիք, պատասխանեց Կասքօնը անպատկառ, Աննա Թագուհիին ըրած խոստումէն ոյժ առնելով։

—Ես ինքս բացի նախասենեակը, և տեսայ որ սրահին ծայրէն կուգայիր։

—Վասնզի ծածուկ սանդուղէն ներս մտցուցին զիս։

—Ինչպէս։

—Չգիտեմ, թերևս թիւրիմացութիւն մը կայ։

Մազարէն գիտէր որ տ'Արդանեանէ պահել ուզած բանը բերնէն առնել դիւրին բան չէր, ուստի զանց ըրաւ Կասքօնին պահած գաղտնիքը իմանալու փորձել նոյն պահուն։

—Իմ գործերուս վրայ խօսինք, ըսաւ Կարտինալը, քանի որ քու գործերուդ վրայ բան մը յայտնելու կը դժկամակիս։

Տ'Արդանեան ծռեցաւ։

—Միթէ ճամբորդութիւնները կը սիրե՞ս, հարցուց Կարտինալը։

—Իմ կեանքս արահետներու վրայ անցուցած եմ։

—Միթէ Բարիզ գործով մը բռնուա՞ծ ես։

—Բարձրագոյն հրաման մը միայն կարող է զիս բռնել Բարիզի մէջ։

—Լա՛ւ. ահա գիր մը զոր հասցէին տալ պէտք է։

—Հասցէի՞ն, տէր իմ, բայց հասցէ չունի։

Արդարեւ՝ կնիքին հակառակ կողմը որ է եւ գրուած չունէր։

—Այսինքն, աւելցուց Մազարէն, կրկնակ պահարան մը կայ։

—Կը հասկնամ եւ պարտաւոր եմ առաջինը պատռել երբ որոշեալ տեղ մը հասնիմ։

—Սքանչելի՛ է. ա՛ռ գիրը ու մեկնէ։ Բարեկամ մը ունիս, Պ. տիւ Վալլօն, ես զանիկա շատ կը սիրեմ, առ հետդ զնա՛։

—Սատանա՛յ, ըսաւ տ'Արդանեան, գիտէ որ երէկուան խօսակցութիւնը լսեցինք, եւ մեզ Բարիզէն հեռացնել կ'ուզէ։

—Միթէ կը վարանի՞ս, հարցուց Մազարէն։

—Ո՛չ, տէր իմ, եւ իսկոյն կը մեկնիմ։ Միայն բան մը կը փափաքիմ։

—Ի՞նչ բան, ըսէ՛։

—Այն է թէ Ձեր Բարձրութիւնը Թագուհիին մօտ՝ երթայ։

—Ե՞րբ։

—Անմիջապէ՛ս։

—Ի՞նչ բանի համար։

—Միայն սա խօսքը ըսելու. Պ. տ'Արդանեանը տեղ մը կը ղրկեմ եւ անմիջապէս ճամբայ պիտի հանեմ։

—Կը նայի՞ս, ըսաւ Մազարէն, որ Թագուհին տեսեր ես։

—Պատիւ ունեցայ յայտնելու Ձեր Բարձրութեան որ կարելի է թէ թիւրիմացութիւն մը կայ։

—Ի՞նչ կը նշանակէ այդ, հարցուց Մազարէն։

—Արդեօք համարձակի՞մ Ձեր Բարձրութեան իմ խնդրանքս կրկնելու։

—Շատ լաւ, պիտի երթամ։ Ինծի հոս սպասէ։

Մազարէն ուշադիր նայեցաւ թէ արդեօք պահարաններուն վրայ բանալի մը մոռցուա՞ծ է եւ դուրս ելաւ։

Տասը վայրկեան անցաւ եւ նոյն միջոցին տ'Արդանեան ամէն կրցածը ըրաւ որպէսզի առաջին պահարանին ներքեւը կարդայ. բայց անկարող եղաւ։

Մազարէն ներս մտաւ գունատ եւ սաստիկ մտայոյզ, գնաց իր գրասեղանին առջեւ նստաւ։ Տ'Արդանեան զանիկա կը քննէր ինչպէս որ նամակը քններ էր. բայց անոր դէմքին պահարանը գրեթէ այնքան անթափանցելի էր որչափ նամակինը։

—Հէ՛, հէ՛, ըսաւ Կաւքօնը, բարկացած երես մը ունի։ Արդեօք ինծի՞ դէմ է. կը խորհի. արդեօք զիս Գասդիյլ ղրկելու մի՞տք ունի։ Շատ մի՛ արտորար, տէր իմ, եթէ այն մտօք բառ մը միայն բերնէդ հանես, քեզ կը խեղդեմ եւ Պարսաւոր կը դառնամ։ Զիս Պ. Պրուսէլի պէս յաղթանակաւ պիտի տանին եւ Աթօս զիս գաղղիացի Պրուտոս պիտի հրատարակէ։ Իրաւ որ ծիծաղաշարժ պիտի ըլլար։

Կաւքօնը իր յարատեւ վառ երեւակայութիւնովը արդէն տեսեր էր թէ ի՛նչ մեծ օգուտ կրնար քաղել այս կացութենէն։

Բայց Մազարէն այս տեսակ հրաման մը չտուաւ եւ ընդհակառակը սկսաւ տ'Արդանեանի առջեւ քծնիլ։

—Իրաւունք ունէիր, սիրելի տ'Արդանեան, դեռ հիմա չես կարող մեկնիլ։

—Ա՛հ, բացագանչեց տ'Արդանեան։

—Ուրեմն այն նամակը վերադարձուր, կ'աղաչեմ։

Տ'Արդանեան հնազանդեցաւ։ Մազարէն ստուգեց թէ կնիքը անվիաս էր։

—Այս իրիկուն քեզի պէտք պիտի ունենամ, ըսաւ Կարտինալը, երկու ժամէն դարձիր։

—Երկու ժամէն, տէր իմ, ըսաւ տ'Արդանեան, ուրիշի մը հետ ժամադիր եղած եմ և պարտաւոր եմ երթալ։

—Այդ մասին անհանգիստ մի՛ ըլլար, ըսաւ Մազարէն, միեւնոյնն է։

—Լա՛ւ, մտածեց տ'Արդանեան, մաքէս անցածն է։

—Ուրեմն ժամը հինգին դարձիր և այն սիրական Պ. Վալլօնն ալ միասին բեր. մինակ զանիկա նախասենեակը ձգէ, քեզի հետ մինակ խօսիլ կ'ուզեմ։

Տ'Արդանեան գլուխը խոնարհեցուց։

Գլուխը խոնարհեցնելով ինքնիրեն կ'ըսէր.

—Երկուքին կողմէ ալ նոյն հրամանը. երկուքն ալ նոյն ժամուն, երկուքն ալ Բալէ-Ռուայեալի մէջ, կը գուշակեմ։ Ա՛հ, գաղտնիք մըն է այս որուն համար Պ. Կօնդին հարիւր հազար ֆր. վճարելու պատրաստ պիտի գտնուէր։

—Կը մտածե՛ս, ըսաւ Մազարէն մտայոյզ։

—Այո՛, կը մտածեմ թէ արդեօք զինեա՞լ պիտի ըլլանք թէ ոչ։

—Ոտքէդ մինչև գլուխդ, ըսաւ Մազարէն։

Տ'Արդանեան բարեւեց, դուրս ելաւ և Մազարէնի յուսադիր խոստումները վազեց իր բարեկամին պատմելու, և որով Բօրթօս անպատում ցնծութիւն զգաց։

Է.

ՓԱԽՈՒՍՏ

Քաղաքին ցոյց տուած վրդովումի նշաններուն հակառակ, Բալէ-Ռուայեալը խիստ զուարճալի տեսարան մը կ'ընծայէր երբ տ'Արդանեան իրիկուան ժամը հինգին ներկայացաւ։ Զարմանալի չէր. Թագուհին ժողովրդեան յանձներ էր Պրուսէլը և Պլանմէսնիլը։ Ուստի Թագուհին իրօք վախնալու բան մը չունէր, քանի որ ժողովուրդը բան մը չունէր, քանի որ ժողովուրդը բան մը պահանջելիք չունէր. իր շարժումը վրդովման հետացորդն էր որուն քիչ մը ժամանակ պէտք էր որ խաղաղի, ինչպէս որ փոթորիկէ ետք՝ երբեմն շատ օրեր պէտք են ծփանքը դադրի։

Մեծ խնճոյք մը կար, որուն պատրուակն էր Լէնսի յաղթականին վերադարձը։ Իշխանները, իշխանուհիները հրաւիրուած էին, կառքերը փողոցը կը խռնուէին կէս օրէ ի վեր։ Ճաշէն ետք՝ Թագուհիին յարկաբաժինը խաղ պիտի խաղային։

Աննա Թագուհին նոյն օրը չքնաղ էր թէ՛ շնորհի և թէ խելքի կողմէ, երբեք այնքան զուարթ չէին տեսած զինքը։ Վրէժխնդրութեան ծաղիկը իր աչքերուն մէջ կը փայլէր և շրթունքներուն վրայ կը բացուէր։

Այն միջոցին որ սեղանէն դուրս ելան, Մազարէն աներեւոյթ եղաւ։ Տ'Արդանեան արդէն ժամադրութեան տեղը գացեր էր և նախասենեակը կ'սպասէր։ Կարտինալը ծիծաղադէմ երեւցաւ, ձեռքէն բռնեց և զայն դահլիճը տարաւ։

—Սիրելի Պ. տ'Արդանեան ըսաւ պաշտօնեան նստելով, այժմ քեզի վստահութեանս ա՛յնպիսի նշան մը ցոյց պիտի տամ որ երբեք պաշտօնեայ մը սպայի մը տուած չէ։

Տ'Արդանեան գլուխը ծռեց։

—Յուսամ որ, տէր իմ, ըսաւ, նոյն վստահութեան նշանը առանց ներքին խորհուրդի մը կուտաք և ես համոզումով որ անոր արժանի եմ։

—Ամենէն արժանին, սիրելի բարեկամ, քանի որ քեզի կը գտնեմ։

—Լա՛ւ ուրեմն, ըսաւ Տ'Արդանեան, պէտք է խոստովանիմ տէր իմ, երկար ատենէ ի վեր այսպիսի առիթի մը կը սպասեմ։ Ուստի, շուտով ըսէք թէ ի՞նչ ունիք ինծի խօսելիք։

—Իմ սիրելի Պ. Տ'Արդանեան, վրայ բերաւ Մազարէն, այս երիկուն պետութեան փրկութիւնը քու ձեռքդ պիտի ըլլայ։

Եւ Մազարէն լռեց։

—Բացատրէ միտքդ, տէր իմ, կ'սպասեմ։

—Թագուհին որոշեց որ Թագաւորին հետ կարճ ուղեւորութիւն մը ընէ դէպի Սէն-Ժէրմէն։

—Հա՛, հա՛, ըսաւ Տ'Արդանեան, այսինքն Թագուհին Բարիզէն հեռանալ կ'ուզէ։

—Կը հասկնաս որ կնոջական քմածին խորհուրդ մըն։

—Այո՛, շա՛տ լաւ կը հասկնամ, ըսաւ Տ'Արդանեան։

—Այս բանին համար էր որ Թագուհին այս առտու քեզ կանչել տուաւ, և պատուիրեց որ ժամը հինգին գաս։

—Ուրեմն ի՞նչ հարկ կար երդում ընել տալ ինծի այս ժամադրութիւնը մէկու մը չյայտնելու մտքով, մրմռաց Տ'Արդանեան, ո՛հ, կինե՛րը. եթէ Թագուհի իսկ ըլլան, միշտ կին են։

—Միթէ այս պզտիկ ուղեւորութեան չե՞ս հաւանիր, իմ սիրելի Պ. Տ'Արդանեան, հարցուց Մազարէն մտատանջութեամբ։

—Ե՞ս տէր իմ, ըսաւ Տ'Արդանեան, և ի՞նչ պատճառաւ։

—Վասնզի ուսերդ վեր կը վերցնես։

—Ինքզինքիս խօսելու ձեւ մըն է այս, տէր իմ։

—Այսպէս ուրեմն այս ուղեւորութեան կողմնակից ես։

—Չէզոք եմ, տէր իմ, ձեր հրամանին կ'սպասեմ։

—Լա՛ւ. այսպէս աչքս քու վրադ նետեցի որպէս զի Թագաւորը ու Թագուհին Սէն-Ժէրմէն տանիս։

—Կրկնակի խաբեբա՛յ, ըսաւ ինքնիրեն Տ'Արդանեան։

—Բաշ կը գտնես, վրայ բերաւ Մազարէն Տ'Արդանեանի անվրդով կերպարանքը գտնելով, թէ ինչպէս որ կ'ըսէի. պե-

տութեան փրկութիւնը քու ձեռքէդ կախում պիտի ունենայ:

—Այո՛, տէր իմ, և այսպիսի պաշտօնի մը բոլոր պատասխանատուութիւնը կ'զգամ։

—Եւ սակայն կ'ընդունի՞ս։

—Միշտ կ'ընդունիմ։

—Միթէ կը կարծե՞ս թէ կարելի բան է:

—Ամէն բան է։

—Միթէ ճամբան յարձակում պիտի կրե՞ք:

—Հաւանական է:

—Ուրեմն ի՞նչ պիտի ընես այսպիսի պարագայի մէջ։

—Զիս զարնողներուն մէջէն պիտի անցնիմ:

—Հապա եթէ չանցնիս:

—Վա՛յ անոնց գլխին, վրայէն պիտի անցնիմ։

—Եւ միթէ Թագաւորն ու Թագուհին ողջ առողջ Սէն-Ժէրմէն պիտի ձգե՞ս:

—Այո՛:

—Պատւիդ վրայ կ'երդնո՞ւս:

—Կ'երդնում։

—Դիւցազն մըն ես, սիրելիս, ըսաւ Մազարէն հրացանակրին նայելով զարմանօք։

Տ'Արդանեան ժպտեցաւ։

—Հապա ե՞ս, ըսաւ Մազարէն պահ մը լուռ կենալէն և Տ'Արդանեանի ակնապիշ նայելէն ետք։

—Ի՞նչ ըսել կ'ուզէք ես ըսելով, տէր իմ։

—Հապա ես, եթէ մեկնիլ կամենամ։

—Այն ատեն աւելի դժուարին պիտի ըլլայ։

—Ի՞նչպէս։

—Ձեր Բարձրութիւնը թերեւս ճանչցուի։

—Մինչեւ անգամ այս ծպտեալ կերպարանքո՞վս, ըսաւ Մազարէն։

Եւ թիկնաթոռ մը ծածկող վերարկու մը բացաւ. նոյն աթոռին վրայ ձիաւորի ամբողջ հագուստ մը կար նռնագոյն և արծաթէ ժապաւէններով լիովին բանուած։

—Եթէ Ձեր Բարձրութիւնը ծպտի, առաւ աւելի դիւրին կ'ըլլայ։

—Ա՜հ, ըրաւ Մազարէն ցնցելով։

—Բայց պէտք պիտի ըլլայ ընել ինչ որ Ձեր Բարձրութիւնը կ'ընէր միւս օր թէ մեր տեղը պիտի ընէր։

—Ի՞նչ պէտք է ընել։

—Անկցի՛ Մազարէն, պոռալ պէտք է։

—Պիտի պոռա՛մ։

—Գաղղիերէն, լաւ գաղղիերէն լեզուով, տէր իմ, ուշ դի՛ր չեղտիդ. Սիկիլիոյ մէջ վեց հազար Անժվէնցի սպաննեցին վասնզի իտալերէն գէշ կ'արտասանէին։ Նայեցէք որ Սիկիլեան Երեկոյթից վրէժը չլուծեն ձեր վրայ։

—Ձեռքէս եկածը պիտի ընեմ։

—Փողոցներու մէջ շատ զինեալ մարդիկ կան, շարունակեց տ'Արդանեան, միթէ քաջ գիտե՞ս որ ոչ ոք Թագուհիին խորհուրդին խելամուտ չէ։

Մազարէն մտմտաց։

—Մատնիչի մը համար լաւ գործ մը պիտի ըլլար, տէր իմ, այս առաջարկած գործդ. յարձակման մը վտանգները ամէն բան կարող են արդարացնել։

Մազարէն սարսուռ մը զգաց. բայց մտածեց որ մատնելու դիւրութիւն ունեցող մարդ մը կանխաւ չազդարարուէր։

—Ուստի, ըսաւ ան աշխուժիւ, ես ալ ամէն մարդու չեմ վստահիր և ասոր ապացոյցը սա է որ քեզ իբրև պահնորդ ուղեկից ընտրեցի։

—Միթէ Թագուհիի՞ն հետ պիտի մեկնինք։

—Ո՛չ, ըսաւ Մազարէն։

—Ուրեմն, Թագուհին մեկնելէ՞ն յետոյ ճամբայ պիտի ելնէք։

—Ո՛չ, ըսաւ նորէն Մազարէն։

—Ա՜հ, ըսաւ տ'Արդանեան, որ սկսեր էր հասկնալ։

—Այո՛, ես իմ յատակագիծս ունիմ, շարունակեց կարտինալը, Թագուհիին հետ եթէ մեկնիմ, անոր վտանգներ կը

կրկնապատկեմ՝ Թագուհիէն ետք՝ անոր մեկնումը իմինները կը կրկնապատկէ. ասկէ զատ՝ երբ անգամ մը արքայազունները խոյս տան, թերևս զիս մոռնան. մեծերն ապերախտ են։

—Իրաւ է, յարեց տ'Արդանեան ակամայ նետելով իր աչքերը Թագուհիին ադամանդին վրայ որ Կարտինալին մատն էր։

Մազարէն նոյն նայուածքին ուղղութիւնը գիտեց և մեղմիկ մը իր մատանիին քարը ներսիդին դարձուց։

—Ուստի, ըսաւ Մազարէն իր նուրբ ժպիտովը, կ'ուզեմ զանոնք արգիլել որ այլևս ապերախտ չըլլան։

—Քրիստոնէավայել գթասիրութեան արդիւնք է, ըսաւ տ'Արդանեան, իր նմանը փորձանքի չտանիլը։

—Ճիշդ այդ պատճառաւ, ըսաւ Մազարէն, անոնմէ առաջ մեկնիլ կ'ուզեմ։

—Տ'Արդանեան ժպտեցաւ. այս իտալական խորամանկութիւնը քաջ հասկցող մարդ էր։

Մազարէն անոր ժպիտը ըմբռնեց և այս առիթէն օգուտ քաղեց։

—Ուստի նախ զիս Բարիզէն դուրս պիտի հանես, այնպէս չէ՞, իմ սիրելի Պ. տ'Արդանեան։

—Դժուարին յանձնարարութիւն, տէր իմ, ըսաւ տ'Արդանեան իր ծանր կերպարանքը դասելով.

—Բայց, ըսաւ Մազարէն ուշադիր նայելով անոր երեսը, որպէսզի իր դէմքին թեթև շարժումը անգամ իր աչքէ չվրիպի, բայց բոլոր այդ դիտողութիւնները Թագաւորին և Թագուհիին համար չըրիր բնաւ։

—Թագաւորն ու Թագուհին իմ Թագուհիս ու Թագաւորս են, տէր իմ, պատասխանեց հրացանակիրը, իմ կեանքս անոնցն է, անոնց կը պարտիմ զայն։ Կ'ուզեն զայն ինձմէ, խօսք մը չունիմ ըսելու։

—Իրաւացի է, մրմռաց Մազարէն կամացուկ մը, բայց որովհետև կեանքդ իմս չէ, պէտք է որ զայն գնեմ, այնպէս չէ՞։

Եւ խոր հառաչ մը հանելով, սկսաւ իր մատանիին քարը դուրսի կողմը դարձնել։

Տ'Արդանեան ժպտեցաւ։

Այս երկու մարդիկ կէտով մը միայն կը նմանէին· այսինքն խորամանկութեամբ։ Եթէ քաջութեան կողմէ ալ հաւասար ըլլային, մէկզմէկու շատ մեծ բաներ կատարել կուտային։

—Բայց, ըսաւ Մազարէն, պէտք է գիտնալ որ եթէ այս ծառայութիւնը կը խնդրեմ քեզմէ, երախտագէտ ըլլալու դիտաւորութեամբ է։

—Տէր իմ, միթէ դեռ դիտաւորութեանդ մէ՞ջ ես, հարցուց տ'Արդանեան։

—Ահա՛, պատասխանեց Մազարէն իր մատէն հանելով մատնին, ահա՛ սիրելի Պ. տ'Արդանեան, ադամանդ մը որ երբեմն քուկդ էր, և արդար է որ նորէն քեզի դառնայ այն. ա՛ռ զայն, կ'աղերսեմ քեզ։

Տ'Արդանեան Մազարէնի նեղութիւն չտուաւ այս մասին պնդելով. առաւ մատնին նայեցաւ թէ արդեօք նո՞յն քարն է, և անոր ջուրին յստակութիւնը ստուգելէն ետք՝ աննշմարելի ուրախութիւնով զայն իր մատը անցուց։

—Շատ սիրելի էր ինծի այս մատնին, ըսաւ Մազարէն անոր վրայ վերջին ակնարկ մը նետելով բայց հոգ չէ, մեծ հաճոյքով կուտամ զայն քեզի։

—Եւ ես, Տէր իմ, ըսաւ տ'Արդանեան, տրուածին պէս զայն կ'ընդունիմ։ Նայինք, հիմակ ձեր փոքրիկ գործերուն վրայ խօսինք։ Միթէ ամենէն առաջ երթալ կ'ուզէ՞ք։

—Այո՛, այդ է փափաքս։

—Ժամը քանի՞ն։

—Ժամը տասնին։

—Եւ Թագուհին ժամը քանի՞ն պիտի մեկնի։

—Կէս գիշերին։

—Այն ատեն կարելի է։ Բարիզէն ձեզ դուրս կը հանեմ, քաղաքադուռնէն դուրս կը թողում, և վերադառնալով Թագուհին կ'առնեմ։

—Սքանչելի է. բայց Բարիզէն դուրս ի՞նչպէս պիտի հանես զիս։

—Ո՛հ, այդ մասին, թողէք որ իմ գիտցածս ընեմ։

—Ձեզ լիագօր իշխանութիւն կուտամ, որչափ կարելի է շատ պահնորդ զօրականներ ա՛ռ։

Տ'Արդանեան գլուխը ցնցեց։

—Կ'երեւի ինծի թէ այս է ամէնէն ապահով միջոցը, ըսաւ Մազարէն։

—Այո՛, ձեզի համար, տէր իմ, բայց ոչ Թագուհիին համար։

Մազարէն շրթունքները խածաւ։

—Ո՛ն, նայինք ի՞նչ ճամբայ պիտի բռնենք։

—Թողէք որ գիտցածս ընեմ, տէր իմ։

—Հը՛մ, ըրաւ Մազարէն։

—Եւ պէտք է այս գործին ուղղութիւնը բոլորովին ինծի թողուլ։

—Սակայն...

—Կամ ուրիշ մը փնտռել, ըսաւ տ'Արդանեան կռնակը դարձնելով։

—Էհէ՛, բացականչեց Մազարէն կամաց մը, կարծեմ թէ ադամանդը հետը առնելով կ'երթայ։

Եւ զանիկա կանչեց։

—Պարոն տ'Արդանեան, սիրելիդ իմ Պ. տ'Արդանեան, ըսաւ գգուելի ձայնով մը։

—Տէ՛ր իմ։

—Միթէ ամէն կողմէ կ'ապահովե՞ս զիս։

—Բան մը չեմ ապահովեր, մինակ ձեռքէս եկածը պիտի ընեմ։

—Ձեռքէդ եկա՞ծը։

—Այո՛։

—Լա՛ւ ուրեմն. ո՛ն, քեզի կը վստահիմ։

—Շա՛տ բան, ըսաւ տ'Արդանեան իւրովի։

—Ուրեմն ժամը ինն ու կէսին հոս պիտի գտնուիս։

—Միթէ Ձեր Բարձրութիւնը պատրա՞ստ պիտի ըլլայ։

—Անտարակոյս, բոլորովին պատրաստ։

—Ուրեմն այսպէս խօսքը կտրուած է։ Այժմ, տէր իմ, կ'ուզէք Թագուհին ցուցնել ինծի։

—Ի՞նչ հարկ կայ։

—Կը փափաքէի որ Նորին Վեհափառութեան բերնէն լսեմ իր հրամանը։

—Ապսպրեց ինձ որ այն հրամանը քեզի տամ։

—Կարելի է բան մը մոռցած ըլլայ։

—Միթէ անպատճառ զանիկա տեսնե՞լ կ'ուզես։

Մազարէն պահ մը վարանեցաւ. տ'Արդանեան անզըրդուելի մնաց։

—Ա՛ղէկ, ուրեմն ըսաւ Մազարէն, քեզ պիտի առաջնորդեմ, բայց մեր խօսակցութեան վրայ խօսք մը անգամ չհանես բերնէդ։

—Ի՛նչ որ մեր մէջը ըսինք մեզի կը վերաբերի, տէր իմ ըսաւ տ'Արդանեան։

—Երդում կ'ընե՞ս համր ըլլալու։

—Ես երբեք չեմ երդնուր, տէր իմ։ Այո՛, կամ ո՛չ կ'ըսեմ, և որովհետև ազնուական եմ, իմ խօսքս կը պահեմ։

—Ա՛ղէ, կը նայիմ որ քու վրադ անպայման վստահութիւն ունենալու պարտաւոր եմ։

—Լաւագոյն միջոցը այդ է, հաւատացէք ինձ, տէր իմ։

—Եկո՛ւր, ըսաւ Մազարէն։

Մազարէն Թագուհիին աղօթարանը մտցուց տ'Արդանեանը և անոր ըսաւ որ սպասէ։

Տ'Արդանեան շատ երկար չսպասեց։ Աղօթարանը հինգ վայրկեանի չափ մնալէն ետք Թագուհին մեծ հանդէսի հագուստով հասաւ։ Այսպէս զարդարուած հազիւ երեսունըհինգ տարու կ'երևէր և միշտ գեղանի էր։

—Միթէ դո՞ւն ես, Պ. տ'Արդանեան, ըսաւ ան ժպտելով շնորհալի, շնորհակալ եմ որ զիս տեսնելու պնդեցիր։

—Ներում կը խնդրեմ Ձեր Վեհափառութենէն, ըսաւ տ'Արդանեան, բայց ձեր բերնէն ուզեցի լսել ինձ տրուելիք հրամանները։

—Գիտե՞ս ի՛նչ է գործը։

—Այո՛, տիկին։

—Միթէ կ'ընդունի՞ս քեզի յանձնած պաշտօնս։

—Երախտագիտութեամբ։

—Լա՛ւ, կէս գիշերին հոս գտնուէ՛։

—Պիտի գտնուիմ։

—Պարո՛ն տ'Արդանեան, ըսաւ Թագուհին, քու անշահախնդրութիւնդ քաջ ճանչնալով աւելորդ կը սեպեմ այս միջոցիս իմ երախտագիտութեանս վրայ խօսիլ, բայց կ'երդնում որ այս երկրորդ ծառայութիւնը չպիտի մոռնամ ինչպէս որ առաջինը մոռցայ։

—Ձեր Վեհափառութիւնը ազատ է յիշելու և մոռնալու. և չգիտեմ թէ ի՞նչ ըսել կ'ուզէք։

Եւ տ'Արդանեան խոնարհութիւն ըրաւ։

—Գնա՛, պարոն, ըսաւ Թագուհին իր չքնաղ ժպիտով, գնա՛ և կէս գիշերին եկուր։

Եւ ձեռքով ողջոյնի նշան մը ըրաւ. տ'Արդանեան քաշուեցաւ, բայց երթալով աչքը նետեց այն վարագոյրին վրայ ուրկէ ներս մտեր էր Թագուհին, և վիժակին վարի կողմը անդուսէ սոլերի մը ծայրը տեսաւ։

—Լա՛ւ, ըսաւ, Մազարէն մտիկ կ'ընէր որպէսզի իմանայ թէ զինքը պիտի մատնե՞մ։ Իրաւի, Իտալիոյ այս հապիտը պարկեշտ մարդէ մը ծառայութիւն ընդունելու արժանի չէ։

Սակայն տ'Արդանեան դարձեալ ժամադրութեան տեղը ճշդիւ գնաց, ժամը իննուկէսին նախասենեակը կը մտնէր։

Պէրնուէն կը սպասէր և զայն ներս հրաւիրեց։

Կարտինալը ձիաւորի հագուստով գտաւ։ Գեղեցիկ կերպարանք մը ունէր այս զգեստով, զոր, ինչպէս ըսինք, վայելչութեամբ կը հագնէր. միայն գունատ էր և քիչ մը կը դողար։

—Մինա՞կ ես, ըսաւ Մազարէն։

—Այո՛, տէր իմ։

—Հապա այն բարի Վալօնն ո՞ւր է. միթէ իր ընկերութիւնը չպի՞տի վայելենք։

—Անտարակո՛յս, տէր իմ, իր կառքին մէջ կը սպասէ։

—Ո՞ւր տեղ։

—Փալէ-Ռուայալի պարտէզին դրան առջև։

—Ուրեմն անոր կառքո՞վը պիտի մեկնինք։

—Այո՛, տէր իմ։

—Եւ միթէ ուրիշ պահապան ուղեկիցներ ձեզնէ զատ պիտի չառնե՞ք։

—Միթէ մենք բաւական չե՞նք․ մեզմէ մէկը անգամ կը բաւէր։

—Իրաւի, սիրելի տ'Արդանեան, ըսաւ Մազարէն, քու պաղարիւնութեամբդ զիս կը ահաբեկես։

—Ընդհակառակն պիտի կարծէի թէ անով ձեզի վստահութիւն կ'ազդեմ։

—Եւ միթէ Գէրնուէնը միասին չի՞ պիտի տանիմ։

—Անոր համար տեղ չկայ, թո՛ղ վերջէն գայ Ձեր Բարձրութեանը միանայ։

—Երթա՛նք, ըսաւ Մազարէն, քանի որ ամէն բանի մէջ խօսքդ կատարել պէտք է։

—Տէր իմ, տակաւին ժամ է ընկրկելու, ըսաւ տ'Արդանեան, և Ձեր Բարձրութիւնը բոլորովին ազատ է.

—Ո՛չ, ո՛չ, ըսաւ Մազարէն, մեկնինք։

Եւ ամէնքնին ալ ծածուկ սանդուղէն վար իջան, Մազարէն տ'Արդանեանի թևին յենած, որուն դողը իրենին տակ կը զգար հրացանակիրը։

Փալէ-Ռուայալի գաւիթներէն անցան. ուր դեռ ևս կանգ առեր էին քանի մը յետամնաց կոչնականներու դեսպակներ․ պարտէզը հասան և փոքրիկ դուռը գտան։

Մազարէն իր գրպանէն հանած մէկ բանալիով զայն բանալու փորձ փորձեց, բայց այնքան ձեռքը կը դողար որ պարզունակին ծակը չկրցաւ գտնել։

—Տո՛ւր, ըսաւ տ'Արդանեան։

Մազարէն անոր տուաւ բանալին․ տ'Արդանեան բացաւ և բանալին գրպանը դրաւ. անկից վերադառնալու միտք ունէր։

Կառքին դուռը բաց էր, Մուսքդօն դռնակին առջև կեցեր էր և Բօրթօս կառքին խորը կը գտնուէր,

—Նե՛րս մտէք, տէր իմ, ըսաւ տ'Արդանեան։

Մազարէն երկու անգամ կրկնել չտուաւ այս խօսքը ու կառքը մտաւ։

Տ'Արդանեան անոր ետևէն վեր ելաւ․ Մուսքդօն դուռը գոցեց և հեծծելով կառքին ետևը նստաւ։ Մեկնելու համար քանի մը դժուարութիւններ հաներ էր, սա պատրուակով թէ վէրքը զինքը կը նեղէր․ բայց տ'Արդանեան անոր ըսեր էր.

—Եթէ կ'ուզես մնացիր, սիրելի Պ. Մուսքդօն, բայց կ'ազդարարեմ քեզ որ այս գիշեր Բարիզ հրոյ ճարակ պիտի ըլլայ։

Ասոր վրայ Մուսքդօն ուրիշ խօսք մը չէր ըսած և յայտներ էր թէ մինչև աշխարհիս ծայրը իր տիրոջ և տ'Արդանեանի հետևելու պատրաստ էր։

Կառքը կանոնաւոր ընթացքով ճամբայ ելաւ, այնպէս որ բնաւ չէր յայտնուեր թէ չտապող մարդիկ կը պարունակէ իր մէջ։ Կարտինալը իր ճակատը սրբեց թաշկինակովը և իր չորս կողմը նայեցաւ։

Իր ձախ կողմը ունէր Բօրթօսը և աջ կողմը՝ տ'Արդանեանը։ Մէկը դռնակին մէկը կը պահպանէր, միւսը իրեն պատուարի տեղ կը ծառայէր։

Դիմացի նստարանին վրայ երկու զոյգ հրացանակներ կային, մէկը Բօրթօսի առջև, միւսը տ'Արդանեանի․ ասկէ զատ երկու բարեկամներէն իւրաքանչիւրը իր սուրը կախեր էր մէջքէն,

Փալէ-Ռուայալէն հարիւր քայլ հեռու գիշերապահ գունդ մը կառքը կեցուց։

—Ո՞վ կայ ներսը, ըսաւ հրամանատարը։

—Մազարէ՛ն, պատասխանեց տ'Արդանեան քահ քահ ծիծաղելով։

Կարտինալը զգաց որ գլխուն վրայ մազերը կը ցցուին։

Այս կատակը շատ պատուական երևցաւ սասանիկներուն, որ այս կառքը առանց պահնորդի և զէնքի տեսնելով՝ երբեք

չպիտի հաւատային այս անխոհեմութեան ստուգութեանը:

—Բարի ճամբորդութի՛ւն, պոռացին անոնք:

Եւ թողուցին որ կառքը անցնի:

—Հէ՛յ, բացագանչեց տ'Արդանեան, տէր իմ, այս պատասխանին վրայ ի՞նչ կը մտածէք:

—Նրբամի՛տ մարդ, ըսաւ Մազարէն:

—Քա՛ջ է, ըսաւ Բորթոս, հիմակ կը հասկնամ...

Բրդի-Շանի փողոցին մէջտեղը երկրորդ գիշերապահ գունդ մը կառքը կեցուց:

—Ո՞վ է այն, պոռաց գնդապետը:

—Ներս քշուէ՛, տէր իմ, ըսաւ տ'Արդանեան:

Եւ Մազարէն երկու բարեկամներու մէջ այնպէս սքլեցաւ մտաւ որ բոլորովին աներեւոյթ եղաւ անոնցմէ պահուելով:

—Ո՞վ է այն, կրկնեց նոյն ձայնը անհամբեր:

Եւ տ'Արդանեան զգաց որ ձիերուն գլուխը կը բռնեն:

Կառքէն դուրս ելաւ մինչեւ կէս մէջքը:

—Է՛հ, Բլանշէ՛, գոչեց տ'Արդանեան:

Գնդապետը մօտեցաւ. իրօք Բլանշէն էր: Տ'Արդանեան իր վաղեմի ծառային ձայնը ճանչցեր էր:

—Ի՞նչպէս, պարոն, ըսաւ Բլանշէ, միթէ դո՞ւ ես:

—Է՛հ, Աստուած իմ, այո՛, սիրելի բարեկամս: Այս մեր սիրական Բորթոսը նոր առաւ սուրի հարուած մը եւ զինքը իր Սէն-Քլուի գիւղի տունը կը տանիմ:

—Ո՛հ, իրա՞ւ, գոչեց Բլանշէ:

—Բորթոս, վրայ բերաւ տ'Արդանեան, եթէ տակաւին կարող ես խօսիլ, իմ սիրելի Բորթոս, գոնէ բառ մը ըսէ այս բարի Բլանշէին:

—Բլանշէ՛, բարեկամս, ըսաւ Բորթոս թեթեւ ձայնով մը, շատ հիւանդ եմ, եւ եթէ բժիշկի մը հանդիպիս, մեծ հաճոյք պիտի պատճառես ինծի ղրկելով:

—Ա՛հ, Աստուա՛ծ իմ, ըսաւ Բլանշէ, ի՛նչ դժբախտութիւն: Եւ ի՞նչպէս պատահեցաւ այդ բանը:

—Պիտի պատմեմ քեզի գործը, ըսաւ Մուսքդոն:

Բորթոս խորին հառաչ մը արձակեց:

—Ճամբայ բանալ տո՛ւր մեզի հիմակ, Բլանշէ՛, ըսաւ տ'Արդանեան կամացուկ մը, թէ ոչ ողջ չպիտի հասնի իր տեղը. բարեկա՛մ, թոքերը վնասուած են:

Բլանշէ գլուխը ցնցեց այնպիսի մարդու մը դէմքով որ կ'ըսէ. Ուրեմն գործը գէշ է:

Յետոյ իր մարդոց կողմը դառնալով,

—Թո՛յլ տուէք որ անցնին, ըսաւ, բարեկամներ են ասոնք:

Կառքը իր ճամբան շարունակեց, եւ Մազարէն որ իր շունչը բռներ էր աներկիւղ շնչել սկսաւ:

— Պրիւքսի՛, մրմռաց նա:

Սէնթ-Օնորէ դուռնէն քանի մը քայլ առջին երրորդ խումբի մը հանդիպեցան. այս խումբին մարդիկը անշնորհ կերպարանք մը ունէին, որ աւելի աւազակներու կը նմանէին քան թէ ուրիշ բանի. Սէնթ-Էօսթաշի մուրացկանին մարդիկն էին:

—Ուշադրութի՛ւն, Բորթոս ըսաւ տ'Արդանեան:

Բորթոս իր ձեռքերը դէպի հրացանակները երկնցուց:

—Ի՞նչ կայ, հարցուց Մազարէն:

—Տէր իմ, կը կարծեմ թէ գէշ մարդոց մէջ ենք:

Մարդ մը դռնակին մօտեցաւ ձեռքը տեսակ մը մանգաղ բռնած:

—Ո՞վ է այն, հարցուց այս մարդը:

—Է՛հ, ապիրատ, գոչեց տ'Արդանեան, միթէ չե՞ս ճանչնար Իշխանին կառքը:

—Իշխանը ըլլայ թէ ոչ, ըսաւ անծանօթը, բացէ՛ք. դրան պահպանութիւնը կ'ընենք, եւ ոչ ոք կ'անցնի ասկից առանց յայտնելու մեզ թէ ո՛վ է:

—Ի՞նչ պէտք է ընել, հարցուց Բորթոս:

—Աստուա՛ծ վկայ, անցնիլ. ըսաւ տ'Արդանեան:

—Բայց ինչպէս անցնիլ, ըսաւ Մազարէն:

—Մէջէն կամ վրայէն. կառապա՛ն, արշաւէ՛:

Կառապանը վերցուց իր մտրակը:

—Քայլ մը առաջ մի՛ առներ, ըսաւ մարդը որ կարծես թէ պարագլուխը կ'երեւար, եթէ ոչ ձիերուն ոտքը կը կտրեմ:

—Կրո՛ղ, ըսաւ Բոլթօս, մեզ պիտի ըլլայ. այս կենդանիներուն ամէն մէկը ինծի յիսուն ոսկիի արժած է։

—Հարիւր ոսկի պիտի վճարեմ, ըսաւ Մազարէն։

—Այո՛, բայց երբ անոնց ոտքը կտրեն, մեր ալ վիզը պիտի կտրեն։

—Մէկը իմ կողմս կուգայ, ըսաւ Բոլթօս, միթէ սպանե՞մ։

—Այո՛, կռուփով մը, եթէ կարող ես. երբ մեր ճարը հատնի այն ատեն հրացան պարպենք։

—Կարող եմ, պատասխանեց Բոլթօս։

—Ուրեմն եկուր բաց, ըսաւ տ'Արդանեան մանգաղաւոր մարդուն, իր հրացաններէն մէկը փողէն բռնելով և գրնգովը անոր զարնելու պատրաստուելով։

Մարդը մօտեցաւ։

Որքան կը մօտենար, տ'Արդանեան աւելի դիւրին շարժելու համար, դռնակէն մինչև կէս մէջքը դուրս կ'ելնէր. իր աչքերը մուրացկանին վրայ կեցան՝ որ լապտերի մը լոյսով կը լուսաւորէին։

Այս մարդը ճանչցաւ անշուշտ հրացանակիրը, վասնզի գոյնը սաստիկ նետեց. անտարակոյս տ'Արդանեան ալ զայն ճանչցաւ, վասնզի իր մազերը գլխուն վրայ ցցուեցան։

Կարելի է տ'Արդանեան իր կողմէ պիտի պատասխանէր երբ լախտի նման հարուած մը որ կռիի մը վրայ կ'իջնէ՝ հնչեց. Բոլթօս էր որ իր մարդը գլխաթաւալ գետին կը փռէր։

Տ'Արդանեան գլուխը դարձնելով տեսաւ որ այն խեղճը անկից չորս քայլ անդին տապալեր էր։

—Հիմակ սանձարձակ քշէ՛, պոռաց ան կառապանին, մարակէ՛, զա՛րկ։

Կառապանը իր ձիերը խարազանի լայն հարուածով մը ամփոփեց. ազնիւ կենդանիները ոստոստեցին։ Այնպիսի աղաղակներ լսուեցան որպէս թէ գետինը տապալող մարդոց աղաղակներն էին։

Յետոյ կրկին անգամ ցնցում զգացին. երկու անիւները ճապուկ և կլոր մարմնի վրայէ կ'անցնէին։

Պահ մը լռութիւն տիրեց։ Կառքը դուռնէն ներս մտաւ։

—Դէպի Բուր-լա-Րէն քշէ՛. պոռաց տ'Արդանեան կառավարին։

Յետոյ Մազարէնի կողմը դառնալով՝ աւելցուց.

—Հիմակ, տէր իմ, ըսաւ անոր, կրնաք հինգ Հայր մեր և հինգ ողջոյն ըսել. ազատութեանդ համար Աստուծոյ շնորհակալ ըլլալու է. վախ չկայ ա՛լ, ազատ էք։

Մազարէն տեսակ մը մռնչիւնով պատասխանեց, չէր կրնար այս տեսակ հրաշքի մը հաւատ ունենալ։

Հինգ վայրկեան ետք կառքը կեցաւ, Բուր-լա-Րէն հասեր էր։

—Միթէ գոհ է՞ք, տէր իմ, մեր պահպանութենէն, հարցուց հրացանակիրը։

—Զափազանց գոհ եմ, պարո՛ն, ըսաւ Մազարէն, գլուխը դռնակին մէկէն դուրս հանելու իշխելով, հիմակ նոյն բանը ըրէք թագուհիին համար:

—Այդ այնչափ դժուարին չպիտի ըլլայ, ըսաւ տ'Արդանեան՝ գետին ցատկելով։ Պարո՛ն Վալլօն, քեզի կը յանձնեմ Նորին Բարձրութիւնը:

—Անհոգ եղիր, ըսաւ Բոլթօս ձեռքը երկնցնելով։

Տ'Արդանեան Բոլթօսի ձեռքը բռնեց և զայն ցնցեց:

—Ա՜յ, ըրաւ Բոլթօս։

Տ'Արդանեան զարմանալով բարեկամին նայեցաւ։

—Ի՞նչ ունիս ուրեմն, հարցուց ան։

—Կարծեմ թէ դաստակս ճմլուած է, ըսաւ Բոլթօս։

—Է՛հ, թշուառակա՛ն, դուն ալ լախտի պէս կը զարնես։

—Պէտք էր որ այսպէս ընէի, իմ մարդս հրացանակ մը պիտի պարպէր վրաս, բայց դուն ինչպէ՞ս ազատեցիր օձիկդ մարդէդ։

—Ո՛հ, իմս, ըսաւ տ'Արդանեան, մարդ մը չէր։

—Ի՞նչ էր ուրեմն։

—Ձիւաղ մըն էր։

—Եւ...

—Եւ զայն հալածեցի:

Առանց ուրիշ բացատրութիւն մը տալու, տ'Արդանեան իր առջեւի նստարանին վրայ գտնուած հրացանակները առաւ, իր գօտիէն անցուց, վերարկուին պլլուեցաւ, և իր եկած քաղաքադուռնէն ժռնել չկամենալով՝ դէպի Ռիշլիէօի դրան կողմը զարկաւ։

Ը.

Պ. ՏԵՂԱՊԱՀԻՆ ԴԵՍՊԱԿԸ

Տ'Արդանեան որ ժամանակ ունէր տակաւին, Սէնդ-Օնորէ դուռնէն մտնելու տեղ, շրջան մը ըրաւ և Ռիշլիէօի դրան կողմէ քաղաքը մտաւ։ Եկան զայն քննելու, և երբ իր փետուրաւոր գլխարկէն և ժապաւէնեալ վերարկուէն դիտեցին որ հրացանակիրներու սպայ մըն է, անոր չորս կողմը առին որպէսզի պոռալ տան. «անկցի՛ Մազարէն»։ Այս առաջին ցոյցը սկիզբէն իրեն քիչ մը անհանգստութիւն պատճառեց, բայց երբ հասկցաւ թէ ի՛նչ է խնդիրը, այնպիսի հեշտ ձայնով մը պոռաց որ ամէնէն դժկամակները գոհ եղան:

Ռիշլիէօի փողոցէն կ'անցնէր և կը մտածէր թէ ի՛նչ կերպով Թագուհին պիտի առնէր տանէր, վասնզի Ֆրանսայի զինադրոշմները կրող կառքով մը տանելու հնարը չէր տեսներ, երբ Կէմէնի տիկնոջ ապարանքին դրան առջև կառք մը տեսաւ,

Յանկարծահաս խորհուրդ մը միտքը լուսաւորեց։

—Ա՛հ, Թշուառական, ըսաւ, աղուոր կռիւ մը պիտի բանանք։

Եւ կառքին մօտեցաւ, դիտեց տախտակներուն վրայ գտնուած զինադրոշմները և աթոռին վրայի կառապանին պճնեալ հագուստը։

Այս քննութիւնը իրեն համար դիւրին էր քանի որ կառապանը խորունկ կը քնանար։

—Իրաւ որ Պ. Տեղապահին կառքը պիտի ըլլայ այս. կ'սկսիմ հաւատալ որ Նախախնամութիւնը մեզի հետ է:

Կամացուկ մը կառքին վրայ ելաւ, և մետաքսէ թելը քաշելով որ կառապանին մանր մատին կապուած էր։

—Բալէ-Րուայեալ քշէ՛, ըսաւ:

Կառապանը ընդոստ արթննալով՝ նշանակեալ տեղը դիմեց առանց կասկածելու որ այս հրամանը չէ թէ իր տիրոջմէ այլ ուրիշէ մը կ'ընդունէր: Բարապանը վանդակները գոցելու վրայ էր, բայց այն փառաւոր կառքը տեսնելով կարծեց հաստատապէս կարեւոր այցելութիւն մը պիտի ըլլայ, և թողուց որ կառքը անցնի որ գնաց ներքին գաւիթին մէջ կեցաւ։

Այն տեղ միայն կառապանը դիտեց որ պայիկները կառքին ետեւը չէին:

Կարծեց թէ Պ. Տեղապահը պայիկները ուրիշ տեղ ղրկեր էր, ուստի վար ցատկեց առանց սանձերը թողելու և դուռը բացաւ։

Տ'Արդանեան ևս վար ցատկեց և այն միջոցին որ կառապանը իր տէրը չգտնելուն վրայ զարհուրած, քայլ մը ետ կ'առնէր, ձախ ձեռքով անոր օձիքէն բռնեց և աջովը կոկորդին վրայ դրաւ հրացանակը։

—Փորձ մը փորձէ բառ մը միայն արտասանելու, ըսաւ տ'Արդանեան և իսկոյն մահդ կը գտնես։

Կառապանը իրեն խօսողին դէմքէն հասկցաւ որ ծուղակ մը ինկած էր, և բերանն ու աչքերը չափէն աւելի բաց մնաց:

Բակին մէջ երկու հրացանակիր կը պտտէին, տ'Արդանեան անոնց անունը տալով գոչեց.

—Պարոն Պէլլիէր, ըսաւ անոնցմէ մէկուն, բարեհաճէ այս բարի մարդուն ձեռքէն սանձերը առնելու, կառքին աթոռին վրայ նստելու, ծածուկ սանդուղին դրան առջև տանելու և այն տեղ ինծի սպասելու. կարեւոր գործի մը համար է այս որ Թագաւորին ծառայութեան կը վերաբերի:

Հրացանակիրը՝ որ գիտէր թէ իր տեղակալը ծառայութեան մասին անկարող էր կատակ ընել, առանց բառ մը ըսելու հնազանդեցաւ, թէեւ հրամանը իրեն զարմանալի երեւցաւ։

Այնատեն՝ երկրորդ հրացանակիրին կողմը դառնալով.

—Պարո՛ն Վէրժէ, ըսաւ ան, օգնէ ինծի որ աս մարդը ապահով տեղ մը տանիմ ձգեմ։

Հրացանակիրը կարծեց թէ իր տեղակալը ծպտեալ իշխան մը ձերբակալած է, խոնարհութիւն ըրաւ եւ սուրը քաշելով, նշան ըրաւ որ պատրաստ է։

Տ'Արդանեան սանդուղէն վեր ելաւ, իր ետեւէն կ'երթար կալանաւորը, եւ ասոր կը հետեւէր հրացանակիրը. անդաստակէն անցաւ եւ Մազարէնի նախասենեակը մտաւ։

Պէրնուէն իր աթոռին վրայ լուր առնելու կը սպասէր անհամբեր։

—Լա՛ւ ուրեմն, պարոն, ըսաւ ան։

—Ամէն ինչ կարգին է, սիրելիդ իմ Պ. Պէրնուէն. բայց ահաւասիկ մարդ մը զոր պէտք է ապահով տեղ մը դնես...։

—Ո՞ւր, պարոն։

—Ո՛ւր որ կ'ուզես, բաւական է որ ընտրելիք տեղդ փեղկեր ունենայ որ ադուցիկ փականքով գոցուին եւ դուռ մը որ բանալիով փակուի։

—Այդպիսի տեղ մը ունինք, պարոն, ըսաւ Պէրնուէն։

Եւ խեղճ կառապանը տարին այնպիսի խուց մը որուն պատուհանները վանդակաւոր էին եւ բանտի մը շատ կը նմանէր։

—Այժմ, սիրելիդ իմ բարեկամ, կը հրաւիրեմ քեզ, ըսաւ տ'Արդանեան, որ ինծի համար հանես գլխարկդ եւ վերարկուդ։

Ինչպէս որ դիւրին է երեւակայել, կառապանը դիմադրութիւն մը չըրաւ. ասկէ զատ այնքան կը զարմանար գըլխին եկած փորձանքին վրայ որ գինով մարդու մը պէս կ'երերար եւ կը կակազէր. տ'Արդանեան անոր հանած զգեստները սենեկապանին թեւին տակ դրաւ։

—Հիմակ, Պ. Վէրժէ, ըսաւ տ'Արդանեան, աս մարդուն հետ փակուէ մինչեւ որ Պ. Պէրնուէն գայ դուռը բանայ. պահակութիւնդ բաւական երկար պիտի տեւէ եւ շատ անախորժ պիտի ըլլայ, գիտեմ, բայց կը հասկնաս, յարեց ծանրութեամբ, որ թագաւորին ծառայութիւնը այսպէս կը պահանջէ։

—Հրամանիդ պատրաստ եմ, իմ տեղակալս, պատասխանեց հրացանակիրը, որ տեսաւ թէ ծանրակշիռ գործեր կը դառնան։

—Աղէկ միտքս ինկաւ, յարեց տ'Արդանեան, եթէ այս մարդը խոյս տալու կամ պոռալու փորձ փորձէ, սուրդ անոր փորը խոթէ։

Հրացանակիրը գլխովը նշան մը ըրաւ որով ըսել կ'ուզէր թէ հրամանին կէտ առ կէտ պիտի հնազանդի։

Տ'Արդանեան դուրս ելաւ Պէրնուէնը հետը առնելով։

Կէս գիշեր կը զարնէր։

—Զիս թագուհիին աղօթարանը տար, ըսաւ տ'Արդանեան, իմաց տուր Ն. Վեհափառութեան որ իր հրամանին կ'ըսպասեմ հոն, եւ յետոյ գնա՛ այդ ծրարը լաւ մը լեցուած հրացանի հետ կառքին աթոռին վրայ դնելու, ուր ծածուկ սանդուղին ոտքը սպասէ։

Պէրնուէն աղօթարանը մցուց տ'Արդանեանը, որ խոկալով նստաւ։ Ամէն ինչ ըստ սովորականին անցեր էր ի Բալէ-Րուայեալ։

Ինչպէս որ ըսինք ժամը տասնին գրեթէ բոլոր կոչնականները քաշուեր գացեր էին. թագուհիին հետ խոյս տալու պատրաստուողները կարգախօսը առին եւ ամէն մէկը կէս գիշերին Գուր-լա-Րէն գտնուելու հրաւիրուեցան։

Ժամը տասնին Աննա թագուհին թագաւորին սենեակը մտաւ։ Դեռ նոր պառկեցուցեր էին անոր եղբայրը, եւ նորատի Լուին՝ վերջինը մնալով, կապարէ զինուորներ ճակատամարտի ձեւով շարելով կ'զբօսնուր, կրթութիւն մը որ իրեն շատ սփոփանք կը պատճառէր։ Երկու պատուակալ տղաք անոր հետ կը խաղային։

—Լաւո՛րդ, ըսաւ Թագուհին, ժամ է Նորին Վեհափառութիւնը անկողին տանիլ։

Թագաւորը խնդրեց որ դեռ եւս արթուն մնայ, վասնզի քնանալու փափաք չունէր, բայց Թագուհին պնդեց։

—Մի՛թէ վաղը ժամը վեցին Բօնփլան չպիտի՞ երթաս, Լուի. կ'երեւի ինծի որ դուն ինքնին խնդրեցիր այս բանը։

—Իրաւունք ունիս, տիկին, ըսաւ Թագաւորը, եւ պատրաստ եմ սենեակս քաշուելու երբ գիս համբուրելու բարեհաճիս։

—Լաւո՛րդ, Պ. Բուապլէն ասպետին տուր գիշերային կանթեղը։

Թագուհին օգոստափառ տղուն սպիտակ եւ յստակ ճակատին վրայ համբոյր մը դրոշմեց, եւ տղան այնպիսի ծանրութեամբ մը երկնցուց ճակատը որ արդէն արքունական սովորութեանց լիովին տեղեակ կ'երեւար։

—Լուի, շուտով քնացիր, ըսաւ Թագուհին, վասնզի առտուն կանուխ պիտի արթնցնեմ։

—Ձեռքէս եկածը պիտի ընեմ քեզի հնազանդելու, տիկին, պատասխանեց նորատի Լուին, բայց քնանալու փափաք չունիմ բնաւ։

—Լաւո՛րդ, ըսաւ Աննա Թագուհին ցած ձայնով մը, Նորին Վեհափառութեան համար խիստ ձանձրալի գիրք մը գտիր, բայց դուն մի՛ հանուիր։

Թագաւորը Բուապլէն ասպետին հետ դուրս ելաւ, որ անոր կանթեղը կը տանէր։ Միւս պատուակալ տղան իր տունը տարուեցաւ։

Այն ատեն Թագուհին իր սենեակը մտաւ։ Իր կիները՝ այսինքն՝ տիկին Պրէժի, օրիորդ Պօմօն, Մօտվիլ տիկինը ու Սոկրատին՝ իր քոյրը, որ իր իմաստութեան համար այսպէս կ'անուանուէր, նոր բերեր էին անոր ճաշի մնացորդները, որով կ'ընթրէր իր սովորութեան համեմատ։ Այն ատեն Թագուհին իր հրամանները տուաւ, երրորդ օրուան Վիլքիէի տալիք հացկերոյթին վրայ կը խօսէր, իրեն սեղանակից ըլլալու պատիւին արժանի եղողները պատմեց, իմացուց նաեւ թէ հետեւեալ

օրուան համար Վալ-տը-Կրաս պիտի երթայ ուր իր բարեպաշտական գործերը պիտի կատարէ, եւ իր առաջին սենեկապետ Պէրինկէնի տուաւ իրեն ուղեկցելու մասին հրամաններ։

Երբ կանանց ընթրիքը լմնցաւ, Թագուհին այնպէս կեղծեց թէ շատ յոգնած է եւ իր ննջարանը գնաց։ Մօտվիլ տիկինը՝ որ նոյն իրիկունը յատուկ սպասաւորութիւն ունէր, անոր հետեւեցաւ եւ ապա օգնեց որ հագուստները հանէ։ Թագուհին անկողին մտաւ, անոր հետ մտերմօրէն խօսակցեցաւ մէկ քանի վայրկեան եւ ապա ճամբեց։

Նոյն միջոցին էր որ տ'Արդանեան Բալէ-Րուայեալի գաւիթը կը մտնէր Տեղապահին կառքով։

Գահ մը ետք՝ պատուական տիկիններու կառքերը անկէ դուրս կ'ելլէին եւ անոնց ետեւէն վանդակը կը գոցուէր։

Կէս գիշեր կը զարնէր։

Հինգ վայկեան ետք՝ Պէրնուէն Թագուհիին ննջարանի դուռը կը զարնէր, Կարտինալին գաղտնի անցքէն գալով։

Աննա Թագուհին անձամբ գնաց դուռը բանալու։

Արդէն հագուեր էր, այսինքն գուլպաները հագեր եւ երկայն վարշամակով մը փաթթուեր էր։

—Դո՞ւն ես, Պէրնուէն, ըսաւ, Պ. տ'Արդանեան հո՞ս է։

—Այո՛, տիկին, ազօթարանն է, կը սպասէ որ Ձեր Վեհափառութիւնը պատրաստուի։

—Պատրաստ եմ։ Գնա՛ Լաբորթին ըսէ որ Թագաւորը արթնցնէ եւ հագուեցնէ. յետոյ Վիլրուա մարէշալին տունը գնա եւ իմ կողմէս կանչէ։

Պէրնուէն խոնարհութիւն ըրաւ եւ դուրս ելաւ։

Թագուհին իր ազօթարանը մտաւ, որ Վենետիկի պարզապակիէ կանթեղով մը կը լուսաւորէր։ Տ'Արդանեանը տեսաւ ոտքի վրայ որ իրեն կը սպասէր։

—Մի՛թէ դո՞ւն ես, ըսաւ անոր։

—Այո՛, տիկին։

—Պատրա՞ստ ես։

—Այո՛։

—Հապա Գ. Կարտինա՞լը։

—Անվտանգ դուրս ելաւ։ Ձեր Վեհափառութեան կը սպասէ ի Պուր-լա-Րէն։

—Բայց ի՞նչ կառքով պիտի մեկնինք։

—Ամէն բան հոգացի, կառք մը կը սպասէ վարը Ձեր Վեհափառութեան։

—Թագաւորին քովը երթանք։

Տ'Արդանեան խոնարհեցաւ և Թագուհիին ետեւէն գնաց։

Նորատի Լուի արդէն հագուեր էր, և միայն մուճակները ու Թիկնոցը չէր դրած. զարմանալով կը Թողուր որ զինքը հագուեցնեն, Լաբորդին հետզհետէ հարցումներ ընելով և Լաբորդ միայն սա պատասխանը կուտար.

—Տէր իմ, Թագուհիին հրամանը այս է։

Անկողինը բաց էր, և Թագաւորին սաւանները այնքան մաշած էին, որ տեղ տեղ ծակեր կ'երևային։

Այս ալ դարձեալ Մազարէնի ժլատութեան մէկ հետևութիւնն էր։

Թագուհին ներս մտաւ և տ'Արդանեան սեմին վրայ կեցաւ։ Պատանեակը Թագուհին տեսնելով՝ Լաբորդին ձեռքէն փախաւ և իր մօրը վազեց։

Թագուհին տ'Արդանեանի նշան ըրաւ որ մօտենայ։

Տ'Արդանեան հնազանդեցաւ։

—Որդեա՛կ իմ, ըսաւ Աննա Թագուհին՝ հանդարտ, կանգուն և գլուխը բաց սպասող հրացանակիրը ցոյց տալով, ահաւասի՛կ Գ. տ'Արդանեանը որ քաջ է, այն քաջերուն նման որոնց պատմութիւնը լսել կ'ախորժիս երբ իմ պառաւական կիներս կը պատմեն։ Լաւ յիշէ անոր անունը, և աղէկ նայէ որ դէմքը չմոռնաս, վասնզի այս իրիկուն մեծ ծառայութիւն մը պիտի մատուցանէ։

Նորատի Թագաւորը իր հպարտ մեծ աչքով սպային նայեցաւ և կրկնեց.

—Գ. տ'Արդանեա՞ն։

—Ճիշտ այդ է, որդեակ.

Նորատի Թագաւորը իր փոքրիկ ձեռքը մեղմիկ վերցուց և հրացանակիրին երկնցուց. հրացանակիրը մէկ ծունկը գետինը դրաւ և ձեռքը պագաւ։

—Գ. տ'Արդանեան, կրկնեց Լուի, լաւ է, տիկին։

Նոյն պահուն դղրդիւն մը լսուեցաւ որ կը մօտենար։

—Ի՞նչ է այս, հարցուց Թագուհին։

—Հօ՛, հօ՛, պատասխանեց տ'Արդանեան իր նուրբ ականջը ու միանգամայն ուշիմ ակնարկը բանալով, յուզեալ ժողովրդեան աղմուկն է։

—Պէտք է փախչիլ, ըսաւ Թագուհին։

—Ձեր Վեհափառութիւնը այս գործին ուղղութիւնը ինծի տուաւ, պէտք է մնալ և իմանալ թէ ի՞նչ կ'ուզէ ժողովուրդը։

—Պարո՛ն տ'Արդանեան։

—Ամէն բանի համար պատասխանատու կը մնամ։

Չկայ բան մը որ այնքան արագութեամբ հաղորդուի որքան վստահութիւնը։ Թագուհին, ոյժով և քաջութեամբ լեցուն, ուրիշներուն վրայ կը զգար սաստկապէս այս երկու առաքինութիւնները։

—Գիտցածդ ըրէ, ըսաւ Թագուհին, ամէն բան քեզի կը յանձնեմ։

—Ձեր Վեհափառութիւնը կ'ուզէ՞ ինծի ներել իր անուան հրամաններ տալու այս գործին մէջ։

—Հրաման տո՛ւր, պարոն։

—Նորէն ի՞նչ կ'ուզէ այս ժողովուրդը, ըսաւ Թագաւորը։

—Հիմակ պիտի իմանանք, Վեհափառ տէր, ըսաւ տ'Արդանեան։

Եւ սենեակէն դուրս ելաւ վազելով։

Ժխորը հետզհետէ կ'աւելնար, կարծես թէ բոլոր Բալէ-Ռուայեալը շրջապատեր էր։ Ներսէն այնպիսի աղաղակներ կը լսուէին որուն իմաստը կարելի չէր հասկնալ։ Յայտնի էր թէ մեծ չփոթութիւն և ըմբոստութիւն մը կար։ Թագաւորը դեռ կէս հագուած, Թագուհին և Լաբորդ իրենց գտնուած վիճակին և գրեթէ տեղւոյն մէջ կեցան մտիկ ընելով և սպասելով։

Բոմէնժ՝ որ այն գիշեր պահպանութիւն կ'ընէր Բալէ-Րուայեալ, վազեց եկաւ. գաւիթներուն և ախոռներուն մէջ գրեթէ հարիւր հոգի ունէր, և զանոնք Թագուհիին ծառայութեան կը ներկայացնէր։

—Լա՛ւ ուրեմն, հարցուց Աննա Թագուհին, երբ տ'Արդանեան նորէն երեւցաւ, ի՞նչ կայ։

—Սա կայ, տիկին, որ աղմուկ ելեր է թէ Թագուհին Բալէ-Րուայեալէն ելեր է Թագաւորը հետը առնելով, և ժողովուրդը կ'ուզէ որ այս մասին տեղեկութիւն տրուի, թէ ոչ Բալէ-Րուայեալը փլելու կը սպառնայ։

—Ո՛հ, այս անգամ չափը կ'անցընեն, գոչեց Թագուհին, և անոնց պիտի յայտնեմ որ բնաւ մեկնած չեմ։

Տ'Արդանեան՝ Թագուհիին դէմքէն գիտեց որ բուռն հրաման մը տալու վրայ էր։ Անոր մօտեցաւ և կամացուկ մը ըսաւ.

—Ձեր Վեհափառութիւնը միթէ իմ վրաս վստահութիւն ունի՞։

Այս ձայնը Թագուհիին դող տուաւ:

--Այո՛, պարոն, կատարեալ վստահութիւն, պատասխանեց Թագուհին, խօսէ՛։

—Միթէ կը հաճի՞ք իմ խորհուրդիս համեմատ վարուիլ։

—Խօսէ՛։

—Թո՛ղ Ձեր Վեհափառութիւնը Պ. Բոմէնժը իր տեղը դարձնէ, հրամայելով որ ինքը ու իր մարդիկը զօրանոցը ու ախոռներուն մէջ փակուին։

Բոմէնժ տ'Արդանեանի նայեցաւ այն նախանձոտ ակնարկով որով ամէն պալատական նոր բախտի մը ծագիլը կը տեսնէ։

—Լսեցի՞ր, Բոմէնժ, ըսաւ Թագուհին։

Տ'Արդանեան անոր մօտ գնաց. իր սովորական խորագիտութիւնովը գիտեր էր անոր անհանգիստ ակնարկը։

—Պարո՛ն Բոմէնժ, ըսաւ անոր, ներէ՛ ինծ, մենք երկուքնիս Թագուհիին սպասաւորներն ենք, այնպէս չէ՞. իմ կարգս է անոր օգտակար ըլլալ, ուրեմն այս բարեբախտութեան ծուռ աչքով մի նայիր։

Բոմէնժ գլուխը ծռեց և դուրս ելաւ։

—Ահա՛, ըսաւ իւրովի տ'Արդանեան, ահա նոր թշնամի մըն ալ շահեցայ։

—Եւ հիմակ ըսաւ Թագուհին տ'Արդանեանի ուղղելով խօսքը, ի՞նչ պէտք է ընել, վասնզի կը լսե՞ս, փոխանակ հանդարտելու աղմուկը կը սաստկանայ։

—Տիկին ըսաւ տ'Արդանեան, ժողովուրդը կ'ուզէ Թագաւորը տեսնել, և պէտք է որ տեսնէ։

—Ի՞նչպէս, տեսնէ՛, ո՞ւր տեղ, պատշգամի՞ն վրայ։

—Ո՛չ, տիկին, հոս, իր անկողնին մէջ քնացած տեսնէ:

—Ո՛հ, Վեհափա՛ռ Թագուհիս, Պ. տ'Արդանեան կատարեալ իրաւունք ունի, գոչեց Լաբորդ։

Թագուհին մտածեց և ժպտեցաւ իբրև կին մը որ նենգամտութիւնը կը հասկնայ։

—Կ'իմանամ, մրմռաց Թագուհին։

—Պարոն Լաբորդ, ըսաւ տ'Արդանեան, Բալէ-Րուայեալի վանդակէն գնա ժողովրդեան իմացուր որ իր փափաքը պիտի կատարուի հինգ վայրկեանէն, և թէ ո՛չ միայն պիտի տեսնէ Թագաւորը, այլ և անկողնին մէջ պիտի տեսնէ. ըսէ նաև որ Թագաւորը կը քնանայ և թէ Թագուհին կ'աղաչէ որ լռութիւն ընեն որպէսզի չարթննայ։

—Բայց ամէնքը չէ, միայն երկու երեք մարդէ պատգամաւորութիւն մը։

—Ամէ՛նքը, տիկին։

—Բայց մեզ մինչև առտու պիտի սպասցնեն, մտածէ՛ անգամ մը։

—Քառորդ մը բաւական է: Պատասխանատու եմ ամէն բանի, տիկին, հաւատացէք ինծ, ժողովուրդը կը ճանչնամ, մեծկակ տղայ մըն է զոր հարկ է գգուել։ Քնացած Թագաւորին առջև՝ ժողովուրդը անձայն և գառնուկի պէս անուշ, երկչոտ բան մը պիտի դառնայ։

—Գնա՛, Լաբորդ, ըսաւ Թագուհին։

Նորատի Թագաւորը իր մօրը մօտեցաւ։

—Ինչո՞ւ համար այս մարդոց ուզածը կ'ընէք, ըսաւ ան:

—Պէտք է, որդեակ իմ ըսաւ Աննա Թագուհին։

—Բայց այն ատեն, եթէ ինձ պետք է այս ըսեն, ուրեմն ալ Թագաւոր չեմ։

Թագուհին ափ ի բերան մնաց։

—Վեհափա՛ռ տէր, ըսաւ տ'Արդանեան, կը ներէ՞ք արդեօք որ ձեզի հարցում մը ուղղեմ։

Լուի ԺԴ. դարձաւ, զարմանալով որ իրեն խօսք կ'ուղղեն. Թագուհին տղուն ձեռքը սեղմեց։

—Այո՛, պարոն, ըսաւ ան։

—Արդեօք, Վեհափառ տէր, երբեք տեսած չէ՞ք, երբ որ Ֆոնդէնէպլօի ծառաստանին կամ Վէրսայլի բակերուն մէջ կը խաղայիք, յանկարծ երկինքի ամպով ծածկուիլը տեսած և լսած չէ՞ք որոտումը։

—Այո՛, անշուշտ։

—Լա՛ւ ուրեմն, այն որոտումը, որչափ որ Ձեր վեհափառութիւնը փափաքէր դեռ հոս խաղալու, ձեզի կ'ըսէր՝ ներս մտէք Վեհափառ տէր, պէտք է։

—Անշո՛ւշտ, պարոն բայց ըսած են ինձ նաև որ երկինքի որոտումն Աստուծոյ ձայնն է։

—Լա՛ւ, Վեհափառ տէր, ըսաւ տ'Արդանեան, մտիկ ըրէք ժողովրդեան աղմուկը, և պիտի տեսնէք որ այն ալ շատ կը նմանի որոտման։

Արդարև, նոյն պահուն սոսկալի դոռ ու գոչում մը կ'անցնէր գիշերուան քամիէն մղեալ։

Յանկարծ դադրեցաւ։

—Տեսէ՛ք, Վեհափառ տէր, ըսաւ տ'Արդանեան, հիմակ ըսին ժողովրդեան որ կը քնանաք. կը տեսնէք որ միշտ թագաւոր էք։

Թագուհին զարմանալով կը նայէր այս այլանդակ մարդուն՝ որ իր փառաւոր քաջութեամբը քաջագոյն անձերու կը նմանէր, և որ իր նուրբ ու նենգալի միտքով ամենուն կը հաւասարէր։

Լաբորդ ներս մտաւ։

—Լա՛ւ ուրեմն, Լաբորդ, հարցուց Թագուհին։

—Տիկին, պատասխանեց ան, Պ. տ'Արդանեանի գուշակութիւնը կատարուեցաւ, հանդարտութեամբ մը խաղաղեցաւ ժողովուրդը։ Հիմակ դուռները պիտի բանան և հինգ վայրկեանէն հոս պիտի գտնուի։

—Լաբորդ, ըսաւ Թագուհին. եթէ որդիներէդ մին Թագաւորին տեղը դնէք, նոյն միջոցին մենք կրնանք մեկնիլ։

—Եթէ Ձեր Վեհափառութեան հրամանն այս է, ըսաւ Լաբորդ, իմ որդիքս, ինչպէս ես, Թագուհիին ծառայելու պատրաստ ենք։

—Ամենևի՛ն, ըսաւ տ'Արդանեան, վասնզի եթէ անոնցմէ մին Նորին Վեհափառութիւնն Թագաւորը ճանչնայ և խաբէութիւնն իմանայ, գործը տակնուվրայ կ'ըլլայ։

—Իրաւունք ունիս, պարոն, միշտ իրաւունք, ըսաւ Աննա Թագուհին։ Լաբո՛րդ, Թագաւորը առ պառկեցո՛ւր։

Լաբորդ եղածին պէս հագուած անկողնին մէջ դրաւ, յետոյ մինչև ուսերը սաւանով ծածկեց։

Թագուհին անոր վրայ ծռեցաւ և ճակտէն պագաւ։

—Սուտ քուն եղիր, Լուի ըսաւ անոր։

—Այո՛, ըսաւ Թագաւորը, բայց չեմ ուզեր որ այս մարդերէն մին ինձ դպչի։

—Տէր իմ, հոս եմ, ըսաւ տ'Արդանեան, և վստահ եղիր որ եթէ մէկը այդպիսի յանդգնութիւն մը ունենայ, կեանքը...։

—Այժմ ի՞նչ պէտք է ընել, հարցուց Թագուհին, վասնզի ժողովրդեան ձայները կը լսեմ։

—Պ. Լաբորդ, եկողները դիմաւորէ և նորէն անոնց պատուէրէ լռութիւն պահելու։ Տիկին, այդ տեղ դրան վրայ կեցէք։ Ես Թագաւորին գլխուն վրայ եմ, անոր համար մեռնելու կազմ ու պատրաստ։

Լաբորդ դուրս ելաւ, Թագուհին վիժակին մօտ կանգուն կեցաւ, տ'Արդանեան վարագոյրներուն ետին սահեցաւ։

Ցնծայ մեծ բազմութեան մը հեռաւոր և անդուլ քոլուածքը լսուեցաւ. Թագուհին իր ձեռօքը վիժակը վերցուց, բերնին վրայ մատին մէկը դնելով։

Այս մարդիկը Թագուհին տեսնելով յարգական դիրք մը պահեցին։

—Մտէք, ներս մտէ՛ք, պարոններ, ըսաւ Թագուհին։

Այն ատեն բոլոր այս խուժանին մէջ վարանման շարժում մը տեղի ունեցաւ որ պատկառանաց կը նմանէր. դիմադրութիւն տեսնելու կը յուսային, կը յուսային արգելք մը գտնել, վանդակները կոտրել և պահակները տապալել. սակայն վանդակներն ինքնին բացուեցան, և Թագաւորը՝ գէթ առ երեւոյթս, ուրիշ պահապան չունէր իր գլխուն վրայ եթէ ոչ իր մայրը։

Անոնք որ ամէնուն գլուխը կը գտնուէին փորձեցին ընկրկելու։

—Նե՛րս մտէք ուրեմն, պարոններ, ըսաւ Լաբորդ քանի որ Թագուհին հրաման ունի։

Այն ատեն միւսներէն յանդուգն մարդ մը ընդառաջ նետուելով ժպրհելով՝ դրան սեմէն անցաւ մատներուն վրայ կոխելով։ Միւսները անոր հետեւեցան և սենեակը լեցուեցաւ ծանր ծանր այնպէս թէ բոլոր այս մարդիկն ամենախոնարհ և անձնուէր պալատականներ էին։ Դունէն անդին կը տեսնուէին այն մարդոց գլուխներն որ ներս մտնել չկարենալով, իրենց մատներուն վրայ կը կանգնէին։

Տ'Արդանեան վարագուրին մէկ բացուածքէն, զոր ըրեր էր, ամէն բան կը դիտէր. և տեսաւ որ ամէնէն առաջ ներս մտնող մարդը Բլանշէն էր։

—Պա՛րոն, ըսաւ Թագուհին, որ հասկցաւ թէ բոլոր այս խմբին պարագլուխն էր, Թագաւորը տեսնել փափաքեցար և ես ալ ուզեցի զանիկա անձամբ ցոյց տալ։ Մօտեցէ՛ք, նայէ անոր երեսը և ըսէ թէ խոյս տուող մարդոց կերպարանքը ունի՞ թէ ոչ:

—Անտարակոյս ոչ, պատասխանեց Բլանշէ ընդունած անակընկալ պատուէն փոքր ինչ զարմանալով։

—Ուրեմն իմ Բարիզցի բարի և հաւատարիմ ժողովրդեանս ըսէ, վրայ բերաւ Աննա Թագուհին ժպիտով մը որուն բացատրութիւնը քաջ ըմբռնեց տ'Արդանեան, թէ Թագաւորը պառկած և քնացած տեսար, նոյնպէս և Թագուհին ըստ կարգի անկողին մտնելու պատրաստ:

—Պիտի ըսեմ, տիկին, և ինծի պէս պիտի ըսեն նաև իմ ընկերներս, բայց...։

—Բայց ի՞նչ հարցուց Աննա Թագուհին։

—Թո՛ղ Ձեր Վեհափառութիւնը ներէ ինծի, ըսաւ Բլանշէ, բայց միթէ նոյն ինք Թագաւո՞րն է այս անկողնին մէջ պառկողը։

Աննա Թագուհին դողդողաց։

—Եթէ ձեր մէջ կայ մէկը որ Թագաւորը կը ճանչնայ, ըսաւ Թագուհին, թո՛ղ մօտենայ և ըսէ թէ իրաւցնէ Նորին Վեհափառութիւնն է այն։

Վերարկուով փաթթուած մարդ մը, որ միանգամայն դէմքը կը ծածկէր, մօտեցաւ, անկողնին վրայ ծռեցաւ և նայեցաւ։

Տ'Արդանեան պահ մը կարծեց թէ այն մարդը վատ խորհուրդ մը կը տածէ. ձեռքը սուրին տարաւ, բայց վերարկուով մարդը ծռելու ատեն ըրած շարժումէն, իր դէմքին մէկ մասը բացուեցաւ և տ'Արդանեան Տեղապահը ճանչցաւ։

—Իրօք Թագաւորն է, ըսաւ այս մարդը վեր ելլելով։ Աստուած օրհնէ Նորին Վեհափառութիւնը։

—Այո՛, ըսաւ կիսաձայն պարագլուխը, այո՛, Աստուած օրհնէ Նորին Վեհափառութիւնը:

Եւ բոլոր այս մարդիկը որ կատաղօրէն ներս մտեր էին, բարկութենէն գթութեան անցնելով, ըստ կարգի արքայազուն մանուկը օրհնեցին։

—Հիմակ, ըսաւ Բլանշէ, շնորհակալ ըլլանք Թագուհիին, բարեկամներ, և հեռանանք։

Ամէնքը ծռեցան և քիչ քիչ դուրս ելան ինչպէս որ մտեր էին առանց ձայն ձուն հանելու։ Բլանշէ, որ ամէնէն առաջ ներս մտեր էր, վերջինը դուրս կ'ելլէր։

Թագուհին զանիկա կեցուց։

— Ի՞նչ է անունդ, բարեկամ, ըսաւ անոր։

Բլանշէ դարձաւ այս հարցման վրայ զարմացած։

— Այո՛ ըսաւ Թագուհին, այնքան պատիւ կը սեպեմ այս գիշեր քեզ ընդունելովս որպէս թէ իշխան մը ըլլայիր, և կը փափաքիմ անունդ իմանալ։

— Այո՛, մտածեց Բլանշէ. ինծի հետ իբրև իշխան վարուելու համար շնորհակալութի՛ւն։

Տ'Արդանեան դող ելաւ որ Բլանշէն՝ տաւլին ազնուին պէս հրապարակելով՝ իր անունը չըսէ, և թէ Թագուհին, անոր անունը իմանալով, կ'իմանայ նաև որ Բլանշէ ատենօք իր սպասաւորն էր։

— Տիկի՛ն, պատասխանեց Բլանշէ յարգանքով, Տիւլօրիէ կ'անուանուիմ, և ձեր հրամանին պատրաստ։

— Շնորհակալ եմ, Պ. Տիւլօրիէ, ըսաւ Թագուհին, և դուն ի՞նչ կ'ընես։

— Տիկին, Պուրպօնէ փողոցը տաւեվաճառ եմ։

— Ահա այս միայն կ'ուզէի գիտնալ, ըսաւ Թագուհին, պարտաւոր եմ քեզի, իմ սիրելի Պ. Տիւլօրիէ, պիտի լսես օրին մէկն իմ անունս։

— Լա՛ւ, լա՛ւ, մրմռաց տ'Արդանեան վարագոյրին ետևէն դուրս ելլելով, իրաւ որ վարպետ Բլանշէն յիմար մը չէ, և կը տեսնուի որ լաւ դպրոցի մը մէջ ուսաներ է։

Այս տարօրինակ տեսարանին այլ և այլ դերասանները պահ մը իրարու դէմ կեցան առանց բառ մը ըսելու. Թագուհին դրան մօտ կեցեր էր կանգուն, տ'Արդանեան կիսով իր պահուըտած տեղէն դուրս ելեր էր, Թագաւորը իր արմուկին վրայ ելած և նորէն անկողին մտնելու պատրաստ էր եթէ նոյն ամբոխը վերադառնար։

Թագուհին շունչ առաւ. տ'Արդանեան իր խոնաւ ճակատը

սրբեց. Թագաւորը իր անկողնէն վար սահեցաւ ըսելով.

— Մեկնինք։

Նոյն պահուն Լաբօրթ երևցաւ։

— Լա՛ւ, ուրեմն հարցուց Թագուհին։

— Լա՛ւ ուրեմն, տիկին, պատասխանեց սենեկապանը, անոնց հետևեցայ մինչև վանդակները, իրենց բոլոր ընկերներուն իմաց տուին թէ Թագաւորը տեսան և թէ Թագուհին իրենց խօսեցաւ, այնպէս որ հպարտութեամբ և պարծենքոտութեամբ կը հեռանան կ'երթան։

— Ո՛հ թշուառականները, մրմռաց Թագուհին, սուղի պիտի նստի իրենց այս յանդգնութիւնը, ահա ես այսպէս կ'ըսեմ։

Յետոյ՝ տ'Արդանեանի կողմը դառնալով.

— Պարո՛ն, ըսաւ ան, այս իրիկուն կեանքիս մէջ չընդունած պատուական խորհուրդներ տուիր ինձ. չարունակէ՛։ Հիմակ ի՞նչ պիտի ընենք։

— Պարո՛ն Լաբօրթ, ըսաւ տ'Արդանեան, Վեհափառ Թագաւորը հագուեցուր բոլորովին։

— Ուրեմն կրնա՞նք մեկնիլ, հարցուց Թագուհին։

— Երբ կամենաք, Վեհափառ տիկին. միայն ծածուկ սանդուղէն վար պիտի իջնէք և զիս դուռը պիտի գտնէք։

— Գնա՛ պարոն, ըսաւ Թագուհին, քեզի կը հետևիմ։

Տ'Արդանեան վար իջաւ, կառքը պատրաստ էր վարը, հրացանակիրը աթոռին վրայ նստեր էր։

Տ'Արդանեան առաւ այն ծրարը զոր հրացանակիրին տօփերուն քով դնելու համար Պէրնուէնի ապսպրեր էր։

Ընթերցողը կը յիշէ անշուշտ որ անոնց մէջն էին Պ. Կօնդիի կառավարին գլխարկն ու վերարկուն։

Վերարկուն ուսերուն վրայ դրաւ և գլխարկը գլխուն վրայ։

Հրացանակիրը նստարանէն վար իջաւ։

— Պարո՛ն, ըսաւ տ'Արդանեան, գնա՛ ազատէ ձգէ կառապանը պահող ընկերդ։ Ձեր ձիերէն մէկուն վրայ հեծիր և Թիգդօն փողոցը, Շէվրէթի ապարանքը գնա իմ և Պ. Վալլօնի ձիերը առ՝ և զանոնք թամբելէն ու պատերազմի համար կազմելէդ յետոյ՝ ելիր Բարիզէն զանոնք ետևդ ձգելով և Գուր-Լա-Րէն եկուր։ Եթէ Գուր-Լա-Րէնը մարդ չգտնես, մին-

չև Սէն-Ժէրմէն կը քշես։ Այս է Թագաւորին հրամանը։

Հրացանակիրը գլխարկին տարաւ ձեռքը և ընդունած հրամանները կատարելու համար ճամբայ ելաւ։

Տ'Արդանեան նստարանը ելաւ նստաւ։

Քսանհինգոյգ մը հրացանակներ անցուցեր էր, հրացան մէջ-կար ուսքին ներքեւ, և մերկ սուրը իր ձեռին դրած։

Թագուհին երեւցաւ. անոր ետեւէն կուգար Թագաւորը և իր եղբայրը Անժուի դուքսը։

— Պ. Տեղապահին կա՛ռքը, գոչեց Թագուհին քայլ մը ետ առնելով։

— Այո՛, տիկին, ըսաւ տ'Արդանեան, բայց անհրկիւղ մտէք ներս. ե՛ս եմ կառապան։

Թագուհին զարմացման ճիչ մը հանեց, և կառքը մտաւ։ Թագաւորը ու Թագաւորին եղբայրը ետեւէն ներս մտան և անոր երկու կողմը նստան։

— Եկո՛ւր, Լաբօրթ, ըսաւ Թագուհին։

— Ի՞նչպէս, տիկին, ըսաւ սենեկապանը, Ձեր Վեհափառութեան նստած կառքը՞ նստիմ։

— Այս գիշեր արքայական արարողութեան վրայ չէ խնդիրը, այլ Թագաւորին փրկութեան վրայ։ Ելի՛ր, Լաբօրթ։

Լաբօրդ հնազանդեցաւ։

— Գոցէ պահպանակները, ըսաւ տ'Արդանեան։

— Բայց միթէ այդ կերպով կասկածի առիթ չե՞նք տար, պարոն, հարցուց Թագուհին։

— Թո՛ղ Ձեր Վեհափառութիւնը հանգիստ ըլլայ, ըսաւ տ'Արդանեան, իմ պատասխանս պատրաստ է։

Պահպանակները գոցեցին և Ռիշլիէօ փողոցէն արագօրէն ճամբայ ելան։ Երբ դուռը հասան, գիշերապահ պետը տասներկու մարդոց գլուխը անցած և ձեռքը լապտեր մը բռնած առաջ եկաւ։

Տ'Արդանեան նշան ըրաւ անոր մօտենալու։

— Միթէ կառքը կը ճանչնա՞ս, ըսաւ ան յիսնապետին։

— Ոչ, պատասխանեց ան։

— Նայէ զինադրոշներուն։

Յիսնապետն իր լապտերը մօտեցուց կառքին տախտակին։

— Պ. Տեղապահին զինադրոշներն են, ըսաւ։

— Լռութի՛ւն. տիկին Նէմէնէի հետ լաւ յարաբերութեան մէջ է։

Յիսնապետն սկսաւ ծիծաղիլ։

— Բացէք դուռը ըսաւ ան, գիտեմ թէ ի՛նչ է։

Ետոյ իջած պահպանակին մօտենալով.

— Անուշնե՛ր, տէր իմ, ըսաւ ան։

— Անխոհե՛մ, գոչեց տ'Արդանեան, զիս վռնտել պիտի տաս։

Քաղաքադուռը կանչեց, և տ'Արդանեան, ճամբան բաց գտնելով, ուժգին խարազանեց ձիերն որ սրարշաւ մեկնեցաւ։

Հինգ վայրկեանէն Կարտինալին կառքին միացաւ։

— Մուսքթօ՛ն, գոչեց տ'Արդանեան, Նորին Վեհափառութեան կառքին պահպանակները վեր առ։

— Նոյն ինքն է, ըսաւ Բօրթօս։

— Կառապանի հագուստով, գոչեց Մազարէն։

— Եւ տեղապահին կառքովը, ըսաւ Թագուհին։

— Աստուա՛ծ վկայ, Պ. տ'Արդանեան, ըսաւ Մազարէն, ոսկի դանձ կ'արժես։

Տ'Արդանեան խոնարհութիւն ըրաւ։

Թ.

ԻՆՉՊԷՍ Տ'ԱՐՏԱՆԵԱՆ ԵՒ ԲՈՐԹՈՍ ՇԱՀԵՑԱՆ, ՄԻ՛Ն ԵՐԿՈՒ ՀԱՐԻՒՐ ՏԱՍՆԸԻՆԸ, ՄԻՒՍԸ ԵՐԿՈՒ ՀԱՐԻՒՐ ՏԱՍՆԸՀԻՆԳ ՈՍԿԻ ՑԱՐԴ ԾԱԽԵԼՈՎ

Մազարէն կը փափաքէր իսկոյն Սէն-Ժէրմէն դիմել՝ բայց Թագուհին յայտնեց թէ ժամադիր եղած անձերու պիտի սպասէ։ Մինակ Կարտինալին տուաւ Լաբօրդին տեղը՝ Կարտինալը ընդունեց և մէկ կառքէն միւս կառքը անցաւ։

Առանց պատճառի չէր որ Թագաւորին նոյն գիշեր Բարիզէն մեկնելու լուրը տարածուեր էր. տասը կամ տասներկու անձեր այս փախուստը գաղտնի գիտէին երեկոյեան ժամը մէկէն ի վեր, և որչափ որ գաղտնապահ էին, իրենց մեկնելուն համար պէտք եղած հրամանները չէին տուած առանց փոքր ինչ գործը յայտնելու, Ասկէ զատ՝ այս անձերէն ամէն մէկը, ուրիշ մէկ երկու անձեր կը ճանչնային որ իրենց մտերիմ էին, և որովհետև անկասկած էին որ Թագուհին վրէժխնդրութեան ահաւոր խորհուրդներով Բարիզէն կը մեկնէր, իւրաքանչիւրը իր բարեկամներուն կամ ծնողքին կանխաւ յայտներ էր, այնպէս որ այս մեկնումին շշուկը վառօդի կայծի մը պէս քաղաքին բոլոր փողոցներէն անցեր էր։

Թագուհիին կառքէն ետք հասնող առաջին կառքը եղաւ Իշխանինը, անոր մէջն էին Պ. Գօնտէ, Իշխանուհին և Հասառու դշխոյն։ Գիշերուան մէջ երկուքն ալ արթնցուցեր էին և չէին գիտեր թէ ինչ կը դառնար։

Երկրորդ կառքին մէջն էին Օրլէանի դուքսը, դքսուհին, մեծ արքայադուստրն և Լա Րիվիէր աբբան, որ Իշխանին անբաժանելի մտերիմն ու սրտակից խորհրդականն էր։

Երրորդին մէջն էին Պ. Լօնկվիլ և Գօնտի իշխանը, Իշխանին եղբայրը ու աներձագը։ Վար իջան, Թագաւորին և Թագուհիին կառքին մօտեցան և Նորին Վեհափառութեան իրենց յարգանքը մատուցին։

Թագուհին կառքին խորը նետեց աչքը՝ որուն դռնակը բաց էր՝ ու գիտեց որ պարապ էր։

— Բայց ո՞ւր է տիկին Լօնկվիլ, ըսաւ ան։

— Արդարեւ, ո՞ւր է ուրեմն քոյրս, հարցուց Իշխանը։

— Տիկին Լօնկվիլ հիւանդ է, տիկին, պատասխանեց դուքսը, և ապսպրեց ինծի որ Ձեր Վեհափառութեան առջեւ զինքը արդարացնեմ։

Աննա Թագուհին Մազարէնի վրայ արագ ակնարկ մը նետեց, որ գլխու աննշմարելի նշանով մը պատասխանեց։

— Ի՞նչ կ'ըսես այս բանիս, հարցուց Թագուհին։

— Կ'ըսեմ թէ Բարիզցիներուն համար պատանդ մըն է անիկա, պատասխանեց Մազարէն։

— Ինչո՞ւ համար չեկաւ հարցուց կամացուկ մը Իշխանը իր եղբօր։

— Լռութի՛ւն, պատասխանեց, անշուշտ իր պատճառները ունի։

— Մեզ ի կորուստ կը մատնէ մրմռաց Իշխանը։

— Մեզ կ'ազատէ, ըսաւ Գօնտի։

Շատ կառքեր կուգային խմբովին։ Մէյլրէյ մարէշալը, Վիլրուա մարէշալը, Կիդօ, Վիլքիէ, Քօմէնժ, հետզհետէ հասան. երկու հրացանակիրներն ալ ըստ կարգի երևցան, Տ'Արդանեանի և Բորթոսի ձիերուն սանձերէն բռնած։ Տ'Արդանեան և Բորթոս աշտանակեցին։ Բորթոսի կառապանը Տ'Արդանեանի տեղը նստաւ արքայական կառքին նստարանը. Մուսքթօնը կառապանին տեղը անցաւ կանգուն կառավարելով, իրեն յայտնի պատճառով մը և հինօրեայ Աւտոմեդոնի նման։

Թէև Թագուհին հազար տեսակ բաներ կը խորհէր, աչքով Տ'Արդանեանը կը փնտռէր, բայց Կասքոնը արդէն ամբոխին մէջ մտեր էր իր սովորական խոհեմութեամբը։

— Յառաջապահներ ըլլանք, ըսաւ ան Բորթոսի և Սէն-Ժերմէնի մէջ նայինք որ լաւ բնակարաններ գտնենք, վասնզի ոչ ոք մեզի հոգ պիտի տանի։ Կը տեսնեմ որ շատ յոգնած եմ։

— Ես. ըսաւ Բորթոս, արդարեւ քնատութենէս վար կ'իյնամ։ Զարմանք որ թեթեւ ճակատամարտ մը անգամ չունեցանք։ Իրաւի Բարիզցիք յիմար են։

— Ձե՞ս ըսեր որ մենք շատ ճարպիկ ենք, ըսաւ տ'Արդանեան։

— Կարելի է։

— Հապա դատա՞տկդ ինչ ջուրի մէջ է։

— Լաւագո՛յն, բայց միթէ կը կարծե՞ս թէ այս անգամ պիտի առնենք։

— Ի՞նչ։

— Դուն քու աստիճանդ, և ես՝ իմ տեղապաս։

— Հաւա՛տա վկայ, այո՛, գրեթէ գրաւ դնելու պատրաստ եմ։ Սակայն, եթէ չյիշեն, յիշել պիտի տամ անոնց։

— Թագուհիին ձայնը կը լսուի, ըսաւ Բորթոս։ Կարծեմ թէ ձի հեծնել կ'ուզէ։

— Ո՛հ, շատ կը փափաքի ան բայց...

— Բայց ի՞նչ։

— Կարտինալը չուզեր, այո՛, չուզեր ան։ Պարոննե՛ր, շարունակեց տ'Արդանեան երկու հրացանակիրներուն ուղղելով խօսքը, Թագուհիին կառքին ուղեկից եղէք, և դռնակներէն մի՛ հեռանաք։ Երթանք պիտի բնակարանները պատրաստել տալու։

Եւ տ'Արդանեան դէպի Սէն-Ժէրմէն քշեց Բորթոսին ընկերակցութեամբ։

— Մեկնի՛նք, պարոննե՛ր, ըսաւ Թագուհին։

Եւ արքայական կառքը ճամբայ ելաւ, ետեւէն ունենալով բոլոր միւս կառքերը և յիսուն ձիաւորներէ աւելի։

Անվտանգ Սէն-Ժէրմէն հասան. Թագուհին կառքէն վար իջնելու ատենը Իշխանը գտաւ որ կանգնած կը կենար իր ձեռքը անոր տալու։

— Ի՞նչ արթնութիւն Բարիզցիներու համար, ըսաւ Աննա Թագուհին կայտառ և ուրախ։

— Պատերազմ է, ըսաւ Իշխանը։

— Լա՛ւ, պատերազմ. թող այնպէս ըլլայ։ Միթէ մեր հետ չէ՞ Ռօքրուայի, Նորթլինկէնի և Լէնսի յաղթականը։

Իշխանը ի նշան շնորհակալութեան խոնարհեցաւ։

Առաւօտեան ժամը երեքն էր։ Թագուհին ամէնէն առաջ

դղեակը մտաւ. ամէն մարդ անոր հետեւեցաւ. գրեթէ երկու հարիւր հոգի անոր փախուստին ընկերացեր էին։

— Պարոննե՛ր, ըսաւ Թագուհին ծիծաղելով, դղեակին մէջ օթեւանեցէք, ընդարձակ է և տեղ կրնաք գտնել, բայց որովհետեւ միտք չունէինք հոս գալու, իմաց տուին ինծի որ միայն երեք անկողին կայ, հատ մը Թագաւորին և մէկ հատ ինծի համար...

— Եւ մէկ հատ Մազարէնի համար, ըսաւ Իշխանը կամացուկ մը։

— Եւ միթէ ես տախտակի՞ վրայ պիտի պառկիմ, ըսաւ Օրլէանեան Կաստոնը անհանգիստ ժպիտով մը։

— Ո՛չ տէր իմ, պատասխանեց Մազարէն, վասնզի երրորդ անկողինը Ձեր Վսեմութեան սահմանուած է։

— Հապա դո՞ւն, հարցուց Իշխանը։

— Ե՛ս, չպիտի պառկիմ, ըսաւ Մազարէն, աշխատելու եմ։

Կաստոն իր անկողինը գտնուած սենեակը ուզեց տեսնել, առանց հոգ ընելու թէ իր կինը ու աղջիկը ի՞նչպէս պիտի հանգչին։

— Լա՛ւ, ես պիտի պառկիմ, ըսաւ տ'Արդանեան։ Ինծի հետ եկուր, Բորթոս։

Բորթոս տ'Արդանեանի հետ գնաց այն խորին վստահութեամբ զոր իր բարեկամին իմացականութեան վրայ կը տածէր։

Դղեակին հրապարակին վրայ իրարու մօտ կը քալէին, մինչդեռ Բորթոս ապուշ աչքով կը նայէր տ'Արդանեանի որ մատներով հաշիւ մը կ'ընէր։

— Չորս հարիւր հատ, հատը կէս ոսկիէն, երկու հարիւր ոսկի։

— Այո՛, կ'ըսէր Բորթոս, երկու հարիւր ոսկի. բայց ո՞վ պիտի բերէ երկու հարիւր ոսկին։

— Կէս ոսկին բաւական չէ, շարունակեց տ'Արդանեան, ոսկի մը կ'արժէ այն։

— Ի՞նչ բան ոսկի մը կ'արժէ։

— Չորս հարիւր, մէյմէկ ոսկիէն կ՝ընէ չորս հարիւր ոսկի։

— Չո՞րս հարիւր, ըսաւ Բօրթօս:

— Այո՛, երկու հարիւր ոսկի են, գէթ երկու հատ պէտք է ամէն մէկուն համար։ Մարդ գլուխ երկու հատ հաշուելով, չորս հարիւր կ'ընէ։

— Բայց ի՞նչ բան չորս հարիւր։

— Մտիկ ըրէ, ըսաւ տ'Արդանեան։

Եւ որովհետեւ այն կողմը ամէն տեսակ մարդիկ կային որ կը նայէին ապշութեամբ արքունեաց զալուստը, Բօրթօսին ականջին փսփսալով աւարտեց իր խօսքը։

— Կը հասկնամ, ըսաւ Բօրթօս, լաւ կը հասկնամ, Աստուած վկա՛յ։ Մեզմէ իւրաքանչիւրը երկու հարիւր ոսկի պիտի զարնէ՛, աղուոր գործ։ Բայց ի՞նչ պիտի ըսեն։

— Ի՛նչ որ կ'ուզեն թո՛ղ ըսեն․ բայց ո՞վ պիտի իմանայ որ մենք ենք։

— Միթէ Մուսքդօն հոս չէ՞։

— Հապա իր նշանաւոր պճնազգե՞ստը, ըսաւ Բօրթօս, իմ ծառայիս պճնազգեստը պիտի ճանչնան։

— Թո՛ղ իր զգեստը դարձնէ։

— Միշտ իրաւունք ունիս, սիրելիս, գոչեց Բօրթօս։ Բայց ո՞ր սատանային ծակէն կը հանես այդ գտած գաղափարներդ։

Տ'Արդանեան ժպտեցաւ։

Երկու բարեկամները իրենց առջեւ ելած առաջին փողոցը մտան, Բօրթօս աջ կողմը տան դուռը զարկաւ, մինչդեռ տ'Արդանեան ձախ կողմի տան դուռը ձեռք կ'առնէր։

— Յա՛րդ, ըսին անոնք։

— Պարո՛ն, արդ չունինք, պատասխանեցին դուռը բանալու համար եկող մարդիկ, բայց յարդավաճառին հարցուցէք։

— Եւ ո՞ւր է յարդավաճառը։

— Փողոցին վերջին մեծ դուռն է։

— Ձա՞խ թէ աջ կողմը։

— Ձախ։

— Եւ միթէ ի Սէն-Ժէրմէն յարդ ունեցող ուրիշ մարդիկ չկա՞ն։

— Մուրօն-Բուրօնէի պանդոկապետը կայ, նոյնպէս Կրօ Լուի ագարակապանը։

— Ո՞ւր կը բնակին ասոնք։

— Իւրսլին փողոցը։

— Երկո՞ւքն ալ։

— Այո՛։

— Շա՛տ լաւ։

Երկու բարեկամները մարդ գտնելով երկրորդ և երրորդ հասցէն գտան շուտով մը։ Յետոյ տ'Արդանեան յարդավաճառին գնաց և անոր ունեցած հարիւր յիսուն յարդի խուրձը գնեց, մէկ ու կէս ոսկի վճարելով։ Վերջը պանդոկապետին գնաց, ուր Բօրթօսը գտաւ որ հազիւ երկու հարիւր խուրձի սակարկութիւնը ըրեր էր գրեթէ նոյնչափ գումարով։ Վերջապէս Լուի ագարակապանն ալ հարիւր ութսուն հատ կապոց անոնց յանձնեց, որով բոլոր գումարը կ'ընէր չորս հարիւր երեսուն խուրձ։

Սէն-Ժէրմէնի մէջ ասկէ զատ յարդ չկար։

Բոլոր այս կողոպուտը կէս ժամ միայն տեւեց։ Մուսքդօն՝ պէտք եղած հրահանգը ընդունելով, այս նորակազմ աւելտուրին գլուխն անցաւ։ Պատուէր տուին անոր որ իր ձեռքէն չիւղ մը անգամ չհանէ եթէ խուրձին ոսկի մը չվճարեն․ չորս հարիւր երեսուն ոսկիի յարդ կը յանձնէին անոր։

Մուսքդօն՝ գլուխը կ'օրրէր և երկու բարեկամներու այս հանդգնական գործէն բան մը չէր հասկնար։

Տ'Արդանեան երեք յարդի խուրձ տանելով դղեակը դարձաւ, ուր ամէն մարդ ցուրտէն սրսռալով և քնատութենէ դեղին լինալով՝ անձկանօք թագաւորին, իր եղբօր ու թագուհիին կը նայէին իրենց բանակի անկողիններուն վրայ։

Տ'Արդանեանի մուտքը մեծ սրահին մէջ ընդհանուր ծիծաղ մը շարժեց. բայց տ'Արդանեան ոչ իսկ տեսնելու զարկաւ որ ինք ընդհանուր ուշադրութեան առարկայ եղած է. և սկսաւ այնպէս ճարտարութեամբ, հնարագիտութեամբ և զուարթութեամբ շահիլ իր յարդէ խշտեակը որ բոլոր այն քնանալ չկրցող հէք քնհատներու բերնին ջուրերը կը վազէր:

—Յա՛րդ, գոչեցին ամէնքը, յա՛րդ. ո՞ւր կը գտնուի յարդը:

—Ես ձեզի տեղը ցոյց տամ, ըսաւ Բորթօս:

Եւ խնդարկուները Մուսքդօնին տարաւ, որ մէն մի խուրձի համար ոսկի մը առնելով վեհանձնօրէն յարդ կը բաշխէր: Տեսան որ քիչ մը սուղ է յարդը, բայց երբ մարդ քնանալու չափ փափաք ունի, ո՞վ չի վճարեր երկու երեք ոսկի քանի մը ժամ աղէկ քուն մը քաշելու համար:

Տ'Արդանեան ամէնուն իր անկողինը կը ծախէր, զոր տասը անգամ խրարու վրայ պատրաստեց, և որովհետև կը կարծուէր թէ ուրիշներուն պէս ինքն ալ իր յարդի կապոցը մէկ ոսկիի գնած է, այսպէս կէս ժամ չեղած երեսունի չափ ոսկի գրպանեց: Առաւօտեան ժամը հինգին՝ կապոց մը չորս ոսկի կ'արժէր, և սակայն դարձեալ չկար:

Տ'Արդանեան իրեն համար չորս կապոց մէկ կողմ դնելու հոգը տարեր էր: Գրպանը դրաւ այն սենեակին բանալին ուր իր խուրձերը պահեր էր, և Բորթօսին հետ՝ Մուսքդօնին գնաց հաշիւ տեսնելու: Մուսքդօն միամտաբար և իբրև արժանի մատակարար չորս հարիւր քառասուն ոսկի յանձնեց անոնց և իրեն համար ալ հարիւր հատ պահեց:

Մուսքդօն՝ որ դղեակին մէջ անցած դարձածէն անտեղեակ չէր, չէր կրնար հասկնալ թէ ի՞նչպէս յարդ ծախելու գաղափարը իր միտքը ամէնէն առաջ չէր եկած:

Տ'Արդանեան ոսկիները գլխարկը դրաւ, և ետ դառնալու ատեն Բորթօսին հետ հաշիւ տեսաւ: Ամէն մէկուն երկու հարիւր տասնըհինգ ոսկի բաժին ինկեր էր:

Բորթօս այն ատեն միայն գիտեց որ իրեն համար յարդ չունէր. Մուսքդօնին դարձաւ, բայց Մուսքդօն յետին չիւղն անգամ ծախեր էր, իրեն համար բան մը չպահելով:

Այն ատեն դարձաւ տ'Արդանեանին քով, որ իր չորս յարդի խուրձին շնորհիւ պատրաստելու վրայ էր, այնպիսի փափուկ, գլխին կողմը ուռած և ոտքին կողմը տափակցած անկողին մը որ Թագաւորին նախանձը իսկ պիտի շարժէր, եթէ Թագաւորը իրենին մէջ լաւ մը քնացած չըլլար:

Տ'Արդանեան՝ ո և է պայմանով իր անկողինը Բորթօսին չպիտի ուզէր յանձնել, բայց երբ Բորթօս չորս հատ ոսկի համրեց տ'Արդանեան յանձն առաւ որ իր բարեկամը հետը պառկի:

Սուրը գլխուն վերևը դրաւ, հրացանակները քովնտի տեղաւորեց, վերարկուն ոտքերուն վրայ ծածկեց, Թաղեայ գլխարկը վերարկուին վրայ դրաւ և հեշտօրէն երկնցաւ խոտին վրայ: Արդէն մէկ քառորդի մէջ վաստկած երկու հարիւր տասնըհինգ ոսկիի բերած անուշ երազները կը գգուէր՝ երբ ձայն մը սրահին դուռնէն հնչեց և զինքը տեղէն ցատկեցուց:

—Պարո՛ն տ'Արդանեան, կը գոչէր ձայնը, Պ. տ'Արդանեան:

— Հո՞ս է, գոչեց Բորթօս, հո՛ս:

Բորթօս կը հաշուէր որ եթէ տ'Արդանեան մեկնի, բոլոր անկողինը իրեն միայն պիտի մնայ:

Պաշտօնակալ մը մտեցաւ:

Տ'Արդանեան իր արմուկին վրայ ելաւ կռթնեցաւ:

— Միթէ դո՞ւն ես Պ. տ'Արդանեանը, հարցուց անոր:

— Այո՛, պարոն, ի՞նչ կ'ուզես ինձմէ:

— Քեզ կանչելու եկայ:

— Որո՞ւ կողմէ:

— Նորին Բարձրութեան կողմէ:

— Ըսէ Նորին Բարձրութեան որ պիտի քնանամ և իբրև բարեկամ կը յորդորեմ զինքը որ նոյնը ընէ:

— Նորին Բարձրութիւնը չպառկեցաւ և չպիտի պառկի ու հիմակ անմիջապէս քեզ տեսնել կ'ուզէ:

— Շուտ՛կը տանի Մազարէնը, որ յարմար ատեն քնանալ չգիտէ, մրմռաց տ'Արդանեան։ Ի՞նչ կ'ուզէ ինձնէ։ Միթէ զիս հրամանատա՞ր ընել է միտքը։ Եթէ այս բանին համար է, անոր կը ներեմ։

Եւ հրացանակիրը անկողնէն ելաւ մրմռալով, իր սուրը, գլխարկը, հրացանակներն ու վերարկուն առաւ, յետոյ պաշտօնակալին ետևէն գնաց, մինչդեռ Բօրթօս, անկողնին միակ տէրը մնալով՝ իր բարեկամին տեղը բռնելու կը փորձէր։

— Պարո՛ն տ'Արդանեան, ըսաւ Կարտինալը՝ երբ տեսաւ այնպէս անպատեհ կերպով կանչած մարդը, չմոռցայ բնաւ թէ ի՛նչ եռանդով ինձ ծառայեցիր և հիմակ ատոր մէկ ապացոյցը պիտի տամ քեզի։

— Լա՛ւ, մտածեց տ'Արդանեան, աղէկ բնաբան մը կ'երևայ այս...։

Մազարէն հրացանակիրին կը նայէր, և դիտեց որ անոր երեսը կը բացուէր։

— Ահ, տէր իմ։

— Պարո՛ն տ'Արդանեան, ըսաւ, միթէ կը փափաքի՞ս իրօք հրամանատար ըլլալ։

— Այո՛, տէր իմ։

— Եւ միթէ բարեկամդ միշտ կը փափաքի՞ սեպուհ ըլլալու։

— Այս պահուս, տէր իմ, կ'երազէ ան որ սեպուհ է։

— Ուրեմն, ըսաւ Մազարէն, գրպանէ մը հանելով նամակը զոր արդէն ցուցուցեր էր տ'Արդանեանի, ա՛ռ այս գիրը և Անգլիա տար։

Տ'Արդանեան պահարանին նայեցաւ. հասցէ չունէր։

— Միթէ չե՛մ կարող իմանալ թէ որո՛ւ պիտի յանձնեմ զայն։

— Լոնտոն հասնելուդ պիտի իմանաս, Լոնտոն միայն պիտի պատռես առաջին պահարանը։

— Եւ ի՞նչ հրահանգ ունիք տալու։

— Ամէն կերպով հնազանդիլ այն անձին որու ուղղեալ է այս գիրը։

Տ'Արդանեան ուրիշ հարցումներ ալ պիտի ընէր երբ Մազարէն յարեց.

— Պուլօնիա երթալու կը մեկնիս, այնտեղ Անգլիոյ պանդոկը Մօրտոնդ անունով նորատի ազատորդի մը պիտի գտնես։

— Այո՛, տէր իմ, և ի՞նչ պիտի ընեմ այն ազատորդին։

— Ո՛ւր որ տանի քեզ անոր պիտի հետևիս։

Տ'Արդանեան ապշած դէմքով մը Կարտինալին նայեցաւ։

— Ահա հրահանգդ առիր, ըսաւ Մազարէն, հիմակ գնա՛։

— Գնա՛, այս շատ դիւրին է ըսել; աւելցուց տ'Արդանեան, բայց երթալու համար դրամ պէտք է և ես չունիմ։

— Հա՛, ըսաւ Մազարէն ականջը քերելով, ըսիր թէ դրամ չունի՞ս։

— Չունիմ, տէր իմ։

— Հապա երէկ իրիկուան քեզի տուած մէկ ադամա՞նդս։

— Կը փափաքիմ իբրև Ձեր Բարձրութեան մէկ յիշատակը զայն պահել։

Մազարէն հառաչեց։

— Անգլիա ամէն բան սուղ է, տէր իմ, և մանաւանդ արտաքոյ կարգի դեսպանի մը համար։

— Հը՛մ, ըրաւ Մազարէն, շատ ժուժկալ երկիր մըն է և յեղափոխութենէն ի վեր պարզութեամբ կ'ապրի. բայց հոգ չէ։

Գզրոց մը բացաւ և քսակ մը առաւ։

— Ի՞նչ կ'ըսես, միթէ հազար սկուտ չի՞ բաւեր։

Տ'Արդանեան ստորին շրթը երկնցուց անպայման կերպով մը։

— Տէր իմ, ես քիչ կը գտնեմ այդ գումարը, վասնզի հարկաւ մինակ չպիտի մեկնիմ։

— Կը յուսամ անշուշտ, պատասխանեց Մազարէն, որ Պ. Վալլօն, այն արժանի ազատորդին քեզի պիտի ընկերա-

նայ․ վասնզի քեզնէ ետք՝ սիրելի տ'Արդանեան, Ֆրանսայի մէջ այն մարդը ամէնէն շատ կը յարգեմ և կը սիրեմ։

— Ուրեմն, տէր իմ, ըսաւ տ'Արդանեան, ցոյց տալով քսակը զոր Մազարէն դեռ տուած չէր, ուրեմն եթէ այնչափ կը սիրէք և կը յարգէք զանիկա, կ'իմանաք․․․։

— Լա՛ւ, անոր սիրոյն համար, երկու հարիւր սկուտ ես պիտի աւելցնեմ։

— Ժլա՛տ, մրմռաց տ'Արդանեան․․․։ Բայց գէթ ի դարձին, յարեց բարձրաձայն, կրնանք յուսալ որ պիտի ստանանք՝ Պ․ Բորթոսը իր սեպուհութիւնը ու ես իմ աստիճանս, այնպէս չէ՞։

— Մազարէնի խօսքս վկա՛յ։

— Աւելի լաւ ունիմ ուրիշ երդում մը, ըսաւ իւրովի տ'Արդանեան ցած ձայնով, յետոյ բարձրաձայն յարեց․— միթէ չե՞մ կարող իմ յարգանքս Նորին Վեհափառ Թագուհիին մատուցանել։

-- Նորին Վեհափառութիւնը կը ննջէ, պատասխանեց Մազարէն աշխուժով, և պէտք է անյապաղ մեկնիս․ գնա՛ ուրեմն, պարո՛ն։

— Խօսք մը ևս ունիմ, տէր իմ․ եթէ գացած տեղս կը պատերազմին, ես ալ պատերազմի՞մ։

— Ի՛նչ որ հրամայէ այն անձը որու կը ղրկեմ քեզ պէտք է որ ընես։

— Շատ լաւ, տէր իմ, ըսաւ տ'Արդանեան ձեռքը կարկառելով որպէսզի ստակի ծրարը առնէ, և ձեզ կը նուիրեմ իմ յարգանքս։

Տ'Արդանեան իր լայն գրպանին մէջ դրաւ ծանրօրէն ծրարը և դէպի սպան դառնալով։

— Պարո՛ն, ըսաւ անոր, միթէ կը հաճի՞ս երթալ Նորին Բարձրութեան կողմէ Պ․ Վալլօնն ալ արթնցնել և ըսել անոր որ ձիաստանը կը սպասեմ։

Սպան շուտ մը գնաց այնպէս շտապաւ որ տ'Արդանեան կարծեց թէ շահ մը ունի այս մասին։

Բորթոս հազիւ թէ անկողնին մէջ երկնցեր և սկսեր էր ներդաշնակ խռդալ, ըստ սովորութեան, երբ զգաց որ իր ուսին կը զարնեն։

Կարծեց թէ տ'Արդանեանն է և տեղէն չշարժեցաւ։

— Կարտինալին կողմէն կու գամ, ըսաւ սպան։

— Հը՛մ, բացագանչեց Բորթոս, իր աչքերը մեծ մեծ բանալով, ի՞նչ կ'ըսես։

— Կ'ըսեմ թէ Նորին Բարձրութիւնը քեզ Անգլիա կը ղրկէ և Պ․ տ'Արդանեանը ձիաստանը քեզ կ'սպասէ։

Բորթոս խորին հառաչ մը արձակեց, ոտք ելաւ, իր գլխարկը հրացանակները, սուրը ու վերարկուն առաւ և դուրս ելաւ անկողնին վրայ վշտագին ակնարկ մը ձգելով, անկողին մը ուր լաւ քուն մը քաշելու մտադրած էր։

Այն ինչ Բորթոս կռնակը դարձուց որ սպան անոր մէջ տեղաւորուեցաւ, և դրան սեմէն այն ինչ անցեր էր որ իր յաջորդը՝ իր կարգին, որոտագին խռկալ սկսաւ։ Բնական էր այս բանս, վասնզի բոլոր այն ժողովին մէջ՝ Թագաւորին, Թագուհիին և Օրլէանեանց Կաստօնին հետ մինակ ձրիապէս կը քնանար։

ժ․

ԱՐԱՄԻՍԷՆ ԼՈՒՐԵՐ ԿԱՆ

Տ'Արդանեան շիտակ ձիաստան գացեր էր։ Լոյսը նոր ծագեր էր․ հրացանակիրը իր և Բորթոսին ձին ճանչցաւ որ մսուրին փայտէն կապուած էին, բայց պարապ մսուրի մը։ Այս խեղճ անասուններուն վրայ գթաց և ախոռին մէկ անկիւնը դիմեց ուր յարդի փայլիլը կը տեսնէր, որ անշուշտ գիշերուան խրարանցումէն ազատեր էր, բայց այս յարդը ժողվելու ատեն՝ կօշիկին ծայրը կլոր մարմնոյ մը դպաւ որ,

անշուշտ զգալի կողմին զարնուելով՝ ճիգ մը հանեց և իր ծնկաց վրայ ելաւ աչքերը շփելով։ Մուսքգոնն էր այս, որ ինքն իրեն համար յարդ չգտնելուն՝ ձիերուն յարդովը գոհ եղած էր։

— Մուսքգո՛ն, ըսաւ տ'Արդանեան, օ՛ն, ճամբա՛յ, ճամբա՛յ ելնենք։

Մուսքգոն իր տիրոջը բարեկամին ձայնը ճանչնալուն արտօրնօք ոտքի ելաւ և ելնելու ատեն գիշերուան ապօրինի վաստկած ոսկիները գետինը ձգեց։

— Հօ՛, հօ՛, ըսաւ տ'Արդանեան ոսկի մը գետնէն առնելով և հոտոտելով, ահա ոսկի մը որ ծիծաղելի հոտ մը, ունի, յարդ կը հոտի։

Մուսքգոն այնպէս պարկեշտութեամբ կարմրեցաւ որ Կասքոնը սկսաւ ծիծաղիլ և անոր ըսաւ.

— Բորթոս պիտի բարկանար, սիրելիդ իմ Պ. Մուսքգոն, բայց ես քեզի կը ներեմ. միայն սա յիշենք որ այս ոսկին մեր վէրքին համար սպեղանի պիտի ըլլայ և ուրախ զուարթ ըլլանք. երթա՛նք։

Մուսքգոն անմիջապէս ամենազուարթ դէմք մը առաւ, իր տիրոջ ձին ժրութեամբ թամբեց և իրենը հեծաւ առանց չափէն աւելի երեսը ծամրկելու։

Նոյն պահուն Բորթոս հասաւ կախած դէմքով մը և չափազանց զարմացաւ տեսնելով տ'Արդանեանը համբերատար և Մուսքգոնը գրեթէ զուարթ։

— Ինձ նայէ՛, ըսաւ, անտարակոյս դուն քու աստիճանդ և ես իմ սեպուհութեան տիտղոսս ալ ստացա՛նք։

— Պիտի երթանք անոնց արտօնագիրը փնտռելու, ըսաւ տ'Արդանեան, և ի դարձին վարպետ Մազարէնդ պիտի ստորագրէ։

— Եւ ո՞ւր պիտի երթանք, հարցուց Բորթոս։

— Նախ Բարիզ, պատասխանեց տ'Արդանեան, քանի մը գործեր ունիմ կարգադրելու հոն։

— Երթա՛նք Բարիզ, ըսաւ Բորթոս։

Եւ երկուքնին ալ Բարիզ երթալու համար մեկնեցան.

Երբ Բարիզի դուռները հասան, զարմացան մայրաքաղաքին սպառնալից կերպարանը տեսնելով։ Հատուկտոր եղած կառքի մը շուրջը՝ ժողովուրդը անէծք կը թափէր մինչդեռ խոյս տալու միտք ունեցող անձերը գերի բռնուեր էին, այսինքն ծերունի մը և երկու կիներ։

Երբ ընդհակառակը տ'Արդանեան և Բորթոս ներս մտնելու հրաման ուզեցին, անոնց ամէն տեսակ գգուանք ըրին։ Թագաւորական կուսակցութեան դասալիք կը սեպէին զանոնք և իրարու ձեռքէ յափշտակել կ'ուզէին։

—Ի՞նչ կ'ընէ թագաւորը, հարցուցին ամէնքը։

—Կը քնանայ։

—Հապա Սպանուհի՞ն։

—Կ'երազէ։

—Հապա անիծեալ Իտալացի՞ն։

—Կը հսկէ։ Այսպէս զօտեպինդ կեցէք. վասնզի եթէ մեկնեցան, անտարակոյս դիտաւորութիւն մը պիտի ունենան։ Բայց որովհետև դուք վերջապէս աւելի զօրաւոր էք, շարունակեց տ'Արդանեան, ձեր կատաղութիւնը կիներու և ծերերու վրայ մի՛ փորձէք, և ճշմարիտ չարժառիթները գտէք։

Ժողովուրդը յօժարամիտ լսեց այս խօսքը և թոյլ տուաւ կանանց որ երթան, որ տ'Արդանեանէ շնորհակալ եղան ճարտասան ակնարկ մը նետելով։

—Հիմակ ընդառաջ անցնինք, ըսաւ տ'Արդանեան։

Եւ իրենց ճամբանին շարունակեցին, պատնէշներէն ցատկելով, շղթաներու վրայէ անցնելով՝ մինչդեռ զիրենք կը հրէին, հարցուփորձ կ'ըլլային և կը հարցնէին։

Բալէ-Ռուայեալի հրապարակին վրայ տ'Արդանեան յիսնապետ մը տեսաւ որ հինգ վեց հարիւր ոստանիկներ զինուորական կրթութեան կը վարժեցնէր. Բլանշէն էր որ քաղաքային զինուորաց օգնող Բիէմոնի մէջ ըրած զօրականութեան յիշատակները կը գործադրէր։

Տ'Արդանեանի առջևէն անցնելով իր հին մեծաւորը ճանչցաւ։

—Բարի լո՛յս. Պ. տ'Արդանեան, ըսաւ Բլանշէ հպարտ դէմքով մը։

—Բարի լո՛յս, Պ. Տիւլօրիէ, պատասխանեց տ'Արդանեան։

Բլանշէ ափ իբերան մնաց՝ տ'Արդանեանի վրայ յառելով իր խոշոր աչքերը ակնապիշ. առաջին կառքը տեսնելով որ իր յիսնապետը կանգ առաւ՝ ինքն ալ կեցաւ և այսպէս մինչև յետինը։

—Այս ոստանիկները վերջին ծայր ծիծաղաշարժ են, ըսաւ տ'Արդանեան Բօրթօսին և իր ճամբան շարունակեց։

Հինգ վայրկեան ետք՝ ձիէն վար կ'իջնէին Շէվրէզի պանդոկին առջև։

Գեղանի Մատլէնը տ'Արդանեանը դիմաւորելու վազեց։

—Իմ սիրելի տիկին Դիւրքէն, ըսաւ տ'Արդանեան, եթէ դրամ ունիս՝ շուտ գետինը փորէ ծածկէ, եթէ գոհարներ ունիս, իսկոյն պահէ. եթէ պարտապաններ ունիս, շուտով ստակդ պահանջէ, եթէ պարտատէրներ ունիս, մի՛ վճարեր։

—Ինչո՞ւ համար այդպէս կը խօսիս, հարցուց Մատլէն։

—Վասնզի Բարիզ Բաբելոնի պէս մոխիր պիտի դարձնեն, և անշուշտ լսած ես թէ Բաբելոն ի՛նչ եղաւ։

—Եւ միթէ այսպիսի ժամանակ մը զիս պիտի թողուս։

—Անմիջապէս, ըսաւ տ'Արդանեան։

—Եւ ո՞ւր պիտի երթաս։

—Անգլիա.

—Ա՛հ, Աստո՛ւած իմ, Աստուա՛ծ իմ։

—Միթէ նամակ ունի՞մ տեղէ մը, հարցուց տ'Արդանեան և ձեռքովը պանդոկապետուհիին նշան ըրաւ որ ողբ ու կոծ հանելու չելնէ, վասնզի ողբն ու կոծը անօգուտ պիտի ըլլայ։

—Հիմակ իսկ նամակ մը եկաւ ձեր անուան։

Եւ նամակը տ'Արդանեանի տուաւ։

—Աթօսէ՛ն է, պոռաց տ'Արդանեան իր բարեկամին հաստատ և երկայն գիրը ճանչնալով։

—Ա՛հ, գոչեց Բօրթօս, նայինք ի՛նչ բաներ կը գրէ։

Տ'Արդանեան նամակը բացաւ և կարդաց.

«Սիրելի տ'Արդանեան, սիրելի Վալլօն, իմ բարի բարեկամներս, կարելի է որ վերջին անգամ իմ վրայ լուր կ'առնէք։ Արամիս և ես շատ դժբախտ ենք, բայց մեր արիութիւնը և մեր բարեկամութեան յիշատակը մեզ կը կազդուրեն։ Հոգ տարէք Ռաուլին: Քեզի կը յանձնեմ Պլուա գտնուած թուղթերը. և երկուքուկէս ամիսէն, եթէ մեր վրայ լուր մը չառնէս, նոյն թղթերը ա՛ռ։ Բոլոր սրտովդ համբուրէ դերկոմսը քու անձնուէր բարեկամիդ կողմէ։ «ԱԹՕՍ»

—Անտարակոյս պիտի համբուրեմ, ըսաւ տ'Արդանեան, մանաւանդ որ մեր ճամբուն վրայ է, և եթէ դժբախտաբար մեր խեղճ Աթօսը կորսնցնէ, նոյն օրէն իմ որդիս պիտի ըլլայ:

—Եւ ես զինքը իմ ընդհանուր ժառանգորդս պիտի ընեմ։

—Նայինք ուրիշ ինչե՞ր կ'ըսէ Աթօս։

«Եթէ ճամբուն վրայ Պ. Մօրտօնդին հանդիպիք, անորմէ խորշեցէք։ Չեմ կարող այս նամակիս մէջ աւելի եւս ըսել»։

—Պ. Մօրտօ՛նդ, ըսաւ տ'Արդանեան զարմանքով։

—Պ. Մօրտօ՛նդ, քա՛ջ է, ըսաւ Բօրթօս, միտքս պիտի պահեմ այս անունը. բայց նայէ անգամ մը, Արամիսն ալ յետգրութիւն մը դրեր է:

—Արդա՛րև, ըսաւ տ'Արդանեան, և կարդաց.

«Մեր բնակութեան վայրը ձեզմէ կը պահենք, սիրելի բարեկամներս, քաջ ճանչնալով ձեր եղբայրական անձնուիրութիւնը և գիտնալով որ մեզի հետ մեռնելու պիտի գայիք»։

—Թշուառակա՛ն, ընդմիջեց Բօրթօս այնպէս ուժգին բարկանալով որ Մուսքդօնին թունտ տուաւ սենեակին միւս ծայրը, միթէ ուրեմն մահուա՞ն վտանգի մէջ են։

Տ'Արդանեան շարունակեց.

«Աթօս ձեզ կը կտակէ Ռաուլը, և ես կը կտակեմ ձեզ վրէժ մը։ Եթէ երբեք Մօրտօնդ անուն մէկը ձեռք անցընես, ըսէ Բօրթօսին որ զանիկա անկիւն մը տանի և անոր վիզը ոլորէ։ Չեմ իշխեր աւելի եւս խօսիլ նամակի մը մէջ։

«ԱՐԱՄԻՍ»

—Եթէ այդ է միայն բանը, ըսաւ Բօրթօս, դիւրին է կատարելը։

—Ընդհակառակը, ըսաւ տ՚Արդանեան մթին դէմքով մը, անկարելի է։

—Եւ ի՞նչ պատճառաւ։

—Ճիշդ այս Մօրտօնդն է որուն պիտի երթանք միանալու ի Պուլօնէ, և ի միասին Անգլիա պիտի անցնինք։

—Լա՛ւ, եթէ այդ Պ. Մօրտօնդին տեղ, երթանք մեր բարեկամաց միանանք, ինչպէս կ՚ըլլայ, ըսաւ Բօրթօս այնպիսի շարժումով մը որ կարող էր բանակ մը սարսափեցնել։

—Ես ալ այդ մտածեցի, ըսաւ տ՚Արդանեան, բայց նամակը ո՛չ թուական ունի և ոչ դրոշմ։

—Իրաւ է, յարեց Բօրթօս։

Եւ սկսաւ մոլար մարդու մը պէս սենեակին մէջ թափառիլ, այլանդակ շարժումներ ընելով և ամէն վայրկեան սուրը պատեանէն կիսովին դուրս հանելով։

Իսկ տ՚Արդանեան՝ իբրեւ ահարեկ մարդ մը կանգնած կը մնար և խորին տրտմութիւն մը իր դէմքին վրայ կը նկարուէր։

—Ա՛հ, այս անվայել է, կ՚ըսէր ան, Աթօս մեզ կը նախատէ, մինակը կ՚ուզէ մեռնիլ, անվայել բան է։

Մուսքդօն այս երկու մարդոց յետին յուսահատութիւնը դիտելով՝ անկիւն մը քաշուած յորդ արտասուք կը թափէր։

—Սթափի՛նք, ըսաւ տ՚Արդանեան, այս մեր ըրածը անօգուտ է։ Մեկնի՛նք ինչպէս որ ըսինք, երթանք Ռաուլը համբուրելու և կարելի է Աթօսէն ինքն ալ լուր առած է։

—Իրաւի, այդ լաւ խորհուրդ մըն է, ըսաւ Բօրթօս, ստուգիւ, սիրելի տ՚Արդանեան, չգիտեմ ի՛նչպէս կ՚ընես, բայց միտքդ խորհուրդներով լեցուն է։ Երթա՛նք Ռաուլը համբուրելու։

—Վա՛յ անոր գլխուն որ իմ տիրոջս այս պահուս ծուռ աչքով կը նայի, ըսաւ Մուսքդօն, իր կենաց համար դանկ մը անգամ գրաւ չեմ դներ։

Երկու բարեկամները ձի հեծան և մեկնեցան։ Սէն-Տընի փողոցը հասնելով՝ շատ մը ժողովուրդ գտան։ Պ. Պօֆօրն էր որ այն ինչ Վանտօմուայէն կը դառնար և Տեղապահը զանիկա հիացած և զուարթ Բարիզցիներու ցոյց կուտար։

Այնուհետև ինքզինքնին անպարտելի կը համարէին անոնք Պ. Պօֆօրին հետ։

Երկու բարեկամները փոքրիկ փողոց մը զարկին որպէսզի իշխանին չհանդիպին և Սէն-Տընի քաղաքադուռը հասան։

—Իրա՞ւ է, ըսին պահակները երկու ձիաւորներուն թէ Պ. Պօֆօր Բարիզ եկեր է։

—Շա՛տ իրաւ է, ըսաւ տ՚Արդանեան, և ասոր ապացոյցը սա է որ մեզ դիմաւորելու կը ղրկէ Պ. Վանտօմի իր հօրը, որ նոյնպէս քիչ ատենէն Բարիզ պիտի մտնէ։

—Կեցցէ՛ Պ. Պօֆօր, գոչեցին պահակները և ակնածութեամբ մէկ կողմ քաշուեցան որպէսզի մեծ իշխանին նուիրակաց ճամբայ տան։

Երբ անգամ մը քաղաքադուռնէն դուրս ելան, սկսան արընթաց առաջ քշել այս մարդիկը որ ո՛չ յոգնութիւն և ոչ վհատութիւն գիտէին. իրենց ձիերը կը թռէին, և իրենք անդադար Աթօսի և Արամիսի խօսքը կ՚ընէին։

Մուսքդօն ամէն երևակայելի տանջանք կը կրէր, բայց այս պատուական ծառան կը մխիթարուէր մտածելով որ իր երկու տէրերը աւելի ծանր տանջանքներու ենթակայ էին։ Վասնզի սկսեր էր իբրև երկրորդ տէր մը նկատել տ՚Արդանեանն և մանաւանդ անոր աւելի շուտ և ճշդիւ կը հնազանդէր քան թէ Բօրթօսին։

Զօրանիստը Սէնդ-Օմէրի և Լանոյի մէջ կը գտնուէր. երկու բարեկամները մինչև զօրանիստը զարտուղի շրջան մը ըրին և բանակէն ժամանման տեղեկութիւններ ստացան թէ, Թագաւորը և Թագուհին խոյս տուեր և գաղտնապէս մինչև հոն հասեր էր։ Ռաուլը գտան իր վրանին մօտ, յարդի խուրձի մը վրայ պառկած ուսկից ձին քանի մը կտոր կը կտրէր։ Պատանիին աչքերը կարմրեր էին և ինք վհա-գաղտնագողի։

տած կ'երեւէր։ Կրամօն մարէշալը և Կիշ կոմսը Բարիզ վերադարձեր էին և խեղճ տղան առանձին կը գտնուէր։

Պահ մը ետք, Ռաուլ աչքերը վերցուց և իրեն նայող երկու ձիաւորները տեսաւ. ճանչցաւ զանոնք և բազկատարած անոնց վազեց։

— Ո՜հ, դո՞ւք էք, սիրելի բարեկամներս գոչեց ան, միթէ զիս փնտռելո՞ւ եկաք, միթէ զիս ձեր հետ կը տանի՞ք, արդեօք իմ խնամակալէս ինձ լուրե՞ր կը բերէք։

—Եւ միթէ դուն քու կողմէդ լուր մը չունի՞ր, հարցուց տ'Արդանեան երիտասարդին։

—Աւա՜ղ, ո՛չ, պարոն, և արդարեւ չեմ գիտեր թէ ի՛նչ եղաւ, այնպէս որ, ո՜հ, այնպէս որ լալու չափ մտատանջութեան մէջ եմ։

Եւ իրաւի երկու խոշոր արտասուք կը գլորէին պատանիին սեւցած այտերէն վար։

Բօրթօս գլուխը անդին դարձուց որպէսզի իր խոշոր դէմքին վրայ ցոյց չտայ սրտին մէջ անցածը։

—Այդ ի՛նչ կը նշանակէ, ըսաւ տ'Արդանեան, երկար ատենէ ի վեր չզգացած այլայլութիւնը զգալով, մի՛ յուսահատիր, բարեկամ, եթէ կոմսէն նամակներ չստացար, մենք ստացանք մէկ հատ...։

—Ո՜հ, իրա՞ւ, գոչեց Ռաուլ։

—Մանաւանդ թէ ուրախառիթ է, յարեց տ'Արդանեան տեսնելով որ այս լուրը երիտասարդին խնդութիւն կը պատճառէր։

—Արդեօք նամակը քո՞վդ է, հարցուց Ռաուլ։

—Այո՛, այսինքն քովս էր, ըսաւ տ'Արդանեան, նամակը փնտռել ձեւացնելով, կեցէ՛ք, սա տեղը պիտի ըլլայ գրպանիս մէջ. իր վերադարձին վրայ կը խօսի, այնպէս չէ՞, Բօրթօս,

Որչափ որ Կասքօն էր տ'Արդանեան, սուտի մը բեռը իր վրայ առնել չէր ուզեր։

—Այո՛, ըսաւ Բօրթօս հազալով։

—Ո՜հ. տուէք ինծի նայիմ, ըսաւ պատանին։

—Է՜հ, դեռ եւս քիչ մը առաջ զայն կը կարդայի։ Արդեօք կորսնցուցի՞. ա՜հ սատանա՜յ, գրպանս ծակ է։

—Ո՜հ, այո՛, Պ. Ռաուլ, ըսաւ Մուսքըթօն, մանաւանդ թէ նամակը շատ մխիթարական էր. պարոնները կարդացին զայն ինծի և ուրախութենէս լացի։

—Բայց գոնէ, Պ. տ'Արդանեան, գիտե՞ս արդեօք թէ խնամակալս ո՞ւր կը գտնուի, հարցուց Ռաուլ կէս մը սփոփուելով։

—Ա՜հ, գոչեց տ'Արդանեան, անշուշտ գիտեմ, Տէ՛ր վկայ, բայց գաղտնիք մըն է այն։

—Բայց յուսամ թէ ինծի համար չէ:

—Ո՛չ, քեզի համար, ուստի հիմակ պիտի ըսեմ քեզի թէ ո՛ւր է։

Բօրթօս տ'Արդանեանի կը նայէր իր խոշոր զարմանահար աչքերով։

—Բայց սատանային որ ծակն է ըսեմ հիմակ որ չփորձէ երթալ անոր միանալու, կը մրմռար տ'Արդանեան։

—Լա՛ւ ուրեմն, ո՞ւր է, պարոն, հարցուց Ռաուլ իր անուշ և գգուելի ձայնովը։

—Կոստանդնուպոլիս է։

—Թրքա՜ց մէջ, գոչեց Ռաուլ ահաբեկ։ Տէ՛ր Աստուած, ի՛նչ լուր է այդ։

—Լա՛ւ ուրեմն, միթէ ասով երկի՞ւղ կը զգաս, ըսաւ տ'Արդանեան: Բա՛, ի՞նչ են Թուրքերը Լա Ֆէր կոմսին և Հէրպլէյ աբբային պէս մարդոց համար։

—Ա՜հ, իր բարեկամը իր հետն է ուրեմն, ըսաւ Ռաուլ, ասով սիրտս քիչ մը կը հանդարտի։

—Ի՞նչ խելք ունի այս սատանայ տ'Արդանեանը, կ'ըսէր Բօրթօս իր բարեկամին խաբեբայութեան վրայ սքանչանալով։

—Հիմակ, ըսաւ տ'Արդանեան իր խօսակցութեան նիւթը փոխելու ջանալով, ահա քսանըհինգ ոսկի զոր պարոն կոմսը նոյն թղթաբերով քեզի ղրկեց. կարծեմ թէ ստակ չունիս և պատեհ ժամուն կը հասնի։

—Տակաւին տասը ոսկի ունիմ, պարոն։

—Լա՛ւ, այս ոսկիներն ալ ա՛ռ ասով երեսունըհինգ հատ պիտի ունենաս:

—Եւ եթէ աւելի դրամի պէտք ունիս... ըսաւ Բօրթօս իր ձեռքն անթիւ գրպանին տանելով։

—Շնորհակալ եմ, ըսաւ Ռաուլ կարմրելով, հազար անգամ շնորհակալ եմ, պարոն:

Նոյն պահուն՝ Օլիվէն հեռուէն երեւցաւ։

—Աղէկ միտքս ինկաւ, յարեց տ'Արդանեան այնպէս որ սպասաւորը իր ըսածը լսէ, միթէ գո՞հ ես Օլիվէնէն։

—Այո՛, բաւական գոհ եմ։

Օլիվէն բան մը չլսելու զարկաւ և վրանը մտաւ։

—Ի՞նչ յանցանք ունի այս անպիտանը։

—Որկրամոլ է, ըսաւ Ռաուլ:

—Ո՛հ, պարոն, ըսաւ Օլիվէն այս ամբաստանութեան վրայ երեւալով։

—Փոքր ինչ գող է։

—Ո՛հ, պարոն, ո՛հ։

Եւ մանաւանդ շատ վատասիրտ է։

—Հօ՛, հօ՛, հօ՛, պարոն, զիս կ'անպատուես, ըսաւ Օլիվէն։

—Շուտի՛կ, ըսաւ տ'Արդանեան, վարպետ Օլիվէն, քաջ գիտցիր որ մեզի պէս մարդիկ վատասիրտ ծառաներ չեն գործածեր, կողոպտէ՛ տէրդ, անոր անուշեղէնները կե՛ր և գինին խմէ՛, բայց անիծից ծնունդ, վատասիրտ մի՛ ըլլար, թէ ոչ ականջներդ պիտի կտրեմ։ Նայէ անգամ մը Պ. Մուսքըթօնը, ըսէ անոր որ ընդունած պատուաւոր վէրքը քեզի ցոյց տայ, և դիտէ անգամ մը թէ իր սովորական արիասրտութիւնն ինչ արժանապատուութեան երես առած է։

Մուսքըթօն խնդութենէ երրորդ երկինքը թռաւ և եթէ համարձակէր տ'Արդանեան պիտի համբուրէր. սակայն ան այժմ կը տրամադրուէր անոր համար ինքզինքը սպաննել տալ եթէ երբէք յարմար առիթ պատահէր:

—Ծախէ՛ այդ անպիտանը, Ռաուլ ըսաւ տ'Արդանեան, վասնզի եթէ վատասիրտ է, օրին մէկը անպատիւ բան մը պիտի ընէ:

—Պարոնը կ'ըսէ թէ վատասիրտ եմ, գոչեց Օլիվէն, վասնզի անցեալ օր Կրամօնի գունդին մէկ հեծելազօր դրօշակիրի մը հետ մենամարտիլ ուզեց և ես մերժեցի անոր ընկերանալու։

—Պարոն Օլիվէն, սպասաւոր մը երբէք անսաստել պէտք չէ, ըսաւ տ'Արդանեան խստիւ։

Եւ զանիկա մեկուսի քաշելով.

—Շա՛տ լաւ ըրիր, ըսաւ անոր, եթէ գլխաւորդ անիրաւ էր, և ահա քեզի սկուտ մը, բայց եթէ երբէք նախատուի և եթէ դու անոր մօտ չորս կտոր ըլլալու չափ չկռուիս, լեզուդ պիտի կտրեմ և երեսդ պիտի քերթեմ։ Աղէկ պահէ այս խօսքս։

Օլիվէն խոնարհութիւն ըրաւ և սկուտը գրպանը դրաւ,

—Եւ հիմակ, Ռաուլ բարեկամ, ըսաւ տ'Արդանեան, մենք կը մեկնինք, Պ. Վալլօն և ես, իբրեւ դեսպան։ Չեմ կարող ըսել թէ ինչ է մեր նպատակը, ես ալ բան մը չգիտեմ, բայց եթէ բանի մը պէտք ունենաս, տիկին Մատլէն Դիւրքէնի գրէ՝ Շէվրէզի պանդոկը Դիգդօն փողոցը, և անոր արկղին վրայ թուղթ քաշէ իբրեւ սեղանաւորի մը վրայ, սակայն միշտ խնայութեամբ, վասնզի կանխաւ կ'ազդարարեմ որ Աւոլին լեցուն չէ ինչպէս է Պ. Էմրինը:

Եւ իր առժամանակեայ սանը համբուրելով, Բօրթօսի կորովի բազկաց մէջ անցուց զանիկա, զոր գետնէն վեր առաւ և պահ մը կախուած կեցուց իր ազնիւ սրտին վրայ այն ահարկու հսկան։

—Երթա՛նք, ըսաւ տ'Արդանեան, ճամբայ ելնենք։

Եւ վերստին մեկնեցան դէպի Պուլօնիա, ուր երեկոյեան դէմ կեցուցին իրենց ձիերը քրտնաթոր և փրփուրէ սպիտակ դարձած։

Նոյն տեղէն տասը քայլ անդին ուր դադար առին քաղաք մտնելէն առաջ, սեւեր հագուած երիտասարդ մը կար որ կարծես թէ մէկու կը սպասէր, անոնց երեւիլը տեսաւ որ անդադար աչքն անոնց վրայ սեւեռած մնաց։

Տ'Արդանեան անոր մօտեցաւ, և տեսնելով որ ան իր աչքն իր վրայէն չէր վերցներ։

—Հէ՛, բարեկամ, ըսաւ, չեմ ախորժիր որ զիս այդպէս չափեն։

—Պարո՛ն, ըսաւ երիտասարդը առանց տ'Արդանեանի դիտողութեան պատասխան տալու, միթէ Բարիզէն չէ՞ք գար, խնդրեմ ըսէք։

Տ'Արդանեան մտածեց որ այս մարդը հետաքրքիր մէկը պիտի ըլլար որ մայրաքաղաքին վրայ լուրեր կը հարցնէր։

—Այո՛, պարոն, ըսաւ ան աւելի մեղմ ձայնով մը։

—Միթէ Անգլիոյ Զինուց պանդոկը՞ պիտի օթեւանիք։

—Այո՛, պարոն։

—Ուրեմն, ըսաւ երիտասարդը, ձեր գործը ինծի հետ է, ես եմ Պ. Մորտօնդ։

—Ա՜հ, ըսաւ տ'Արդանեան իւրովի, այս մարդն է որմէ հեռու մնալ կը յորդորէ զիս Աթօս։

—Ա՜հ, մրմռաց Բօրթօս, այս է այն մարդը զոր Արամիս կը յորդորէ զիս խեղդելու։

Երկուքին ալ ուշադիր նայեցան երիտասարդին։

Սակայն անոնց ակնարկին բացատրութեան վրայ սխալեցաւ։

—Միթէ խօսքիս վրայ կասկա՞ծ ունիք, ըսաւ ան, եթէ այդպիսի կասկած մը ունիք պատրաստ եմ փորձով հաստատել ըսածս.

—Ո՛չ պարոն, ըսաւ տ'Արդանեան, և մենք ձեր հրամանին պատրաստ ենք։

—Լա՛ւ ուրեմն, պարոններ ըսաւ Մորտօնդ, պէտք է որ անյապաղ մեկնինք. վասնզի այսօր կը լրանայ Կարտինալին ինծ տուած պայմանաժամը։ Նաւս պատրաստ է. և եթէ

դուք չգայիք. առանց ձեզի պիտի մեկնէի. վասնզի Օլիվիէ Քրոմվէլ զօրապետը անհամբեր իմ վերադարձիս կը սպասէ անշուշտ։

—Հա՛, հա՛, ըսաւ տ'Արդանեան, ըսել է թէ Կարտինալը մեզ Օլիվիէ Քրոմվէլ զօրապետին կը ղրկէ։

—Եւ միթէ անոր ուղղեալ նամակ մը չունի՞ք, հարցուց երիտասարդը։

—Նամակ մը ունիմ որուն կրկնակի պահարանը Լոնտոն պիտի պատռէի բայց որովհետեւ կ'ըսես ինծի թէ որու ուղղեալ է այն, հարկ չկայ որ մինչեւ այն ատեն սպասեմ։

Տ'Արդանեան նամակին պահարանը պատռեց.

Եւ արդարեւ սոյն գիրն ուղղեալ էր։

«Առ Պ. Օլիվիէ Քրոմվէլ, Անգլիական զօրաց սպարապետ»։

—Ա՜հ, ըսաւ տ'Արդանեան. զարմանալի յանձնարարութիւն։

—Ո՞վ է այս Պ. Օլիվիէ Քրոմվէլ, հարցուց Բօրթօս կամացուկ մը։

—Գարեջրի հին վաճառող մը, պատասխանեց տ'Արդանեան։

—Արդեօք Պ. Մազարէն գարեջրի վրայ շահագիտական գործ մը ունի՞ ընելիք, ինչպէս որ մենք յարդի վրայ ըրինք, հարցուց Բօրթօս։

— Օ՛ն, օ՛ն, պարոններ, ըսաւ Մորտօնդ անհամբեր, մեկնինք։

— Հ՛օ, հօ՛, ըսաւ Բօրթօս, առա՞նց ճաշակելու։ Արդեօք Պ. Քրոմվէլ քիչ մը չկրնա՞ր սպասել։

—Այո՛, բայց ե՞ս ըսաւ Մորտօնդ։

—Լա՛ւ, դո՛ւ, ըսաւ Բօրթօս, ապա՞։

—Ե՛ս պէտք է որ շտապեմ։

—Ո՜հ, թէ որ քեզի համար է, ըսաւ Բօրթօս, փոյթս չէ, և պիտի ճաշեմ քու հրամանաւդ կամ առանց քու հրամանիդ։

Երիտասարդին անորոշ ակնարկը բորբոքեցաւ եւ փայ-

լակ մը արձակելու վրայ էր, բայց ինքզինքը զսպեց:

—Պա՛րոն, շարունակեց տ'Արդանեան, պէտք է սովորըլուկ ուղեւորներու ներողամիտ ըլլալ: Սակայն մեր կերակուրը քեզ շատ չպիտի ուշացնէ, մենք մինչեւ պանդոկը պիտի արշաւենք: Դուն մինչեւ նաւահանգիստ գնա ոտքով, կառք մը բան պիտի ունենք եւ քեզի հետ կը համնինք հոն:

—Ինչպէս որ կ'ուզէք, պարոններ, միայն թէ մեկնինք, ըսաւ Մօրտօնդ:

—Բանը յաջող է, մրմռաց Բորթոս:

—Նաւին անունն ինչ է, հարցուց տ'Արդանեան:

—Սդէնտէրտ:

—Լա՛ւ: Կէս ժամէն նաւը պիտի գտնուինք:

Եւ երկուքնին ալ ձիերը խթելով Անգլիոյ Զինուց պանդոկը դիմեցին:

—Ի՞նչ կ'ըսես այս երիտասարդին վրայ, հարցուց տ'Արդանեան արշաւելու ատեն:

—Կ'ըսեմ թէ իմ բանիս բնաւ չգար, ըսաւ Բորթոս, սաստիկ մարմաջ մը զգացի Արամիսին խորհրդին հետեւելու

—Զգուշացի՛ր այդ բանէն, սիրելիդ իմ Բորթոս: Այս մարդը Գրոմվէլի զօրապետին մէկ նուիրակն է, եւ կարծեմ թէ աղուոր ընդունելութիւն մը չպիտի ընեն մեզ եթէ ըսենք թէ անոր մտերմին վիզը ոլորեցինք:

—Հոգս չէ, ըսաւ Բորթոս, ես միշտ դիտած եմ որ Արամիս մեզի լաւ խորհրդատու մը եղած է:

—Մտիկ ըրէ ըսաւ տ'Արդանեան, երբ մեր դեսպանութիւնը աւարտի.....:

—Վերջը՞:

—Երբ մեզ վերստին Ֆրանսա դարձնէ.....:

—Լա՛ւ, ապա՞:

—Ապա՛, կը նայինք:

Այս ըսելով երկու բարեկամներն Անգլիոյ Զինուց պանդոկը հասան, եւ մեծ ախորժակով կերակուր մը կերան. յետոյ իսկոյն նաւահանգիստը դիմեցին:

Երկկայմ նաւ մը առագաստ բանալու պատրաստ էր, եւ նոյն նաւին ծայրն անհամբեր կը շրջէր մէկը. հասկցան որ Մօրտօնդն է:

—Անհաւատալի բան, կ'ըսէր տ'Արդանեան, մինչ նաւակը զինքը Սդէնտէրտի կը տանէր: զարմանալի է թէ ինչպէս այս երիտասարդը իմ արդէն ճանչցած մէկուն կը նմանի, բայց չեմ կրնար ըսել թէ որո՞ւ:

Սանդուղին ոտքը հասան, եւ պահ մը ետք՝ նաւ ելան:

Բայց ձիերը նաւ տանելու համար աւելի ժամանակ անցաւ քան մարդիկը, եւ նաւը ժամը ութին միայն կարող եղաւ երկաթը վերցնել:

Երիտասարդը անհամբերութենէ ոտները կը զարնէր եւ կը հրամայէր որ բոլոր կայմերը առագաստներով ծածկեն:

Բորթոս երեք գիշեր անքուն մնալուն եւ ութսուն մղոն տեղ ձիով ընելուն բոլորովին յոգնած դադրած ըլլալով իր խցիկը քաշուած կը քնանար:

Տ'Արդանեան՝ Մօրտօնդի դէմ ունեցած հակառակութիւնը զսպելով, կամուրջին վրայ անոր հետ կը պտըտէր եւ հազար [illegible]ձակ պատմութիւններ կը հիւսէր որ զանիկա բանադատէ [illegible]ծնելու:

Մուսքդօն ծովէն բռնուեր էր:

ԺԱ.

ՍԿՈՎՏԱՑԻՆ, ԻՐ ՈՒԽՏԸ ԴՐԺԵՑ ՄԷԿ ԹԱՆԿԻ ՀԱՄԱՐ, ԻՐ ՏԷՐԸ ԾԱԽԵՑ,

Եւ այժմ, պէտք է մեր ընթերցողները թողուն որ Սդէնտէրտը հանդարտօրէն նաւարկէ, չէ թէ դէպի Լօնտօն, ուր տ'Արդանեան եւ Բորթոս երթալ կը կարծեն, այլ դէպի Տուրհէմ, ուր Մօրտօնդ կը դիմէր Պուլօնեը գտնուած ատեն ընդունած

նամակներուն իրեն տուած ուղղութեան համեմատ, և թո՛ղ մեզի հեռուէն Թայն գետէն տաղին Նիւքասլ քաղքին մօտ գտնուող արքայական բնակավայրը։

Ահա հոն՝ երկու գետերու մէջտեղը, Սկովտիոյ սահմանագլխին վրայ, բայց Անգլիոյ հողին վրայ փոքրիկ բանակի մը վրանները կ՚երևէին։ Կէս գիշեր է։ Մարդիկ՝ որոնց մերկ սրունքէն, կարճ կոճկէններէն, գոյնզգոյն վերարկուներէն և իրենց գդակը զարդարող փետուրէն կը ճանչցուէին որ լեռնականներ են, դանդաղօրէն կը հսկեն։ Լուսինն որ երկու խոշոր ամպերու մէջէն կը սահի ամէն անգամուն որ որ կ՚երևի՝ իր ճամբուն վրայ կը լուսաւորէ գիշերապահ զինուորներուն հրացանները և կը նկարէ պարիսպները, տանիքը՝ նոյն քաղաքին զանգակատունները զոր Շարլ Ա. այն ինչ պարլամէնթի զօրաց յանձնել էր, նոյնպէս Օքսֆորտ և Նիւվարտ, որ տակաւին իրեն համար կը դիմադրէին՝ հաշտութեան յուսով։

Զօրանիստին մէկ ծայրը ահագին վրանի մը մօտ, որ լեցուն էր սկովտացի սպաներով՝ տեսակ մը խորհրդի կոչուած իրենց հրամանատար Լօվէն Կոմսին նախագահութեամբը, ձիաւորի պէս հագուած մարդ մը՝ դալարի խոտին վրայ պառկած կը քնանայ աջ ձեռքը իր սուրին վրայ տարածած։

Անկէց քիչ անդին՝ ուրիշ մը՝ նոյնպէս ձիաւորի պէս հագուած՝ սկովտացի գիշերապահի մը հետ կը խօսի, և թէև օտար՝ Անգլիական լեզուն՝ ինչպէս որ կ՚երևէր, խօսելու վարժ ըլլալուն՝ կը յաջողի իր խօսակցին Բերդի կոմսութեան գաւառիկ բարբառով տուած պատասխանները հասկնալու։

Նիւքասլ քաղքին ժամացոյցը առաւօտեան ժամը մէկ զարնելուն՝ քնացողը արթնցաւ, և խորին քունէ արթնցող մարդու մը ամէն շարժումները ընելէն ետք՝ իր չորս կողմ ուշադիր նայեցաւ. գիտելով որ մինակ է՝ ոտք ելաւ, և շրջան մը ընելով գիշերապահին հետ խօսող ձիաւորին մօտ գնաց։ Այս վերջինը անշուշտ իր հարցումները աւարտեր էր, վասնզի պահ մը ետք՝ այն մարդէն հեռացաւ և ուղղակի այն

ճամբան բռնեց որմէ առաջին ձիաւորին անցնիլը տեսանք։

Ճամբուն վրայ դրուած վրանի մը ստուերին մէջ՝ միւսը անոր կը սպասէր։

—Լա՛ւ, ուրեմն, սիրելի բարեկամ, ըսաւ անոր յստակ ֆրանսերէն լեզուով մը որ երբեք խօսուած ըլլայ Ռուէնէն ի Թուր։

—Լա՛ւ, ուրեմն, բարեկամ, պէտք չէ ժամանակ կորսնցնել, այլ թագաւորին իմացնել գործը։

—Ուրեմն ի՞նչ է անցած դարձածը։

—Երկար պիտի ըլլայ քեզի ըսելը. մանաւանդ որ հիմակ պիտի լսես։ Ասկէ զատ եթէ թեթև ձայն մը անգամ հանենք այստեղ թերևս ամէն ինչ վտանգի մէջ ձգէ։ Երթանք լորտ Վինդըր գտնելու։

Եւ երկուքնին ալ զօրանիստին դիմացի ծայրը դիմեցին, բայց որովհետև բոլոր զօրատեղին հինգ հարիւր քառակուսի քայլ հազիւ կը բռնէր, շատ չանցած իրենց փնտռած անձին տաղաւարը հասան։

—Դօ՛նի, միթէ տէրդ քնացա՞ծ է, հարցուց երկու ձիաւորներէն մէկը սպասաւորի մը որ նախասենեակի տեղ բռնող վրանին մէկ խորշը պառկեր էր։

—Ո՛չ, պարոն կոմս, պատասխանեց ծառան, չեմ կարծեր, կամ նոր պառկած պիտի ըլլայ, վասնզի թագաւորին քովէն գալէն ետք՝ երկու ժամէն աւելի քալեց, և իր քայլերուն ձայնը հազիւ տասը վայրկեան կայ որ դադրած է, սակայն, յարեց սպասաւորը վրանի վիժակը վերցնելով, կրնաք զանիկա տեսնել։

Արդարև Վինդըր, բացուածքի մը առջև նստեր էր, որ պատուհանի պէս էր և որմէ գիշերային օդը կը մտնէր, և անկից տրտում աչքերով կը հետևէր լուսնին, որ՝ ինչպէս քիչ մը առաջ ըսինք, սև ամպերու մէջ կորսուած էր։

Երկու բարեկամները Վինդըրի մօտեցան՝ որ գլուխը ձեռքին վրայ կրթնցուցած երկինք կը նայէր. անոնց գալը չտեսաւ և նոյն դիրքը պահեց մինչև այն ատեն որ ձեռքի մը ծանրութիւնը զգաց իր ուսին վրայ։

Այն ատեն գլուխը դարձուց, Աթոսը ու Արամիսը ճանչցաւ և ձեռքը անոնց կարկառեց։

—Մի՞թէ դիտեցի՞ք, ըսաւ անոնց, թէ ի՛նչպէս լուսինը այս իրիկուն արեան գոյն ունի։

—Ոչ, ըսաւ Աթոս, լուսինը ինծի սովորականին պէս երեւցաւ։

—Դիտէ՛ անգամ մը, ասպե՛տ, ըսաւ տը Վինդր։

—Կը խոստովանիմ ձեզ, ըսաւ Արամիս, որ ես ալ Լա Ֆեր կոմսին պէս մասնաւոր բան մը չեմ տեսներ:

—Լո՛րտ ըսաւ Աթոս, մեր այս տարտամ վիճակին մէջ, պէտք է երկիրը քննել քան լուսինը։ Մի՞թէ սկովտացիքը զննեցի՞ր և անոնց վրայ ապահո՞վ ես։

—Սկովտացի՞ք, հարցուց Վինդր, ո՞ր սկովտացիք։

—Է՛հ, մերինները, Տէ՛ր վկայ, ըսաւ Աթոս, անոնց որոց Թագաւորը վստահեցաւ, Լօվէնի սկովտացիքը։

—Ո՛չ, ըսաւ Վինդր։ Ապա յարեց. այսպէս, ըսէք ինծի, մի՞թէ ինծի պէս չէ՞ք տեսներ սա կարմրորակ գոյնը որ երկինքը կը պատէ։

—Ամենեւին, ըսին միասին Աթոս և Արամիս։

—Ըսէք ինծի, շարունակեց Վինդր, միշտ միեւնոյն խորհրդով համակուած, մի՞թէ Ֆրանսայի մէջ աւանդութեամբ չե՞ն ըսեր թէ՝ Հանրի Դ. որ Պասոմբիէրի հետ սատրինջ կը խաղար՝ տախտակին վրայ արեան բիծեր տեսաւ՝ իր սպաննուելուն առջի օրը:

—Այո՛, պատասխանեց Աթոս, և մարէշալը քանի՛ քանի անգամ այս բանս ինծի պատմած է։

—Այսպէս է մրմռաց Վինդր, և հետեւեալ օրը Հանրի Դ. սպաննուեցաւ։

—Բայց Հանրի Դ.ի այս տեսիլը ի՞նչ վերաբերութիւն ունի, կոմս, քեզի հետ, հարցուց Արամիս։

—Բնաւ չունի, պարոններ, և արդարեւ այսպիսի բաներու վրայ ձեզի հետ խօսակցելուս յիմար եմ, երբ այս պահուս ձեր իմ վրանս մտնելէն կ'երեւի թէ կարեւոր լուր մը կը բերէք։

—Այո՛, լորտ իմ, ըսաւ Աթոս, կը փափաքէի Թագաւորին ներկայանալ։

—Թագաւո՞րին. բայց Թագաւորը կը քնանայ։

—Իրեն կարեւոր բաներ ունիմ հաղորդելու։

—Մի՞թէ այդ բաները կարելի չէ՞ վաղուան ձգել։

—Պէտք է որ հիմակ անմիջապէս իմանայ, և կարելի է արդէն ուշացանք։

—Ներս մտնենք, ըսաւ Վինդր։

Վինդրի վրանը արքայական տաղաւարին մօտ դրուած էր, տեսակ մը նրբագաւիթէ մը մէկէն միւսը կ'երթային։ Այս նրբագաւիթը կը պահպանէր չէ թէ գիշերապահ մը այլ Շարլ Ա.ի մէկ հաւատարիմ ծառան, որպէսզի ստիպողական պարագայի մը մէջ Թագաւորը իր հաւատարիմ սպասաւորին հետ հաղորդակցելու կարող ըլլայ:

—Այս պարոնները ինծի հետ պիտի մտնեն, ըսաւ Վինդր:

Ծառան խոնարհութիւն ըրաւ և ձգեց որ անցնին։

Արդարեւ՝ Շարլ Թագաւորը բանակի անկողնի մը վրայ՝ սեւ վերարկուն և երկայն կօշիկները հագած գօտին լոյծ և Թաղեայ գլխարկը քովը դրած՝ քնանալու անդիմադրելի պէտք մը զգալով՝ ննջեր էր։ Առաջ անցան, և Աթոս որ ամէնուն գլուխը անցեր էր, պահ մը լռելեայն նկատեց անոր սատափի գունատ ազնիւ դէմքը՝ զոր բոլորեր էին իր երկար սեւ մազերը՝ որոնք հանդարտ քունէ մը առաջ եկած քրտինքէն իր քունքին փակչեր էին. կապոյտ խոշոր երակներ կճակերտ կը յօրինէին երեսը, երակներ որ իր յոգնած աչքերուն ներքեւ արտասուքով ուռեցած կ'երեւէին։

Աթոս խորունկ հառաչ մը հանեց. այս հառաչը Թագաւորը արթնցուց որ այնքան թեթեւ քունով կը քնանար։

Թագաւորը աչքը բացաւ։

—Ա՛հ, ըսաւ ան՝ իր արմուկին վրայ ելնելով, մի՞թէ դո՞ւն ես, Լա Ֆեր կոմս։

—Այո՛, վեհափառ տէր, պատասխանեց Աթոս։

—Դուն կը հսկես, մինչդեռ ես կը ննջեմ, և մի՞թէ լուր մը տալո՞ւ կուգաս։

—Ափսո՜ս, Վեհափառ, պատասխանեց Աթօս, Ձեր Վեհափառութիւնը ճիշդը գուշակեց։

—Ուրեմն տրտմի՞կ է լուրը, ըսաւ Թագաւորը վշտագին ժպտելով։

—Այո՛, Վեհափառ տէր։

—Փոյթ չէ, իբրեւ բանբեր բարի՛ առաքեցար, և որքա՜ն իմ քովս գաս միշտ ինձ զուարճութիւն կը պատճառես։ Դուն՝ որուն անձնուիրութիւնը ոչ հայրենիք կը ճանչնայ, ոչ դժբախտութիւն։ Հանրիէթի կողմէ ղրկուած ես. ի՛նչ որ ըլլայ բերած լուրդ, վստահութեամբ խօսէ՛։

—Վեհափա՛ռ տէր, Պ. Քրոմվէլ այս գիշեր Նիւքասլ հասաւ։

—Ա՛հ, ըսաւ Թագաւորը, ինծի դէմ պատերազմելու համար։

—Ո՛չ, տէր իմ, ձեզ գնելու համար։

—Ի՞նչ կ'ըսես։

—Կ'ըսեմ, վեհափառ, որ սկովտիական բանակին չորս հարիւր հազար սթէրլին պարտք կայ։

—Իբրեւ յետնեալ թոշակ, այո՛, գիտեմ։ Գրեթէ տարիէ մը ի վեր իմ քաջասիրտ և հաւատարիմ սկովտիացիներս պատւոյ համար կը կռուին։

Աթօս ժպտեցաւ։

—Լա՛ւ, Վեհափառ, թէեւ պատիւը աղէկ բան մըն է, բայց անոր համար կռուելէ ձանձրացան և այս գիշեր երկու հարիւր հազար ոսկիի փոխարէն ձեզ ծախեցին, այսինքն իրենց առնելիքի կէսին համար։

—Անկարելի՛ բան, գոչեց Թագաւորը, սկովտացիք իրենց Թագաւորը ծախեն երկու հարիւր հազար ոսկիի՛ փոխարէն։

—Սակայն հրեաներն իրենց Աստուածը ծախեցին երեսուն դահեկանի։

—Եւ ո՞վ է այն Յուդան որ այս վատանուն սակարկութիւնը ըրաւ։

Սպարապետը գլխաւոր զօրականներու մէջ կը գտնուէր։

—Թագաւո՛րը, գոչեցին ասոնք ոտք ելնելով և ապշութեամբ իրարու երես նայելով։

Արդարեւ Շարլ անոնց առջեւ կանգուն կեցեր էր՝ գըլխարկը գլուխը դրած, ունքը պռստած, և իր խարազանով իր կօշիկը մտրակելով.

—Այո՛, պարոններ, ըսաւ, նոյնինքն անձամբ Թագաւորն է, Թագաւորն է որ եկած է անցած դարձածին վրայ ձեզմէ բացատրութիւն ուզելու։

—Ի՞նչ կայ ուրեմն, Վեհափա՛ռ, հարցուց Լովէն կոմսը։

—Սա կայ, պարոն, ըսաւ Թագաւորը բարկութենէ չարժելով, որ Քրոմվէլ զօրապետը Նիւքասլ հասաւ այս գիշեր, թէ այս բանս գիտէիր և ինծի իմաց չտուիր. սա կայ որ թշնամին քաղքէն կ'ելնէ և Թայնի անցքը մեր առջեւ կը գոցէ, թէ քու գիշերապահներդ անշուշտ այս շարժումը տեսած են, և սակայն ինծի իմաց չտուին. սա կայ որ անուանարկ դաշնադրութեամբ մը զիս երկու հարիւր հազար ոսկիի ծախեցիք Բարլամէնդին, բայց գէթ այս դաշնադրութեան վրայ տեղեկութիւն ունիմ։ Ահա այս կայ, պարոն պատասխանեցէ՛ք կամ ինքզինքնիդ արդարացուցէ՛ք, վասնզի ձեզ կ'ամբաստանեմ։

—Վեհափա՛ռ, կմկմաց Լովէն կոմսը, Վեհափա՛ռ, անշուշտ սխալած պիտի ըլլաք սուտ տեղեկութեան մը վրայ։

—Իմ աչքովս տեսայ թշնամեաց բանակը որ Սկովտիոյ և իմ մէջ կը տարածուէր, ըսաւ Շարլ, և կարող եմ գրեթէ ըսել. ես իմ ականջովս լսեցի սակարկութեան պայմաններուն վիճաբանութիւնը։

Սկովտացի ցեղապետները ըստ արդի իրենց ունքը պըռստեցին իրարու նայելով։

—Վեհափա՛ռ, մրմռաց Լովէն կոմսը ամօթապարտ և գըլխիկոր, Վեհափա՛ռ, պատրաստ ենք ամէն տեսակ ապացոյցներ տալ ձեզ։

Մէ՛կ ապացոյց միայն կ'ուզեմ, ըսաւ Թագաւորը։

Զօրքը ի ճակատ յարդարէ և թշնամիին դէմ քալենք։

—Վեհափա՛ռ տէր, այդ անկարելի բան է, ըսաւ կոմսը։

—Ի՞նչ, անկարելի՛ է, և ո՞վ կրնայ արգելք ըլլալ այս բանիս, գոչեց Շարլ։

—Ձեր Վեհափառութիւնը քաջ գիտէ որ մեր և անգլիական բանակին մէջ զինադադար կայ, պատասխանեց կոմսը։

—Եթէ զինադադար կայ, այդ զինադադարը աւրեց անգլիական բանակը քաղաքէն ելնելով՝ անոր մէջ մնալու պայմանադրութեան հակառակ. արդ՝ ահա կ՚ըսեմ քեզ, պէտք է ինծի հետ սա բանակին մէջէն անցնիլ և Սկովտիա մտնել. և եթէ ասոր հակառակիս, լա՛ւ, ընտրէ՛ այն երկու բաներէն մին որոնք մարդիկը ուրիշ մարդոց քամահրելի և զզուելի կը դարձնեն. կամ վա՛տ էք, կամ մատնի՛չ։

Սկովտացւոց աչքերը շողացին, և ինչպէս որ այսպիսի պարագայի մէջ կը պատահի՝ ծայրագոյն ամօթապարտութենէ ծայրագոյն լպրշութեան անցան, և երկու ցեղապետներ թագաւորին երկու կողմէն առաջ անցան և ըսին.

—Լա՛ւ, այո՛, խօսք տուինք Սկովտիան և Անգլիան ազատել այն մարդուն ձեռքէն որ քսան և հինգ տարիէ ի վեր Անգլիոյ և Սկովտիոյ արիւնը և ոսկին կը խմէ։ Խօսք տուինք և մեր խոստումը կը պահենք։ Շարլ Ստուա՛րտ թագաւոր, դուք մեր գերին էք։

Եւ երկուքնին ալ նոյն միջոցին իրենց ձեռքը երկնցուցին թագաւորը բռնելու, բայց իրենց մատներուն ծայրը անոր անձին դպելէ առաջ՝ երկուքնին ալ վար ինկան, մին նուաղած և միւսը մեռած։

Աթօս իր հրացանակին գնդակը մէկը տապալեր էր և Արամիս իր սուրը միւսին մարմնէն անցուցեր էր։

Յետոյ՝ որովհետև Լովէն կոմսը և միւս պարագլուխները զարհուրելով կ՚ընկրկէին այս անակնկալ օգնողներու առջև, որ կարծես թէ երկնուստ կ՚իջնէին այն անձին համար զոր արդէն իրենց գերին կը համարէին, Աթօս և Արամիս՝ թագաւորը դրուժանին վրանէն դուրս քաշեցին, ուր անխոհե-

—Լովէն կոմսը։

—Միթէ ստո՞յգ ես այս մասին, պարոն։

—Ես իմ ականջովս լսեցի։

Թագաւորը խորին հառաչ մը հանեց, որպէս թէ իր սիր-
ըը կը խորտակէր, և իր ձեռքերուն մէջ առաւ իր գլուխը։
Ո՛հ, սկովտացի՛ք, ըսաւ ան, սկովտացի՛ք, զոր իմ
հաւատարիմներս կ՚անուանէի, սկովտացի՛ք որոնց վստա-
հեր էի, երբ կարող էի Օքսֆորտ փախչիլ, սկովտացի՛ք իմ
հայրենակիցներս, սկովտացի՛ք, իմ եղբարքս։ Բայց միթէ ըս-
տո՞յգ ես այս մասին, պարոն։
—Լովէն կոմսին վրանին ետեւ պառկած, որուն վարա-
գոյրը վերցուցեր էի, ամէն ինչ տեսայ և լսեցի։
—Եւ ե՞րբ արդեօք այս զզուելի սակարկութիւնը պիտի
գործադրուի։
—Այսօր առաւօտուն։ Ինչպէս որ Ձեր Վեհափառութիւնը
կը տեսնէ ժամանակ անցնել պէտք չէ։
—Ինչո՞ւ համար, քանի որ կ՚ըսես թէ ծախուած եմ։
—Թայնէն անցնելու համար, Սկովտիա մտնելու համար,
Լորտ Մօնրոզի միանալու համար, որ անիկա ձեզ չծախեց։
—Եւ ի՞նչ պիտի ընեմ Սկովտիա, հրոսակներու պատե-
րա՞զմ մը, այդպիսի պատերազմ մը անարժան է թագաւորի մը
համար։
—Ռօպէրդ Պրուսի օրինակը կեցած է ձեր այդ գործը
քաւելու համար, վեհափառ։
—Ո՛չ, ո՛չ, շատ ատենէ վեր կը մաքառիմ, եթէ ծախե-
ցին զիս, թո՛ղ յանձնեն թշնամիին, և իրենց մատնութեան
յաւիտենական նախատինքը անոնց վրայ ժայթքի։
—Վեհափառ ըսաւ Աթօս, թերեւս թագաւոր մը այդպէս
րծելու պարտաւոր է, բայց ամուսին մը, հայր մը պէտք
է որ այդպէս վարուի։ Ես ձեր վեհափառ ամուսնին և աղ-
կան կողմէ եկայ, և յանո՛ւն ձեր կողակցին և աղջկան ու
ձեր Լոնտոնի մէջ ունեցած միւս երկու զաւակներուն, կ՚ըսեմ
ձեզ. ապրեցէ՛ք, Վեհափառ, այսպէս կ՚ուզէ Աստուած։

Թագաւորը ոտք ելաւ, իր գօտին սեղմեց, սուրը մէջքէն կապեց, և իր քրտնաթոր ճակատը թաշկինակովը սրբելով.

—Լա՛ւ ուրեմն, ըսաւ նա, ի՞նչ պէտք է ընել:

—Վեհափա՛ռ տէր, միթէ բանակին մէջ վստահութեան արժանի զօրագունդ մը ունի՞ք։

—Վինդր, ըսաւ Թագաւորը, միթէ քու զօրագունդիդ հաւատարմութեան կը վստահի՞ս։

—Տէ՛ր արքայ, մարդիկ են անոնք, և մարդիկ շատ տկար կամ շատ չար դարձած պիտի ըլլան։ Անոնց հաւատարմութեան կը հաւատամ, բայց պատասխանատու չեմ մնար. ես անոնց կրնամ վստահիլ իմ կեանքս, բայց Ձեր Վեհափառութեան կեանքը անոնց վստահելու կ'երկմտիմ։

—Լա՛ւ ուրեմն, ըսաւ Աթոս, եթէ զօրագունդն ալ պակսի, երեք անձնուէր մարդիկ ենք և կը բաւենք։ Թո՛ղ Ձեր Վեհափառութիւնը ձի հեծնէ, թո՛ղ մեր մէջտեղը կենայ, Թայն գետէն կ'անցնինք, Սկովտիա կը հասնինք և այսպէս կ'ազատինք։

—Միթէ ա՞յս է կարծիքդ. Վինդր, հարցուց Թագաւորը։

—Այո՛, Վեհափա՛ռ տէր։

—Միթէ դու ալ ա՞յսպէս կը խորհիս, Պ. Հէրպլէյ։

—Այո՛, Վեհափա՛ռ տէր։

—Ուրեմն թո՛ղ ձեր ըսածը ըլլայ։ Վինդր պէտք եղած հրամանը տուր:

Վինդր դուրս ելաւ. նոյն պահուն Թագաւորը հագուեցաւ բոլորովին։ Արշալոյսն արդէն ծագեր և նշոյլները վրանին ճեղքերէն ներս կը մտնէր երբ Վինդր դարձաւ։

—Ամէն ինչ պատրաստ է, տէր իմ, ըսաւ նա։

—Հապա մե՞նք, հարցուց Աթոս։

—Կրիմօ և Պլէզուա ձեր ձիերը կազմ ու թամբած բռնած կը կենան։

—Ուրեմն վայրկեան մը չկորսնցնենք և մեկնինք, ըսաւ Աթոս։

—Մեկնի՛նք, ըսաւ Թագաւորը։

—Տէ՛ր իմ, ըսաւ Արամիս, միթէ Ձեր Վեհափառութիւնը իր բարեկամաց ձայն չի՞ պիտի տայ։

—Իմ բարեկամնե՛րս, ըսաւ Շարլ Ա. իր գլուխը ցնցելով տրտմագին. ձեր երեքէն զատ բարեկամներ չունիմ: Քսանամեայ բարեկամ մը որ զիս չմոռցաւ, ութ օրուան երկու բարեկամներ զոր երբէք չպիտի մոռնամ։ Եկէ՛ք, պարոններ, եկէ՛ք։

Թագաւորը իր վրանէն ելաւ և իրօք իր ձին պատրաստ գտաւ։ Դեղնագոյն ու աշխէտ երիվար մըն էր որուն վրայ երեք տարիէ ի վեր կը հեծնէր և շատ կը սիրէր զայն։

Ձին զայն տեսնելով ուրախութենէն վրնջեց։

—Ա՛հ, ըսաւ Թագաւորը, անիրաւ էի և ահա դեռ ես, եթէ ոչ բարեկամ մը, գէթ էակ մը զոր զիս կը սիրէ։ Դո՛ւն, դուն ինծի հաւատարիմ պիտի մնաս, այնպէս չէ՞, Արթիւս։

Եւ որպէս թէ այս խօսքերը հասկցաւ՝ ձին իր փրփրալի ռնգունքը Թագաւորին դէմքին մօտեցուց, շրթունքը բանալով և իր սպիտակ ակռաները խնդագին ցոյց տալով։

—Այո՛, այո՛, ըսաւ Թագաւորը իր ձեռքովը փայփայելով զայն, այո՛, քա՛ջ է, Արթիւս և քեզնէ գոհ եմ։

Եւ այնպիսի թեթեւութեամբ որով Թագաւորը Եւրոպայի լաւագոյն ձիավարժներէն մին կը հանդիսանար՝ Շարլ ձին աշտանակեց և Աթոսին, Արամիսին ու Վինդրի կողմը դառնալով.

—Լա՛ւ ուրեմն, պարոննե՛ր, ըսաւ ան, ձեզի կ'ըսպասեմ։

Բայց Աթոս կանգուն, անշարժ էր, սեւ գծի մը վրայ աչքերը սեւեռած և ձեռքերը տարածած կը կենար. գիծ մը որ Թայնի եզերքը կ'երկննար և բանակին կրկնապատիկ երկայնութեամբ կը ծաւալէր։

—Ի՞նչ է սա գիծը, ըսաւ Աթոս, որ չէր կրնար զայն որոշակի նշմարել գիշերային յետին մթութիւնն արշալոյսին առաջին նշոյլներուն հետ մաքառելուն։

—Անտարակոյս գետէն ելնող մշուշն է, ըսաւ Թագաւորը։

—Վեհափա՛ռ տէր, շոգիէն աւելի խիստ բան մը կ'երեւայ։

—Արդարեւ՝ կարմրորակ պատնէշի պէս բան մը կը տեսնեմ, ըսաւ Վինդր։

—Նիւգասլէն ելնող թշնամին է և մեզ կը շրջապատէ, գոչեց Աթօս։

—Թշնամի՞ն, ըսաւ Թագաւորը։

—Այո՛, թշնամին։ Շա՛տ ուշ է։ Ահա նայեցէք, արեւուն սա նշոյլին ներքեւ, քաղաքին կողմը, կը տեսնէ՞ք երկաթէ զրահներու շողալը։

Այսպէս կը կոչէին զրահաւորները որով Քրոմվէլ կազմած էր իր գունդը։

—Ա՛հ, ըսաւ Թագաւորը, հիմակ պիտի հասկնանք թէ արդարեւ իմ սկովտիացիներս զիս կը մատնե՞ն։

—Ի՞նչ պիտի ընէք հիմակ, գոչեց Աթօս։

—Հրաման պիտի տամ յարձակելու և անոնց հետ այս թշուառ ապստամբները թաւալգլոր տապալել ու անցնիլ։

Եւ Թագաւորը իր ձին խթելով՝ Լօվէն կոմսին վրանը վազեց։

—Հետեւի՛նք անոր, ըսաւ Աթօս։

—Երթա՛նք, ըսաւ Արամիս։

—Արդեօք Թագաւորը վիրաւորուա՞ծ է, ըսաւ Վինդր՝ գետինը արեան բիծեր կը տեսնեմ։

Եւ երկու բարեկամներուն հետքը բռնեց սրանալով։ Աթօս զինք կեցուց։

—Գնա՛ զօրագունդդ ժողվէ, ըսաւ, կը գուշակեմ որ քիչ ատենէն պէտք ունենանք անկէ։

Վինդր սանձը դարձուց, և երկու բարեկամները իրենց ճամբան շարունակեցին։ Երկու րոպէի մէջ Թագաւորը սկովտիական բանակին սպարապետին վրանը հասաւ. գետին ցատկեց և ներս մտաւ։

Յետոյ պահարանի մը կողմը գնաց ուր իր յատուկ նշանները կային, և Զանկապանի կարգին երկու ժապաւէնները առաւ։

—Այս նշանները չեն կրնար մեզի համար ըլլալ, ըսաւ Աթօս։

—Եւ ինչո՞ւ համար, պարո՛ն, հարցուց Շարլ։

—Այս նշանները գրեթէ արքունական են, մինչդեռ մենք պարզապէս ազատորդիներ ենք։

—Երկրիս բոլոր գահերը աչքէ անցուցէ՛ք, ըսաւ Թագաւորը, և ձերինէն աւելի մեծ հոգիներ գտէք տեսնեմ։ Ո՛չ, ո՛չ, պարոններ, դուք ձեր յարգը չէք ճանչնար, բայց ես անոր պատրաստ եմ արդարապէս վարուելու։ Ծունր դի՛ր, կո՛մս։

Աթօս ծունր դրաւ, Թագաւորը ըստ սովորութեան՝ ձախէն աջ կողմը անցուց ժապաւէնը և սուրը վերցնելով՝ փոխանակ այս սովորական բանաձեւը ըսելու. Քեզ ասպետ կը կարգեմ, քաջ, հաւատարիմ, անկեղծ եղիր, ըսաւ.

—Դուն քաջ, հաւատարիմ և անկեղծ ես, քեզ ասպետ կ'անուանեմ պարոն կոմս։

Ապա Արամիսի կողմը դառնալով.

—Կարգը քուկդ է հիմակ, պարոն ասպետ, ըսաւ։

Եւ միեւնոյն արարողութիւնը նոյն խօսքերով սկսաւ. մինչդեռ Վինդր՝ ձիապաններու օգնութեամբ՝ իր պղնձէ զրահը կը հանէր որպէսզի կարծեն բոլորովին թէ Թագաւորն է։

Յետոյ՝ երբ Շարլ Արամիսին պատուանշանը տուաւ ինչպէս որ Աթօսին տուած էր, երկուքն ալ համբուրեց։

—Վեհափա՛ռ տէր, ըսաւ Վինդր, որ մեծ անձնուիրութեան գործ մը ընելու եռանդովը իր բոլոր ուժը ու արիութիւնը վրան եկեր էր, մենք պատրաստ ենք։

Թագաւորը երեք ազատորդիներուն նայեցաւ։

—Այսպէս ուրեմն պէ՞տք է փախչիլ, հարցուց։

—Բանակի մը մէջէն փախչիլը, Վեհափա՛ռ տէր, պատասխանեց Աթօս, կռուիլ ըսել է երկրիս ամէն կողմը։

—Ուրեմն սուր ի ձեռին պիտի մեռնիմ, ըսաւ Շարլ։ Պարո՛ն կոմս, պարո՛ն ասպետ, եթէ երբեք թագաւորեմ...։

—Վեհափա՛ռ տէ՛ր, մեզի պէս պարզ ազատորդիներու արժանի եղածէն աւելի պատուեցիք արդէն. այսպէս երախտագիտութիւնը մեր կողմէն է։ Բայց ժամանակ չկորսնցնենք. վասնզի արդէն շատ ատեն կորսնցուցինք։

Թագաւորը վերջին անգամ մը եւս իր աջը երկնցուց երեքին ալ, իր գլխարկը Վինթըրի գլխարկին հետ փոխանակեց և դուրս ելաւ։

Լորտ Վինթըրի զօրագունդը բանակին նայող սարահարթի մը վրայ շարուած էր. Թագաւորը երեք բարեկամները ետին ձգած՝ նոյն սարահարթին կողմը դիմեց։

Վերջապէս՝ սկովտիական բանակը կարծես թէ կ՚արթըննար. զինուորները իրենց վրաններէն ելեր և կարգի մտեր էին որպէս թէ ճակատամարտի կը պատրաստուէին։

—Կը նայի՞ք, ըսաւ թագաւորը, կարելի է կը զղջան և յարձակելու պատրաստ են։

—Եթէ կը զղջան, Վեհափա՛ռ, պատասխանեց Աթոս, մեզի պիտի հետեւին։

—Լա՛ւ, ըսաւ թագաւորը, ի՞նչ պիտի ընենք։

—Թշնամի բանակը քննենք, ըսաւ Աթոս։

Փոքր գունդին աչքերը իսկոյն սեւեռեցան այն գծին վրայ որ արշալոյսի մշուշին տեղ բռներ էր, և որ արեւուն առաջին ճառագայթներէն այժմ երեւան կ՚ելլէր և կը տեսնուէր որ ճակատամարտի համար շարուած զօրքեր են։ Օդը յստակ և վճիտ էր ինչպէս որ սովորաբար առաւօտեան նոյն ժամուն։ Որոշակի կ՚երեւէին գումարտակները, դրօշակները և մինչեւ անգամ համազգեստներու և ձիերու գոյները։

Այն ատեն բլրակի մը վրայ, թշնամիին ճակատէն քիչ մը հեռու տեսան՝ փոքրիկ, գէր և ծանրաշարժ մարդ մը, այս մարդուն բոլորտիքը քանի մը սպաներ կեցեր էին։ Այս մարդը դիտակով փոքրիկ խումբին կը նայէր։

—Այս մարդը անձնապէս Ձեր Վեհափառութիւնը կը ճանչնա՞յ, հարցուց Արամիս։

Շարլ ժպտեցաւ։

—Այս մարդը Գրոմվէլն է, ըսաւ։

—Ուրեմն գլխարկդ վար իջեցուր, Վեհափա՛ռ տէր, որպէսզի ծպտեալ ըլլալդ չհասկնայ։

—Ա՛հ, ըսաւ Աթոս, շատ ժամանակ կորսնցուցինք։

—Ուրեմն, ըսաւ թագաւորը, հրաման տուէք և մեկնինք։

—Միթէ դուք չէ՞ք տար հրամանը, Վեհափա՛ռ տէր, հարցուց Աթոս։

—Ո՛չ, իմ տեղակալ զօրապետս կ՚անուանեմ քեզ, ըսաւ թագաւորը։

—Ուրեմն մտիկ ըրէ, լորտ Վինթըր, ըսաւ Աթոս։ Հեռացէք դուք, Վեհափա՛ռ տէր, կ՚աղաչեմ, մեր ըսելիքը Ձեր Վեհափառութեան չվերաբերիր։

Թագաւորը երեք քայլ ետ գնաց ժպտելով։

—Ահաւասիկ առաջարկելիքս, շարունակեց Աթոս։ Մեր գունդը երկու գումարտակ կը բաժնենք. դուն առաջինին գլուխը, Նորին Վեհափառութիւնը ու մենք երկրորդին գլուխը կ՚անցնինք, եթէ մեր ճամբան գոցող չըլլայ. ամենքնիս միասին կը յարձակինք թշնամիին բանակը քակելու և Թայն գետը նետուելու, որմէ լողալով կ՚անցնինք. իսկ եթէ ընդհակառակը, մեր առջեւ խոչընդոտ մը հանեն, դուն և քու յետին զինուորդ մինչեւ մահ կը կռուիք, մենք և թագաւորը մեր ճամբան կը շարունակենք։ Երբ անգամ մը գետեզերք հասնինք, և եթէ քու գումարտակդ իր պարտքը կատարէ, մնացածը մենք գլուխ կը հանենք։

—Աշտանակե՛նք, ըսաւ Վինթըր։

—Աշտանակե՛նք, ըսաւ Աթոս, ամէն ինչ գուշակուած և որոշուած է։

—Ուրեմն, պարոննե՛ր, ըսաւ թագաւորը, ընդա՛ռաջ և Ֆրանսայի հին պատերազմի ձայնը արձակենք. Մօնժուա և Սէն-Տընի։ Այժմ Անգլիոյ աղաղակը շատ մատնիչներ կը կրկնեն։

Ձիերը հեծան, Թագաւորը լորտ Վինտրի երիվարը, լորտ Վինտր Թագաւորին երիվարը աշտանակեց․ յետոյ Վինտր առաջին գումարտակին առաջին կարգը անցաւ, և Թագաւորը՝ որուն աջ կողմը Աթօս և ձախ կողմը Արամիս կեցեր էին, երկրորդին գլուխը անցաւ։

Բոլոր սկովտիական բանակը այս պատրաստութիւնները կը տեսնէր ամօթապարտութեան անշարժութեամբ և լռութեամբը։

Քանի մը գլխաւոր սպաներ կարգերէն դուրս ելան և իրենց սուրերը խորտակեցին, ինչպէս որ տեսնուեցաւ։

—Օ՛ն, ըսաւ Թագաւորը, սուղ քիչ մը կ՚սփոփիմ, ամէնքը մատնիչ չեն։

Ու նոյն պահուն լորտ Վինտրի ձայնը թնդաց։

—Ընդառա՛ջ, կը գոչէր ան։

Առաջին գումարտակը դղրդեցաւ, երկրորդն ալ անոր հետեւելով սարահարթէն վար իջաւ։ Գրեթէ հաւասար զօրութեամբ զրահաւորաց գունդ մը բլուրին ետեւէն կ՚երեւէր և անոր դէմ կը վազէր սանձարձակ:

Թագաւորը Աթօսին և Արամիսին ցուցուց անցած դարձածը։

—Վեհափա՛ռ, ըսաւ Աթօս, այս պարագան արդէն գուշակած ենք, և եթէ լորտ Վինտրի զինուորներն իրենց պարտքը կատարեն, այս դէպքը՝ փոխանակ մեզ կորսնցնելու պիտի ազատէ։

Նոյն պահուն սրարշաւ և վրնջելով եկող ձիերուն դղրդիւնէն բարձր կը լսուէր լորտ Վինտրի ձայնը որ կը գոչէր՝

—Սո՛ւր ի ձեռին։

Այս հրամանին վրայ՝ բոլոր սուրերը պատեաններէն ելան և փայլակներու պէս երեւցան։

—Օ՛ն, պարոններ, գոչեց Թագաւորը ըստ կարգի, աղմուկէն և տեսարանէն արբշիռ, օ՛ն, պարոններ, սո՛ւր ի ձեռին։

Բայց այս հրամանին՝ որուն օրինակը նոյնինքն Թագաւորը տուաւ, Աթօս և Արամիս միայն հնազանդեցան։

մարտը մտեր էր, և ծառաներուն պատրաստած ձիերուն վրայ հեծնելով, երեքնին ալ սրարշաւ արքայական վրանին ճամբան բռնեցին։

Անցնելու ատեն՝ Վինտրը տեսան որ իր զօրագունդին գլուխը անցած կը վազէր։ Թագաւորը նշան ըրաւ անոր որ իրեն հետեւի։

ԺԲ․

ՎՐԷԺԽՆԴԻՐ

Զօրքը միասին վրանը մտան․ պատրաստ յատակագիծ մը չկար․ պէտք էր հատ մը յօրինել։

Թագաւորը թիկնաթոռի մը վրայ թոյլօրէն ինկաւ։

—Կորա՛յ, ըսաւ ան։

—Ո՛չ Վեհափառ, պատասխանեց Աթօս, միայն մատնուած էք։

—Մատնուեցա՛յ, մատնուեցա՛յ, սկովտացիներու կողմէ, որոնց մէջ ծնած եմ, և զորս անգլիացիներէն միշտ նախադաս համարած եմ։ Ո՛հ, թշուառնե՛րը։

—Վեհափա՛ռ, ըսաւ Աթօս, մեղադրանաց ժամ չէ, այլ ժամ է ձեզ ցոյց տալ որ Թագաւոր էք և ազատորդի կանգնեցէք, Վեհափա՛ռ տէր, կանգնեցէ՛ք, վասնզի գէթ այստեղ երեք մարդիկ ունիք որ ձեզ չպիտի մատնեն և այս մասին կրնաք հանգիստ ըլլալ։ Ա՛հ, եթէ երբէք հինգ հոգի ըլլայինք, մրմռաց Աթօս տ՚Արդանեանի և Բօրթօսի վրայ մտածելով։

—Ինչ կ՚ըսես, հարցուց Շարլ ոտքի ելնելով։

—Կ՚ըսեմ, Վեհափա՛ռ տէր, որ միջոց մը միայն կայ։ Լորտ Վինտր իր զօրագունդին համար պատասխանատու կը մնայ կամ ասոր մօտ բան մը, բուռեր չի խծբծենք, իր զօ-

բաց գլուխը կ'անցնի, մենք ալ Ձեր Վեհափառութեան երկու կողմը կ'անցնինք, Քրոմվէլի բանակը կը ճեղքենք և Սկովտիա ոտք կը կոխենք։

—Դեռ հնար մըն ալ կայ, ըսաւ Արամիս, այս է թէ մեզնէ մէկը Թագաւորին հագուստ ու ձին առնէ. մինչդեռ այս ծպտեալին ետեւէն պիտի պնդեն անդուլ, թերևս Թագաւորը անվտանգ անցնի երթայ։

—Լա՛ւ է այս խորհուրդը, ըսաւ Աթոս և եթէ Նորին Վեհափառութիւնը մեզմէ մէկուն այս պատիւը ընելու հաճի, անոր երախտագէտ պիտի մնանք։

—Այս խորհուրդին վրայ ի՞նչ է կարծիքդ, Վինտր, ըսաւ Թագաւորը այս երկու մարդոց հիացմամբ նայելով. որոնց միակ հոգն էր իրենց գլխուն վրայ ամփոփել իրենց սպառնացող վտանգները։

—Վեհափա՛ռ տէր, կը խորհիմ որ եթէ հնար մը կայ ձեզ ազատելու՝ այս հնարն է Պ. Հէրպլէյի առաջարկածը։ Ուստի խոնարհաբար կ'աղերսեմ Ձեր Վեհափառութեան որ իսկոյն ընելիքը որոշէ, վասնզի ժամանակը շատ սուղ է։

—Բայց եթէ ընդունիմ, իմ տեղս բռնողը մահ կամ գէթ բանտ պիտի գտնէ։

—Իր Թագաւորը ազատելու պատիւն պիտի չունի՞, գոչեց Վինտր։

Թագաւորը իր վաղեմի բարեկամին նայեցաւ արտասուալի աչքերով, Հոգին-Սրբոյ շքանշանին ժապաւէնը քակեց, զոր իրեն ընկերացող երկու գաղղիացւոց ի պատիւ կը կրէր, և լորտ Վինտրի վիզէն անցուց, որ ծունկի վրայ եկած ընդունեց իր վեհապետին վստահութեան և բարեկամութեան այս սոսկալի նշանը։

—Արդա՛ր է, ըսաւ Աթոս, մեզնէ շատ աւելի առաջ կը ծառայէ ան։

Թագաւորը լսեց այս խօսքը ու լալագին դարձաւ։

—Պարո՛ններ, ըսաւ, պահ մը սպասեցէ՛ք, ժապաւէն մը ունիմ դեռ եւս ձենէ իւրաքանչիւրին տալու։

—Մատնուեցա՛նք. ըսաւ Թագաւորը կամացուկ մը։

Տակաւին սպասենք, ըսաւ Աթոս, կարելի է Ձեր Վեհափառութեան ձայնը չհասկցան, կը սպասէին որ իրենց գումարտակին հրամանատարը հրաման տայ։

—Մի՞թէ իրենց հազարապետին հրամանը չլսեցի՞ն։ Բայց նայեցէ՛ք, նայեցէ՛ք, գոչեց Թագաւորը իր ձին հեծնելով ցնցումի մը պատճառաւ որ զանիկա ծունկերուն վրայ կքեցուց, և Աթոսի ձիուն սանձէն բռնելով։

—Ա՛հ, վատե՛ր, ա՛հ, թշուառնե՛ր, ա՛հ, մատնիչնե՛ր. կը գոչէր լորտ Վինտր, որուն ձայնը կը լսուէր, մինչդեռ իր մարդիկը՝ իրենց կարգերէն ելնելով՝ դաշտին մէջ կը ցրուէին։

Տասնը հինգ հոգիի չափ միայն իր բոլորտիքը գումարուեր էին և Քրոմվէլի զրահաւորներուն յարձակման կը սպասէին։

—Երթա՛նք անոնց հետ մեռնելու, ըսաւ Թագաւորը։

—Երթա՛նք մեռնելու, ըսին Աթոս և Արամիս։

—Թո՛ղ ինծի գան ամէն հաւատարիմ սիրտերը, պոռաց լորտ Վինտր։

Այս ձայնը հասաւ մինչև երկու բարեկամաց ականջը և սրարշաւ մեկնեցան։

—Մի՛ խնայէք. գոչեց գաղղիերէն լեզուաւ, և պատասխանելով լորտ Վինտրի ձայնին, ձայն մը որ իրենց սարսուռ տուաւ։

Իսկ Վինտրի գալով՝ երբ այս ձայնին հնչիւնը լսեց գունատ և քար կտրած մնաց։

Այս ձայնը ձիաւորի մըն էր, որ փառաւոր սև նժոյգ մը հեծեր էր և անգլիական գունդին գլուխը անցած ընդառաջ կը խիզախէր և սաստիկ եռանդէն անկից տասը քայլ առաջ անցեր էր։

—Նոյն ինքն է, մրմռաց լորտ Վինտր ակնապիշ և իր սուրը քովնտի կախուած թողլով։

—Թագաւո՛րը, Թագաւո՛րը, գոչեցին շատ մը ձայներ լորտ Վինտրի կապոյտ ժապաւէնէն և դեղին աշխէտ ձիէն խաբուելով, կենդանի բռնեցէ՛ք զանիկա։

— Ո՛չ, թագաւորը չէ այս, գոչեց ձիաւորը, մի՛ խաբուիք, Լորտ Վինդր, միթէ ստոյգ չէ՞ որ դուն թագաւորը չես, միթէ դուն իմ հօրեղբայրս չե՞ս։

Եւ նոյն միջոցին, Մորտոնդ, վասնզի նոյնինքն էր, հրացանակի մը փողը լորտ Վինդրի դէմ ուղղեց։ Հրացանակը թնդաց, և գնդակը ազատորդիին լանջէն անցաւ, որ իր թամբին վրայ ոստում մը ըրաւ և Աթոսի թեւերուն մէջ ինկաւ մրմռալով.

— Վրէժխնդի՛րը։

— Ցի՛շէ իմ մայրս, ռռնաց Մորտոնդ և առաջ քշեց իր ձիուն զայրագին արշաւէն մղուելով։

— Թշուա՛ռ դուն, գոչեց Արամիս անոր վրայ գրեթէ մօտուստ հրացանը պարպելով մինչդեռ իր քովէն կ'անցնէր, բայց խանձը միայն վառեցաւ և կրակ չառաւ։

Նոյն պահուն բոլոր գունդը քանի մը դիմակալ մարդոց վրայ ինկան, և երկու գաղղիացիքը շրջապատեցին, բոլորեցին և սեղմեցին։ Աթոս, ստուգելով որ լորտ Վինդր մեռած է դիակը վար նետեց և իր սուրը քաշելով.

— Օ՛ն, Արամիս, ի պատիւ Ֆրանսայի։

Եւ երկու անգլիացիք որ երկու ազատորդիներուն մօտ կը գտնուէին կարեվէր զարնուելով ինկան։

Նոյն պահուն սոսկալի ցնծութեան աղաղակ մը բրթաւ և երեսուն սուր իրենց գլխուն վերեւը շողացին։

Յանկարծ անգլիական զօրաց կարգէն մարդ մը կը սրանայ, առջեւը եղողը կը տապալէ, Աթոսի վրայ կը վազէ, իր ջղուտ թեւերով անոր կը փաթթուի, և սուրը ձեռքէն կը կորզէ ականջին ըսելով.

— Լռութի՛ւն, անձնատո՛ւր եղիր։ Ինծի անձնատուր ըլլալդ, անձնատուր ըլլալ չէ։

Հսկայ մըն ալ Արամիսի երկու դաստակները բռնեց՝ որ զուր տեղը անոր ուժեղ ձեռքէն ազատելու կը ջանար։

— Անձնատո՛ւր եղիր, ըսաւ ակնապիշ նայելով։

Արամիս գլուխը կը վերցնէ, Աթոս մէկդի կը դառնայ։

— Տ'Արդ... գոչեց Աթոս, որուն բերանը գոցեց Կասքօնը իր ձեռքովը։

— Անձնատուր կ'ըլլամ, ըսաւ Արամիս իր սուրը Բօրթօսին տալով։

— Կրա՛կ, կրա՛կ, կը պոռար Մորտոնդ, դառնալով դէպի ամբոխը ուր երկու բարեկամները կը գտնուէին։

— Եւ ի՞նչ հարկ կայ կրակ ընել, ըսաւ հազարապետը, ամէնքն ալ անձնատուր եղան։

— Միլէտիին որդին է, ըսաւ Աթոս տ'Արդանեանի։

— Կը ճանչնամ։

— Կրօնաւորն է, ըսաւ Բօրթօս Արամիսին։

— Գիտեմ։

Նոյն պահուն զօրաց կարգերը սկսան բացուիլ։ Տ'Արդանեան Աթոսի ձիուն սանձը բռներ էր, իսկ Բօրթօս Արամիսինը։ Ամէն մէկը իր գերին պատերազմի դաշտէն դուրս հանելու կ'աշխատէր։

Այս շարժումը երեւան հանեց այն տեղը ուր լորտ Վինդրի մարմինը ինկեր էր։ Ատելութեան բնազդումով Մորտոնդ զանիկա գտեր էր և ձիուն վրայ ծռած կը նայէր անոր քստմնելի ժպիտով մը։

Աթոս՝ թէև հանդարտ՝ իր թամբին խորշերուն տարաւ ձեռքը ու դեռ ևս հրացանակները կային։

— Ի՞նչ կ'ընես, ըսաւ տ'Արդանեան։

— Թո՛ղ որ զանիկա սպաննեմ։

— Եւ ո՛չ իսկ շարժում մը ըրէ որ չհասկցուի թէ զանիկա կը ճանչնաս, թէ ոչ չորսերնիս ալ կորսուած ենք։

Ցետոյ երիտասարդին կողմը դառնալով.

— Աղուո՛ր կողոպուտ, գոչեց, աղուո՛ր կողոպուտ, Մորտոնդ բարեկամ, Պ. Վալլօն և ես մեր աւարը ունինք. Զանկապանի ասպետներ են, և այլ ոչինչ։

— Բայց գոչեց Մորտոնդ Աթոսին և Արամիսին նայելով արիւնոտ աչքերով, բայց ասոնք գաղղիացիներ են, կարծեմ։

— Ճշմարիտը չեմ գիտեր. գաղղիացի՞ ես, պարոն, հարցուց Աթոսին։

—Գողղիացի եմ, պատասխանեց ծանրաբար Աթոս։

—Լա՛ւ ուրեմն, իմ սիրելի պարոնս, անաւասիկ հայրենակցի մը կալանաւորն ես։

—Հապա Թագաւո՞րը, ըսաւ Աթոս անձկութեամբ, հապա Թագաւո՞րը։

Տ'Արդանեան ուժգին սեղմեց իր կալանաւորին ձեռքը և անոր ըսաւ.

—Է՜հ, Թագաւորը մեր ձեռքն է։

—Այո՛, ըսաւ Արամիս, վատանուն մատնութեամբ մը։

Փորթոս իր բարեկամին դաստակը ճզմեց և ժպտելով ըսաւ անոր.

—Է՜հ, պարոն, թէ հնարագիտութեամբ և թէ զօրութեամբ կը մղուի միշտ պատերազմ ըսուածը. նայէ՛։

Արդարև՝ նոյն պահուն տեսնուեցաւ Շարլի նահանջը պաշտպանելու պաշտօն ունեցող գումարտակը որ անգլիական գունդը դիմաւորելու կը յառաջանար։ Այս գումարտակը Թագաւորին չորս կողմը առաւ, որ միայնակ կը քալէր հեռաւոր պարապ մեծ միջոցի մը մէջ։ Առ երևոյթս իշխանը հանդարտ կ'երևէր, բայց հանդարտ երևելու համար քաշած նեղութիւնը կը տեսնուէր, այսպէս քրտինքը իր ճակատէն կը հոսէր և քունքը ու շուրթը կը սրբէր թաշկինակով մը որ ամէն անգամուն իր արիւնաներկ բերնէն կը հեռանար։

—Ահա՛ Նաբուգոդոնոսոր, գոչեց Քրոմվէլի զրահաւորաց մին, ծեր մաքրակրօն մը, որուն աչքերը բոցոքեցան այն անձին տեսքէն, զոր բռնաւոր կը կոչէին։

—Ի՞նչ Նաբուգոդոնոսոր կ'ըսես, գոչեց Մորտօնդ, սոսկալի ժպիտով մը։ Ո՛չ, Շարլ Ա. Թագաւորն է որ իր հպատակները կը կողոպտէ ժառանգելու համար։

Շարլ այսպէս լրբօրէն խօսող մարդուն վրայ ուղղեց իր աչքը, բայց զանիկա չճանչցաւ։ Սակայն իր դէմքին անդորր ու կրօնական վեհափառութիւնը Մորտօնդի աչքը վար իջեցուց։

—Բարի լո՛յս, պարոննե՛ր, ըսաւ Թագաւորը երկու ազա-

տորդիներուն, զոր տեսաւ, մին տ'Արդանեանի ձեռքը, միւսը Բօրթօսի։ Օրը աղետալի դարձաւ, բայց յանցանքը ձերը չէ, փա՛ռք Աստուծոյ։ Ո՞ւր է իմ ծերունի լորտ Վինդրս։

Երկու ազատորդիները իրենց գլուխը դարձուցին և լուռ կեցան։

—Փնտռէ՛, ո՛ւր է Սդաֆֆորտ, ըսաւ Մորտօնդի կծու ձայնը։

Շարլ սարսուռ մը զգաց. սատանան ուղիղ կողմը զարկեր էր։ Սթաֆֆորտ Թագաւորին մշտատև խղճի խայթն էր, իր օրերուն ստուերն էր, իր գիշերներուն ուրուականն էր։

Թագաւորը իր բոլորտիքը նայեցաւ և իր ոտքերուն մօտ դիակ մը տեսաւ. լորտ Վինդրի դիակն էր այս։

Շարլ աղաղակ մը չհանեց, արտօսր մը չթափեց. միայն աւելի կապտագոյն դեղնութիւն մը իր երեսը պատեց. մէկ ոտքը ծունր դրաւ, Վինդրի գլուխը վերցուց, ճակտէն պագաւ, և անոր վիզէն կախած Սուրբ Հոգւոյ շքանշանը առնելով՝ ջերմեռանդութեամբ իր կուրծքին վրայ դրաւ։

—Ուրեմն լորտ Վինդր մեռա՞ծ է, հարցուց տ'Արդանեան իր աչքերը դիակին վրայ յառելով:

—Այո՛, ըսաւ Աթոս, և իր եղբօրորդւոյն ձեռքով։

—Օ՜հ. մեզմէ առաջինն է այս մեռնողը, մրմռաց տ'Արդանեան, թո՛ղ ննջէ ի խաղաղութիւն, քաջ մըն է ան։

—Շա՛րլ Ստուարտ, ըսաւ այն ատեն անգլիական գունդին հազարապետը Թագաւորին կողմը յառաջանալով, որ նոր առեր էր արքայական նշանները, միթէ մեր գերին ըլլալու պիտի հաճի՞ք։

—Թօմլինսո՛ն հազարապետ, ըսաւ Շարլ, Թագաւորը երբեք անձնատուր չըլլար. մարդ բռնութեան կը հպատակի և ոչ այլ ինչ։

—Սո՛ւրդ։

Թագաւորը իր սուրը քաշեց և իր ծնկաց վրայ խորտակեց։

Նոյն պահուն առանց ձիաւորի երիվար մը՝ փրփրալի,

աչքերը հրաբորբոք, ունգունքը բաց՝ վազեց և իր տէրը ճանչնալով՝ անոր մօտ կեցաւ ուրախութենէն մռնչելով. Արթիւսն էր այս։

Թագաւորը ժպտեցաւ, ձեռքերովը գգուեց և թեթև մը աշտանակեց:

—Օ՛ն, պարոններ, ըսաւ ան, զիս ձեր ուզած տեղը տարէք։

Ցեստոյ՝ աշխուժիւ դառնալով.

—Կեցէ՛ք, ըսաւ, ինծ այնպէս երեւցաւ որ լորտ Վինթր կը շարժի. եթէ տակաւին կ'ապրի, յանո՛ւն ձեր ամէնէն նուիրական բանին, այս ազնիւ ազատորդին մի՛ թողուք:

—Ո՛հ, անհոգ եղիք, Շա՛րլ Թագաւոր, ըսաւ Մորտոնդ, գնդակը սրտէն անցաւ։

—Ձայն մը մի՛ հանէք, շարժում մը մի՛ ընէք, ո՛չ ինծի և ոչ Բորթոսին բնաւ չակնարկէք, ըսաւ տ'Արգանեան Աթոսին և Արամիսին, վասնզի Միլէտի մեռած չէ, և անոր ոգին այս սատանային մարմնին մէջ կ'ապրի։

Եւ վաշտակը դէպի քաղաքը դիմեց՝ իր արքայական կողոպուտը իր հետը տանելով. բայց կէս ճամբան հասեր էին, երբ Քրոմվէլ զօրապետին կողմէ եկող թեկնապահ մը հրաման բերաւ որ Թագաւորը Հօլտէնպայ բերդը տանին։

Նոյն պահուն ամէն կողմէ սուրհանդակներ ելեր էին Անգլիոյ և բոլոր Եւրոպայի իմացնելու թէ Շարլ Ստուարտ Թագաւորը Օլիվիէ Քրոմվէլ զօրապետին գերին է։

Սկովտիացիները այս ամէն բաները կը տեսնէին հրացանը ուսերնուն վրայ և դաշոյնը պատեաննին։

ԺԳ.

ՕԼԻՎԻԷ ՔՐՕՄՎԷԼ

—Միթէ զօրապետին քովը պիտի երթա՞ք, ըսաւ Մորտոնդ տ'Արդանեանի և Բորթոսի, գիտէք որ կռուէն ետք իրեն ներկայանալու համար ձիդի մարդ ղրկեց։

—Նախ երթանք պիտի մեր գերիները ապահով վայր մը ձգել, ըսաւ տ'Արդանեան Մորտոնդի։ Գիտէ՞ք արդեօք պարոն, որ այս ազատորդիներէ իւրաքանչիւրը հազար ոսկի կ'արժեն։

—Ո՛հ անհոգ եղիք, ըսաւ Մորտոնդ նայելով անոնց աչքով մը, որուն վայրագութիւնն ընդունայն մեղմելու կը ջանար, իմ ձիաւորներս զանոնք պիտի պահպանեն, և լաւ պիտի պահպանեն. այդ մասին ես ձեզ կ'ապահովեմ։

—Ես աւելի լաւ կրնամ պահել, վրայ բերաւ տ'Արդանեան, այլ սակայն ի՞նչ պէտք է. աղուոր խուց մը պահակներով, կամ իրենց խօսքը միայն թէ չպիտի աշխատին խոյս տալու։ Ես այս բանս կարգի դնելու պիտի երթամ և ապա զօրապետին ներկայանալու և Նորին Բարձրութեան Կարտինալին ուղղելիք հրամանները խնդրելու պատիւ պիտի ունենանք։

—Ուրեմն շուտով դառնալու մի՞տք ունիք, հարցուց Մորտոնդ։

—Մեր դեսպանութիւնը աւարտած է և Անգլիա մնալու գործ մը չունինք, բայց եթէ այն մեծ մարդուն փափաքին համեմատ չարժիլ որուն իբրև դեսպան ղրկուած ենք։

Երիտասարդն իր շրթերը խածաւ և յենապետին ականջին ծռելով,

—Այս մարդոց ետեւէն գնա՛, ըսաւ անոր և աչքէ մի՛ հեռացներ. երբ անոնց բնակած վայրը իմանաս, եկո՛ւր քաղաքին դուռը ինծի սպասէ։

Յիսնապետը նշան ըրաւ որ ըսածները պիտի կատարէ։

Այն ատեն՝ Մորտօնդ՝ փոխանակ գերիներուն խումբին ետեւէն երթալու, զոր դէպի քաղաքը կը տանէին, այն բլրին կողմը դիմեց ուսկից Բրոմվէլ ճակատամարտին հանդիսատես եղեր եւ նոյն վայրին իր վրանը կանգնել տուեր էր։

Բրոմվէլ պատուիրեր էր որ քովը մարդ չթողուն գալու. բայց պահնորդը՝ որ գիտեր թէ Մորտօնդ՝ զօրապետին ամէնէն սրտակիցներէն մին էր, մտածեց որ այն պատուէրը երիտասարդին համար չէր։

Ուստի Մորտօնդ վրանին կտաւը վերցուց և տեսաւ որ Բրոմվէլ սեղանի մը առջեւ նստեր էր, գլուխը իր երկու ձեռաց մէջ ամփոփած, և ասկէ զատ կռնակը իրեն դարձուցած էր։

Մորտօնդ դրան մօտ կանգնած կեցաւ։

Վերջապէս քանի մը վայրկեանէն յետոյ՝ Բրոմվէլ իր ծանրացած գլուխը վերցուց, և բնազդմամբ զգալով թէ մէկը այնտեղ կը գտնուէր, գլուխը ծանրօրէն դարձուց։

—Ըսեր էի որ մինակ մնալ կ'ուզեմ, գոչեց ան երիտասարդը տեսնելով։

—Կարծեցի թէ այդ պատուէրը ինծի համար չէ, պարոն, ըսաւ Մորտօնդ, սակայն եթէ հրաման կ'ընէք, դուրս ելնելու պատրաստ եմ։

—Ա՛հ, դո՞ւն ես, Մորտօնդ, ըսաւ Բրոմվէլ՝ իբր իր կամքին զօրութեամբ իր աչքերուն վրայ իջած մառայը փարատելով, քանի որ եկեր ես, լա՛ւ, կեցի՛ր։

—Իմ շնորհաւորութիւններս կը բերեմ ձեզի։

—Ի՞նչ բանի համար են շնորհաւորութիւններդ։

—Շարլ Ստուարտի ձերբակալութեան վրայ։ Այժմ Անգլիոյ տէրն ես։

—Երկու ժամ առաջ՝ աւելի տէրն էի անոր քան թէ հիմակ, ըսաւ Բրոմվէլ։

—Ի՞նչպէս, զօրապետ։

—Անգլիա պէտք ունէր ինձմէ բռնաւորը բռնելու համար, հիմակ բռնաւորը ձեռք ինկաւ։ Միթէ տեսա՞ր զանիկա։

—Այո՛, պարոն, ըսաւ Մորտօնդ։

—Ի՞նչ կերպարանք ունի։

Մորտօնդ վարանեցաւ, բայց կարծես թէ ճշմարտութիւնը բռնութեամբ դուրս կ'ելնէր իր շրթներէն։

—Հանդարտ և արժանաւոր ըսաւ ան:

—Ի՞նչ ըսաւ։

—Իր բարեկամներուն հրաժարական բարեւ տալով քանի մը խօսք ըսաւ։

—Իր բարեկամներո՛ւն, մրմռաց Բրոմվէլ։ Ուրեմն բարեկամնե՞ր ունի՞ ան:

Յետոյ բարձր ձայնով յարեց.

—Միթէ պաշտպաններ ունէ՞ր։

—Ո՛չ, պարոն, ամէն կողմէ զինք երեսի վրայ ձգեցին, բացի երեք կամ չորս մարդերէ. ուստի ինքզինքը պաշտպանելու հնար չկար։

—Իր սուրը ո՞ւր յանձնեց։

—Չի յանձնեց, այլ խորտակեց զայն։

—Շա՛տ աղէկ ըրաւ. բայց զայն խորտակելու տեղ՝ աւելի լաւ կ'ընէր եթէ յաջողութեամբ գործածէր:

Պահ մը լռութիւն տիրեց։

– Գունդին հազարապետը որ թագաւորին՝ Շարլի ուղեկից էր, կարծեմ թէ սպաննուեցաւ, ըսաւ Բրոմվէլ Մորտօնին նայելով անթարթ։

—Այո՛, պարոն։

—Ո՞վ սպաննեց զանիկա, հարցուց Բրոմվէլ։

—Ե՛ս։

—Ի՞նչ էր անունը։

—Լորտ Վինդր։

—Հօրեղբա՞յրդ, գոչեց Բրոմվէլ:

—Իմ հօրեղբա՛յրս, աւելցուց Մորտօնդ, Անգլիոյ մատնիչներն իմ ընտանիքէս չեն բնաւ։

Բրոմվէլ պահ մը մտածեց՝ այս երիտասարդին նայելով,

յետոյ այն խորին մելամաղձութեամբ զոր Շէքսփիր այնքան լաւ կը նկարագրէ։

—Մորտօ՛նդ, ըսաւ անոր, դուն սոսկալի սպասաւոր մըն ես։

—Երբ Տէրը կը հրամայէ, ըսաւ Մորտօնդ, պէտք չէ իր հրամանները խծբծել։ Աբրահամ Իսահակին վրայ դանակը վերցուց և Իսահակ իր որդին էր։

—Այո՛, ըսաւ Քրոմվէլ, բայց Տէրը չթողուց որ այս զոհը կատարուի։

—Իմ չորս կողմս նայեցայ, ըսաւ Մորտօնդ, և ո՛չ նոխազ, ոչ ալ տեսայ դաշտին թփերուն մէջ։

Քրոմվէլ գլուխը ծռեց։

—Հզօրներուն մէջ հզօր ես, Մորտօ՛նդ, ըսաւ անոր։ Իսկ գաղղիացիք ի՞նչպէս վարուեցան։

—Քաջասիրտ մարդոց պէս, պարոն, ըսաւ Մորտօնդ։

—Այո՛, այո՛, մրմռաց Քրոմվէլ, գաղղիացիք լաւ կը պատերազմին. և արդարև, եթէ իմ դիտակս լաւ է, կ'երևի ինծ որ զօրքերուն գլուխը տեսայ զանոնք։

—Այո՛, առաջին կարգն էին, ըսաւ Մորտօնդ։

—Սակայն քեզմէ ետք, ըսաւ Քրոմվէլ։

—Իրենց ձիերուն էր յանցանքը և չէ թէ իրենցը։

Եւ նորէն պահ մը լռութիւն տիրեց։

—Հապա սկովտիացի՞ք, հարցուց Քրոմվէլ։

—Իրենց խոստումը պահեցին, ըսաւ Մորտօնդ և իրենց տեղէն չշարժեցան։

—Թշուառնե՛րը, մրմռաց Քրոմվէլ։

—Իրենց սպաները ձեզ տեսնել կ'ուզեն, պարո՛ն։

—Ժամանակ չունիմ. մինթէ իրենց թոշակը չվճարուեցի՞ն։

—Այս գիշեր։

—Ուրեմն թո՛ղ մեկնին, թող իրենց լեռները դառնան, թո՛ղ իրենց ամօթը այն տեղ պահեն, եթէ իրենց լեռները բաւական բարձր են անոր համար. այլ ևս գործ չունիմ իրենց հետ, և ոչ իրենք ինծի հետ։ Հիմակ ա՛լ գնա՛, Մորտօնդ։

—Երթալէ առաջ, ըսաւ Մորտօնդ, ձեզի քանի մը հարցումներ ունիմ ուղղելու, պարոն, և խնդիր մը առաջարկելու, տէր իմ։

—Ինծի՞։

Մորտօնդ խոնարհեցաւ։

—Ձեզի կը դիմեմ, իմ դիւցազնս, իմ պաշտպանս, իմ հայրս, և կ'ըսեմ. Տէ՛ր իմ, ինծմէ գո՞հ էք։

Քրոմվէլ անոր նայեցաւ զարմանօք։

Երիտասարդը անդրդուելի մնաց։

—Այո՛, ըսաւ Քրոմվէլ, քեզ ճանչնալէս ի վեր, ո՛չ միայն պարտքդ կատարեցիր, այլ և պարտքէդ աւելի. հաւատարիմ բարեկամ, ճարպիկ բանակցող եւ լաւ զինուոր եղար։

—Մինթէ կը յիշէ՞ք, պարոն, որ իրենց թագաւորը թողելու մասին՝ սկովտիացւոց հետ բանակցելու գաղափարը ես տուի։

—Այո՛. դուն տուիր ինծ այդ խորհուրդը, իրաւ է. տակաւին այդ աստիճան չէի արհամարհեր մարդիկը։

—Մինթէ Գրանսայի մէջ դեսպանական պաշտօնս լաւ կատարեցի՞։

—Այո՛, և Մազարէնէն ստացայ փափաքածդ։

—Մինթէ ձեր փառաց և շահուց համար միշտ եռանդագին պատերազմե՞ր եմ։

—Թերևս չափէն աւելի եռանդով, ինչպէս որ քիչ մը առաջ այս մասին կը մեղադրէի քեզ։ Բայց բոլոր այս հարցումները ընելով ի՞նչ է նպատակդ։

—Միլո՛րտ, աս միայն ըսելու համար որ իմ բոլոր ծառայութիւններս խօսքով մը միայն վարձատրելու ժամը հասած է։

—Ա՛հ, ըսաւ Օլիվիէ արհամարհական թեթև շարժում մը ընելով, իրաւ է, կը մոռնայի որ ամէն ծառայութիւն վարձքի արժանի է, թէ ինծ ծառայած ես և թէ տակաւին վարձքդ առած չես։

—Պա՛րոն, անմիջապէս կրնամ վարձատրուիլ և մինչև անգամ փափաքածէս աւելի: Պա՛րոն, պիտի շնորհէ՞ք ինծի խնդրանքս:

—Նախ նայինք թէ ի՞նչ է:

—Պա՛րոն, երբ ինծի ըսիք. երթաս պիտի հրաման մը կատարես, միթէ երբեք պատասխան տուա՞ծ եմ ձեզ. նայինք ի՞նչ է այդ հրամանը:

—Սակայն եթէ փափաքդ իրացնել կարելի չըլլայ:

—Երբ փափաք մը ունեցած էք և անոր կատարումը ինծ յանձնած էք, միթէ երբեք ձեզի պատասխանե՞ր եմ. Կարելի չէ՛:

—Բայց այդչափ պատրաստութեամբ ձևացած խնդիր մը...:

—Ո՛հ, անհոգ եղէք, պարոն ըսաւ Մօրտօնդ պարզ դէմքով, անով ձեր տունը չպիտի փլչի:

—Լա՛ւ ուրեմն, ըսաւ Քրոմվէլ, կը խոստանամ խընդրանքդ կատարելու եթէ կարողութենէս վեր չէ. խնդրէ ուրեմն,

—Պարոն, պատասխանեց Մօրտօնդ, այս առտու երկու գերի բռնեցին, այն գերիները ձեզնէ կը խնդրեմ:

—Ուրեմն անհագին փրկա՞նք մը տուին, ըսաւ Քրոմվէլ՝

—Ընդհակառակն, կարծեմ թէ աղքատ են, պարոն:

—Ուրեմն քու բարեկամնե՞րդ են անոնք:

—Այո՛, պարոն, գոչեց Մօրտօնդ. անոնք իմ բարեկամներս են, սիրական բարեկամներ, և անոնց համար իմ կեանքս կուտամ:

—Լա՛ւ, Մօրտօնդ, ըսաւ Քրոմվէլ, ուրախութեան զգացմամբ երիտասարդին վրայ աւելի լաւ գաղափար մը առնելով, լա՛ւ, զանոնք քեզի կ'ուտամ, չեմ ուզեր գիտնալ իսկ թէ ո՞յք են. ի՛նչ որ կ'ուզես ըրէ զանոնք:

—Շնորհակա՛լ եմ, պարոն, գոչեց Մօրտօնդ, շնորհակա՛լ եմ. այսուհետև կեանքս ձերն է, և զայն կորսնցնելով դարձեալ ձեզի շնորհապարտ պիտի մնամ, շնորհակալ եմ, իմ ծառայութիւններս փառաւորապէս վարձատրեցիք:

Այս ըսելով Քրոմվէլի ծունկը ինկաւ, և մաքրակրօն

զօրապետին ճիգերուն հակառակ, որ չէր ուզեր կամ չուզել կը կեղծէր այս գրեթէ արքայական նուէրը իրեն տալու հաւանութիւն ցուցնել, անոր ձեռքը բռնեց և համբուրեց:

—Ի՞նչ, հարցուց Քրոմվէլ, զայն ըստ կարգի կեցնելով այն միջոցին որ ոտք կ'ելլէր, ուրիշ վարձք չե՞ս պահանջեր, ոսկի, աստիճան չե՞ս խնդրեր:

—Ի՛նչ որ կարող էիք տալու տուիք ինծ, միլորտ, և այս օրէն ձեզի հետ ուրիշ առնելիք տալիք չունիմ:

Եւ Մօրտօնդ զօրապետին վրանէն դուրս սրացաւ ուրախութեամբ մը որ իր սրտէն և աչքերէն կը ժայթքէր:

Քրոմվէլ ակնարկովը անոր հետևեցաւ:

—Իր հօրեղբայրը սպաններ, մրմռաց ան, ափսո՛ս, ի՛նչ տեսակ մարդիկ են ուրեմն իմ սպասաւորներս: Կարելի է այս մարդը՝ որ բան մը չի պահանջեր, կամ բան մը չպահանջել կը կեղծէ, Աստուծոյ աչքին աւելի բան խնդրած է քան թէ անոնք որ գաւառներու ոսկին և գժբախտներու հացը պահանջելու պիտի գան, ոչ ոք կը ծառայէ ինծի առանց փոխարէնի: Շարլ՝ որ իմ գերիս է, թերևս տակաւին բարեկամներ ունի, և ես չունիմ:

Եւ վերստին Մօրտօնդի գալովը ընդհատած մտախոհութեան մէջ ինկաւ:

ԺԴ.

ԱԶԱՏՈՐԴԻՔ

Մինչդեռ Մորտոնդ Քրոմվէլի վրանին կողմը կը դիմէր, տ'Արդանեան և Բորթօս՝ Նիւգասլի մէջ նշանակուած տունը կը տանէին իրենց գերիները։

Մորտոնդին ըրած պատուէրը յիսնապետին՝ Կասքօնը դիտեր էր. հետեւապէս աչքովը Աթօսին և Արամիսին պատուիրեր էր յետին ծայր խոհեմութիւն ցոյց տալ։ Ուստի Արամիս և Աթօս իրենց յաղթողներուն քովէն լուռ ու մունջ քալեր էին. և այս բանը դժուարին չէր իրենց համար, վասնզի արդէն ամէն մէկը իր յատուկ խորհրդածութիւնը ու ներքին պատասխանները ունէր։

Եթէ երբեք մարդ յետին ծայր զարմանք զգացած է, այս Մուսքդօնն եղած է, որ երբ դրան սեմէն տեսաւ չորս բարեկամները յիսնապետին և տասնի չափ մարդու հետ, աչքերը շփեց, Աթօսի ու Արամիսի իսկութեանը կասկածելով, բայց ի վերջոյ ստիպուեցաւ ճշմարտութեան հաւատալու։ Ուստի պիտի սկսէր բացագանչութիւններ արձակել, երբ Բորթօս հրամայական ակնարկ մը նետելով հասկցուց որ պէտք լուռ կենայ։

Մուսքդօն պատին երկայնքը կպած մնաց, այնպիսի այլանդակ բանի մը բացատրութեան սպասելով. զինքը աւելի կը շփոթողը սա էր որ չորս բարեկամները իրար չճանչնալու կը զարնէին։

Տ'Արդանեան և Բորթօս՝ Աթօսը ու Արամիսը այն տունը տարին ուր առջի օրուընէ ի վեր կը բնակէին և զոր իրենց տուած էր Քրոմվէլ զօրապետը. փողոցին անկիւնն էր, տեսակ մը պարտէզ ունէր և միւս կողմն ալ մօտակայ փողոցին վրայ նայող ախոռներ։

Գետնայարկին պատուհանները՝ ինչպէս որ են ստէպ գաւառային տուները, վանդակաւոր էին, այնպէս որ բանտի պատուհաններու շատ կը նմանէին։

Երկու բարեկամները գերիները իրենց առջևէն ներս մըտցուցին և սեմին վրայ կեցան և Մուսքդօնին պատուիրեցին որ չորս ձիերը ախոռը տանի։

—Ինչո՞ւ համար մենք ալ անոնց հետ ներս չենք մտներ, ըսաւ Բորթօս։

—Վասն զի պատասխանեց տ'Արդանեան, պէտք է նայիլ թէ սա յիսնապետը ու իր հետը գտնուող ութ տասը մարդիկ ինչ կ'ուզեն։

Յիսնապետը և ութ տաս մարդիկ փոքրիկ պարտէզին մէջ տեղաւորուեցան։

Տ'Արդանեան հարցուց անոնց թէ ի՛նչ կը փափաքին և ինչո՞ւ համար այնտեղ կը կենան։

—Հրաման ունինք, ըսաւ յիսնապետը, ձեր գերիները պահպանելու օգնել ձեզ։

Ասոր խօսք չկար. ընդհակառակը փափուկ հոգատարութիւն մըն էր այս որու համար շնորհակալութիւն կեղծելու հարկ կար այն անձին որ նոյն հոգը տարեր էր։ Տ'Արդանեան յիսնապետին իր շնորհակալիքը յայտնեց և անոր քանի մը շիլին տուաւ որ Քրոմվէլ զօրապետին կենաց գինի խմէ։

Յիսնապետը պատասխանեց որ մաքրակրօնները չեն խմեր երբեք և ստակը գրպանը դրաւ։

—Ա՛հ, ըրաւ Բորթօս, ի՜նչ սոսկալի օր է, սիրելի տ'Արդանեան։

—Ի՞նչ կ'ըսես, Բորթօս. սոսկալի օր կ'անուանես այն օրը որ մեր բարեկամները գտանք։

—Այո՛, բայց ի՛նչ պարագայի մէջ։

—Իրաւ է որ դժուարին է այս կացութիւնը, ըսաւ տ'Արդանեան, բայց, փոյթ չէ, անոնց սենեակը մտնենք և փոքր ինչ մեր դիրքը լուսաբանենք։

—Շա՛տ կնճռոտ է այն, ըսաւ Բորթօս, և հիմակ կ'իմանամ թէ ի՛նչ պատճառաւ Արամիս այնքան կը պնդէր այն ահռելի Մորտոնդը խեղդելու։

—Լուսթի՛ն ուրեմն, ըսաւ տ'Արդանեան, այդ անունը մի՛ արտասաներ։

—Բայց, ըսաւ Բորթոս, քանի որ գաղղիերէն կը խօսիմ և անոնք անգլիացի են, ի՞նչ վնաս ունի։

Տ'Արդանեան Բորթոսին նայեցաւ այնպիսի զարմացման դէմքով մը որով պիտի զարմանար անշուշտ բանաւոր մարդ մը ամէն տեսակ այլանդակութիւններ դիտելով։

Վերջը՝ ըստ որում Բորթոս ալ իր կողմէ անոր կը նայէր առանց այս զարմանքը հասկնալու, տ'Արդանեան զանիկա հրեց ըսելով.

—Ներս մտնենք։

Նախ Բորթոս ներս մտաւ և ապա տ'Արդանեան. տ'Արդանեան ուշի ուշով դուռը գոցեց և հետզհետէ երկու բարեկամները գրկեց։

Աթոս մահաբեր տրտմութեան մէջ կը գտնուէր։ Արամիս մէյ մը Բորթոսին և մէյ մը տ'Արդանեանի կը նայէր, բայց իր ակնարկը այնքան նշանակական էր որ տ'Արդանեան անոր միտքը հասկցաւ։

—Կ'ուզես իմանալ թէ ի՞նչ կերպով հոս կը գտնուինք։ Է՛հ, Տէր Աստուած, դիւրին է գուշակել. Մազարէն՝ զօրավիգ Գրոմվէլի նամակ մը տալու պաշտօնը ինծ յանձնեց:

—Բայց ի՞նչպէս Մորտօնդի մօտ կը գտնուիք, ըսաւ Աթոս, այն Մորտօնդին քով որմէ խորշիլ յորդորեր էի քեզ, տ'Արդանեան։

—Եւ ես ալ պատուիրեր էի քեզի զայն խեղդել, Բորթոս, ըսաւ Արամիս։

—Միշտ Մազարէն։ Գրոմվէլ Մազարէնի ղրկեր էր զանիկա, Մազարէն ալ մեզի Գրոմվէլի ղրկեց։ Այս ամէն բանին մէջ կոյր բաղդին մատը կայ։

—Այո՛, իրաւունք ունիս, տ'Արդանեան, կո՛յր ճակատագիր մը որ մեզ կը բաժնէ և կորստեան կը մատնէ։ Այսպէս, սիրելիդ իմ Արամիս, այլեւս չխօսինք, և մեր ճակատագրին հպատակելու պատրաստուինք։

—Անիրա՛ւ, ընդհակառակը անոր վրայ խօսինք. վասնզի ամէն անգամ միշտ որոշած ենք իրարու կապուած մնալու, թէեւ իրարու ներհակ կուսակցութեանց մէջ։

—Ո՛հ, շատ ներհակ, ըսաւ Աթոս ժպտելով, վասնզի հոս հարցնեմ ձեզի թէ ո՞ր դատը կը պաշտպանէք։ Ա՛հ, տ'Արդանեան, տե՛ս անգամ մը թէ թշուառ Մազարէն ի՛նչ բանի կը գործածէ մեզ։ Գիտէ՞ք արդեօք թէ ի՛նչ մեծ յանցանք գործեցիք այսօր։ Թագաւորին ձերբակալութեան, իր անարգանաց, իր մահուան համար մեղապարտ պիտի մնաք։

—Հօ՛, հօ՛, ըսաւ Բորթոս, միթէ այդպէ՞ս կը կարծէք։

—Չափազանց կը խօսիս, Աթոս, ըսաւ տ'Արդանեան, դեռ եւս այդ աստիճանին հասած չէ գործը:

—Է՛հ, Տէ՛ր Աստուած, ընդհակառակն, անոր կը մօտենանք։ Ինչո՞ւ համար թագաւոր մը կը բռնեն։ Իբրեւ տէր զանիկա յարգել ուզողը, իբրեւ գերի զանի չգներ։ Կը կարծե՞ս միթէ որ Գրոմվէլ զայն աթոռը նստեցնելու համար երկու հարիւր հազար ոսկի վճարեց: Բարեկամնե՛ր, պիտի սպաննեն զայն, ստոյգ եղէք այս մասին. և այս ալ իրենց ընելիք թեթեւագոյն յանցանքը պիտի ըլլայ, լաւ եւս է գլխատել քան ապտակել թագաւոր մը։

—Ո՛չ չեմ ըսեր, և կարելի բան է արդարեւ, ըսաւ տ'Արդանեան, բայց այս ամէնը մեզի հետ ի՞նչ վերաբերութիւն ունի։ Ես հոս եմ, վասնզի զինուոր եմ, վասնզի իմ տէրոնցս կը ծառայեմ, այսինքն իմ թոշակս վճարողներուն։ Երդում ըրի հնազանդելու, և կը հնազանդիմ. բայց դուք որ երդում ըրած չէք, ինչո՞ւ համար հոս կը գտնուիք, և այս տեղ ի՛նչ դատ կը պաշտպանէք։

—Աշխարհիս վրայ ամէնէն նուիրական դատը, ըսաւ Աթոս, այս է դժբաղդութեան, թագաւորութեան և կրօնի դատը։ Բարեկամ մը, ամուսին մը, օրիորդ մը մեզի պատիւ ըրին իրենց օգնութեան կոչելու։ Մեր տկար միջոցներուն ներածին չափ անոնց ծառայեցինք, եթէ մեր ձեռքէն բան մը չեկաւ, գէթ Աստուած մեր կամքը անտես չպիտի առնէ։

Դուն, տ'Արդանեան, կրնաս ուրիշ կերպ խորհիլ, դուն կրնաս ուրիշ նայուածքով նկատել գործը, բարեկամ, այս մասին չեմ հակառակիր քեզ, բայց քեզ կը պարսաւեմ։

—Հօ՛, հօ՛, ըսաւ տ'Արդանեան, և սակայն ի՞նչ փոյթ է եթէ Պ. Բրոմլէյ, որ անգլիացի է, կ'ապստամբի իր թագաւորին դէմ, որ սկովտացի է։ Ես գաղղիացի եմ, ե՛ս, բոլոր այս բաներն ինծի վերաբերութիւն չունին։ Ուրեմն ինչո՞ւ կը փափաքիս զիս պատասխանատու բռնել։

—Արդա՛րև, ըսաւ Բորթոս։

—Վասնզի բոլոր ազնուորդիք եղբայր են, վասնզի դուք ազնուորդի էք, վասնզի ամէն երկիրներու թագաւորներն ազնուորդիներու մէջ առաջիններն են, վասնզի կոյր, ապաշնորհ և անբան ռամիկը միշտ կ'ախորժի վար զարնել իրմէ բարձրագոյն եղողը, և դուն, դուն ես, տ'Արդանեան, դուն վաղեմի ազնուականութեան մարդը․ դուն ազուոր անունով մարդը, դուն քաջասուր մարդը պատճառ եղար որ թագաւորը գարեջուրի վաճառականներու, դերձակներու և սայլորդներու ձեռքը ինկաւ։ Ա՛հ, տ'Արդանեան, իբրև զինուոր թերևս դուն պարտքդ կատարեցիր, բայց իբրև ազնուորդի յանցաւոր ես կ'ըսեմ քեզի բացէ ի բաց։

Տ'Արդանեան ծաղկի մը բունը կը ծամէր, պատասխան չէր տար և անհանգիստ կ'երևէր․ վասնզի երբ աչքը Աթոսէն կը դարձնէր անդին՝ Արամիսին ակնարկին կը հանդիպէր։

—Եւ դուն, Բորթոս, շարունակեց կոմսը որպէս թէ տ'Արդանեանի շփոթութեան վրայ կը խղճար, դու ամենալաւ զինուորդ, դու որ ունեցած հոգւովդ արժանի էիր գահի մը աստիճաններու վրայ ծնիլ, և ուշ կամ կանուխ մտացի արքայէ մը պիտի վարձատրուիս, դուն սիրելիդ իմ Բորթոս, դուն որ բարի ազնուորդի մըն ես, նոյնպէս արիասրտութեամբ և ճաշակովդ, դուն ալ տ'Արդանեանի չափ յանցաւոր ես։

Բորթոս կարմրեցաւ, բայց զուարճութենէն քան թէ շփոթութենէն, և սակայն, որպէս թէ ամօթապարտութենէ գլուխը ծռելով․

—Այո՛, այո՛, ըսաւ, կարծեմ թէ իրաւունք ունիս, սիրելիդ իմ կոմս։

Աթոս ոտք ելաւ։

—Օ՛ն, ըսաւ դէպի տ'Արդանեան քալելով և ձեռքն անոր կարկառելով, օ՛ն, մի՛ սրդողիր, իմ սիրելի որդիս, վասնզի բոլոր ըսածներս ըսի, թէ ոչ ձայնով՝ գէթ հայրական սրտով։ Հաւատա՛ ինծ, աւելի դիւրին պիտի ըլլար ինծ, քեզի շնորհակալ ըլլալու կեանքս ազատելուդ և իմ զգացումներուս վրայ խօսք մը չընելու։

—Անշո՛ւշտ, անշո՛ւշտ Աթոս, պատասխանեց տ'Արդանեան ըստ կարգի անոր ձեռքը սեղմելով, բայց սա ալ կայ որ այնպիսի զարմանալի զգացումներ ունիս զոր ոչ ոք կարող է ունենալ։ Ո՞վ կրնայ երևակայել որ բանաւոր մարդ մը իր տունը, Ֆրոնտան ձգէ․ իր սանը, չքնաղ պատանի մը․ վասնզի բանակը տեսանք զանիկա, արշաւելու համար ո՞ւր․ փտած, ժանգոտած թագաւորութեան սատարելու, որ առտու մը պիտի փլի հին խրճիթի մը պէս։ Ըսած զգացումդ գեղեցիկ է, արդարև, այնչափ գեղեցիկ որ գերմարդկային է։

—Ի՛նչ որ է, տ'Արդանեան, պատասխանեց Աթոս առանց ինկալու այն որոգայթին մէջ զոր իր կասքոնեան հնարագիտութեամբ իր բարեկամը անոր Ռաուլի համար ունեցած սիրոյն կը լարէր. ի՛նչ որ է սրտիդ խորէն կը վկայես որ արդար է, բայց իմ տիրոջս հետ վիճելու իրաւունք չունիմ։ Տ'Արդանեան ես քու գերիդ եմ, ուստի իբրև այն վարուէ հետս։

—Ա՛, անիրա՛ւ, պատասխանեց տ'Արդանեան, քաջ գիտես որ երկար ատեն պիտի չըլլաս իմ գերիս։

—Ո՛չ, ըսաւ Արամիս, մեզի հետ պիտի վարուին անշուշտ ինչպէս որ վարուեցան Ֆիլիպկօզի գերիներու հետ։

—Եւ ի՞նչպէս վարուեցան անոնց հետ, հարցուց տ'Արդանեան։

—Բայց, ըսաւ Արամիս, կէսը կախեցին, կէսն ալ հրացանի բռնեցին։

—Լաւ ուրեմն. ես, ըսաւ տ'Արդանեան, ձեզի կը յայտնեմ ահա, որչափ ատեն որ երակներուս մէջ արեան կաթիլ մը գտնուի, ո՛չ պիտի կախուիք և ոչ հրացանի բռնուիք։ Աստուա՛ծ վկայ, թո՛ղ գան:

—Լա՛ւ, ի՞նչ կայ։

—Այս դուռնէն պիտի անցնիք երբ որ կամիք, վասնզի այս վայրկեանէս սկսեալ, դու և Արամիս օդին պէս ազատ էք։

—Այդ խօսքէդ կը ճանչնամ քեզ իմ քաջդ տ'Արդանեան, պատասխանեց Աթօս, բայց այլ եւս մեր տէրը չես. այս դուռը պաշտպանուած է, տ'Արդանեան, դուն ալ լաւ գիտես։

—Լա՛ւ, զայն կը խորտակենք, ըսաւ Բորթօս, ի՞նչ կայ հոն, շա՛տ շատ տասը մարդ:

—Մեծ բան մը պիտի չըլլա՛ր մեզի պէս չորս մարդու համար, մեր երկուքին համար շատ է։ Ո՛չ, քանի որ այնպէս բաժնուած ենք, պէտք է որ այժմ կորսուինք։ Տեսէ՛ք անգամ մը գժնդակ օրինակ մը. Վանսօմուայի ճամբուն վրայ, դուն, տ'Արդանեան, որ այնքան արիասիրտ ես, դուն, Բորթօս, որ այնքան քաջ և ուժեղ ես, յաղթուեցաք. այսօր Արամիս և ես յաղթուեցանք, մեր կարգն էր։ Արդ՝ երբեք այսպիսի բան մը չէր պատահած մեզ երբ չորսերնիս ալ միացած էինք. ուրեմն մեռնինք ինչպէս որ Վինդր մեռաւ. իսկ ես կը յայտնեմ ձեզի որ պիտի չհաւանիմ խոյս տալու եթէ չորսերնիս միասին չփախչինք։

—Անկարելի՛ բան, ըսաւ տ'Արդանեան. Մազարէնի հըրամանին ներքեւ ենք։

—Գիտեմ, և ալ աւելի չեմ ստիպեր ձեզ, իմ փաստերս արդիւնք չունեցան. անշուշտ հիմնական չէին, քանի որ ձերինին պէս արդարախօս միտքերու վրայ ներգործութիւն մը չունեցան։

—Սակայն եթէ ներգործութիւն իսկ ունենային, ըսաւ Արամիս, լաւագոյնը սա է որ տ'Արդանեանի և Բորթօսի պէս երկու պատուական բարեկամներ պէտք չէ վտանգի մէջ դնել։

Անհոգ եղէք, պարոններ, մեռնելու ատեն ձեզի պատիւ պիտի բերենք, իսկ ես, կը հպարտանամ մտածելով որ մինչեւ անգամ կախաղանի չուանի պիտի դիմաւորեմ քեզի հետ, Աթօս, վասնզի այնքան մեծ երեւցած չես ինծի որչափ այսօր։

Տ'Արդանեան բան մը չէր ըսեր. բայց ծաղկին բունը ծամելէն ետք՝ սկսաւ եղունգները կրծել։

—Միթէ կ'երեւակայէ՞ք, ըսաւ ան վերջապէս, որ ձեզ պիտի սպաննեն։ Եւ ի՞նչ պատճառաւ. ի՞նչ պիտի շահին ձեր մահուամբը։ Ասկէ զատ՝ դուք մեր գերիներն էք։

—Յիմա՛ր, եռակի՛ յիմար, ըսաւ Արամիս, միթէ չե՞ս ճանչնար Մորտօնդը։ Լա՛ւ ուրեմն, ես ակնարկ մը միայն անոր հետ փոխանակեցի և նոյն ակնարկին մէջ զգացի որ դատապարտուած ենք։

—Այս իրաւ է որ շատ կը ցաւիմ զանիկա չխեղդելուս, ինչպէս որ ապսպրեր էիր ինծի, Արամիս, վրայ բերաւ Բորթօս:

—Է՛հ, ո՞վ բանի տեղ կը դնէ Մորտօնդը, գոչեց տ'Արդանեան.—Աստուա՛ծ վկայ, եթէ զիս շատ մօտէն խտխտէ, այն միջատը պիտի ճզմեմ։ Ուստի մի՛ փախչիք, անօգուտ բան է. վասնզի, կ'երդնում ձեզ, թէ այստեղ այնքան ապահով էք որչափ էիք քսան տարի առաջ երբ Աթօս Ֆէրու փողոցը, և դուն Արամիս՝ Վօժիրար փողոցը կը բնակէիք։

—Ահա՛, ըսաւ Աթօս՝ սենեակը լուսաւորող երկու պատուհաններէն մէկուն կողմը ձեռքը կարկառելով, քիչէն պիտի հասկնաս թէ որո՞ւ հետ է գործդ, վասնզի ահաւասիկ այս կողմը կը վազէ։

—Ո՞վ։

—Մորտօնդ։

Եւ արդարեւ՝ տ'Արդանեան Աթօսի ձեռքին ուղղութեամբը նայելով ձիաւոր մը տեսաւ որ սրարշաւ կը վազէր։

Նոյն ինքն Մորտօնդն էր։

Տ'Արդանեան սենեակէն դուրս սրացաւ։

Բորթօս անոր ետեւէն երթալ ուզեց։

—Կեցի՛ր։ ըսաւ տ'Արդանեան, և այն ատեն միայն եկուր երբ լսես որ դրան վրայ մատներովս թմբուկ կը զարնեմ։

ԺԵ.

ՏԷՐ ՅԻՍՈՒՍ

Երբոր Մորտոնդ տան դիմացը հասաւ, տ'Արդանեանը դրան սեմին վրայ և զինուորները աղլին անդին դալարին վրայ պառկած գտաւ։

— Հէ՛յ, գոչեց ան իր շտապելէ արշաւէն կտրած ձայնով մը, միթէ գերիները այդտեղ են։

—Այո՛, պարոն, ըսաւ յիսնապետը արտօրնօք ելլելով, նոյնպէս իր մարդիկը՝ որ իրեն պէս շուտ մը իրենց գլխարկին տարին ձեռքերնին։

—Լա՛ւ։ Չորս հոգի պէտք է որ զանոնք առնեն և իսկոյն իմ բնակարանս բերեն։

Չորս հոգի պատրաստուեցան։

—Ի՞նչ հրամայեցիք, ըսաւ տ'Արդանեան այնպիսի ծաղրածու դէմքով մը, և այս ձեւը շատ անգամ կը գործածէր ինչպէս որ մեր ընթերցողները տեսած են զանիկա ճանչնալէ ի վեր, ի՞նչ կայ, ի՞նչ հրամայեցիք։

—Սա կայ, պարոն, ըսաւ Մորտոնդ որ չորս մարդու հրաման կուտայի որ այս առտու մեր բռնած գերիները առնեն և իմ բնակարանս տանին։

—Եւ ի՞նչ պատճառաւ, հարցուց տ'Արդանեան։ Ներէ՛ իմ հետաքրքրութեանս, բայց գիտես որ այս մասին կ'ուզեմ լուսաւորուիլ։

—Վասնզի այժմ իմս են գերիները, պատասխանեց Մորտոնդ ամբարտաւանութեամբ, և ուզածս պիտի ընեմ անոնց։

—Ներէ՛, ներէ՛, իմ նորատի պարոնս, ըսաւ տ'Արդանեան, կարծեմ թէ սխալմունք մը կ'ընես. սովորաբար գերիները բռնողներին են անոնց տէրերը և ոչ թէ անոնց բռնուիլը տեսնողները։ Կարող էիր լորտ Վինդրը որ քու հօրեղբայրդ էր.

ինչպէս որ կ'ըսեն, բռնել, լաւ ես սեպեցիր զանիկա սպաննել, լաւ. մենք ալ, Պ. Վալլօն և ես՝ կարող էինք այս երկու ազնուորդիները սպաննել, աւելի լաւ համարեցինք զանոնք բռնել, ամէն մարդ իր ճաշակը ունի։

Մորտոնդի շրթունքը ճերմկեցան։

Տ'Արդանեան հասկցաւ որ քիչ ատենէն խնդիրը պիտի գէշնար սկսաւ պահակաց արշաւը թմբկել դրան վրայ։

Առաջին հարուածին՝ Փորթօս դուրս ելաւ և դրան միւս կողմը կեցաւ, որուն սեմին իր ոտքերը կը դպէին և գլուխը կատարին։

Այս հնարը Մորտոնդի ուշադրութենէն չվրիպեցաւ։

—Պա՛րոն, ըսաւ բարկութեամբ մը որ սկսեր էր երեւիլ, պարապ տեղ դիմադրելու պիտի ելլէք, այս գերիները նոյն իսկ իմ անուանի տիրոջս, սպարապետին Օլիվիէ Գրոմվէլի կողմէ այս միջոցիս ինծի տրուեցան։

Տ'Արդանեան այս խօսքերէն իբրև շանթահար մնաց, և իր ձեռքը բնազդումով մը իր սուրին ճարմանդին վրայ ինկաւ։

Իսկ Փորթօս տ'Արդանեանի կը նայէր որ հասկնայ թէ ի՛նչ ընել պէտք է և իր շարժումը ըստ այնմ բռնէ։

Փորթօսի այս ակնարկը տ'Արդանեանի աւելի հոգ տուաւ քան թէ ապահովութիւն, և սկսաւ ինքզինքը մեղադրել որ Փորթօսի կոյտ ոյժը այնպիսի գործի մը համար իրեն զօրավիգ կոչեց որ իրեն կ'երեւէր թէ աւելի խորամանկութեամբ կարգադրել հարկ էր։

—Բռնաբարութիւնը կ'ըսէր իրաւի, մեզ կորստեան կրնայ մատնել, տ'Արդանեան բարեկամդ իմ, սա օձիկին փորձով ցոյց տուր որ դուն ոչ միայն աւելի ուժով այլ իրմէ նրբամիտ ես։

—Ա՛հ, ըսաւ ան խորին յարգանօք բարև մը տալով, ինչո՞ւ համար ամէնէն առաջ այդ բանէն չի սկսար, Պ. Մորտոնդ, ինչպէ՞ս, Պ. Օլիվիէ Գրոմվէլի ժամանակիս ամէնէն հռչակաւոր զօրապետին կողմէ՞ կուգաս։

—Հիմակ իսկ քովէն կը դառնամ, պարոն, ըսաւ Մոր-

տօնդ վար իջնելով և ձին իր զինուորներէն մէկուն ձեռքը տալով, այժմ խակ քովէն կուգամ։

—Ինչո՞ւ համար անմիջապէս այդ բանը չըսիր, սիրելիդ իմ պարոն, չարունակեց տ'Արդանեան, բոլոր Անգլիան Գրօմվէլի ձեռքն է և քանի որ իր անուամբ գերիներս ինձմէ կը խնդրես, կը խոնարհիմ պարոն, քուկդ են, ա՛ռ զանոնք։

Մորտօնդ խնդագին առաջ անցաւ, և Բօրթօս՝ բոլորովին քար կտրած և խորին ապշութեամբ տ'Արդանեանի նայելով, բերանը կը բանար խօսելու համար։

Տ'Արդանեան Բօրթօսի կօշիկին վրայ կոխեց և այն ատեն Բօրթօս հասկցաւ որ իր բարեկամին ըսածը խաղ մըն էր։

Մորտօնդ դրան առաջին աստիճանին վրայ իր ոտքը դրաւ և գլխարկը ձեռքը, երկու բարեկամներուն մէջէն անցնելու պատրաստուեցաւ, իր չորս մարդոց նշան ընելով որ իրեն հետեւին։

—Բայց, ներէ՛, ըսաւ տ'Արդանեան ամենասիրուն ժըպիտով և իր ձեռքը երիտասարդին ուսին վրայ դնելով, եթէ անուանի Օլիվիէ Գրօմվէլ զօրապետը մեր գերիները ձեզի տուաւ, անշուշտ այս նուէրը գրաւոր կերպով մը հաստատեց։

Մորտօնդ զարմացած կեցաւ։

—Ինձ ուղղեալ փոքրիկ գիր մը, թուղթի կտոր մը տուած պիտի ըլլայ քեզի, վերջապէս, որով ապացուցուի թէ անոր կողմէ կուգաս։ Հաճէ այն թուղթի կտորը ինձ յանձնել որպէսզի իմ հայրենակիցներս թողլու գէթ պատրուակ մը գտնեմ։ Եթէ ոչ, կ'իմանաս անշուշտ, որչափ որ հաւաստի եմ թէ Օլիվիէ Գրօմվէլ զօրապետը անոնց չարիք ընելու միտք չունի, բայց դարձեալ գէշ ազդեցութիւն մը պիտի ունենայ։

Մորտօնդ ընդգրկեց և հարուած զգալով՝ տ'Արդանեանի սոսկալի ակնարկ մը նետեց. բայց այս սիրալիր և մտերմական կերպով մը պատասխանեց, կերպ մը որ երբեք բացած չէ մարդկային երես մը։

—Երբ քեզի բան մը կ'ըսեմ, պարոն, ըսաւ Մորտօնդ, միթէ կասկածելով զիս նախատել կ'ուզես։

—Ե՞ս, գոչեց տ'Արդանեան, ե՛ս կասկածիմ ըսածիդ վրայ։ Քա՛ւ լիցի, սիրելի Պ. Մորտօնդ, ընդհակառակը դուն՝ ըստ երեւոյթին՝ արժանի և կատարուն ազատորդի մըն ես. ասկէ զատ՝ պարոն, կ'ուզե՞ս որ արձակ համարձակ խօսիմ, չարունակեց տ'Արդանեան իր բաց երեսով։

—Խօսէ՛, պարոն, ըսաւ Մորտօնդ։

—Ահա Պ. Վալլօնը հարուստ է, քառասուն հազար ֆրանք եկամուտ ունի և հետեւապէս դրամի աչք չունի. սակայն չէ թէ անոր, այլ ինծի համար կը խօսիմ։

—Ապա՞, պարոն։

—Լա՛ւ, ես հարուստ չեմ, Կասքօնեի մէջ անպատուութիւն չէ այս բանը, պարոն, վասնզի ոչ ոք հարուստ է, և երանելի Հանրի Դ. որ Կասքօններու թագաւոր էր, ինչպէս որ Նորին Վեհափառութիւնը Ֆիլիպ Դ. բոլոր Սպանիոյ թագաւոր է, երբեք փող մը չունէր իր գրպանին մէջ։

—Լմնցո՛ւր, պարոն, ըսաւ Մորտօնդ, կը տեսնեմ թէ ո՞ւր պիտի բերես կապես խօսքը, և եթէ քեզ բռնողը իմ մտածածս է, կարելի է այդ դժուարութիւնը բառնալ։

—Ա՜հ, քաջ գիտէի, ըսաւ տ'Արդանեան, որ խելացի տղայ մըն ես. լա՛ւ ուրեմն, ահաւասիկ խնդիրը, ահաւասիկ իմ փորիս ցաւը, ինչպէս որ կ'ըսեն ռամկօրէն. ես ուրիշ բան չեմ բայց միայն բաղդախնդիր սպայ մը, միայն սուրիս եկամուտն ունիմ, այսինքն աւելի հարուածներ քան դրամատոմսեր։ Արդ՝ այս առտու երկու գաղղիացի բռնելով, որ ինծի տոհմիկ ընտանիքէ կ'երեւին, վերջապէս Ջանկապանի երկու ասպետներ, կ'ըսէի իւրովի. իմ բաղդս շինեցի։ Երկու ասպետ ըսի, վասնզի, այսպիսի պարագայի մէջ Պ. Վալլօն որ հարուստ է, միշտ իր գերիներն ինծի կ'ուտայ։

Մորտօնդ՝ տ'Արդանեանի լեզուանի միամտութենէն բոլորովին խաբուելով, ժպտեցաւ իբր մարդ մը որ քաջ կ'ըմբռնէ մէջ բերուած պատճառները և անուշութեամբ պատասխանեց.

—Անմիջապէս ստորագրեալ հրամանագիրը պիտի ստա-նամ, պարոն, և նոյն հրամանագրով հազար ոսկի. բայց առ այժմ, պարոն, թո՛ղ որ այս մարդիկը տանիմ:

—Ո՛չ, ըսաւ տ'Արդանեան, ի՞նչ փոյթ է կէս ժամու յապաղում մը: Պարոն, ես կարգապահ մարդ մըն եմ, ուստի ամէն բան կարգ-կանոնով ընենք:

—Սակայն, վրայ բերաւ Մորտօնդ, կարող եմ քեզ բռ-նադատել, պարոն, ես եմ այս տեղի հրամանատարը:

—Ա՛հ, պարոն, ըսաւ տ'Արդանեան ախորժանօք ժըպ-տելով, յայտնի կ'երեւի թէ, որչափ որ Պ. Վալլօն և ես պատիւ ունեցանք քեզի հետ միասին ճամբորդելու. դեռ ես մեզ չես ճանչնար: Մենք ազնուորդի ենք, մենք կարող ենք առանձին քեզ և քու ութ սաս մարդիկդ սպաննել: Աստու-ծոյ համար, Պ. Մորտօնդ, կամակոր մի ըլլար, վասնզի երբ յամառին ես ալ կը յամառիմ և այն ատեն վայրագ կամա-կորութեան մէջ կ'իյնամ, ահա, այս պարոնն ալ, շարու-նակեց տ'Արդանեան որ այս պարագայիս մէջ ինձմէ շատ աւելի կամակոր և վայրագ է: Պէտք է նաեւ գիտել որ Կար-տինալ Մազարէնի կողմէ ղրկուած ենք, որ Ֆրանսայի թա-գաւորը կը ներկայացնէ. ուստի կը հետեւի որ այս պահու թագաւորին և Կարտինալին ներկայացուցիչներն ենք, հե-տեւապէս ըսել է թէ մեր դեսպանական պաշտօնով անբռ-նաբարելի ենք, և այս բանը Պ. Օլիվըէ Քրոմվէլ, որ ան-շուշտ որչափ մեծ քաղաքագէտ նոյնչափ մեծ զօրավար է, քաջ ըմբռնելու կարող մարդ մըն է: Ուստի անորմէ խնդրէ գրաւոր հրամանը: Իմ սիրելի Պ. Մորտօնդ, ի՞նչ վնաս ունի այս բանս:

—Այո, գրաւոր հրամանը, ըսաւ Բորթոս, որ սկսեր էր հասկնալ տ'Արդանեանի դիտաւորութիւնը մինակ այս-չափ բան կը խնդրենք քեզնէ:

Որչափ որ Մորտօնդ բռնութեան դիմելու փափաք ու-նէր, սակայն քաջ կ'ըմբռնէր որ տ'Արդանեանի մէջ բերած պատճառները լաւ էին: Ասկէ զատ՝ իր համբաւը զինքը կը

պարտաւորէր, և ինչ որ տեսեր էր առաւօտուն իր համ-բաւին օգնելով՝ մտածեց: Միւս կողմէ՝ այս չորս Գաղղիա-ցւոց մէջ տիրած բարեկամական յարաբերութեանց լիովին անտեղեակ ըլլալով, բոլոր իր կասկածները փարատեր էին փրկանքի խնդրոյ բանաւոր չափաւորութեան առջեւ:

Ուստի որոշեց երթալ ոչ միայն հրամանագիրը առնե-լու, այլ և հազար ոսկին, զոր երկու գերիներուն իբրեւ գին ինքնին սահմաներ էր:

Հետեւապէս Մորտօնդ ձի հեծաւ նորէն, և յիսնապետին պատուիրելէն յետոյ՝ որ լաւ պահպանութիւն ընէ, սանձը դարձուց և աներեւոյթ եղաւ:

—Լա՛ւ ըսաւ տ'Արդանեան, քառորդ մը վրանն երթա-լու, և քառորդ մըն ալ վերադառնալու համար պէտք է, և մեզի ալ այս ժամանակը շատ է իսկ: Յետոյ՝ Բորթոսին դա-լով՝ առանց իր դէմքին վրայ թեթեւագոյն փոփոխութիւն մը յայտնելու. այնպէս որ իրեն հետ եղողները կարծեն թէ միեւնոյն խօսակցութիւնը կը շարունակեն:

—Բորթօ՛ս, բարեկամ, ըսաւ անոր առջեւ կենալով, ըսածիս լաւ ուշադրութիւն ըրէ...: Նախ՝ պէտք չէ բոլոր լսածներէդ բառ մը անգամ ըսել մեր բարեկամներուն. անօ-գուտ է որ մեր անոնց ընելիք ծառայութիւնը գիտնան:

—Լա՛ւ, ըսաւ Բորթոս, կ'իմանամ:

—Ախոռը գնա՛, հոն պիտի գտնես Մուսքըթօնը, ձիերը կը թամբէք, հրացանակները խոչերուն մէջ կը դնէք, և վարի փողոցը կ'իջեցնէք որով ուրիշ բան չի մնար ընելու այլ միայն հեծնել. իսկ գործին միւս մասը ինծի կը վե-րաբերի:

Բորթոս դիտողութիւն մը անգամ չըրաւ և իր բարե-կամին վրայ ունեցած վսեմ վստահութեամբը հնազանդեցաւ:

—Հիմակ պիտի երթամ, ըսաւ, մինակ ըսէ ինծի թէ այն պարոններուն գտնուած սենեակը պիտի մտնե՞մ:

—Ո՛չ, անօգուտ բան է:

—Լա՛ւ, ուրեմն՝ շնորհ ըրէ կրակարանին վրայ ձգած քսակս առնելու:

—Անհո՛գ եղիր։

Բորթոս իր հանդարտ և ծանր քայլերով դէպի ախոռը գնաց, և զինուորներուն մէջէն անցաւ, որոնք զմայլեցան անոր բարձր հասակին և ուժեղ անդամներուն վրայ։

Փողոցին անկիւնը՝ Մուսքթօնին հանդիպեցաւ և իրեն հետ առաւ։

Այն ատեն տ'Արդանեան ներս մտաւ պզտիկ երգ մը մրմնջելով զոր Բորթոսին մեկնելու ատենը սկսեր էր։

—Սիրելիդ իմ Աթոս, քու ըրած խորհրդածութեանդ վրայ բաւական խորհեցայ և համոզուեցայ. յիրաւի կը ցաւիմ այս գործին մէջ գտնուելուս։ Արդէն ըսիր, Մազարէն ամարդի սրիկայ մըն է։ Ուստի որոշեցի ձեզի հետ խոյս տալու, դիտողութիւն պէտք չէ, պատրաստ գտնուեցէք ձեր երկու սուրերը անկիւնն են, մի՛ մոռնաք զանոնք, այնպիսի գործիք են որ այս մեր գտնուած պարագայից մէջ կրնան մեզի շատ օգտակար ըլլալ. ատով կը յիշեմ նաև Բորթոսի քսակը. լա՛ւ, ահաւասիկ։

Եւ տ'Արդանեան քսակը գրպանը դրաւ։ Երկու բարեկամները անոր ըրածը կը դիտէին ապշութեամբ։

—Լա՛ւ, ի՞նչ կայ զարմանալի այս ընթացքիս մէջ, ըսաւ տ'Արդանեան, կը հարցնեմ ձեզ։ Կոյր էի, Աթոս աչքս բացաւ, ահա բոլոր գործը։ Հո՛ս եկէք։

Երկու բարեկամները մօտեցան։

—Կը տեսնէ՞ք սա փողոցը, ըսաւ տ'Արդանեան, այնտեղ պիտի գտնուին ձիերը. դուռնէն դուրս կ'ելլէք, ձախ կողմը կը դառնաք, կ'աշտանակէք շուտով և ամէն ինչ կը լմննայ. բանէ մը մի՛ վրդովուիք, միայն նշանը լաւ լսեցէք։ Այս նշանը պիտի ըլլայ «Տէր Յիսուս» գոչելս։

—Բայց դուն, դուն խօսք կուտա՞ս որ մեզի հետ պիտի գաս, տ'Արդանեան, ըսաւ Աթոս։

—Աստուծոյ վրայ կ'երդնում։

—Երբ «Տէ՛ր Յիսուս» աղաղակդ լսենք, դուրս կ'ելլենք, մեր դէմ ի՛նչ որ հանդիպի կը տապալենք, մեր ձիերուն կը

վազենք. կ'աշտանակենք և խթանը կը զարնենք, միթէ ա՞յս է խնդրածդ։

—Սքանչելի՛ է։

—Նայէ՛, Արամիս, ըսաւ Աթոս, քեզի միշտ կ'ըսեմ, մեր մէջ տ'Արդանեան ամէնէն լաւն է։

—Աղէ՛կ, ըսաւ տ'Արդանեան, գովեստներ տալու սկսաք, ուրեմն փախչիմ, մնաք բարով։

—Եւ մեզի հետ պիտի փախչիք, այնպէս չէ՞։

—Անշո՛ւշտ։ Մի՛ մոռնաք նշանը, «Տէր Յիսուս»։

Եւ եկած կերպով դուրս ելաւ, միևնոյն երգը սկսելով մրմռալ ընդհատած տեղէն։

Զինուորները կը խաղային կամ կը քնանային. երկուքը սխալ ձայնով կ'երգէին սաղմոսի մը տունէն։

Տ'Արդանեան յիսնապետը կանչեց։

—Սիրելի պարոն, ըսաւ անոր, Քրոմվէլ զօրապետը Մօրտօնդի միջոցով զիս ուզեր է, կ'աղաչեմ գերիններու վրայ հսկելու բարեհաճիք։

Յիսնապետը նշան ըրաւ որ գաղղիերէն չի գիտեր։

Այն ատեն տ'Արդանեան նշաններով հասկցնելու ջանաց ինչ որ խօսքով չէր կրցած հասկցնել։

Յիսնապետը նշան ըրաւ որ իմացեր է գործը։

Տ'Արդանեան դէպի ախոռը իջաւ, հինգ ձիերը թամբած գտաւ։

—Ձեզմէ ամէն մէկը թո՛ղ ձեռքը ձի մը առնէ ըսաւ Բորթոսին և Մուսքթոնին, ձախ կողմը դարձէք այնպէս որ Աթոս և Արամիս ձեզ տեսնեն իրենց պատուհանէն։

—Ուրեմն պիտի գա՞ն ըսաւ Բորթոս։

—Պահակէ մը։

—Քսակս չմոռցար յուսամ։

—Ո՛չ, հանգիստ եղիր։

—Լա՛ւ։

Եւ Բորթոս ու Մուսքթօն, իւրաքանչիւրը ձեռքը ձի մը բռնած՝ որոշեալ տեղը գացին։

Այն ատեն տ'Արդանեան մինակ մնալով՝ կայծքարը զարկաւ, կտոր մը աբէթ վառեց, ձին հեծաւ, և դրան առջեւ զինուորներուն մէջտեղը կեցաւ։

Մինչդեռ ձեռքովը կենդանին կը փայփայէր, անոր ականջը խօթեց աբէթի հրավառ փոքրիկ կտորը։

Տ'Արդանեանի չափ քաջ ձիավարժ ըլլալ պէտք էր այսպիսի միջոց մը փորձելու. վասնզի երբ երիվարը զգաց հրավառ խանձը՝ վշտագին աղաղակ մը արձակեց, ճախրեց և ոտնեց որպէս թէ խելագարեր էր։

Զինուորները՝ զոր ճզմելու կը սպառնար, արտորնօք հեռացան։

—Հասէ՛ք, հասէ՛ք, կը պօռար տ'Արդանեան։ Կեցուցէ՛ք՝ կեցուցէ՛ք, երիվարս թալա՜ն ունի։

Եւ իրօք՝ քիչ ատենէն կարծես թէ աչքերէն արիւն կը հոսէր, և բերանէն փրփուր դուրս կը ժայթքէր։

—Հասէ՛ք ինծի, կը պոռար միշտ տ'Արդանեան, մինչդեռ զինուորները չէին համարձակեր անոր օգնութեան հասնիլ։ Հասէ՞ք ինձ, միթէ պիտի թողո՞ւք որ սպաննուիմ, «Տէ՛ր Յիսուս».

Հազիւ թէ տ'Արդանեան այս աղաղակը արձակեց, որ դուռը բացուեցաւ, և Աթօս ու Արամիս սուրը ձեռքերնին դուրս յարձակեցան։

Բայց տ'Արդանեանի հնարքին շնորհիւ, ճամբան բաց էր.

—Գերիները կը փախչի՛ն, գերիները կը փախչին ահա, գոչեց յիսնապետը։

—Կեցի՛ր, կեցի՛ր, գոչեց տ'Արդանեան իր կատղած ձիուն սանձը արձակ թողլով, որ սրացաւ քանի մը մարդ գետին տապալելով։

—Կեցի՛ր, կեցի՛ր, պոռացին զինուորները իրենց զէնքը առնելու վազելով։

Բայց գերիները արդէն աշտանակեր էին, և երբ անգամ մը հեծան ժամանակ չկորսնցուցին մօտագոյն դրան կողմը սրանալով։ Փողոցին մէջտեղ Կրիմօն և Պլէզուան տեսան, որ իրենց տէրը փնտռելով կուգային։

Աթօս նշան մը ընելով միայն, ամէն ինչ հասկցուց Կրիմօյին որ սկսաւ փոքրիկ գունդին ետեւէն երթալ որ մրրիկի կը նմանէր և տ'Արդանեան ալ որ ետեւէն կը վազէր իր ձայնովը աւելի կը գրգռէր զանոնք։ Դուռնէն շուքի պէս անցան, պահակները և ոչ իսկ շարժում մը ըրին զանոնք կեցնելու և այսպէս փախստականները ինքզինքնին բաց դաշտին մէջ գտան։

Նոյն միջոցին՝ անգլիացի զինուորները անդադար կը պոռային փախստականներուն ետեւէն. կեցէ՛ք, կեցէ՛ք, և խեղճ յիսնապետը որ սկսեր էր տեսնել թէ խորամանկութեան մը և խաբէբայութեան մը զոհուեր էր, լուտանքներ կը տեղացնէր Փրանսացի փախստականներուն հասցէին, և ոտքերը գետինը զարնելով մազերը կը փետտէր։

Այս միջոցին հեռուէն սրարշաւ ձիաւորի մը գալը տեսնուեցաւ, երեսին վրայ սատանայական ժպիտ մը ունենալով և ձեռքը թուղթ մը բռնած որ ուղղակի յիսնապետին կողմը դիմեց։

Մօրտօնդն էր որ հրամանագիրը Քրօմվէլլ ստորագրել տուած կուգար։

—Գերինե՞րը, հարցուց յիսնապետին, ձիէն վար ցատկելով։

Յիսնապետը պատասխան տալու ույժ չունեցաւ. կռնակի վրայ բացուած դուռը և պարապ սենեակը ցուցուց։ Մօրտօնդ աստիճաններուն կողմը վազեց և ամէն բան հասկցաւ. աղաղակ մը արձակեց որպէս թէ իր աղիքը կը պատռէին, և քարին վրայ մարած ինկաւ։

ԺԶ.

ՈՐՈՒ ՄԷՋ Կ'ԱՊԱՑՈՒՑՈՒԻ ԹԷ՝ ԱՄԵՆԱԴԺՈՒԱՐԻՆ ԿԱՑՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԷՋ ԻՍԿ, ՄԵԾ ՀՈԳԻՆԵՐԸ ԵՐԲԵՔ ՔԱՋՈՒԹԻՒՆՆԻՆ ՉԵՆ ԿՈՐՍՆՑՆԵՐ ԵՒ ՈՉ ԱԼ ԼԱՒ ՍՏԱՄՈՔՍՆԵՐԸ ԱԽՈՐԺԱԿ

Այսպէս փոքրիկ խումբը լուռ ու մունջ և առանց ետին նայելու սրարշաւ ընդառաջ վազեց՝ ոտքով պզտիկ գետ մը անցաւ, որուն անունը ոչ ոք գիտէր, և ձախ կողմը թողլով քաղաք մը՝ զոր Աթոս կը կարծէր թէ Տուրհէմն է։ Ի վերջոյ անտառակ մը տեսան և նոյն կողմը զարնելով վերջին անգամ մը ևս ձիերուն խթանը տուին։

Հետզհետէ անյայտ եղան բաւական խիտ խառներու մէջ, այնպէս որ թերևս զիրենք հետապնդողներուն աչքէն թաքուն կրնային մնալ, կանգ առին խորհրդակցելու, ձիերը երկու սպասաւորներու տուին, որպէսզի առանց թամբերն ու սանձերը հանելու քիչ մը շունչ առնեն, և Կրիմոն պահակութիւն ընելու սահմանեցին։

—Նախ արի՛ քեզի գրկեմ, բարեկամդ իմ, ըսաւ Աթոս, տ'Արդանեանի, դուն մեր ազատիչը, դուն որ մեր մէջ ճշմարիտ դիւցազն ես։

—Աթոս իրաւունք ունի և քու վրադ կը զմայլիմ, ըսաւ Արամիս ըստ կարգի, իր թեւերուն մէջ սեղմելով զայն, ի՛նչ մեծ բաներու չէիր կրնար հասնիլ խելացի տիրոջ մը ներքեւ, դո՛ւն անվրիպելի աչք, պողովատիկ թեւ, յաղթական միտք։

—Հիմա ըսաւ Կասքօնը, չեմ դժկամակիր, ամէն ինչ ինծի և Բօրթօսի համար կ'ընդունիմ, թէ՛ գրկախառնութիւն և թէ շնորհակալիք, ժամանակ չունինք կորսնցնելու անհոգ եղէք։

Երկու բարեկամներ՝ տ'Արդանեանի խօսքէն իմացան թէ որչափ շնորհապարտ պարտաւոր են ըլլալ նաև Բօրթօսի, և ըստ կարգի անոր ձեռքն ալ սեղմեցին։

—Հիմակ, ըսաւ Աթոս, պէտք չէ որ ըստ դիպուածի և խելագարներու պէս վազենք, այլ յատակագիծ մը յօրինենք թէ՝ ի՞նչ պիտի ընենք։

—Ի՞նչ պիտի ընենք, կրո՛ղ, դժուարին չէ ըսելը։

—Ըսէ՛ ուրեմն տ'Արդանեան։

—Ամէնէն մօտիկ նաւահանգիստը կը դիմենք, մեր բոլոր ունեցածը կը ժողվենք, նաւ մը վարձու կը բռնենք և Ֆրանսա կ'անցնինք։ Իսկ ես, մինչև յետին թանկս պիտի տամ։ Կեանքն է առաջին գանձը և մերն ալ, պէտք է խոստովանիլ որ թելէ մը կախուած է այս պահուս։

—Ի՞նչ կ'ըսես այս մասին, տիւ Վալլօն, հարցուց Աթոս։

—Ես, ըսաւ Բօրթօս, բոլորովին տ'Արդանեանի կարծիքէն եմ. իրաւի այս Անգլիան անպիտան երկիր մըն է։

—Ուրեմն միտքդ հաստատ դրա՞ծ ես հեռանալու, հարցուց տ'Արդանեանի։

—Կրո՛ղ, ըսաւ տ'Արդանեան, չեմ հասկնար թէ ի՛նչ պատճառաւ հոս պիտի մնամ։

Աթոս Արամիսին հետ ակնարկ մը փոխանակեց։

—Ուրեմն գացէ՛ք բարեկամներս, ըսաւ հառաչելով։

—Ի՞նչպէս գացէք, ըսաւ տ'Արդանեան։ Երթա՛նք պիտի ըսէք, կարծեմ։

—Ո՛չ, բարեկամ, ըսաւ Աթոս, պէտք է որ բաժնուինք։

—Բաժնուի՛նք, ըսաւ տ'Արդանեան այս անակնկալ լուրին վրայ շուարած։

—Բա՛, գոչեց Բօրթօս, ինչո՞ւ բաժնուինք քանի որ միատեղ ենք։

—Վասնզի ձեր պաշտօնը լրացած է, կարող էք և պարտաւոր էք Ֆրանսա վերադառնալ, բայց մեր յատուկ պաշտօնը դեռ լմնցած չէ։

—Ձեր պաշտօնը լրացած չէ՛, ըսաւ տ'Արդանեան Աթոսին նայելով զարմանքով։

—Ո՛չ, բարեկամս, պատասխանեց Աթոս, հոս եկանք Շարլ Թագաւորը պաշտպանելու, զանիկա գէշ պաշտպանեցինք, կը մնայ մեզ զանիկա ազատել։

—Ազատե՛լ Թագաւորը, ըսաւ տ'Արդանեան Արամիսին նայելով ինչպէս որ նայեր էր Աթոսին։

Արամիս բաւական համարեց գլխով նշան մը ընելու։

Տ'Արդանեանի դէմքը խորին կարեկցութեան երեւոյթ մը առաւ, սկսաւ հաւատալ որ իր գործը երկու խելագարներու հետ է։

—Կարելի բան չէ որ լրջօրէն այդպէս խօսիս, Աթոս, ըսաւ տ'Արդանեան, Թագաւորը բանակի մը մէջ է որ զինքը Լոնտոն կը տանի։ Այն բանակին հրամանատարը մսավաճառ մը, կամ մսավաճառի մը որդին է, այն է գնդապետ Հէրիսոն։ Թագաւորը դատաստանի պիտի կոչուի Լոնտոն հասնելուն, կը հաւատամ ձեզ այս բանս, վասնզի այս նիւթիս վրայ Գ. Օլիվիէ Քրոմվէլի բերնէն բաւական բաներ լսելուս գիտեմ ի՛նչ պիտի պատահի։

Աթոս և Արամիս երկրորդ անգամ իրարու նայեցան։

—Իսկ դատաստանը տեսնուելէն ետք՝ վճիռը քիչ ատեն ի գործ պիտի դրուի, շարունակեց տ'Արդանեան։ Ո՛հ, պարոնայք մաքրակրօնները շուտ գործ տեսնող մարդիկ են։

—Եւ ի՞նչ պատիժի կարծես որ դատապարտեն Թագաւորը, հարցուց Աթոս։

—Կը վախնամ որ մահուան պատիժը չըլլայ. անոր դէմ շատ բաներ ըրին և չեմ կարծեր որ ներէ, միջոց մը միայն ունին, այն է զանիկա սպաննել։ Միթէ չգիտէ՞ք Գ. Օլիվիէ Քրոմվէլի ըսած խօսքը, երբ Բարիզ գտնուելով, Վէնսէնի զնդանը անոր ցոյց տուին, որու մէջ Գ. տը Վանտոմ բանտարկուած էր։

—Ի՞նչ խօսք էր այն, հարցուց Բորթոս։

—Իշխաններուն մինակ գլխին դպչիլ պէտք է։

—Գիտէի այդ խօսքը, ըսաւ Աթոս։

—Եւ միթէ կը կարծե՞ս թէ իր առածը ի գործ չի դներ, հիմակ որ Թագաւորը իր ձեռքին տակն է։

—Անշո՛ւշտ, մանաւանդ թէ ստոյգ եմ, բայց այս ալ նոր պատճառ մըն է սպառնացեալ գլուխը անօգնական չթողուլ։

—Աթո՛ս, կը խենդե՞նաս։

—Ո՛չ, բարեկամ պատասխանեց կամը մեղմիւ. երբ Վինդր եկաւ Ֆրանսա մեզ փնտռեց և տիկին Հանրիէդին ներկայացուց, Նորին Վեհափառութիւնը պատուեց մեզ՝ Գ. Հէրպլէյի և իմ օգնութիւնս խնդրելու իր ամուսինին համար. մեր խօսքը տուինք անոր, մեր խոստումը ամէն ինչ կը պարունակէր. այն մեր զօրութիւնն էր, մեր իմացականութիւնը, մեր կեանքն էր վերջապէս, և ամէնը անոր նուիրեցինք. կը մնայ մեզ մեր խոստումը պահելու։ Հէ՛րպլէյ, միթէ քու կարծիքդ ա՞յս է։

—Այո՛, ըսաւ Արամիս, խոստացանք։

—Ասկէ զատ, շարունակեց Աթոս, ուրիշ պատճառ մը եւս ունիմ, և ահաւասիկ. լա՛ւ մտիկ ըրէք։ Ամէն ինչ ողորմելի և գձուձ վիճակի մէջ է այժմ ի Ֆրանսա։ Տասը տարեկան Թագաւոր մը ունինք որ տակաւին ուզածը չգիտէ. Թագուհի մը ունինք որ ուշահաս սիրով մը կուրացեր է. պաշտօնեայ մը ունինք որ Ֆրանսան կը վարէ ինչպէս կը վարեն ընդարձակ ագարակ մը, այսինքն ուրիշ բանի չմըտածեր, բայց եթէ որչափ ոսկի կրնայ բերել իտալական խարդախութիւնով և խորամանկութեամբ զայն մշակելով. իշխաններ ունինք որ անձնական և եսական դիմադրութիւն մը կը ցուցնեն, և իրենց ձեռքը ուրիշ բան չպիտի հանեն բայց եթէ քանի մը ոսկիի ձողեր և իշխանութեան կտորներ զոր Մազարէնէն պիտի կորզեն։ Շահէս չարժեալ անոնց ծառայեցի, այլ սկզբունքով, վասնզի իրենց արժանիքին չափ կը յարգեմ զիրենք և իմ յարգանացս մէջ բարձր տեղ մը չեն բռներ։ Սակայն այս խնդիրը տարբեր է. այսօր իմ ճամբուս վրայ բարձրագիր դժբախտ մը, արքայական դըժ-

բախտութիւն մը, եւրոպական դժբախտութիւն մը կը տեսնեմ և անոր կը յարիմ։ Եթէ Թագաւորը ազատելու յաջողինք, գեղեցիկ բան պիտի ըլլայ, եթէ անոր համար մեռնինք վեհանձն գործ մը պիտի ըլլայ։

—Այսպէս կանխաւ գիտես որ պիտի կորսուիս, ըսաւ տ'Արդանեան։

—Կը վախնամ որ այդպէս պիտի ըլլայ և միակ ցաւս է ձեզմէ հեռու մեռնիլը։

—Ի՞նչ պիտի երթաք ընելու օտար թշնամի երկրի մը մէջ։

—Երբ նորատի էի, Անգլիա ճամբորդութիւն ըրի, անգլիացիի պէս անգլիերէն կը խօսիմ, և Արամիս ալ քիչ շատ կը խօսի այս լեզուն։ Ա՛հ, թէ որ դուք ալ մեզի միանայիք, բարեկամներս։ Տ'Արդանեան քեզի հետ, Բորթօս անոր հետ, մենք չորս հոգի, և քսան տարիէ ի վեր առաջին անգամ միանալով ոչ միայն Անգլիոյ այլ երեք տէրութեան դէմ կրնայինք մաքառիլ։

—Եւ միթէ խոստացա՞ր այն Թագուհիին, աւելցուց տ'Արդանեան սրտնեղութեամբ, Լոնտոնի աշտարակը բռնի բանալ, հարիւր հազար զինուոր սպաննել, համայն ազգի մը փափաքանաց յաղթանակաւ դիմակալել, նոյնպէս մարդու մը փառասիրութեան դէմ, երբ այս մարդը Քրոմվէլ կը կոչուի։ Լա՛ւ, Դուն Աթօս, դուն Արամիս, տեսած չէք այն մարդը՝ մեծ հանճարեղ մարդ մըն է, որ մեր Կարտինալը, միւսը, ամէն Կարտինալը միտքս բերաւ. գիտէ՞ք արդեօք: Ուստի չափէն աւելի պարտքդ մի մեծցներ, յանո՛ւն երկնից, սիրելիդ իմ Աթօս, անօգուտ տեղը անձնուիրութեամբ մի՛ զինուիր։ Արդարեւ, երբ քեզ կը նայիմ, կ'երեւի ինծ որ բանաւոր մարդ մը կը տեսնեմ, երբ ինծի կը պատասխանես, կ'երեւի ինծ որ խենդի մը հետ կը խօսիմ։ Նայի՞նք, Բորթօս, ինծի միացի՛ր։ Ի՞նչ կը խորհիս այս գործին վրայ, խնդրեմ բացէ ի բաց խօսէ։

—Լա՛ւ բաներ չեմ գուշակեր, պատասխանեց Բորթօս։

—Տեսնենք, շարունակեց տ'Արդանեան, որուն համբերութիւնը կը հատնէր գիտնալով որ Աթօս փոխանակ զինք մտիկ ընելու՝ ներքին ձայնի մը մտադիր կ'երեւէր, երբեք իմ խորհուրդներս ձեզի փորձանք բերած չեն. լա՛ւ ուրեմն, հաւատա՛ ինծ, Աթօս, քու պաշտօնդ աւարտած է, և ազնուօրէն աւարտած, մեզի հետ Ֆրանսա դարձէք։

—Բարեկամ, ըսաւ Աթօս, մեր դիտաւորութիւնն անսասանելի է։

—Բայց մեզի անյայտ ուրիշ պատճառ մը ունի՞ք։

Աթօս ժպտեցաւ:

Տ'Արդանեան իր սրունքը զարկաւ բարկութեամբ և կըրցածին չափ համոզկեր պատճառներ մէջ բերաւ. բայց բոլոր այս պատճառներուն, Աթօս հանդարտ և անուշ ժպիտով մը պատասխանելը բաւական սեպեց, և Արամիս ալ գլուխը նըշանացի օրրելով։

—Լա՛ւ ուրեմն, գոչեց վերջապէս տ'Արդանեան մոլեգին, լա՛ւ ուրեմն, քանի որ այսպէս կ'ուզէք, մեր ոսկորները այս չարաչուք հողին վրայ թողունք ուրեմն, երկիր մը ուր միշտ ցուրտ կ'ընէ, ուր աղէկ օդը մշուշ է, մշուշը անձրեւ, և անձրեւը ջրհեղեղ, ուր արեւը լուսնին կը նմանի, և լուսինն ալ կլոր պանիրի։ Իրօք, հոս կամ ուրիշ տեղ մեռնիլը, քանի որ պիտի մեռնինք փոյթ չէ։

—Մինակ սա մտածէ, սիրելի բարեկամ, ըսաւ Աթօս, որ աւելի շուտ մեռնիլ է։

—Վա՛շ, քիչ մը աւելի կանուխ, քիչ մը աւելի ուշ, հոգ չէ, այս մասին բծախնդիր ըլլալու հարկ չկայ։

—Եթէ ինծ զարմանք պատճառող բան մը կայ, ըսաւ վճռաբար Բորթօս, սա է որ դեռ գործի սկսած չենք:

—Ո՛հ, պիտի սկսինք, հանդարտ եղիր, Բորթօս, ըսաւ տ'Արդանեան։ Այսպէս որոշուած է, շարունակեց Կասքոնը, և եթէ Բորթօս չդիմադրեր...։

—Ե՛ս, ըսաւ Բորթօս, ի՛նչ որ ուզէք պիտի ընեմ։ Ասկէ զատ՝ շատ լաւ կը գտնեմ քիչ մը առաջ Լա Ֆէր կոմսին ըսածը։

—Բայց քու ապագա՞դ, տ'Արդանեան, քու փառասիրական փափաքնե՞րդ, Բորթօս։

—Մեր ապագա՛ն, մեր փառասիրութի՛ւնը, ըսաւ տ'Արդանեան տենդային արագութեամբ մը, միթէ այս բաներուն վրայ մտածելու պէտք ունի՞ք, քանի որ թագաւորը պիտի ազատենք։ Երբ անգամ մը թագաւորը ազատենք, իր բարեկամները կը գումարենք, մաքրակրօնները կը յաղթահարենք, Անգլիան կը նուաճենք վերստին, անոր հետ Լոնտոն կը մըտնենք, աղւորիկ մը իր գահին վրայ կը նստեցնենք զայն...։

—Եւ մեզ դուքս ու նախարար կ'անուանէ, ըսաւ Բորթօս, որուն աչքերը ուրախութենէն կը շողային, մինչեւ անգամ առասպելի մը մէջէն այս ապագան նշմարելով։

—Կամ մեզ կը մոռնայ, ըսաւ տ'Արդանեան։

—Ո՛հ, ըրաւ Բորթօս։

—Իրաւ որ այդ արդէն տեսանք, Բորթօս բարեկամ, և կ'երեւի ինձ որ երբեմն Աւստրիացի Աննայի այնպիսի ծառայութիւն մը ըրինք որ շատ վար չէր մնար այսօր Շարլ Ա.ին մեր ընելիք ծառայութենէն, և սակայն դարձեալ Աննա թագուհին քսան տարի չարունակ մեզ մոռցաւ։

—Լա՛ւ ուրեմն, այս բանը չնայելով, տ'Արդանեան, ըսաւ Աթօս, միթէ կը ցաւիս անոր այն ծառայութիւնն ընելուդ վրայ։

—Իրաւ որ չեմ ցաւիր, ըսաւ տ'Արդանեան, և կը խոստովանիմ իսկ որ իմ սրտնեղութիւններս բռնած առենները, լա՛ւ, նոյն յիշատակին մէջ մխիթարութիւն մը գտայ։

—Կը նայի՞ս, տ'Արդանեան, որ ատէպ իշխաններն ապերախտ են, բայց Աստուած բնաւ չէ։

—Բան մը ըսե՞մ, Աթօս, ըսաւ տ'Արդանեան, կարծեմ որ եթէ երկրի վրայ սատանան գտնէիր, այնպէս պիտի չահէիր զայն որ քեզի հետ երկինք պիտի տանէիր։

—Ուրեմն այսպէ՞ս, ըսաւ Աթօս տ'Արդանեանի կարկառելով իր ձեռքը։

—Այսպէս ուրեմն, որոշուած է, ըսաւ տ'Արդանեան, Անգլիան չքնաղ երկիր մը կը գտնեմ, և հոն կը մնամ, բայց պայմանաւ մը։

—Ի՞նչ պայմանաւ։

—Սա պայմանաւ որ անգլիերէն սորվելու չստիպեն զիս։

—Լա՛ւ ուրեմն, հիմակ. ըսաւ Աթօս, յաղթանակաւ, կ'երդնում քեզ, բարեկամդ իմ, մեզ լսող Աստուծոյ վրայ, իմ անուանս վրայ զոր անարատ կը համարեմ, կարծեմ թէ զօրութիւն մը կայ որ մեր վրայ կը հսկէ և յոյս ունիմ որ չորսերնիս ալ Ֆրանսան պիտի տեսնենք:

—Թո՛ղ այդպէս ըլլայ, ըսաւ տ'Արդանեան, բայց ես կը խոստովանիմ որ ասոր հակառակ համոզում մը ունիմ։

—Այս սիրելի տ'Արդանեանը, ըսաւ Արամիս, մեր մէջ Բարլամէնթներու դիմադիր կողմը կը ներկայացնէ, որ միշտ ո՛չ կ'ըսեն և միշտ այո՛ կը գործեն։

—Այո՛, բայց անոնք են դարձեալ հայրենիքը ազատողները, ըսաւ Աթօս։

—Լա՛ւ հիմակ որ ամէն ինչ որոշուած է, ըսաւ Բորթօս ձեռքերը շփելով, գէշ չըլլար եթէ քիչ մըն ալ ճաշելու վրայ խօսինք. ինձ կ'երեւի որ մեր կենաց ամէնէն ծանրակշիռ կացութեան մէջ միշտ ճաշ ըրած ենք.

—Ա՛հ, այո՛, ի՛նչ աղուոր ճաշ կ'ընէ մարդ երկրի մը մէջ ուր միայն ջուրով խաշած միս կ'ուտեն, և իբրև հարկինք, մի միայն գարեջուր կայ։ Աթօ՛ս, ո՞ր սատանան բերաւ քեզ այսպիսի երկիր մը։ Ա՛հ, ներէ՛, յարեց ան ժպտելով, կը մոռնայի որ ա՛լ միեւնոյն Աթօսը չես։ Բայց, ի՞նչ փոյթ. ի՞նչ յատակագիծ չինեցիր, Բորթօս, ճաշելու մասին։

—Իմ յատակագի՞ծս:

—Այո՛, յատակագիծ մը ունի՞ս։

—Ո՛չ, անօթի եմ միայն։

—Իրաւ որ եթէ այդ է միայն, ես ալ անօթի եմ. բայց անօթի ըլլալը բաւական չէ, պէտք է նաև ուտելիք գտնել, եթէ չենք ուզեր՝ մեր ձիերուն պէս խոտ ուտել...։

—Ա՛հ, ըրաւ Արամիս, որ Աթօսին չափ աշխարհիկ բա-

ները բաժնուած չէր, երբ Բարրայեօ կը գտնուէինք, կը յի-
շե՞ս արդեօք թէ ի՛նչ աղուոր սարէններ կ'ուտէինք:

—Հապա այն աղած ոչխարի զիստերը չե՞ս ըսեր, աւել-
ցուց Բորթօս իր լեզուն շրթներուն վրայ քսելով:

—Բայց, ըսաւ տ'Արդանեան, միթէ մեր բարեկամ Մուսք-
դօնը հոս չէ՞ որ այնչափ աղուոր կերակուրներ կը գտնէր
քեզի, Բորթօս ի Շանթիյեի:

—Այդպէ՛ս, ըսաւ Բորթօս, Մուսքդօնն ունինք, բայց
որքա՛ն մատակարար եղեր է, շատ ծանրացեր է, հոգ չէ բայց,
կանչենք զայն:

Եւ որպէսզի ստոյգ ըլլան որ նպաստաւոր պատասխան
պիտի առնեն.

—Է՛հ, Մուսքդօն, գոչեց Բորթօս:

Մուսքդօն երեւցաւ իր դէմքը շատ ողորմելի էր:

—Բայց ի՞նչ ունիս, սիրելիդ իմ Պ. Մուսդօն, ըսաւ
տ'Արդանեան, արդեօք հիւա՞նդ ես:

—Պա՛րոն, շատ անօթի եմ, պատասխանեց Մուսքդօն:

—Լա՛ւ ուրեմն, ճիշդ այս բանին համար քեզ կանչեցինք,
սիրելիդ իմ Պ. Մուսդօն: Արդեօք չե՞ս կրնար քանի մը սի-
րուն ճագարներ և քանի մը չքնաղ կաքաւներ գտնել և մեզի
խորտիկ եփել, ինչպէս կ'ընէիր պանդոկ մը ոհ... իրաւ որ
մոքէս ելեր է պանդոկին անունը:

—Պանդո՞կը... ըսաւ Բորթօս, ճշմարիտը ես ալ չեմ յի-
շեր:

—Հոգ չէ, հապա թէ որ ակիշով քանի մը շիշ Պուրկօնեի
գինի որսայիր ի՞նչ գեղեցիկ բան կ'ըլլար, ինչպէս որ կ'ընէիր
ատեն մը տիրոջդ ոտքի ճմլածը բուժելու համար:

—Ափսո՛ս, պարոն, ըսաւ Մուսքդօն. կը վախնամ որ
այս ահռելի երկրին մէջ ձեր բոլոր խնդրած բաները շատ հազ-
ուագիւտ ըլլան, և կարծեմ թէ աւելի լաւ կ'ըլլայ եթէ ան-
տառին եզերքը տնկուած տնակի մը տիրոջմէն ասպնջակա-
նութիւն խնդրենք:

—Ի՞նչպէս, միթէ շրջակաները տուն մը կա՞յ, հարցուց
տ'Արդանեան:

—Այո՛, պարոն, պատասխանեց Մուսքդօն:

—Լա՛ւ ուրեմն, ինչպէս որ կ'ըսես, բարեկամ, երթանք
սա տնակին տիրոջմէն կերակուր խնդրելու: Պարո՛ններ, ի՞նչ
է ձեր կարծիքը, և միթէ Պ. Մուսդօնի խորհուրդը ձեզի բա-
նացի չե՞րեւիր:

—Է՛հ, է՛հ, ըսաւ Արամիս, հապա եթէ տանտէրը մաք-
րակրօն է...,

—Աւելի՛ աղէկ, կրօ՛ղ, ըսաւ տ'Արդանեան, եթէ մաք-
րակրօն է, անոր պիտի իմացնենք թագաւորին ձերբակալու-
թիւնը, և ի պատիւ այս լուրին, իր սպիտակ հաւերը մեզի
պիտի տայ:

—Հապա թէ որ ասպետ է, ըսաւ Բորթօս:

—Այն ատեն սգաւոր կերպարանք մը կ'առնենք, և անոր
սեւ հաւերը կուտենք:

—Շատ երջանիկ ես, ըսաւ Աթօս ժպտելով ակամայ ան-
զսպելի Կասքօնին կատակին վրայ, վասնզի ամէն բանի ծի-
ծաղելով կը նայիս:

—Ի՞նչ ընեմ, ըսաւ տ'Արդանեան, այնպիսի երկրէ մըն
եմ որուն երկինքը ամպ մը չկայ:

—Այս երկրին չնմանիր անշուշտ, ըսաւ Բորթօս և ձեռքը
կարկառեց որ տեսնէ թէ արդեօք անձրեւի կաթի՞լ մըն էր որ
երեսին վրայ իյնալով զովութիւն մը բերաւ իրեն:

—Օ՛ն, օ՛ն, երթա՛նք. ըսաւ տ'Արդանեան, այս ալ նոր
պատճառ մըն է ճամբայ ելլելու...: Հէ՛յ, Կրի՛մօ:

Կրիմօ երեւցաւ:

—Լա՛ւ ուրեմն, բարեկամ Կրիմօ, միթէ բան մը տեսա՞ր,
հարցուց տ'Արդանեան:

—Ո՛չինչ, պատասխանեց Կրիմօ:

—Այն ապուշ մարդիկ, ըսաւ Բորթօս, և ոչ իսկ մեր
ետեւէն վազեցին: Ո՛հ, թէ որ անոնց տեղը ըլլայինք:

—Է՛հ, անիրաւ են այս մասին, ըսաւ տ'Արդանեան, այս
փոքրիկ Թէբայիտի մէջ Մօրտօնդի քանի մը խօսք պիտի ըսէի
յօժարակամ: Նայէ անգամ մը մարդ մը պառկեցնելու համար
սիրուն տեղ մը:

—Արդարե՛ւ, ըսաւ Արամիս, կարծեմ թէ պարո՛ններ, որդին մօրը չափ ճարտար չէ։

—Է՛հ, սիրելի բարեկամ, պատասխանեց Աթօս, քիչ մը համբերէ, երկու ժամ հազիւ կայ որ իրմէ հեռացեր ենք, տակաւին չգիտեր թէ ո՛ր կողմը կը դիմենք, չգիտեր թէ ո՛ւր ենք։ Ֆրանսայի հողը ոտք կոխելէն ետք միայն պիտի կըրնանք ըսել թէ իր մօրը չափ ճարպիկ չէ, եթէ մինչեւ այն ատեն սպաննուած կամ թունաւորուած չենք։

—Առ այժմ ճաշ ընենք, ըսաւ Բօրթօս։

—Իրաւ որ ընենք, ըսաւ Աթօս, վասնզի շատ անօթի եմ։

—Սև հաւերուն վտա՛նգ կայ, ըսաւ Արամիս։

Եւ չորս բարեկամները՝ Մուսքդօնի առաջնորդութեամբ, դէպի տունը գացին, արդէն իրենց նախկին անհոգ ձեւերը առած էին, վասնզի այժմ չորսերնին ալ միաբան և համաձայն էին, ինչպէս որ Աթօս ըսեր էր։

ԺԷ.

ՈՂՋՈ՜ՅՆ ԱՆԿԵԱԼ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ

Մեր փախստականները քանի տունին կը մօտենային գետինը ձիերու հետքեր կը տեսնէին, որմէ կ'երեւէր թէ իրենց առջեւէն արդէն հեծելազօրաց գունդ մը անցեր էր. դրան առջեւ աւելի նշմարելի եղան հետքերը այս անծանօթ զօրագունդը այն կողմը դադար առեր էր։

—Ճշմարիտը, ըսաւ տ'Արդանեան, գործը յայտնի կ'երեւի. Թագաւորը ու իր պահապանները ասկից անցած պիտի ըլլան։

—Կրո՛ղ, ըսաւ Բօրթօս, ուրեմն ամէն բան կերած լափած են։

—Բա՛, ըսաւ տ'Արդանեան, անշուշտ հաւ մը ձգած պիտի ըլլան։

Եւ ձիէն վար իջնելով դուռը զարկաւ, բայց ոչ ոք պատասխանեց։

Դուռը՝ որ կղպանքով չէր գոցուած, հրեց և տեսաւ որ առաջին սենեակը պարապ և անբնակ էր։

—Լա՛ւ, ուրե՞մն, հարցուց Բօրթօս։

—Մարդ չեմ տեսներ, ըսաւ տ'Արդանեան։ Վա՜յ, վա՛յ։

—Ի՞նչ կայ։

—Արիւն։

Այս խօսքին վրայ՝ երեք բարեկամները իրենց ձիերէն վար ցատկեցին և առաջին սենեակը մտան. բայց տ'Արդանեան արդէն երկրորդ սենեակին դուռը հրեր էր, և անոր դէմքին երեւոյթէն, յայտնի էր որ արտաքոյ կարգի բան մը կը տեսնէր։

Երեք բարեկամները մօտեցան և արեան լճակի մը մէջ երկնցած երիտասարդ մը տեսան։

Յայտնի կ'երեւէր որ այն երիտասարդը իր անկողնին հասնելու ջանացեր էր, այլ ոյժ չունենալով վար ինկեր էր։

Ամէնէն առաջ Աթօս այս թշուառ մարդուն մօտեցաւ. կարծեր էր թէ ան շարժում մը կ'ընէ։

—Լա՛ւ, ուրե՞մն, հարցուց տ'Արդանեան։

—Լա՛ւ, ըսաւ Աթօս, եթէ մեռած է, շատ ատեն չպիտի ըլլայ, վասնզի դեռ տաք է։ Բայց, ո՛չ, իր սիրտը կը զարնէ։ Է՛հ, բարեկամդ իմ։

Վիրաւորը հառաչ մը հանեց. տ'Արդանեան, իր ափովը ջուր առաւ և անոր դէմքին սրսկեց։

Մարդը աչքերը բացաւ, շարժում մը ըրաւ գլուխը վերցնելու և նորէն վար ինկաւ։

Այն ատեն Աթօս փորձ փորձեց իր ծունկերուն վրայ առնելու զայն, բայց դիտեց որ վէրքը փոքր ինչ ուղեղին վերի կողմը գանկին վրայ բացուած էր, անկից արիւնը առատօրէն կը վազէր։

Արամիս անձեռոց մը ջուրով թրջեց և վէրքին վրայ դըրաւ. զովութենէն վիրաւորը ինքզինքին եկաւ, երկրորդ անգամ մը եւս իր աչքերը բացաւ։

Զարմանքով դիտեց այն մարդիկը որ իրեն վրայ գթալով կը նայէին, եւ իրենց կարողութեան չափ՝ իրեն օգնելու կ՚աշխատէին։

—Բարեկամներու մէջ ես, ըսաւ Աթօս, անգլիերէն, ուստի ապահով եղիր, եւ եթէ ոյժ ունիս պատմէ մեզի թէ ի՛նչ պատահեցաւ։

—Թագաւո՛րը, մրմռաց վիրաւորը, Թագաւորը գերի է։

—Միթէ տեսա՞ր, հարցուց Արամիս նոյն լեզուով։

Երիտասարդը պատասխան չտուաւ։

—Հանդարտէ՛, վրայ բերաւ Աթօս, մենք Նորին Վեհափառութեան հաւատարիմ ծառաներն ենք։

—Միթէ ստո՞յգ կ՚ըսէք, հարցուց վիրաւորը։

—Կ՚երդնունք մեր պատիւին վրայ իբրեւ ազատորդիք։

—Ուրեմն կրնամ ձեզի ըսել։

—Ըսէ՛։

—Նորին Վեհափառութեան սենեկապան՝ Բարրիին եղբայրն եմ։

Աթօս եւ Արամիս յիշեցին որ լորտ Վինդր այս անունը տալով կանչեր էր արքայական վրանին նրբագաւիթին մէջ իրենց գտած սպասաւորը։

—Զանիկա կը ճանչնանք, ըսաւ Աթօս, երբէք Թագաւորին քովէն չէր հեռանար։

—Ճիշդ այն է, ըսաւ վիրաւորը։ Լա՛ւ ուրեմն, Թագաւորը բռնուած տեսնելով՝ Բարրի զիս յիշեց. այս տունէն կ՚անցնէին եւ Թագաւորին կողմէն խնդրեց որ նոյն տեղը դադար առնեն։ Այս խնդիրը ընդունեցին։ Ըսին թէ Թագաւորը անօթի է, այս գտնուած սենեակս մտցուցին զիս որպէսզի կերակուրը ուտէ եւ դուռներուն ու պատուհաններուն առջեւ պահակներ դրին։ Բարրի այս սենեակը կը ճանչնար, վասնզի շատ անգամ երբ Թագաւորը Նիւքասլ կը գտնուէր, զիս տեսնելու եկեր էր։ Գիտէր որ այս սենեակին մէջ կափարիչ մը կար եւ այս կափարիչը շտեմարանը կը տանէր ու շտեմարանէն համբարանոցը (?) կ՚երթուէր։ Ինծի նշմայր մը ըրաւ։ Միտքը հաս-

կցայ. բայց այս նշմարը անշուշտ Թագաւորին պահապանները դիտեցին եւ կասկածի գացին։ Չգիտնալով բնաւ որ բան մը դիտած են, փափաք մը միայն ունեցայ, այն է Նորին Վեհափառութիւնը ազատել։ Ուստի այնպէս մը ձեւացուցի որ դուրս ելնել ու փայտ բերել կ՚ուզեմ, մտածելով որ ժամանակ կորսնցնել պէտք չէր։ Ստորերկրեայ ուղին մտայ որ կափարիչին հետ հաղորդակցութիւն ունեցող շտեմարանը կը տանէր։ Տախտակը գլխովս վերցուցի եւ մինչդեռ Բարրի դրան նիգը կամացուկ մը կը քաշէր, Թագաւորին նշան ըրի որ իմ ետեւէս գայ։ Աւա՜ղ, Թագաւորը չէր ուզեր. կարծես թէ այս փախուստը իրեն ծանր կ՚երեւէր։ Բայց Բարրի ձեռքերը կցեց աղաչելով. ես ալ պաղատեցայ որ այսպիսի առիթ մը ձեռքէ չհանէ։ Վերջապէս ետեւէս գալու յանձն առաւ։ Բարեբաղդաբար առջեւէն կը քալէի. Թագաւորը քանի մը քայլ հեռուէն ինծի կը հետեւէր, երբ յանկարծ՝ ստորերկրեայ ուղիին մէջ՝ մեծ ստուերի պէս բան մը իմ առջեւս կանգնեցաւ։ Թագաւորին ձայն տալու համար պոռալ ուզեցի, բայց ժամանակ չունեցայ։ Հարուած մը զգացի այնպէս որ կարծես թէ տունը գլխուս կը փլէր եւ նուաղելով վար ինկայ։

—Բարի եւ անկե՛ղծ անգլիացի, հաւատարիմ սպասաւոր, ըսաւ Աթօս։

—Երբ ինքզինքս եկայ, նոյն տեղը տարածուած էի. մինչեւ բակը քարշ ի քարշ հասայ։ Թագաւորը ու իր ուղեկիցները մեկներ էին։ Կարելի է ժամէ մը կարող եղայ բակէն այստեղ գալու. բայց ոյժս հատաւ եւ երկրորդ անգամ մարեցայ։

—Եւ այս ժամուս ի՞նչպէս ես։

—Շա՛տ գէշ, ըսաւ վիրաւորը։

—Միթէ քեզի համար կրնա՞նք բան մը ընել, հարցուց Աթօս։

—Օգնեցէք ինծ անկողին մտնելու, կարծեմ թէ ասով քիչ մը պիտի սփոփիմ։

—Արդեօք քեզի օգնութեան հասնելու մարդ մը ունի՞ս։

—Կինս Տուրհէմ կը գտնուի, և ուր որ է պիտի դառնայ։ Բայց միթէ դուք բանի մը պէտք չունի՞ք, բան մը չէ՞ք փափաքիր։

—Ձեզնէ քիչ մը կերակուր խնդրելու մտքով եկեր էինք։

—Ափսո՛ս, ամէն բան կերան, տանս մէջ կտոր մը հաց անգամ չգտնուիր։

—Կը լսե՞ս, տ'Արդանեան, ըսաւ Աթոս, պէտք է որ ուրիշ տեղ երթանք ճաշ փնտռելու։

—Այժմ կերակուրը փոյթս չէ, ըսաւ տ'Արդանեան, այլեւս անօթի չեմ։

—Իրաւ որ ես ալ չեմ, ըսաւ Բորթոս։

Եւ վիրաւորը անկողինը փոխադրեցին։ Կրիմօն բերին, որ իր վէրքը դարմանեց։ Կրիմօ՝ չորս բարեկամաց սպասաւորութեանը առեն, առիթ ունեցեր էր վէրքի համար կապեր և պրօն շինելու, և ասով քիչ մը վիրաբուժութիւն սորվեր էր։

Նոյն պահուն փախստականները առաջին սենեակը գալով կը խորհրդակցէին։

—Հիմակ, ըսաւ Արամիս, մեր ընելիքը գիտենք. տարակոյս չկայ որ Թագաւորը ու իր պահապանները աստէ անցած պիտի ըլլան, պէտք է ներհակ կողմը դառնալ։ Միթէ այս չէ՞ քու կարծիքդ ալ, Աթոս։

Աթոս չպատասխանեց, կը խորհրդածէր։

—Այո՛, ըսաւ Բորթոս, ներհակ կողմը դառնանք։ Եթէ պահապան գունդին հետեւինք, ամէն ուտելիք սպառած պիտի գտնենք և ի վերջոյ անօթութենէ պիտի մեռնինք. ի՛նչ անիծեալ երկիր է այս Անգլիան։ Առաջին անգամն է որ ճաշէ կը զրկուիմ։ Ճաշը իմ լաւագոյն կերակուրս է։

—Ի՞նչ կը մտածես, տ'Արդանեան, ըսաւ Աթոս, միթէ Արամիսի կարծի՞քը ունիս։

—Ո՛չ, ընա՛ւ, ըսաւ տ'Արդանեան, ընդհակառակը, հակառակ կարծիքէն եմ։

—Ինչպէ՞ս, միթէ Թագաւորին պահապան գունդին հետեւիլ կ'ուզես, ըսաւ Բորթոս զարհուրելով։

—Ո՛չ, անոր հետ ճամբայ ընել։

Աթոսի աչքերը ուրախութեամբ փայլեցան։

—Պահապան գունդի՞ն հետ ճամբայ ընել, գոչեց Արամիս։

—Թո՛ղ որ տ'Արդանեանը խօսի, գիտես որ բարեխորհուրդ մարդ մըն է, ըսաւ Աթոս։

—Անշո՛ւշտ, ըսաւ տ'Արդանեան, պէտք է երթալ այն տեղը ուր մեզ չպիտի փնտռեն։ Արդ՝ պիտի զգուշանան մեզ մաքրակրօններու մէջ փնտռելու, ուրեմն անոնց մէջ երթանք։

—Լա՛ւ, բարեկամ, լա՛ւ, պատուական խորհուրդ, ըսաւ Աթոս, ես ալ այդ խորհուրդը պիտի տայի երբ զիս կանխեցիր։

—Ուրեմն այս կարծիքէ՞ն ես դու. հարցուց Արամիս։

—Այո՛։ Պիտի կարծեն թէ Անգլիայէն կ'ուզենք հեռանալ և մեզ նաւահանգիստը պիտի փնտռեն. նոյն պահուն Թագաւորին հետ Լոնտօն պիտի հասնինք. երբ անգամ մը Լոնտօն երթանք, անգտանելի կը դառնանք. մէկ միլիոն մարդու մէջ, դժուարին չէ պահուիլը. աս ես հաշուել պէտք է, շարունակեց Աթոս, Արամիսին ակնարկ մը նետելով, որ այս ճամբորդութիւնը կրնայ յաջող ելք մը ունենալ։

—Այո՛, ըսաւ Արամիս, կ'իմանամ։

—Ես չեմ իմանար, ըսաւ Բորթոս, բայց փոյթ չէ. քանի որ այդ խորհուրդը տ'Արդանեանի և Աթոսի կողմէն կու գայ, պէտք է որ լաւագոյն ըլլայ։

—Բայց ըսաւ Արամիս, միթէ Հէրիսօն գնդապետին առջև կասկածելի չի՞ պիտի երեւինք։

—Է՛հ, կրո՛ղ, ըսաւ տ'Արդանեան, մինչ անոր վրայ յոյս ունիմ. Հէրիսօն գնդապետը մեր բարեկամներէն է. երկու անգամ Քրոմվէլ զօրապետին քովը տեսանք. գիտէ որ Պ. Մազարէնի կողմէ Ֆրանսայէն զրկուած ենք, ուստի մեզ իբրև եղբայր պիտի նկատէ։ Դարձեալ, միթէ մսավաճառի մը որդին չէ՞, այո՛, այնպէս չէ՞. լա՛ւ ուրեմն, Բորթոս անոր ցոյց պիտի տայ թէ ինչպէս մէկ կռուփով կով մը կը սպաննեն, և ես՝ ինչպէս ցուլ մը կը տապալեն եղջիւրներէն բռնելով. ասով անոր վստահութիւնը կը գրաւենք։

Աթօս ժպտեցաւ։

—Դուն իմ ճանչցած ընկերներէս լաւագոյնն ես, տ'Արդանեան, ըսաւ ան իր ձեռքը Կասքոնին երկարելով, շատ բարեբաղդ եմ քեզ գտնելուս, իմ սիրելի որդիս։

Այս էր, ինչպէս արդէն յայտնի է, Աթօսին տուած անունը տ'Արդանեանի երբ սիրտը սաստիկ յուզուէր։

Նոյն պահուն Կրիմօ սենեակէն դուրս ելաւ։ Վիրաւորը դարմաներ էին և լաւագոյն վիճակի մէջ կը գտնուէր։

Չորս բարեկամները անկէ հրաժեշտ առին և հարցուցին թէ արդեօք իր եղբօրը հաղորդելու համար բան մը ունի՞։

—Ըսէք անոր, պատասխանեց արիասիրտ մարդը, որ Թագաւորին յայտնեն թէ բոլորովին զիս չսպաննեցին, թէև աննշան մէկն եմ։ Հաւաստի եմ որ Նորին Վեհափառութիւնն իմ վրայ կը ցաւի և ինքզինքը մահուանս պատճառ կը սեպէ։

—Հանգարտ եղիր, ըսաւ տ'Արդանեան, այս իրիկունէն առաջ պիտի իմանայ։

Փոքրիկ գունդը ճամբայ ելաւ. ճամբան մոլորելու վախ չկար, իրենց հետեւելիքը արդէն յայտնապէս գծուած էր դաշտավայրին վրայ։

Երկու ժամ լռիկ քալելէ յետոյ՝ տ'Արդանեան որ առջեւէն կ'երթար, ճամբու մը անկիւնը կանգ առաւ։

—Հա՛, հա՛, ըսաւ ան, ահաւասիկ մեր մարդիկը։

Արդարև, ձիաւորներու բազմաթիւ գունդ մը գրեթէ կէս մղոն հեռուէն կ'երեւէր։

—Սիրելի բարեկամներս, ըսաւ տ'Արդանեան, ձեր սուրերը Պ. Մուսդոնին տուէք, զոր յարմար տեղը ու ժամանակին ձեզի պիտի յանձնէ և բնաւ մի՛ մոռնաք որ մեր գերիներն էք։

Յետոյ ձիերը վազցուցին որ սկսեր էին յոգնիլ, և շատ չանցած գնդին միացան։

Թագաւորը առջեւէն կը քալէր անզրդուելի դէմքով մը, Հէրիսոնի գունդին մէկ մասովը շրջապատուած։

Աթօսը և Արամիսը տեսնելով՝ որոնց հրաժարական բարե-

տալու անգամ ժամանակ չէին տուած, և այն երկու ազատորդիներու աչաց մէջ կարդալով որ տակաւին իրմէ քանի մը քայլ անդին բարեկամներ ունի, թէև կը կարծէր թէ այն բարեկամները գերի են, Թագաւորին գունատ այտերուն վրայ, խնդութեան կարմրութիւն մը երեւցաւ։

Տ'Արդանեան գումարտակին գլուխը հասաւ, և իր բարեկամները Բօրթօսի պահպանութեան ներքև ձգելով, ուղղակ Հէրիսոնին գնաց, որ իրաւցնէ յիշեց թէ զանիկա Գրոմվէլի մօտ տեսած է և զայն ընդունեց այնչափ քաղաքավարութեամբ որչափ որ նոյն կարգի բնաւորութեան տէր մարդ մը կրնայ մէկը ընդունիլ։ Ինչ որ տ'Արդանեան գուշակեր էր պատահեցաւ. գնդապետը չունէր և չէր կրնար կասկած մը ունենալ։

Կանգ առին. այս իջեւանի առենն էր որ Թագաւորը պիտի ճաշէր։ Միայն այս անգամ պէտք եղած զգուշութիւնները ըրին որ փախչելու փորձ չփորձէ։ Պանդոկին մեծ սենեակին մէջ՝ անոր համար պզտիկ սեղան մը դրին, և սպաներուն համար մեծ մը։

—Միթէ ինծի հետ կը ճաշե՞ս, հարցուց Հէրիսոն տ'Արդանեանին։

—Կրո՛ղ, ըսաւ տ'Արդանեան, ամենայն յօժարութեամբ կ'ընդունիմ այդ հրաւէրը. Բայց տես Վալլօն բարեկամս և երկու գերիներս ունիմ զորս չեմ կրնար թողուլ և քու սեղանդ կրնան լեցնել։ Բայց աւելի լաւ բան մը ընենք. սեղան մը դնել տուր անկիւնը, և քովինէդ յարմար դատած կերակուրներդ ինծի ղրկէ. վասնզի առանց այս ճաշին մեծ վտանգ կայ որ անօթութենէ պիտի մեռնինք։ Միշտ միասին ճաշ ըրած պիտի ըլլանք, քանի որ միևնոյն սենեակը պիտի ճաշենք։

—Թո՛ղ այդպէս ըլլայ, ըսաւ Հէրիսոն։

Տ'Արդանեանի փափաքին համեմատ գործը կարգադրուեցաւ և երբ գնդապետին մօտ եկաւ, արդէն տեսաւ որ Թագաւորը իր պզտիկ սեղանը նստեր է և Բարրի իրեն կը սպասաւորէ, իսկ Հէրիսոն և սպաները միատեղ՝ սեղան մը բոլո-

րեր էին, մինչդեռ անկիւն մըն ալ իրեն և ընկերներուն համար տեղեր պահեր էին։

Մաքրակրօն սպաներուն նստած սեղանը կլոր էր, և թէ դիպուածով, կամ դիտաւորութեամբ մը՝ Հէրիսօն իր կռնակը Թագաւորին դարձուցեր էր։

Թագաւորը չորս ազատորդիներուն ներս մտնելը տեսաւ, բայց այնպէս ցուցուց որ բնաւ անոնց ուշադրութիւն չըներ։

Գացին իրենց վերապահուած սեղանը նստան այնպէս որ և ոչ մէկու կռնակ դարձուցին։ Իրենց դիմացն էին սպաներուն և Թագաւորին սեղանները։

Հէրիսօն իր հիւրերը պատուելու համար իր սեղանին լաւագոյն կերակուրները անոնց ղրկեց. չորս բարեկամներուն անբախտութենէն գինի չկար։ Այս բանս Աթոսին փոյթը չէր, բայց տ'Արդանեան, Բորթօս և Արամիս իրենց երեսը կը ծռմըռէին, քանի գարեջուր, այս մաքրակրօն ըմպելին կլլելու կը ստիպուէին։

—Իրաւ որ, գնդապե՛տ, ըսաւ տ'Արդանեան, չափազանց շնորհապարտ ենք ձեր շնորհալի հրաւէրին համար, վասնզի եթէ դուք չըլլայիք, ինչպէս նախաճաշիկէ նոյնպէս ճաշէ զրկուելու վտանգի մէջ էինք. և ահաւասիկ իմ Վալլօն բարեկամս որ իմ երախտագիտութեանս մասնակից է, վասնզի շատ անօթի էր։

—Դեռ ևս անօթի եմ, ըսաւ Բորթօս, գնդապետ Հէրիսօնին ողջոյն տալով։

—Եւ այդ ծանրակշիռ դէպքը ի՞նչպէս պատահեցաւ ձեզ, այսինքն նախաճաշիկէ զրկուիլը, հարցուց գնդապետը ծիծաղելով։

—Շատ պարզ պատճառաւ մը, ըսաւ տ'Արդանեան։ Քեզի միանալու մեծ փոյթ ունէի և այս նպատակիս հասնելու համար քու բռնած ճամբան բռներ էի, թէև այս բանը ինծի պէս հնամեայ օթևանապետ մը պէտք չէ ընել, քանի որ պարտաւոր էր գիտնալ թէ քուկինիդ պէս քաջ և լա՛ւ գունդ մը անցած տեղէն քաղելու բան մը չմնար։ Ուստի, կրնաս

մեր պատրանքն երևակայել երբ սիրուն փոքրիկ տան մը մօտ հասնելով՝ որ անտառի մը եզրը շինուած էր, և որ հեռուէն իր կարմիր տանիքով և կանաչ փեղկերով ակնապարար տեսք մը ունէր. փոխանակ հաւեր գտնելու, որմէ խորովիկ ընելու կը պատրաստուէինք, և երշիկներ, զոր կասկարայի վրայ եփելու կը յուսայինք, մինակ խեղճ մարդ մը տեսանք թաթաւեալ ...։ Ա՜հ։ Տէ՛ր վկայ, գնդապետ, իմ կողմէ գովեստ առէք հարուածն իջեցնող սպային, շատ լաւ իջեցուցեր էր, այնքան լաւ որ Պ. Վալլօն բարեկամս սքանչացաւ, վասնզի ինքն ալ աղուոր հարուածներ տալ գիտէ։

—Այո՛, ըսաւ Հէրիսօն ծիծաղելով և իր սեղանը նստող սպայի մը ակնարկելով, երբ Կրօզլօ այսպիսի գործեր վրան առնու, հարկ չմնար նորէն նոյնին վերադառնալ։

—Ա՜հ, այս պարո՞նն է, ըսաւ տ'Արդանեան սպան բարևելով, կը ցաւիմ որ սպան գաղղիերէն չխօսիր իմ մեծարանքս անոր տալու համար։

—Պատրաստ եմ զայն ընդունել և հատուցանել, պարոն, ըսաւ սպան բաւական լաւ գաղղիերէն լեզուով, վասնզի երեք տարի Բարիզ բնակեցայ։

—Լաւ ուրեմն, պարոն, կը փութամ ըսելու ձեզ, շարունակեց տ'Արդանեան, որ այնպէս լաւ տրուած էր հարուածն որ մարդը գրեթէ մեռցուցեր ես։

—Ես կարծէի թէ բոլորովին սպաններ եմ, ըսաւ Կրօզլօ։

—Ո՛չ, մեռնելու բան չէ մնացեր, իրաւ, բայց մեռած չէ։

Եւ այս խօսքն ըսելով՝ տ'Արդանեան Բարրէի վրայ ակնարկ մը նետեց, որ իր առջև կանգուն կը մնար, իր երեսին վրայ մեռելատիպ դեղնութիւն մը կ'երևէր, անոր յայտնելու համար որ այս լուրն իրեն գիտութեան համար կը հաղորդուէր։

Իսկ Թագաւորը՝ այս խօսակցութիւնը լսեր էր սրտի անպատում անձկութեամբ, վասնզի չէր գիտեր թէ գաղղիացի սպան խօսքն ո՛ւր պիտի բերէր, և այս ողորմագին ու անհոգութեան երևոյթով մը ծածկուած պարագաները զինքը կը նեղացնէին։

Միայն երբ վերջին խօսքն արտասանեց, աւելի ազատ շունչ առաւ։

—Ա՛հ կրո՛ղ, ըսաւ Կրօզլօ, կը կարծէի թէ լաւ յաջողեր ես։ Եթէ ասկից մինչեւ այն թշուառին տունը շատ հեռու չըլլար, ես պիտի գտնայի անոր մահացու հարուածը տալու։

—Եթէ վախ ունիք որ կ'առողջանայ, լաւ կ'ընէիք, ըսաւ տ'Արդանեան, վասնզի գիտես, երբ գլխի վէրքեր խոցոյն մահ չպատճառեն, ութ օրէն լիովին կը բուժին։

Եւ տ'Արդանեան Բարրիին երկրորդ ակնարկ մը նետեց, և անոր դէմքին վրայ ուրախութեան այնպիսի նշաններ երեւցան որ Շարլ ձեռքն անոր կարկառեց ժպտելով։

Բարրի թագաւորին ձեռքին վրայ ծռեցաւ և ակնածութեամբ զայն պագաւ։

—Իրաւ որ տ'Արդանեան, ըսաւ Աթօս, դու թէ՛ խօսքի և թէ խելքի տէր մարդ ես։ Բայց ի՞նչպէս գտար թագաւորը։

—Իր դէմքին գծագրութիւնն աչքս կը բռնէ, ըսաւ տ'Արդանեան, ազնիւ և միանգամայն բարի կերպարանք մը ունի։

—Այո, բայց կը թողու որ զինքը բռնեն, ըսաւ Բօրթօս. այս ալ պակասութիւն մըն է։

—Մեծ փափաք ունիմ թագաւորին կենաց խմելու. ըսաւ Աթօս։

—Ուրեմն, թո՛ղ որ ես առաջարկեմ բաժակը ըսաւ տ'Արդանեան։

—Առաջարկէ՛, ըսաւ Աթօս։

Բօրթօս տ'Արդանեանի կը նայէր և կը զարմանար թէ անոր կասկոնեան գլուխն ի՛նչպէս անդադար նոր նոր հնարք կը ստեղծէր։

Տ'Արդանեան իր պղնձէ թասն առաւ, լեցուց և ոտք ելաւ։

—Պա՛րոններ, ըսաւ իր ընկերներուն, խնդրեմ սեղանին

նախագահողին կենաց խմենք։ Մեր գնդապետին, և գիտնայ որ մինչեւ Լոնտոն և աւելի հեռուն անոր ծառայելու պատրաստ ենք։

Եւ որովհետեւ այս խօսքը ըսելու ատեն տ'Արդանեան Հէրիսոնի կը նայէր, Հէրիսոն կարծեց թէ այն բաժակը իրեն համար էր, ոտքի ելաւ և չորս բարեկամները ողջունեց, որոնց աչքերը թագաւորին վրայ յառած՝ միասին խմեցին, մինչդեռ Հէրիսոն իր կողմէ՝ իր գաւաթը կը պարպէր առանց որ և է կասկածի։

Ըստ կարգի Շարլ իր բաժակը Բարրիին երկնցուց, այս ալ քանի մը կաթիլ գարեջուր լեցուց անոր մէջ, վասնզի թագաւորը ամէնուն խմածը կը խմէր, և իր շրթներուն տանելով՝ չորս ազնուորդիներուն նայեցաւ և ազնուութեամբ ու երախտագիտութեամբ լի ժպիտով մը խմեց։

—Օ՛ն, պարոննե՛ր, գոչեց Հէրիսոն գաւաթը վար դնելով և իր առաջնորդած անուանի գերիին և ոչ իսկ յարգանք մը ցոյց տալով, օ՛ն, ճամբա՛յ ելնենք։

—Ո՞ւր պիտի օթեւանինք գիշերը, գնդապետ։

—Ի Թիրսք, պատասխանեց Հէրիսոն։

—Բարրի՛, ըսաւ թագաւորը իր կարգին ոտքի ելնելով և դէպի իր սպասաւորին դառնալով, ձիս բե՛ր. Թիրսք երթալ կ'ուզեմ։

—Աստուած վկայ, ըսաւ տ'Արդանեան Աթօսին, թագաւորը գիս իրօք հրապուրեց և լիովին իրեն ծառայելու յօժարամիտ եմ։

—Եթէ ինձ ըսածդ անկեղծ է, պատասխանեց Աթօս, չպիտի հասնի մինչեւ Լոնտոն։

—Ի՞նչպէս։

—Այո՛, վասնզի մինչեւ այն ատեն կը փախցնենք զայն։

—Ա՛հ, ա՛լ այս անգամ, Աթօս, ըսաւ, տ'Արդանեան, պատի՛ւս վկայ, յիմար ես։

—Միթէ այս մասին նախորոշ հնար մը ունի՞ս, հարցուց Արամիս։

—Է՛հ, ըսաւ Բօրթօս, գործը անկարելի չպիտի ըլլար եթէ լաւ հնար մը գտնուէր։

—Ես չունիմ, ըսաւ Աթօս, բայց տ'Արդանեան կրնայ հատ մը գտնել։

Տ'Արդանեան ուսերը բարձրացուց և ճամբայ ելան։

ԺԸ.

Տ'ԱՐԴԱՆԵԱՆ ՀՆԱՐ ՄԸ ԿԸ ԳՏՆԷ

Աթոս թերեւս տ'Արդանեանը աւելի լաւ կը ճանչնար քան տ'Արդանեան ինքզինքը։ Գիտեր որ Կասքոնին մտքին պէս բաղդախնդիր մտքի մը մէջ բաւական էր խորհուրդ մը նետել ինչպէս հարուստ և պարարտ հողի մը մէջ, բաւական է միայն հունտ մը նետել։ Ուստի ձգած է որ իր բարեկամը հանդարտօրէն իր ուսերը վեր առնէ և իր ճամբան շարունակելու սկսեր էր Ռաուլի վրայ խօսելով, խօսակցութիւն մը զոր ուրիշ առթիւ մը բոլորովին զոցեր էր, ինչպէս որ ընթերցողը կը յիշէ։

Մութը կոխելուն Թիրսք հասան։ Չորս բարեկամները բոլորովին օտար և անտարբեր երեւցան Թագաւորին անձին նկատմամբ առնուած զգուշութեանց համար։ Մասնաւոր տուն մը քաշուեցան, և որովհետեւ իրենց անձն ալ ամէն ժամ վտանգի մէջ էր, առանձին սենեակի մը մէջ տեղաւորուեցան փախուստի ելք մը պատրաստելով՝ եթէ երբեք յարձակում կրեն։ Սպասաւորները այլ և այլ տեղեր կեցան պահակութեան համար. Կրիմօ խոտի խուրձի մը վրայ պառկեցաւ դրան առջեւ։

Տ'Արդանեան կը խորհէր և կարծես թէ նոյն պահուն իր սովորական լեզուագարութիւնը կորսնցուցեր էր։ Բառ մը չէր հաներ բերնէն, անդադար կը սուլէր և անկողնէն պատուհանը կ'երթար։ Բորթոս որ ոչինչ չէր տեսներ բայց միայն արտաքին իրեր, կը խօսէր ինչպէս որ սովրեր էր։ տ'Արդանեան միավանկ բառերով կը պատասխանէր։ Աթոս ու Արամիս ժպտելով իրարու երես կը նայէին։

Նոյն օրը շատ յոգնած էին և սակայն՝ բացի Բորթոսէն որուն քունը ախորժակին պէս անողոքելի էր, ամէնքը գէշ քնացան։

Հետեւեալ օրը տ'Արդանեան ամէնէն առաջ ելած էր, ախոռը իջեր, ձիերը աչքէ անցուցեր, նոյն օրուան համար պէտք եղած հրամանները տուեր էր արդէն և տակաւին Աթոս ու Արամիս անկողնէն չէին ելած։ Բորթոս դեռ կը խռկար։

Ժամը ութին՝ առջի օրուան կարգով ճամբայ ինկան։ Մինակ տ'Արդանեան թողուց որ իր բարեկամները առանձին ուղեւորին և առջի օրուան ծանօթութիւնը պնդելու համար Պ. Կրօզլօի քովը գնաց։

Այս Կրօզլօն՝ որուն սիրտը մեղմիկ շարժեր էր տ'Արդանեանի գովեստներէն, սիրուն ժպիտով մը զինքը ընդունեց։

—Ճշմարիտ, պարոն, ըսաւ անոր տ'Արդանեան, երջանիկ եմ որ իմ խեղճ լեզուովս խօսելու համար այստեղ քեզի պէս մէկը կը գտնեմ։ Իմ բարեկամս, Պ. Վալլօն շատ տխուր բնաւորութիւն մը ունի, այնպէս որ օրը չորս բառ կարելի չըլլար քաղել. իսկ մեր երկու գերիներուն գալով՝ կրնաս իմանալ որ խօսակցելու բնաւ ախորժակ չունին։

—Կատաղի Թագաւորականներ են, ըսաւ Կրօզլօ։

—Այդ ալ պատճառ մըն է որով մեզ կը մեղադրեն թէ Ստուարտը ձերբակալեցինք, և յուսամ թէ այս Ստուարտը դատաստանի պիտի կանչէք անշուշտ։

—Կը հարցնե՞ս, ըսաւ Կրօզլօ, այդ բանին համար զինք Լոնտօն կը տանինք։

—Կարծեմ թէ զանիկա աչքէ չես հեռացներ։

—Կրո՛ղ, միթէ այդ ալ խօ՞սք է։ Կը տեսնես, յարեց սպան ծիծաղելով, ճշմարտապէս թագաւորական թիկնապահ գունդ մը ունի իր հետը։

—Այո՛, ցերեկը վախ չկայ որ ձեր ձեռքէն խոյս տայ. բայց գիշերը...։

—Գիշերը մեր զգուշութիւնները կը կրկնապատկենք։

—Եւ ի՞նչ տեսակ հսկողութիւն կը գործածէք։

—Ութը մարդիկ շարունակ իր սենեակին մէջ կը կենան։

—Սատանա՛յ, ըսաւ տ'Արդանեան, աղէկ պահպանուած

է։ Բայց աս ութ մարդերէն զատ՝ անշուշտ դուրսն ալ պահակներ կը կեցնէք։ Այնպիսի գերիի մը համար որչափ զգուշութիւններ առնուին քիչ են։

—Ո՛հ, ո՛չ, մտածէ՛ անգամ մը. ի՞նչ կ'ուզես որ ընեն երկու անզէն մարդ ութը զինեալ մարդոց դէմ։

—Ինչպէս, երկո՞ւ մարդ։

—Այո՛, թագաւորը ու իր սենեկապանը։

—Ուրեմն թոյլ տրուա՞ծ է իր սենեկապանին հետը երթալու։

—Այո՛, Ստուարտ խնդրեց որ այս շնորհը ընեն իրեն և Հէրիսոն գնդապետը հաւանութիւն տուաւ. թագաւոր ըլլալուն պատրուակաւ՝ կ'երեւի թէ մինակը չէ կարող ո՛չ հագուիլ և ո՛չ հանուիլ։

—Ճշմարիտը, գնդապետ, ըսաւ տ'Արդանեան՝ որ անգլիացի սպային քով գովասանական բերումը իրեն շատ յաջողելուն՝ շարունակելու որոշեր էր, որչափ քիչ մտիկ ընեմ այնչափ աւելի կը զարմանամ թէ ինչ դիւրին և վայելուչ կերպով գաղղիերէն կը խօսիս։ Երեք տարի Բարիզ բնակեր եմ, լա՛ւ է, բայց եթէ Լոնտոն բոլոր կեանքս իսկ անցնեմ համոզուած եմ որ քեզի չափ չպիտի կրնամ խօսիլ։ Սակայն ի՞նչ կ'ընէիր Բարիզ։

—Հայրս որ վաճառական է զիս իր թղթակցին մօտ դրեր էր, որ սա ալ իր կողմէ իր որդին հօրս քով ղրկեր էր. վաճառականներու մէջ այսպիսի փոխանակութիւններ ընելու սովորութիւն կայ։

—Եւ միթէ Բարիզը ախորժելի գտա՞ր, պարոն։

—Այո՛։ Մեր տեսակին պէս՝ մեծ յեղափոխութեան մը պէտք ունիք, չէ թէ ձեր թագաւորին դէմ, որ դեռ մանուկ է, այլ այն վատասիրտ իտալացիին դէմ որ ձեր թագուհիին սիրողն է։

—Ա՛հ, ես ալ այդ կարծիքը ունիմ, պարոն, և անշուշտ այս գործը գլուխ կ'ելնէր արդէն եթէ քեզի պէս միայն աննկուն, արթուն, և անկաշառ սպաներ ունենայինք՝ Ա՛հ,

այն ատեն Մազարէնէն կ'ազատէինք շուտով և անոր աղուորիկ դատաստանը կ'ընէինք ինչպէս որ ձեր թագաւորինը ընելու վրայ էք։

—Բայց, ըսաւ սպան, կը կարծէի թէ անոր ծառայութեան մէջ էս և թէ ան քեզի ուղարկած էր Քրոմվէլ զօրապետին։

—Այսինքն թագաւորին ծառայութեան մէջ, և թէ գիտնալով որ Անգլիա մէկը պիտի ուղարկէ, ես խնդրեցի այս պատգամաւորութիւնը, այնչա՛փ մեծ էր այս պահուս երեք թագաւորութեանց հրամայող հանճարեղ մարդը տեսնելու փափաքս։ Ուստի երբ առաջարկեց. Պ. Վալլօնին և ինծ՝ ի պատիւ հին Անգլիոյ պատերազմելու, տեսար անշուշտ թէ ինչպէս եռանդագին ընդունեցինք այս առաջարկութիւնը։

—Այո՛, գիտեմ որ Պ. Մօրտօնդի մօտ կեցած թշնամիին վրայ յարձակեցաք։

—Իր աջ և ահեակ կողմը կեցած, պարոն, կրո՛ղ, այն ալ քաջասիրտ և պատուական մարդ մըն է։ Տեսա՞ր ինչպէս գնդակահար սպաննեց իր հօրեղբայրը։

—Միթէ զանիկա կը ճանչնա՞ս, հարցուց սպան։

—Շատ, կրնամ ըսել իսկ որ իրարու հետ սերտիւ կապուած ենք. պարոն Վալլօն և ես անոր հետ միատեղ եկանք Ֆրանսայէն։

—Կ'երեւայ թէ Պուլօնիի մէջ զինքը շատ սպասցուցիք։

—Ի՞նչ ընեմ, ըսաւ տ'Արդանեան, ես ալ ձեզի պէս թագաւոր մը կը պահպանէի։

—Հա՛, հա՛, ըսաւ Կրօգլօ և ո՞ր թագաւորը։

—Է՛հ, մերինը, փոքրիկ kingը (թագաւորը), չորեքտասներորդ Լուին։

Եւ տ'Արդանեան իր գլխարկը հանեց։ Անգլիացին ալ առ ի քաղաքավարութիւն նոյնը ըրաւ։

—Եւ որչափ ատեն զանիկա պահպանեցիր։

Երեք գիշեր. և իրաւ որ խնդութեամբ պիտի յիշեմ այն երեք գիշերները։

—Ուրեմն նորատի թագաւորը շա՛տ սիրանուշ է։

—Թագաւո՞րը դռները գոց կը քնանար։

—Բայց, այդ խօսքով ի՞նչ ըսել կ'ուզես։

—Ըսել կ'ուզեմ թէ իմ բարեկամ սպաներս որ պահապան և հրացանակրաց գունդերուն կը ծառայեն, ինծի հետ կ'ուգային ընկերութեամբ անցունելու և գիշերները խաղալով և խմելով կ'անցունէինք։

—Ա՛հ, այո՛, ըսաւ անգլիացին հառաչելով, ճշմարիտ է, դուք գաղղիացիք զուարթ մարդեր էք։

—Եւ միթէ դուք չէ՞ք խաղար երբ պաշտօնութիւն կ'ընէք։

—Երբե՛ք, ըսաւ անգլիացին։

—Ուրեմն շատ ձանձրոյթ պիտի զգաք և ձեր վրայ կը ցաւիմ, ըսաւ տ'Արդանեան։

—Սա իրաւ է որ, աւելցուց սպան, տեսակ մը սարսափով կը դիտեմ իմ պաշտօնութեանս կարգին մօտենալը։ Ո՛րքան երկայն է ամբողջ գիշերուան մը հսկումը։

—Այո՛, երբ մարդ միայնակ կամ ապուշ զինուորներու հետ կը հսկէ. բայց երբ զուարթաբոյս ընկերի մը հետ կը հըսկէ, երբ ոսկին և տապլղուլունքը սեղանին վրայ կը գլորին, երազի պէս կ'անցնի գիշերը։ Միթէ խաղը չե՞ս սիրեր։

—Ընդհակառակը։

—Օրինակի համար լանսքնէն։

—Կը հրամայեմ այդ խաղին վրայ. Ֆրանսա եղած ատենս գրեթէ ամէն իրիկուն կը խաղայի։

—Եւ քանի որ Անգլիա դարձած ես, չե՞ս խաղար։

—Ո՛չ խաղալու թուղթ և ոչ եղջերիկ մը առած եմ ձեռքս։

—Կը ցաւիմ վրադ, ըսաւ տ'Արդանեան խորին կարեկցութեան դէմքով մը։

—Մտիկ ըրէ, ըսաւ անգլիացին, բան մը կայ ընելու։

—Ի՞նչ բան։

—Վաղը պաշտօնութիւն պիտի ընեմ։

—Ստուարտի՞ն քովը։

—Այո՛։ Եկուր ինծի հետ անցնելու գիշերը։

—Անկարելի՛ բան։

—Անկարելի՞։

—Բոլորովի՛ն անկարելի։

—Ի՞նչպէս անկարելի։

—Ամէն գիշեր Պ. Վալլօնի հետ խաղ կը խաղամ։ Երբեմն բնաւ չենք պառկիր... օրինակի համար, այս առտու տակաւին կը խաղայինք թէեւ լուսցեր էր։

—Լա՛ւ, ապա՞։

—Ապա՛, պիտի ձանձրանայ եթէ իր հետը չխաղամ։

—Ուրեմն կատաղի խաղամո՞լ մըն է։

—Հազար ոսկի կորսնցնելը տեսեր եմ մարելու չափ խընդալով։

—Ուրեմն ան ալ հետդ բեր։

—Ի՛նչպէս ընեմ. հապա մեր գերինե՞րը։

—Ա՛հ, սատանա՛յ, ըսաւ սպան։ Բայց թող ձեր սպասաւորները զանոնք պահպանեն։

—Այո՛, որպէսզի խոյս տան, ըսաւ տ'Արդանեան, այդպիսի բան մը չեմ ըներ։

—Ուրեմն բարձրաստիճան մարդի՞կ են որ զանոնք ձեռքէ հանել չես ուզեր։

—Կրա՛ղ, մին Դուրէնէ հարուստ ազնուական մըն է, միւսը տաճիկ ասպետ մըն է Մալդայի կարգէն։ Զատ զատ անոնց փրկանքն որոշեցինք. երբ Ֆրանսա հասնինք, երկու հազար լիրա սդէռլին պիտի վճարեն։ Ուստի վայրկեան մը անգամ մեր գերիները մինակ թողուլ չենք ուզեր քանի որ մեր սպասաւորները գիտեն թէ անոնք միլիոնի տէր մարդիկ են։ Երբ գերի բռնեցինք զանոնք քիչ մը անոնց վրան գլուխը նայեցանք, և կը խոստովանիմ որ Պ. Վալլօնին հետ ամէն իրիկուն անոնց քսակը իրարու ձեռքէ կը յափշտակենք խաղալով, բայց կարելի է որ մեզմէ թանկագին գոհար մը պահած կ'ըլլան, կամ մեծարժէք ադամանդ մը, և ատոր համար այնպիսի ագահներու նմանեցանք, որք իրենց գանձին քովէն բնաւ չեն հեռանար. նմանապէս մենք ալ մեր գերիներուն քովէն բնաւ չենք հեռանար, և երբ ես կը քնանամ Պ. Վալլօն կը հսկէ։

—Հա՛, հա՛, գոչեց Կրօպլօ։

—Հիմակ հասկցար անշուշտ թէ ի՛նչ պատճառաւ քաղաքավարական առաջարկութիւնդ մերժելու ստիպուած եմ, թէեւ չափազանց շնորհապարտ եմ քեզի այս մասին, քանի որ միեւնոյն անձին հետ խաղալու չափ տաղտկալի բան չկայ. բողդը չարունակ կը դառնայ եւ ամիսէ մը ետք կը տեսնես որ ոչ նա կթած է եւ ոչ դուն։

—Ա՛հ, հառաչեց Կրօզլօ, աղէկէ աւելի տաղտկալի բան մը կայ, այս է մինակ չխաղալը։

—Կ'իմանամ այդ բանը, ըսաւ տ'Արդանեան։

—Բայց նոյնիսկ անգամ մը, վրայ բերաւ անգլիացին, միթէ քու մարդիկդ վտանգաւո՞ր մարդիկ են։

—Ի՞նչ նկատմամբ։

—Միթէ փախուստ տալու չափ յանդո՞ւգն են։

Տ'Արդանեան քահ քահ խնդաց։

—Տէ՛ր Յիսուս, գոչեց ան, մէկը դիւահարի պէս է, որ ձեր թնակած չքնաղ երկրին վարժուիլ չկարենալուն. միւսը Մալդացի ասպետ մըն է, նորատի աղջկան պէս երկչոտ. եւ աւելի ապահով ըլլալու համար անոնց ձեռքէն առինք իրենց գոցուող դանակները ու գրպանի մկրատները անգամ։

—Լա՛ւ ուրեմն, ըսաւ Կրօզլօ, զանոնք հետդ բեր։

—Ինչպէ՞ս, կուզե՞ս, ըսաւ տ'Արդանեան։

—Այո՛, ութը զինուոր ունիմ։

—Լա՛ւ ուրեմն։

—Չորսը զանոնք կը պահպանեն, միւս չորսն ալ թագաւորը։

—Ճի՛շդ է, ըսաւ տ'Արդանեան, գործը այդպէս կրնայ կարգադրուիլ, թէեւ քեզի մեծ նեղութիւն մը պիտի պատճառեմ։

—Բա՛, եկուր դուն միայն, պիտի տեսնես թէ ինչպէս ամէն ինչ կարգի պիտի դնեմ։

—Ո՛հ, անհոգ կը մնամ, ըսաւ տ'Արդանեան, քեզի պէս մարդու մը աչքերս գոց կը վստահիմ։

Այս վերջին շողոքորթութիւնը գոհունակութեան փոքրիկ

ծիծաղ մը պատճառեց սպային. ծիծաղ մը որով բարեկամ կը դառնան մարդիկ զայն գրգռողին, վասնզի գգուելը անապարծութեան մէկ նշոյլն է։

—Բայց, ըսաւ տ'Արդանեան, կը մտածեմ այդ բանին վրայ. ո՞վ կ'արգիլէ մեզ այս իրիկուն իսկ սկսելու։

—Ի՞նչ բան։

—Արգիլող մը չկայ ընաւ, ըսաւ Կրօզլօ։

—Արդարեւ, այս իրիկուն դո՛ւն մեզի եկուր, եւ վաղը մեր փոխադարձ այցելութիւնը կ'ընենք քեզի։ Եթէ մեր մարդոց մասին հոգ մը ունիս, որ, ինչպէս գիտես, կատաղի թագաւորականներ են. լաւ, ձայն մը չինք հաներ, եւ մենք աղուոր գիշեր մը կ'անցնենք։

—Սքանչելի՛։ Այս իրիկուն քեզի պիտի գանք, վաղը Սդուարթին մօտ, հետեւեալ օրը իմ տունս։

—Եւ միւս օրերն ալ Լոնտոն։ Է՛հ, անիրա՛ւ, կը տեսնես, ըսաւ տ'Արդանեան, որ երբ կամք ըլլայ ախորժելի կեանք մը կրնայ վարել մարդ։

—Այո՛, երբ մարդ գաղղիացւոց եւ ձեզի պէս գաղղիացւոց հանդիպի, ըսաւ Կրօզլօ։

—Եւ Պ. Վալլօնին պէս, պիտի տեսնես թէ ի՛նչ զուարթ մարդ է, մոլեգին պարսաւոր մըն է, մարդ մը որ քիչ մնաց Մազարէնը երկու դրան մէջ պիտի սպաննէր, զինքը կը գործածէ, վասնզի անկէ կ'երկնչի։

—Այո, ըսաւ Կրօզլօ, լաւ կերպարանք մը ունի եւ թէեւ տակաւին չեմ ճանչնար զինքը, բոլորովին հաւնած եմ։

—Երբ անգամ մը ճանչնաս, այն ատեն աւելի պիտի սիրես։ Է՛հ, ահաւասիկ զիս կը կանչէ։ Ներէ՛, իրարու հետ այնքան սերտ կապուած ենք որ չենք կրնար բաժնուիլ իրարմէ։ Ուստի ներէ՛։

—Ինչպէս պիտի ընենք ուրեմն։

—Այս իրիկուն կը տեսնուինք։

—Ձե՞ր տունը։

—Իմ տունս։

Երկու մարդիկ իրարու բարեւ տուին եւ տ՛Արդանեան իր ընկերներուն կողմը դիմեց։

—Թշուառակա՛ն, ի՞նչ խօսելիք ունէիր այն կնոջ հետ, ըսաւ Բորթօս։

—Սիրելի բարեկամ, այդպէս մի՛ խօսիր Պ. Կրօզլօի վրայ, իմ մտերիմ բարեկամներէս մին է։

—Քու բարեկամներէդ մի՞ն, ըսաւ Բորթօս, այս գիւղացիներու ջարդողը։

—Կուլթի՛ւն, սիրելի Բորթօս։ Լա՛ւ, այո՛, Պ. Կրօզլօքին մը կրակոտ է, իրաւ, բայց գիտեցի որ երկու լաւ յատկութիւններ ունի. տխմար եւ գոռոզ է։

Բորթօս իր երկու աչքերը բացաւ ապշահար, Աթօս եւ Արամիս իրարու նայեցան ժպտելով. տ՛Արդանեանը կը ճանչնային եւ գիտէին որ առանց նպատակի բան մը չէր ըներ։

—Բայց, շարունակեց տ՛Արդանեան, դուն ինքնին անոր արժէքը պիտի ճանչնաս։

—Ի՞նչ կերպով։

—Այս իրիկուն քեզի պիտի ներկայացնեմ զայն, մեզի հետ թուղթ խաղալու պիտի գայ։

—Հօ՛, հօ՛, բացագանչեց Բորթօս, որուն աչքերը այս խօսքէն վառեցան, հարո՞ւստ է։

—Լոնտոնի հարուստ մէկ վաճառականին որդին է։

—Եւ միթէ լանսքնէ գիտէ։

—Կը պաշտէ այդ խաղը։

—Հապա պասէդ խա՞ղը, կամ պիրիպի՞ն։

—Շատ ճարտար է այդ մասին։

—Լա՛ւ, ըսաւ Բորթօս, ախորժելի գիշեր մը պիտի անցընենք ուրեմն։

—Ա՛յնքան աւելի ախորժելի որչափ որ լաւագոյն գիշեր մը կը խոստանայ մեզի։

—Ինչպէս։

—Այս իրիկուն զինքը խաղի կը հրաւիրենք, ան ալ վաղը մեզի խաղի կը հրաւիրէ։

—Ո՞ւր տեղ։

—Պիտի ըսեմ քեզի։ Առ այժմ բանի մը միայն հոգը տանինք. այսինքն Պ. Կրօզլօի մեզի ըրած պատիւը արժանապէս ընդունինք։ Այս իրիկուն Տէրպիի մէջ պիտի դադարինք, Թո՛ղ Մուսքըթօն առջեւէն երթայ, եւ եթէ բոլոր քաղաքին մէջ ձի մը գինի գտնէ թո՛ղ գնէ։ Գէշ չըլլար եթէ պզտիկ ճաշ մըն ալ պատրաստէ, եւ այս ճաշին մասնակից չպիտի ըլլաք, դուն Աթօս, վասնզի ջերմ ունիս, եւ դուն Արամիս, վասնզի Մալթացի ասպետ ես, եւ թէ մեզի պէս շուայտ զինուորներու խօսքերը քեզի անախորժ կ՛երեւին եւ քեզ կը կարմրցնեն։ Միթէ այս ըսածս կը լսե՞ս։

—Այո՛, ըսաւ Բորթօս, բայց կրո՛ղը տանի զիս եթէ կ՛իմանամ։

—Բորթօ՛ս բարեկամդ իմ, գիտես թէ հօրս կողմէն մարգարէից սերունդէ եմ, եւ մօրս կողմէն սիպիլեանց, եւ եթէ ես առակներ ու հանելուկներ կը խօսիմ, ով որ ականջ ունի թո՛ղ մտիկ ընէ, եւ ո՛վ որ աչք ունի թող տեսնէ, առ այժմ աւելի բան մը չեմ կարող ըսել։

—Գիտցածդ ըրէ, բարեկամ, ըսաւ Աթօս, հաւաստի եմ որ ինչ որ ընես լաւ պիտի ընես։

—Իսկ դուն, Արամիս, միեւնոյն կարծի՞քն ունիս։

—Բոլորովի՛ն, սիրելիդ իմ տ՛Արդանեան։

—Քա՛ջ է, տ՛Արդանեան, ահաւասիկ ճշմարիտ հաւատացեալներ, եւ ախորժելի բան է անոնց համար հրաշքներ ընելու փորձել. Բորթօ՛ս, թերահաւատին չեն նմանիր, որ միշտ տեսնել եւ դպչիլ կ՛ուզէ որ հաւատայ։

Այս ճշմարիտ է, ըսաւ Բորթօս նրբին դէմքով մը, թէ ես դիւրահաւան չեմ։

Տ՛Արդանեան անոր ուսին թափ մը տուաւ, եւ որովհետեւ նախաճաշիկի կայանը կը հասնէին՝ խօսակցութիւնը նոյն տեղը վերջացաւ։

Երեկոյեան ժամը հինգին՝ ինչպէս որ արդէն որոշեր էին, Մուսքըթօն անգլիերէն չէր խօսեր. բայց Անգլիա գալէն ի վեր բան մը գիտեր էր, այսինքն Կրկին շարժումներով խօսելու

վարժ՝ խօսքի տեղ նշմար կ'ընէր։ Ուստի Կրիմօի չարժումը դիտելու սկսեր էր, և քանի մը դասով վարպետին ճարտարութեան շնորհիւ ը, բաւական բան սորվեր էր։ Պլէզուա անոր ուղեկից եղաւ։

Չորս բարեկամներ՝ Տէրպիի գլխաւոր փողոցէն անցնելու ատեն՝ գեղեցիկ տեսարանով տան մը սեմին վրայ կեցած տեսան Պլէզուան, ուր այն տեղ պատրաստուած էր իրենց բնակարանը։

Բոլոր օրը Թագաւորին չէին մօտեցած չորս բարեկամները, որպէսզի կասկած չգրգռեն և փոխանակ Հէրիսօն գնդապետին սեղանը ճաշելու, նախորդ օրուան պէս, առանձին կերակուր կերեր էին։

Պայմանեալ ժամուն Կրոզլօ եկաւ։ Տ'Արդանեան ընդունեց զանիկա, ինչպէս կ'ընդունի քաղաքային բարեկամ մը՝ Բորթոս զայն ոտքէն մինչև գլուխը չափեց և ժպտեցաւ դիտելով որ՝ Թէև Բարրիի եղբօր նշանաւոր հարուած մը տուեր էր ան, բայց ուժի կողմէ իրեն չէր հաւասարեր։ Աթոս և Արամիս իրենց կրցածը ըրին որ այն կոշտ ու կոպիտ մարդուն իրենց ազդած զզուանքը պահեն:

Ի վերջոյ՝ Կրոզլօ այս ընդունելութենէն շատ գոհ երեւցաւ։

Աթոս և Արամիս իրենց դերը խաղացին։ Կէս գիշերին իրենց սենեակը քաշուեցան, որուն դուռը բաց ձգեցին բարեխրութեան պատրուակաւ։ Անկէ զատ՝ տ'Արդանեան անոնց ուղեկից եղաւ, Բորթոսը Կրոզլօի հետ Թողլով որ խաղան։

Բորթոս քսանըհինգ ոսկի շահեցաւ Կրոզլօէն, և երբ խաղէն ելաւ, մտածեց որ իր կարծածին չափ անախորժ չէր իր խաղակցին ընկերութիւնը։

Իսկ Կրոզլօ միտքը դրաւ Բորթոսին շահածը միւս օր տ'Արդանեանէն հանել, և կառքոնէն հեռացաւ երեկոյեան ժամադրութիւնը անոր յիշեցնելով։

Երեկոյեան կ'ըսենք, վասնզի խաղամոլները առաւօտեան ժամը չորսին իրարմէ բաժնուեցան։

Օրը ըստ սովորականին անցաւ. տ'Արդանեան Կրոզլօ հա-

րիւրապետէն Հէրիսօն գնդապետին և Հէրիսօն գնդապետէն իր բարեկամներուն կ'երթար։ Ո'վ որ տ'Արդանեանը չէր ճանչնար պիտի կարծէր թէ իր սովորական վիճակին մէջ է, իր բարեկամաց, այսինքն Աթոսին և Արամիսին աչքին տ'Արդանեանի զուարթութիւնը տենդ էր։

--Ի՞նչ կը մեքենայեն արդեօք, կ'ըսէր Արամիս։

—Սպասենք, կ'ըսէր Աթոս։

Բորթոս բան մը չէր ըսեր, միայն իր գրպանին մէջ մի առ մի կը համրէր Կրոզլօէն շահած քսանըհինգ ոսկին, այնպէս գոհունակ դէմքով մը որ արտաքուստ կը մատնուէր։

Երեկոյին Թիւզօն հասնելով, տ'Արդանեան իր բարեկամները հաւաքեց։ Բոլոր օրը իբրև դիմակ կրած անհոգ զուարթութեան նշանները վաներ էր ան։ Աթոս Արամիսին ձեռքը սեղմեց։

—Ժամանակը կը մօտենայ, ըսաւ ան։

—Այո՛, ըսաւ տ'Արդանեան որ լսեր էր այս խօսքը, այո՛, ժամանակը կը մօտենայ, պարոններ, այս իրիկուն Թագաւորը պիտի ազատենք։

Աթոս դող ելաւ, աչքերը բորբոքեցան։

—Տ'Արդանեա՛ն, ըսաւ անոր՝ յուսալէն ետք կասկածելով, այս կատակ չէ յուսամ, այնպէս չէ՞. թէ ոչ անհնարին վիշտ պիտի զգամ։

—Զարմանալի՛ մարդ ես դուն, Աթոս, ըսաւ տ'Արդանեան, որ այսպէս իմ վրաս կը կասկածիս։ Ո՛ւր և ե՞րբ տեսեր ես զիս որ բարեկամի մը սրտին և Թագաւորի մը կենաց հետ կատակ ընեմ։ Բեզի ըսի և վերստին կ'ըսեմ թէ այս իրիկուն Շարլ Ա.ը պիտի ազատենք։ Դուք ինծի յանձնեցիք հնարք մը գտնելու հոգը, հնարքը գտայ։

Բորթոս տ'Արդանեանին կը նայէր խորին զարմացման զգացմամբ։ Արամիս յուսացող մարդու պէս կը ժպտէր, Աթոսի մեռելի պէս գունատ էր և բոլոր անդամները կը դողային։

—Խօսէ՛, ըսաւ Աթոս:

Բորթոս իր խոշոր աչքերը բացաւ, Արամիս կերպով մը տ'Արդարեանի բերնէն վար կախուեցաւ։

—Այս իրիկուն Պ. Կրօզլօի տունը անցընելու հրաւիրուած ենք, միթէ այս բանս չէ՞ք գիտեր։

—Այո, ըսաւ Բօրթօս, փոխադարձ այցելութիւն տալու համար մեզմէ խօսք առաւ։

—Լաւ: Բայց միթէ գիտէ՞ք թէ փոխարէն այցելութիւնը ո՞ւր պիտի տանք։

—Ո՛չ։

—Թագաւորին բնակարանը։

—Թագաւորին բնակարա՞նը, գոչեց Աթօս։

—Այո՛, պարոններ, Թագաւորին տունը։ Պ. Կրօզլօ այս իրիկուն Նորին Վեհափառութիւնը պաշտպանելու պաշտօն ունի, և այս պաշտօնին ատեն քիչ մը սփոփուելու համար, մեզ կը հրաւիրէ որ երթանք իրեն հետ անցնենք գիշերը։

—Մենք չորս հոգի միասի՞ն, հարցուց Աթօս։

—Տէ՛ր վկայ, անշուշտ միասին, միթէ մեր գերիները կըրնա՞նք թողուլ։

—Հա՛, հա՛, գոչեց Արամիս։

—Նայինք, ըսաւ Բօրթօս, սիրտը թունդ ելած։

—Ուստի Կրօզլօի տունը կ'երթանք, մենք մեր սուրերով դուք դաշոյններով. մենք չորս հոգի այն ութը տխմար պահակները ու իրենց անմիտ հրամանատարը կը բռնենք։ Պարոն Բօրթօս, ի՞նչ կ'ըսես այս մասին։

—Կ'ըսեմ թէ այդ դիւրին բան է։

—Թագաւորին Կրօզլօի հագուստները կը հագցնենք, Մուսքդօն, Կրիմօ և Պլեզուա առաջին փողոցին անկիւնը թամբած ձիերով պատրաստ մեզի կը սպասեն, ձիերուն վրայ կը ցատկենք և արեւը չելած ասկից քսան մղոն հեռուն կը գըտնուինք։ Հէ՛յ, միթէ լաւ հիւսուա՞ծ է այս հնարը, Աթօս։

Աթօս իր երկու ձեռքերը տ'Արդանեանի ուսերուն վրայ դրաւ և անոր նայեցաւ իր հանդարտ և անուշ ժպիտովը։

—Ահա կը խոստովանիմ բարեկամ, ըսաւ Աթօս, և վեհանձնութեան և արիութեան կողմէ երկնից ներքև քեզի հաւասարող արարած մը չկայ. մինչդեռ մեր վիշտերուն քեզ անտարբեր կը կարծէինք, թէև առանց մեղադրութեան կըրնայիր անմասն մնալ, մեր մէջէն դուն միայն կարող եղար մեր վայրապար փնտռածը գտնելու: Ուստի կը կրկնեմ, քեզի, տ'Արդանեան, դուն մեր մէջ լաւագոյնն ես, և քեզ կ'օրհնեմ ու կը սիրեմ, սիրելի որդիս։

—Ինչպէս այս հնարքը ես չգտայ, ըսաւ Բօրթօս ճակատին զարնելով, թէև այնքան պարզ է։

—Բայց, ըսաւ Արամիս, եթէ միտքդ լաւ իմացայ, պիտի սպաննենք ամէնքն ալ, այնպէս չէ՞։

Աթօս սարսուռ մը զգաց և գոյնը սաստիկ նետեց:

—Խա՛չ վկայ, ըսաւ տ'Արդանեան, անշուշտ այդ պէտք է։ Երկար ատեն մտածեցի թէ արդեօք այս բանը չընելու միջոց մը չկա՞յ, բայց կը խոստովանիմ որ չկրցայ գտնել։

—Նայինք ըսաւ Արամիս, հիմակ խնդիրը մեր վիճակին վրայ վիճաբանիլ չէ, այլ նայիլ թէ ի՛նչ կերպով պիտի վարուինք:

—Կրկնակի յատակագիծ մը ըրի, պատասխանեց տ'Արդանեան։

—Նայինք ի՛նչ է առաջինը, ըսաւ Արամիս։

—Եթէ իմ տուած նշանիս վրայ ամէնքս միանանք, և այս նշանս պիտի ըլլայ վերջապէս բառը, ձեզմէ ամէն մէկը մօտագոյն զինուորին սիրտը դաշոյնը կը մխէ, ահա արդէն չորս հոգի մեռած, կռիւը այն ատեն հաւասար կը դառնայ, վասնզի այն ատեն չորս հոգին հինգ հոգիի դէմ պիտի մաքառին. այն հինգ զինուորները անձնատուր կ'ըլլան, անոնց բերանը գայլեր կը դնենք, կամ ինքզինքնին կը պաշտպանեն, և այն ատեն զանոնք կը սպաննենք. եթէ դիպուածով մեր հիւրընկալը միտքը փոխէ և միայն Բօրթօսն ու զիս խաղի հրաւիրէ, է՛հ, այն ատեն մեծ միջոցներու դիմել պէտք է կրկին զարնելով. արդարև քիչ մը երկար և աղմկալի պիտի ըլլայ, բայց դուրս կը կենաք սուրերով և աղմուկին կը վազէք։

— Բայց եթէ քեզ սպաննեն, ըսաւ Աթօս։

—Անկարելի՛ բան, ըսաւ տ'Արդանեան, այս գարեջուր խմողները շատ ծանր ու անճարակ են. ասկէ զատ՝ կոկորդէն պիտի զարնէք, Բօրթօս. այս կերպով աւելի շուտով մը մեռնի մարդ ու ամէն աղաղակ կը խափանուի։

—Շատ լաւ, ըսաւ Բօրթօս, այս փոքրիկ և սիրուն խողխողում մը պիտի ըլլայ:

—Անհնելի՛, անհնելի՛ բան, ըսաւ Աթոս։

—Վա՛յ, պարոն զգայուն մարդ, ըսաւ տ'Արդանեան, ճակատամարտի մէջ շատ աւելի մարդիկ պիտի սպաննէիր։ Բայց դարձեալ, բարեկամ, շարունակեց ան, եթէ կարծես թէ թագաւորին կեանքը այսքան զոհողութիւն չարժեր, ամէն ինչ հոս կը թողունք, և երթամ պիտի Պ. Կրօզլօի յայտնել թէ հիւանդ եմ։

—Ո՛չ, ըսաւ Աթոս, անիրաւ եմ, բարեկամ, և դուն իրաւունք ունիս, ներէ՛ ինծի։

Նոյն պահուն դուռը բացուեցաւ և զինուոր մը երևցաւ։

—Պ. Կրօզլօ հարիւրապետը, ըսաւ ան անչափ գաղղիերէն լեզուաւ, յատկապէս իմաց կուտայ Պ. տ'Արդանեանի և Վալլօնի որ իրենց կը սպասէ։

—Ո՞ւր տեղ, հարցուց տ'Արդանեան։

—Անգլիացի Նաբուգոթոնոսորի սենեակը, պատասխանեց զինուորը որ ջերմեռանդ մաքրակրօն էր։

—Շա՛տ աղէկ, պատասխանեց Աթոս պատուական անգլիերէն խօսելով, որուն երեսը կարմրեր էր արքայական վեհափառութեան եղած այս նախատինքը լսելուն, շա՛տ լաւ, Կրօզլօ հարիւրապետին ըսէ որ նոյն տեղը պիտի գանք։

Յետոյ մաքրակրօնը դուրս ելաւ. սպասաւորներուն հրաման տրուեր էր որ ութը ձի թամբեն, և առանց իրարմէ բաժնուելու և ոչ վար իջնելու, երթան թագաւորին բնակած տունէն քսան քայլ հեռու գտնուած տան մը անկիւնը սպասեն։

ԺԹ.

ԼԱՆՍՔՆԷԻ ԽԱՂԸ

Արդարև՝ երեկոյեան ժամը ինն էր. պահակները գիշերուան համար փոխուեր էին և ժամէ մը ի վեր Կրօզլօ հարիւրապետը պահպանութեան պաշտօնը սկսեր էր։

Տ'Արդանեան և Բօրթօս իրենց սուրերով զինեալ, և Աթոս ու Արամիս մէն մի դաշոյն իրենց ծոցը պահած՝ յառաջացան դէպի այն տունը որ նոյն երեկոյ Շարլ Ստուարտի իբրև բանտ կը ծառայէր։ Այս երկու վերջին ասպետները յաղթողներուն կը հետեւէին, հլու և ըստ երևոյթին անզէն, իբրև գերիներ։

—Իրաւ որ, ըսաւ Կրօզօ զանոնք տեսնելով, այլ գրեթէ յոյսը կտրած էի ձեզ տեսնելու։

Տ'Արդանեան անոր մօտեցաւ և խիստ ցած ձայնով ըսաւ.

—Արդարև պահ մը վարանեցանք, Պ. Վալլօն և ես։

—Եւ ինչո՞ւ համար, հարցուց Կրօզլօ։

Տ'Արդանեան աչքովը ցուցուց Աթոսը և Արամիսը։

—Հա՛, հա՛, ըսաւ Կրօզլօ, միթէ կարծիքներո՞ւ պատճառաւ, փոյթ չէ։ Ընդհակառակը յարեց ան ծիծաղելով, եթէ կ'ուզեն իրենց Ստուարտը տեսնել, թո՛ղ տեսնեն։

—Միթէ այս գերի թագաւորին սենեակը պիտի անցընե՞նք, հարցուց տ'Արդանեան։

—Ո՛չ, հապա մօտակայ սենեակը. և որովհետև դուռը բաց պիտի մնայ, ճիշդ իր սենեակը նստածի պէս պիտի երևինք։ Միթէ միատեղ ստակ բերի՞ք։ Ահա ձեզի կ'ըսեմ որ այս իրիկուն դժոխային խաղ մը պիտի խաղամ։

—Կը լսե՞ս, ըսաւ տ'Արդանեան իր գրպաններուն մէջ ոսկին հնչեցնելով։

—Շա՛տ աղէկ, ըսաւ Կրօզլօ, և սենեակին դուռը բացաւ։ Ձեզի ճամբան ցոյց տամ, պարոններ, ըսաւ և ամէնէն առաջ ինք մտաւ։

Տ'Արդանեան դէպի բարեկամներուն դարձաւ։ Բորթոս անհոգ էր որպէս թէ սովորական խաղ մը պիտի խաղար. Ատոս դունատ էր այլ հաստատ. Արամիս թաշկինակով մը կը սրբէր թերեւս քրտինքով թրջած ճակատը։

Ութ պահակները իրենց տեղն էին, չորսը թագաւորին սենեակին մէջ, երկուքը հաղորդակցութեան դուռը, եւ երկուքը այն դրան առջեւ ուրկէց չորս բարեկամները անցան։

Երբ մերկ սուրերը տեսաւ Ատոս, ժպտեցաւ. հետեւապէս կատղած պիտի չըլլար այս, այլ պայքար մը։

Նոյն վայրկեանէն իր զուարթութեանը նորէն դարձած կ'երեւէր։

Շարլ՝ որ բաց դուռնէ մը կ'երեւար, հագուած երկնցեր էր իր անկողնին վրայ. իր վրայ ասուի վերմակ մը նետեր էին։ Իր գլխին մօտ Բարրի նստած էր եւ ցած ձայնով կը կարդար կաթոլիկ Աստուածաշունչէն գլուխ մը, սակայն բաւական բարձրկեկ կը կարդար որպէսզի Շարլ՝ որ անոր մտիկ կ'ընէր աչքերը գոց, մխիթարուի։

Սեղանի մը վրայ դրուած ճարպէ մոմ մը թագաւորին համբերատար երեսը կը լուսաւորէր. նոյնպէս իր ծառային նուազագոյն հանդարտ դէմքը։

Ատեն ատեն Բարրի ընթերցումը կ'ընդհատէր, կարծելով որ թագաւորը կը քնանայ, բայց այն ատեն անիկա աչքերը կը բանար եւ ժպտելով կ'ըսէր.

—Շարունակէ՛, իմ բարի Բարրիս, մտիկ կ'ընեմ։

Կրօզլօ գնաց մինչեւ թագաւորին սենեակին սեմը, իր հիւրերը ընդունելու համար ձեռքը բռնած գլխարկը գլուխը դրաւ, պահ մը այս պարզ սրտաշարժ պատկերը՝ ուր ծեր սպասաւոր մը իր գերի թագաւորին Աստուածաշունչը կը կարդար՝ քննեց թէ ամէն բան իր կարգադրած կերպով տե՞ղն է, եւ տ'Արդանեանի դառնալով, յաղթանակով զաղղիացիին նայեցաւ որպէս թէ գովեստ մը մուրայ իր ռազմագիտութեան վրայ՝

—Սքանչելի՛ է, ըսաւ Կասքօնը, Աստուա՛ծ վկայ, նշանաւոր զօրապետ մը կրնաս դառնալ։

—Եւ միթէ կը կարծե՞ս թէ Սդուարթին վրայ ես քանի՛ պահպանութիւն ընեմ ան կը կարողանայ խոյս տալու։

—Անտարակոյս ո՛չ, պատասխանեց տ'Արդանեան։ Միայն թէ բարեկամներ չի տեղան երկինքէն իր գլխուն:

Կրօզլօի դէմքը բացուեցաւ։

Որովհետեւ Շարլ Սդուարտ այս տեսարանին ատեն իր աչքերը շարունակ գոց պահեր էր, կարելի չէ ըսել թէ մաքրակրօն հարիւրապետին լրբութիւնը տեսե՞ր էր թէ ո՛չ։ Բայց այն ինչ ակամայ լսեց տ'Արդանեանի շեշտաւոր ձայնը որ իր արտեւանունքը բացուեցան։

Բարրին եւս դող ելաւ եւ իր ընթերցումը ընդհատեց։

—Ի՞նչ բանի վրայ կը մտածես ուրեմն որ ընդհատեցիր, ըսաւ թագաւորը, շարունակէ՛, իմ բարեսիրտ Բարրիս, եթէ յոգնեցար մի՛ կարդար։

—Ո՛չ, Վեհափառ տէր, ըսաւ սենեկապանը։

Եւ նորէն իր ընթերցումը շարունակեց։

Առաջին սենեակին մէջ սեղան մը պատրաստեր էին, եւ նոյն սեղանին վրայ որ օթոցով մը ծածկուած էր, երկու վառած կանթեղներ կային, նոյնպէս թուղթեր, եղջերիկ եւ զառեր։

—Պարո՛ններ, ըսաւ Կրօզլօ. նստեցէ՛ք, կաղաչեմ, ես Սդուարթին դիմացը, քանի որ կ'ախորժիմ շատ զանիկա տեսնելու, մանաւանդ ուր որ է այժմ, դուն, տ'Արդանեան իմ դիմացս։

Ատոս բարկութենէն կարմրեցաւ, տ'Արդանեան անոր նայեցաւ ունքը պռստելով։

—Այսպէս լաւ է, ըսաւ տ'Արդանեան, դուն, Պ. Լա Ֆէր կոմս, Կրօզլօի աջակողմը նստէ, դուն, Պ. Հէրպլէյ ասպետ, ձախակողմը եւ դուն, Պ. Վալլօն, իմ քովս: Դուն իմ խաղիս համար դրամ կը դնես, եւ այս պարոնները Պ. Կրօզլօի համար։

Տ'Արդանեան այսպէս կարգադրեց. Բորթոս իր ձախակողմն էր եւ ծնգովը անոր կը խօսէր. Ատոս եւ Արամիս իր դիմացն էին, եւ իր ակնարկին ներքեւ կը պահէր զանոնք:

Երբ Շարլ, Լա Ֆէր կոմսին և Հէրպլէյ ասպետին անունը լսեց իր աչքերը բացաւ և ակամայ իր ազնիւ գլուխը վերցնելով՝ մէկ ակնարկով այս տեսարանին բոլոր դերասանները դիտեց։

Նոյն պահուն Բարրի իր Աստուածաշունչին քանի մը թերթերը դարձուց և Երեմիայի սա տունը բարձր ձայնով կարդաց.

«Աստուած կ'ըսէ. լսեցէք մարգարէից խօսքը, իմ ծառաներս, զորս խնամօք ղրկեցի առ ձեզ և դէպի ձեզ առաջնորդեցի։»

Չորս բարեկամները իրարու ակնարկ մը ալին տուին։ Բարրիին կարդացած խօսքը կը ցուցնէր որ իրենց ներկայութեան բուն պատճառը կ'իմանար։

Տ'Արդանեանի աչքերը խնդութեամբ փայլեցան։

—Քիչ մը առաջ հարցուցիր ինծի թէ՝ որդեօք դրամ ունի՞մ, ըսաւ տ'Արդանեան՝ սեղանին վրայ տասնի չափ ոսկի դնելով։

—Այո՛, ըսաւ Կրօգլօ։

—Լա՛ւ ուրեմն, աւելցուց տ'Արդանեան, ես ալ ըստ կարգի քեզի կ'ըսեմ։ Լա՛ւ պահէ գանձդ, իմ սիրելի Պ. Կրօգլօ, վասնզի կ'ապահովեմ քեզ որ զայն առնելէն առաջ ասկից պիտի ելնենք։

—Բայց ես ալ պիտի պաշտպանեմ զայն, ըսաւ Կրօգլօ։

—Բա՛ջ է ըսաւ տ'Արդանեան։ Պատերա՛զմ, սիրելիդ իմ հարիւրապետ, ուրեմն պատերազմ պիտի մղենք։ Գիտես կամ չես գիտեր որ մեր փափաքածն ալ այս է։

—Ա՛հ, այո՛, քաջ գիտեմ, ըսաւ Կրօգլօ կոշտաբար խընդալով, դուք գաղղիացիք միայն վէրք և այտուցք կը փընտռէք։

Արդարև՝ Շարլ ամէն բան լսեր, ամէն բան հասկցեր էր՝ Թեթև կարմրութիւն մը իր դէմքը ներկեց։ Զինուորները որ իրեն կը նայէին տեսան որ ան քիչ քիչ իր յոգնած անդամները կ'երկարէր, և հրաշէկ տաքցած կրակարանի մը պատ-

ճառած չափազանց ջերմութիւնը պատրուակ բռնելով, փոքր առ փոքր կը նետէր այն ծածկոցը որուն ներքև պառկեր էր թագաւորը, ինչպէս որ արդէն ըսինք։

Աթօս և Արամիս ուրախութեամբ դող ելան դիտելով որ թագաւոր հագուած պառկեր էր։

Խաղը սկսաւ։ Նոյն իրիկունը բախտը դարձեր և Կրօգլօի նպաստաւոր էր. ամէն բան ձեռքն էր և միշտ կը շահէր։ Այսպէս յիսունի չափ ոսկիով՝ սեղանին մէկ կողմէն միւս կողմը անցաւ։ Կրօգլօ ուրախութենէն կը խենդար։

Բօրթօս՝ որ առջի իրիկուն վաստկած քսանըհինգ ոսկին կորսնցուցեր էր, և ասկից զատ՝ իր դրամապանէն տասնըհինգի չափ ոսկի, շատ դէգ էր և ծունկովը տ'Արդանեանի հարցափորձ կ'ընէր. որպէս թէ կը հարցնէր թէ ուրիշ խաղ մը սկսելու առենը հասած չէր. միւս կողմէ՝ Աթօս և Արամիս անոր կը նայէին խուզարկու աչքով, բայց տ'Արդանեան անզգալի կ'երևէր։

Ժամը տասը զարկաւ։ Վարէն գիշերապահ գունդին անցնիլը լսեցին։

—Այս կերպով քանի անգամ գիշերապահ զօրքը շրջան կ'ընէ, հարցուց տ'Արդանեան իր գրպանէն նոր ոսկիներ հանելով։

—Հինգ շրջան, ըսաւ Կրօգլօ, ամէն երկու ժամը անգամ մը։

—Լա՛ւ, ըսաւ տ'Արդանեան, խոհեմութիւն է։

Եւ ինքն ալ իր կողմէ Աթօսին և Արամիսին ակնարկ մը նետեց։

Գիշերապահ գունդին հեռանալը լսեցին.

Տ'Արդանեան առաջին անգամ Բօրթօսին ծնկան հարուածին նմանօրինակ հարուածով պատասխանեց։

Սակայն՝ զինուորները խաղէն և մանաւանդ ոսկիին տեսքէն հրապուրուելով, որ արդարև այնքան հրապուրելի է ամէն մարդոց համար, որչափ որ թագաւորին սենեակէն հեռանալու հրաման չունէին, փոքր առ փոքր դրան մօտեցեր

էին, և իրենց ոտքի մատներուն վրայ բարձրանալով՝ տ'Արդանեանի և Բորթոսին ուսերուն վրայէն կը նայէին. դրան մօտ եղողներն ալ մօտեցեր էին, այսպէս չորս բարեկամներուն նպատակին օգնելով, որ լաւ ևս ունէին զանոնք իրենց ձեռքերուն ներքև ունենալ քան թէ մեննակին չորս անկիւնը վազել փնտռելու համար։ Դրան երկու պահակները միշտ իրենց սուրերը մերկ բռներ էին, միակ անոնց ծայրին վրայ կռթներ էին և խաղամոլներուն կը նայէին։

Աթոս կարծես թէ կը հանդարտէր քանի՛ ժամանակը կը մօտենար, իր երկու ու սպիտակ ազնուապետական ձեռքերը ոսկիներուն հետ կը խաղային, և ոսկիները կ'ոլորէր և կը շտկէր այնպէս դիւրութեամբ իբր թէ անադ կ'ըլլային. իսկ Արամիս՝ անոր չափ ինքզինքին չիշխելով, անդադար իր կուրծքը կը խառնէր, և Բորթոս միշտ կորսնցնելուն վրայ համբերութիւնը հատնելով՝ ծնկովը ուժգին կը զարնէր։

Տ'Արդանեան դարձաւ, մեքենապէս ետեւը նայելով, և երկու զինուորներու մէջ տեսաւ Բարբին կանգուն, իսկ Շարլ արմուկին վրայ կրթնած՝ ձեռքերը կցեր և Աստուծոյ ջերմագին աղօթք մը ընել կ'երեւէր։ Տ'Արդանեան հասկցաւ որ ժամանակը հասած է, թէ ամէն մարդ իր տեղն էր և մինակ վերջապէս բառը լսելու կը սպասէին, բառ մը որ, ինչպէս ընթերցողը կը յիշէ, յարձակման նշանը պիտի ըլլար։

Աթոսին և Արամիսին նախապատրաստական նայուածք մը նետեց, և երկուքնին ալ իրենց աթոռները թեթեւակի ետ տարին որպէսզի ազատութեամբ շարժելու կարող ըլլան։

Բորթոսին երկրորդ հարուած մը տուաւ ծունկովը, և այս ալ ոտք ելաւ որպէս թէ իր թմրած ոտքերը շարժէ. մինակ ոտք ելնելու ատեն փորձեց որ իր սուրը պատեանէն դիւրաւ պիտի ելնէ՞։

—Թշուառակա՜ն, ըսաւ տ'Արդանեան, նորէն տասը ոսկի կորսնցուցի։ Իրաւ որ, Պ. Կրօզլօ, բախտդ շատ կը բանի այս գիշեր և այլ այս չկրնար տեւել։

Եւ իր գրպանէն վերստին տասը հատ ոսկի հանեց։

—Վերջին խաղ մըն ալ խաղանք, հարիւրապետ։ Այս տասը ոսկին կը դնեմ մինակ մէկ թուղթի, վերջին թուղթի մը համար։

—Շա՛տ լաւ, կ'ընդունիմ տասը ոսկին, ըսաւ Կրօզլօ։

Եւ ինչպէս որ սովորութիւն է թուղթերը դարձուց, տ'Արդանեանի համար թագաւոր մը ելաւ և ասօ մը իրեն համար։

—Թագաւո՛ր մը, ըսաւ տ'Արդանեան, այս լաւ նշան է։ Վարպե՛տ Կրօզլօ, յարեց ան, նայէ՛ որ թագաւոր բռնես։

Թէև տ'Արդանեան մեծ իշխանութիւն ունէր իր վրայ, դարձեալ իր ձայնին մէջ այնպիսի հնչում մը կար այլանդակ որ իր խաղակցին սարսուռ տուաւ։

Կրօզլօ սկսաւ թուղթերը հետզհետէ բանալ։ Եթէ նախ ասօ մը դարձնէր, պիտի վաստկէր, եթէ թագաւոր մը բանար, պիտի կորսնցնէր։

Թագաւոր մը բացաւ։

—Վերջապէս, ըսաւ տ'Արդանեան։

Այս խօսքին Աթոս և Արամիս ոտք ելան։ Բորթոս քայլ մը ետ առաւ։ Դաշոյն և սուր փոքր ինչ ևս պիտի փայլէին, բայց յանկարծ դուռը բացուեցաւ և Հէրիսօն սեմին վրայ երեւցաւ, իրեն հետ ունենալով վերարկուով փաթթուած մարդ մը։

Այս մարդուն ետին՝ հինգ վեց զինուորներու հրացանին փայլը կը տեսնուէր։

Կրօզլօ շտապաւ ոտք ելաւ, գինիի, թուղթերու և զառերու մէջ գտնուելուն ամօթապարտ մնալով։ Բայց Հէրիսօն բնաւ անոր ուշադրութիւն չըրաւ, և իր ընկերը ետեւը ձգած թագաւորին սենեակը մտնելով.

—Շա՛րլ Ստուարտ, ըսաւ, առանց գիշեր ու ցերեկ դադար առնելու՝ քեզ Լոնտոն տանելու հրաման եկաւ։ Ուստի անմի՛ջապէս ճամբայ ելլելու պատրաստուէ։

—Եւ այս հրամանը որո՞ւ կողմէ կը հասնի, հարցուց թագաւորը, միթէ Քրոմվէլ զօրապետի՞ն կողմէ։

—Այո՛, ըսաւ Հէրիսօն, և ահա Պ. Մօրտօնդը որ այս պահուն նոյն հրամանը բերաւ և զայն կատարել տալու պաշտօն ունի։

—Մօրտօ՛նդ, մռմռացին չորս բարեկամները իրարու հետ ակնարկ մը փոխանակելով։

Տ'Արդանեան իր և Բօրթօսի կորսնցուցած բոլոր դրամները սեղանին վրայէն ժողվեց և իր լայն գրպանին մէջ պարպեց։ Աթօս և Արամիս անոր ետևը կեցան կարգով։ Այս շարժումը լսելով՝ Մօրտօնդ գլուխը դարձուց, զանոնք ճանչցաւ և վայրենի բացագանչութեամբ աղաղակ մը արձակեց։

—Կարծեմ թէ բռնուեցանք, ըսաւ տ'Արդանեան մեղմիկ իր բարեկամներուն։

—Ո՛չ տակաւին. ըսաւ Բօրթօս։

—Հազարապե՛տ, հազարապե՛տ, ըսաւ Մօրտօնդ, այս սենեակը շրջապատել տո՛ւր, մատնուեցա՛նք։ Այս չորս բարեկամք Նիւքասլէն խոյս տուին և անտարակոյս Թագաւորը փախցնել կ'ուզեն։ Թո՛ղ զանոնք ձերբակալեն։

—Ո՛հ, պատանի, ըսաւ տ'Արդանեան իր սուրը քաշելով, այդ հրամանը աւելի դիւրին է ըսել քան թէ գործադրել՝ Ցետոյ իր բոլորտիքը սոսկալի շրջան մը գծելով։ Նահանջեցէ՛ք, բարեկամներ, գոչեց ան, նահանջեցէ՛ք։

Նոյն պահուն դէպի դուռը սրացաւ, զայն պահպանող երկու զինուոր տապալեց դեռ իրենց հրացանները լեցնելու ատեն չունեցած. Աթօս և Արամիս անոր հետևեցան, Բօրթօս վերջապահ զօրք եղաւ. սպայ, զինուորներ գործին էութիւնը տակաւին չհասկցած՝ չորս բարեկամները փողոց ելեր էին։

—Կրա՛կ, գոչեց Մօրտօնդ, անոնց վրայ կրա՛կ։

Իրօք քանի մը հրացանի գնդակներ նետեցին, բայց ուրիշ արդիւնք մը չունեցան՝ միայն թէ չորս փախստականները ցոյց տալ, որոնք փողոցին անկիւնէն կը դառնային։

Ձիերը որոշեալ տեղն էին. սպասաւորները իրենց տէրոց նետեցին միայն սանձերը՝ որ քաջավարժ ձիաւորներու պէս իսկոյն աշտանակեցին։

—Ընդառա՛ջ, ըսաւ տ'Արդանեան, մտրա՛կ, գօտեպինդ։

Այսպէս վազեցին տ'Արդանեանի հետևելով և նոյն օրը իրենց արդէն ըրած ճամբան զարնելով, այսինքն դէպի Սկովտիա դիմելով։ Աւանը ո՛չ դուռ ունէր և ո՛չ պարիսպ. ուստի առանց դժուարութեան դուրս ելան։

Վերջին տունէն յիսուն քայլ հեռու տ'Արդանեան կանգ առաւ։

—Դադար առէ՛ք հոս, ըսաւ ան։

—Ի՛նչպէս դադար, գոչեց Բօրթօս։ Միթէ սանձարձա՞կ ըսել կ'ուզես։

—Ամենևին, պատասխանեց տ'Արդանեան։ Այս անգամ մեր ետևէն պիտի պնդեն, թողունք որ աւանէն ելնեն և Սկովտիոյ ճամբուն վրայ մեր ետևէն վազեն, և երբ տեսնենք որ սրարշաւ կ'անցնին, մենք հակառակ ճամբան կը բռնենք։

Անկից քանի մը քայլ հեռու գետակ մը կ'անցնէր. սոյն գետակին վրայ կամուրջ մը նետուած էր. տ'Արդանեան իր ձին կամուրջին կամարին ներքև տարաւ. իր բարեկամները անոր հետևեցան։

Տասը վայրկեան չէր անցեր երբ ձիաւորներու գունդի մը սրընթաց վազքը լսեցին։ Հինգ վայրկեան վերջ՝ այս գունդը իրենց գլխուն վրայէն կ'անցնէր, անկասկած ըլլալով բոլորովին որ իրենց փնտռած մարդիկը կամուրջի հաստատութեամբը միայն իրենցմէ զատուած էին։

Ի.

ԼՈՆՏՈՆ

Երբ ձիերու դոփը հեռուն անհետ եղաւ, տ'Արդանեան գետակին եզրը ելաւ և սկսաւ դաշտավայրին մէջ ընդփոյթ քալել կարելի եղածին չափ դէպի Լոնտոն զարնելով։ Իր երեք բարեկամները լռելեայն անոր հետեւեցան, մինչեւ որ կիսաշրջան մը ընելով քաղաքը իրենցմէ շատ հեռու թողուցին։

—Ա՛լ այս անգամ, ըսաւ տ'Արդանեան երբ վերջապէս մեկնակէտէն բաւական հեռու կարծեց գտնուիլ որպէսզի վարգիլը ծանրագոյն վազքի դարձնէ, կարծեմ թէ իրօք ամէն ինչ պարապ է և ուրիշ բան չկայ ընել մեզի համար լաւագոյն բայց միայն Ֆրանսա վերադառնալ։ Այս առաջարկութեանս վրայ ի՞նչ կ'ըսես Աթոս, միթէ բանաւոր չե՞ս գտներ զայն։

—Այո՛, սիրելի բարեկամ, պատասխանեց Աթոս, բայց անցած օր չափազանց բանաւոր խօսք մը ըսիր, ազնիւ և վեհանձն խօսք մը. «Հոս պիտի մեռնինք»։ Ահա խօսքդ կը յիշեցնեմ քեզի։

—Ո՛հ, ըսաւ Բորթոս, մահը ոչինչ է, և մահը չէ մեզի հոգ տուողը, քանի որ չգիտենք թէ ի՛նչ է. այլ պարտութեան գաղափարն է որ գիս կը տանջէ։ Անցած դարձած բաները նայելով՝ կը տեսնեմ որ պէտք է մեզ ճակատ յարդարել ի Լոնտոն, գաւառները և բոլոր Անգլիոյ մէջ. և արդարև վերջապէս պիտի յաղթուինք անշուշտ.

—Այս մեծ ողբերգին մինչև վերջը հանդիսատես ըլլալու պարտաւոր ենք, ըսաւ Աթոս, ի՛նչ որ ալ ըլլայ, աւարտումէն ետք միայն հեռանանք Անգլիայէն։ Միթէ քու կարծիքդ ա՞յս է, Արամի՛ս։

—Ամբողջովին, սիրելի կոմս, ասկէ զատ՝ կը խոստովա-

նիմ որ չպիտի դժգոհիմ եթէ Մօրտօնդը գտնեմ. կ'երեւի ինծի որ անոր հետ հաշիւ մը ունինք կարգադրելու, և մենք սովորութիւն չունինք այսպիսի պարտքեր վճարելէն առաջ տեղէ մը հեռանալ։

—Ա՛հ, այդ ուրիշ բան է, ըսաւ տ'Արդանեան, և ահա պատճառ մը որ ինծի բանաւոր կը թուի։ Իմ մասիս կը խոստովանիմ որ Մօրտօնդը գտնելու համար եթէ հարկ ըլլայ, տարի մը կը մնամ ի Լոնտոն։ Միայն պէտք է որ ապահով մարդու մը տունը օթեւան փնտռենք կասկած չյարուցանելու համար, վասնզի այս պահուս Պ. Քրոմվէլ անշուշտ մեզ գըտնել տալու համար մարդ հանած է, և որչափ որ կրցայ դատել, կատակ չընէր այս Պ. Քրոմվէլը։ Աթո՛ս, միթէ կը ճանչնա՞ս քաղաքին մէջ պանդոկ մը ուր սպիտակ սաւաններ, ըստ բաւականին եփած կովու միս և գինի գտնուին, և գինին ալ գայլուկ և գարիէ շինուած չըլլայ։

—Կարծեմ թէ քու ուզած պանդոկդ գիտեմ, ըսաւ Աթոս։ Վինդր մեզ մարդու մը տարաւ որուն համար կ'ըսէր թէ հին սպանիացի մըն է որ իր նոր հայրենակիցներուն ոսկիովը անգլիացի դարձեր է։ Դուն ի՞նչ կ'ըսես, Արամիս։

—Բայց Սէնեօր Բէրէզի տունը իջեւանելու խորհուրդը ինծի շատ բանաւոր կ'երեւի, իմ մասիս կ'ընդունիմ զայն։ Այս խեղճ Վինդրի յիշատակը կը կոչենք, որուն համար մեծ պատկառանք մը կը ցուցնէր, անոր պիտի ըսենք թէ իբրև հետաքրքիր Լոնտոն եկած ենք որ անցած դարձածը տեսնենք. մեզմէ իւրաքանչիւրը անոր տունը մէյմէկ ոսկի օրը ծախք պիտի ընէ, և կարծեմ թէ այս զգուշութիւնները ընելով՝ բաւական հանգիստ կը մնանք։

—Զգուշութիւններէն մին կը մոռնաս, Արամիս, և այս զգուշութիւնն ալ բաւական կարեւոր է։

—Ի՞նչ է այն։

—Այս է մեր զգեստները փոխելը։

—Բա՛, ըսաւ Բորթոս, ի՞նչ հարկ կայ զգեստ փոխել։ Ո՛րչափ հանգիստ ենք այս հագուստներով։

—Չճանչցուելու համար, ըսաւ տ'Արդանեան։ Մեր հագուստները ա՛յնպիսի ձեւ եւ գրեթէ այնպիսի գոյն ունին միօրինակ որ մեր գաղղիացի ըլլալը առաջին տեսքով կը մատնէ։ Արդ՝ այնքան կապուած չեմ իմ վերարկուիս ձեւին կամ իմ սռնապանիս գոյնին որ անոնց սիրոյն համար Դիպըրնի մէջ կախուելու կամ Հնդկաստան պտոյտ մը ընելու չափ վտանգը աչքս առնեմ։ Շագանակագոյն զգեստ մը գնելու պիտի երթամ։ Դիտեցի որ բոլոր սա անմիտ մաքրակրօնները այս գոյնով հանդերձներ կը հագնին։

—Բայց քու մարդդ պիտի գտնե՞ս, ըսաւ Արամիս։

—Ո՛հ. անշո՛ւշտ. Կրին-Հալ փողոցը, Պետֆորտս Դավէրն կը բնակէր. իրօք աչքերս գոց կրնամ միջնաքաղաքը շրջիլ։

—Կը փափաքէի որ արդէն հոն գտնուէի, ըսաւ տ'Արդանեան, եւ իմ կարծիքս է արեւը չելած Լոնտոն հասնիլ, եթէ մեր ձիերը ճաթին իսկ։

—Ուրեմն մեկնի՛նք, ըսաւ Աթոս, վասնզի եթէ չեմ սխալիր իմ հաշիւներուս մէջ, մինակ ութ կամ տասը մղոնով անկից հեռու ենք։

Չորս բարեկամները իրենց ձիերը քշեցին եւ արդարեւ առաւօտեան մօտ ժամը հինգին հասան։ Այն դուռը որմէ պիտի մտնէին՝ պահակները անոնց մուտքը արգիլեցին. բայց Աթոս պատուական անգլերէն լեզուով պատասխանեց որ Հէրիսոն գնդապետին կողմէ ղրկուած են թագաւորին մօտալուտ գալուստը իր պաշտօնակից Պ. Պրայտճի իմաց տալու։ Այս պատասխանին վրայ պահակը թագաւորին գերի բռնուելուն նկատմամբ քանի մը հարցումներ ըրաւ եւ Աթոս այնպիսի ճշգրիտ եւ հաստատական պարագաներ պատմեց՝ որ եթէ դուռներու պահակները կասկած մը ունէին, այս կասկածները ամբողջովին ցրուեցան։ Ուստի չորս բարեկամներուն առջեւ դուռները բացին ամէն տեսակ մաքրակրօնեան բարեմաղթութիւններ ընելով։

Աթոս ճշմարիտ ըսեր էր. շիտակ Պետֆորտի պանդոկը

գնաց եւ ինքզինքը պանդոկապետին ճանչցուց, եւ աս այնքան ցնծած այնպիսի բազմաթիւ եւ աղուոր ընկերներով գալուն որ իսկոյն լուսագոյն սենեակները պատրաստել տուաւ։

Թէեւ տակաւին չէր լուսցեր՝ մեր չորս բարեկամները Լոնտոն հասնելով բոլոր քաղաքը մեծ վրդովման մէջ գտեր էին։ Այն լուրը թէ թագաւորը Հէրիսոն գնդապետին առաջնորդութեամբ դէպի մայրաքաղաքը կը դիմէր, առջի օրէն տարածուեր էր եւ շատ մարդիկ չէին քնացած վախնալով որ Ստուարտը, ինչպէս որ կ'անուանէին, գիշերայն գալով անոր մուտքը չեն տեսներ։

Հագուստի փոփոխութեան խորհուրդը միաբան ընդունեեր էին, ինչպէս որ կը յիշենք, միայն Բորթոս թեթեւ ընդդիմութիւն մը ցուցուց։ Ուստի զայն ի գործ դնելու ելան։ Պանդոկապետը ամէն տեսակ հագուստներ բերել տուաւ, որպէս թէ իր սնտուկը լեցնել կ'ուզէր։ Աթոս սեւ հագուստ մը առաւ որ իրեն պարկեշտ ռամիկի մը կերպարանքը կ'ընծայէր։ Արամիս որ սուրը թողուլ չէր ուզեր, մթագոյն եւ մարտական ձեւով զգեստ մը ընտրեց, Բորթոս կարմիր վերարկուէ եւ կանանչ սռնապանէ մը հրապուրուեցաւ. տ'Արդանեան որ իր ընտրելիք գոյնը արդէն որոշած էր, մինակ յարմար երանգ մը գտնելու հետեւէ եղաւ, եւ իր փափաքած շագանակագոյն զգեստովը՝ բաւական ճշտիւ ներկայացուց քաշուած շաքարավաճառ մը։

Իսկ Կրիմօ եւ Մուսքըթօն որ զարդազգեստ չունէին, արդէն ծպտեալ կ'երեւէին. ասկէ զատ՝ Կրիմօ կասկածոտ անգլիացիին ծանր, ցամաք, սեգ կերպարանքը կը ներկայացնէր. Մուսքըթօն փորեղ, ուսած եւ դատարկաշրջիկ անգլիացիի մը կը նմանէր։

—Հիմակ, ըսաւ տ'Արդանեան, կարեւորին անցնինք. արդեօք մեր մազերը կտրե՞նք որպէսզի խուժանը մեզ չնախատէ։ Քանի որ այժմ սուրին շնորհիւը, ազատորդի չենք, գլխով մաքրակրօն դառնանք։ Գիտէք որ այս է կարեւոր պայմանը որով ժողովրդայինը ազնուականէն կը զատուի։

Այս կարեւոր կէտին վրայ տ'Արդանեան անսասան դատ. Արամիսը որ ոչ մէկ կերպով գիսակէն չէր կամեր զրկուիլ քանի որ խիստ գեղեցիկ էր եւ վրան մեծ հոգ կը տանէր, եւ հարկ էր որ Աթոս՝ թէեւ այս խնդիրներուն անտարբեր, առաջին օրինակը ինք տայ: Բօրթօս առանց դժուարութեան իր գլուխը Մուսքդօնին առջեւ ծռեց եւ Մուսքդօն ալ մկրատով կտրեց անոր խիտ եւ կարծր գէսը: Տ'Արդանեան ինքնիրեն նորաձեւ կերպով մազերը կտրեց որ Ֆրանսուա Ա.ին կամ Շարլ Թ.ի ժամանակին մէկ պատկերին կը նմանէր:

—Այսպէս սոսկալի՛ ենք, ըսաւ Աթոս:

—Կ'երեւի ինծի որ մաքրակրօն կը հոտինք դող հանելու չափ, ըսաւ Արամիս:

—Գլուխս կը մսի, ըսաւ Բօրթօս:

—Եւ ես փափաք մը կը զգամ քարոզ տալու, ըսաւ տ'Արդանեան:

—Հիմակ որ, ըսաւ Աթոս, մենք իրարու անգամ անճանաչ ենք եւ վախ չունինք որ ուրիշները մեզ ճանչնան, երթանք թագաւորին մուտքը տեսնելու. եթէ բոլոր գիշերը ճամբայ քալեր են, անշուշտ Լոնտոնէն հեռու չպիտի ըլլան:

Արդարեւ չորս բարեկամները երկու ժամէ ի վեր էր որ ամբոխին խառնուեր էին: Ամբոխը մեծ աղաղակներ եւ մեծ շարժում մը ցոյց տուաւ երբ լսեց թէ Շարլ կը մօտենար՝ կառք մը ղրկեր էին անոր առջեւ, եւ հեռուէն հսկայ Բօրթօս, որ իր գլխարկը ամէնուն գլուխներէն վեր կը բռնէր, իմացուց որ թագաւորը կը տեսնէ: Տ'Արդանեան ոտքին մատներուն վրայ բարձրացաւ, մինչդեռ Աթոս եւ Արամիս մտիկ կ'ընէին որպէսզի ինքնին ընդհանուր կարծիքը իմանան: Կառքը անցաւ ու տ'Արդանեան ճանչցաւ Հէրիսօնը մէկ դռնակին եւ Մօրտօնը միւսին կողմը կեցած: Իսկ ժողովուրդը՝ որուն տպաւորութիւնները կը քննէին Աթոս եւ Արամիս, անդադար հայհոյանք կ'արձակէր Շարլի դէմ:

Աթոս տուն դարձաւ յուսահատ:

—Սիրելի՛դ իմ, ըսաւ անոր տ'Արդանեան, պարապ տեղ

կը յամառիս, եւ քեզի կը յայտնեմ ահա որ գործերու վիճակը վատ է. իմ մասիս՝ քեզի համար եւ իբրեւ հրացանակիրի քաղաքավարութիւն՝ հետաքրքրութենէ չարժելով կապուած եմ այս բանին, կը նայիմ որ շատ ծաղրելի պիտի ըլլայ եթէ այս ուռնացող մարդոց ձեռքէն որսը կորզենք եւ անոնց ծաղր ընենք: Ուստի պիտի խորհիմ:

Հետեւեալ օրը իսկ՝ Աթոս իր պատուհանը նստելով՝ որ Միջնաքաղաքին ամենէն բազմամարդ թաղերուն վրայ կը նայէր, Բարլամէնդին օրինագրին աղաղակը լսեց, որով Շարլ Ա. դատաստանի կը կոչուէր իբրեւ մատնիչ եւ բռնապետ:

Տ'Արդանեան իր քովն էր: Արամիս քաղաքացուհի մը կը դիտէր, Բօրթօս համադամ նախաճաշիկի մը յետին բերկրանքով համակուեր էր:

—Բարլամէ՛նդը գոչեց, Աթոս, կարելի բան չէ որ Բարլամէնթը այսպիսի օրինագիր մը շինած ըլլայ:

—Մտիկ ըրէ, ըսաւ տ'Արդանեան, ես անգլիերէնը քիչ կը հասկնամ. բայց, որովհետեւ անգլիերէնը վատ արտասանուած գաղղիերէն է. ահաւասիկ հասկցածս. parliament's bill, այսինքն Բարլամէնդի օրինագիր, եթէ ոչ Աստուծոյ պատիժին գամ, ինչպէս որ կ'ըսեն հոս:

Նոյն պահուն պանդոկապետը ներս կը մտնէր. Աթոս նշան ըրաւ անոր մօտ գալու:

—Միթէ Բարլամէ՞նդը որոշեց այս օրինագիրը, հարցուց Աթոս անգլիերէն:

—Այո՛, միլորտ, մաքուր Բարլամէնթը:

—Ի՞նչ ըսել է մաքուր Բարլամէնդը. ուրեմն երկու Բարլամէնդ կա՞յ:

—Բարեկա՛մ, ընդհատեց տ'Արդանեան, որովհետեւ անգլիերէն չեմ հասկնար, բայց սպանիոլերէն ամէնքնիս կ'իմանանք, հաճէ՛ այս լեզուաւ խօսելու, որ քու լեզուդ է, եւ հետեւապէս յօժարակամ պարտիս խօսելու նոյնով երբ առիթը պատահի:

—Ա՛հ, կատարեալ է, ըսաւ Արամիս:

Իսկ Բօրթօսի գալով, արդէն ըսինք, բոլոր իր ուշադրութիւնը կեդրոնացած էր կողկի մը ոսկորին վրայ որմէ մսոտ մասը հանելու զբաղած էր։

—Ուրեմն ի՞նչ կը հարցնէիր ըսաւ պանդոկապետը սպանիական լեզուաւ:

—Կը հարցնէի, աւելցուց Աթօս նոյն լեզուաւ, թէ երկո՞ւ Բարլամէնդ կայ, մէկը մաքուր և միւսը անմաքուր։

—Ո՛հ, որքա՛ն ալյանդակ, ըսաւ Բօրթօս, ծանրկէկ գդալուխը վերցնելով և իր բարեկամներուն նայելով զարմացման դէմքով մը, հիմակ կը հասկնամ ուրեմն անգլիերէնը. ձեր ըսածը կը հասկնամ։

—Վասնզի սպանիօլերէն կը խօսինք, սիրելի բարեկամ, ըսաւ Աթօս իր սովորական պաղարիւնութեամբը։

—Ա՛հ, սատանա՛յ, ըսաւ Բօրթօս, շատ կը ցաւիմ այդ մասին, որով լեզու մըն ալ աւելի գիտցած պիտի ըլլայի։

—Երբ մաքուր Բարլամէնդ կ'ըսեմ, պարոն, աւելցուց պանդոկապետը, այն Բարլամէնդին կ'ակնարկեմ զոր գնդապետ Պրայտ մաքրեց։

—Ա՛հ, իրա՞ւ, ըսաւ տ'Արդանեան, այս պարոնները շատ հնարագէտ են, պէտք է որ Ֆրանսա դարձիս այս հնարքը սորվեցնեմ Մազարէնին և տեղապահին։ Մին պիտի մաքրէ յանուն արքունեաց, միւսը յանուն ժողովրդեան, այնպէ՞ս որ այնուհետեւ բնաւ Բարլամէնդ չպիտի մնայ։

—Ո՞վ է այս Պրայտ գնդապետը, հարցուց Արամիս, և ի՞նչ միջոց գործածեց Բարլամէնդը մաքրելու համար:

—Պրայտ գնդապետը, ըսաւ սպանիացին, հին սայլորդ մըն է, խիստ ուշիմ մարդ մը որ բան մը դիտեր էր իր սայլը առաջնորդելու ատեն, այսինքն երբ իր ճամբուն վրայ քար մը գտնուէր, աւելի կարճ միջոցն էր քարը բառնալ քան թէ անիւը անոր վրայէն անցունելու փորձել։ Արդ՝ Բարլամէնդը կազմող երկու հարիւր յիսունըմէկ անդամներէն, հարիւր յիսունըմէկը իրեն նեղութիւն կուտային և թերեւս իր քաղաքական սայլը տապալէին։ Զանոնք վռնտեց, ինչպէս որ երբեմն կը վերցնէր քարերը, և ժողովէն դուրս նետեց։

—Աղուոր բան, ըսաւ տ'Արդանեան, որ՝ մանաւանդ խելացի մարդ ըլլալուն՝ ո՛ւր որ խելք տեսներ կը յարգէր։

—Եւ միթէ ամէն արտաքսեալ Ստուարտեա՞ն էին, հարցուց Աթօս։

—Անտարակո՛յս, պարոն, և կրնաք երեւակայել որ պիտի կարողանային թագաւորը ազատել։

—Ինչպէս չէ, ըսաւ Բօրթօս վեհափառութեամբ, մեծամասնութիւն էին։

—Եւ միթէ կը կարծե՞ս թէ, ըսաւ Արամիս, պիտի հաւանի այնպիսի ատեանի մը առջեւ ելլել։

—Պէտք է որ ելլէ, ըսաւ սպանիացին, եթէ մերժելու փորձէ. ժողովուրդը զանիկա պիտի ստիպէ հաւանելու։

—Շնորհակալ եմ, վարպետ Բէրէզ, ըսաւ Աթօս, հիմակ բաւական տեղեկութիւն ստացայ։

—Վերջապէս սկսա՞ր հաւատալ որ կորսուած դատ մըն է այս, Աթօս, ըսաւ տ'Արդանեան, և թէ Հէրիսոններու, Ժօյսներու, Պրայտներու և Քրոմվէլներու դէմ երբեք չպիտի կրնանք մաքառիլ։

—Թագաւորը ատեանին առջև անպարտ պիտի ելնէ, ըսաւ Աթօս, իր կուսակիցներուն լռութիւնը անգամ կը ցուցնէ որ դաւ մը կայ։

Տ'Արդանեան ուսերը բարձրացուց։

—Բայց, ըսաւ Արամիս, եթէ իրենց թագաւորը դատապարտելու յանդգնին, յաքսոր կամ ի բանտ պիտի դատապարտեն միայն։

Տ'Արդանեան թերահաւատութեամբ մը սուլեց:

—Պիտի տեսնենք անշուշտ, ըսաւ Աթօս, վասնզի յուսամ որ դատավարութեան ներկայ պիտի գտնուինք։

—Երկայն ատեն չպիտի սպասէք, ըսաւ պանդոկապետը, վասնզի նիստերը վաղը պիտի սկսին։

—Վա՛յ, պատասխանեց Աթօս, ուրեմն դատաստանաքըննութեան պարագաները թագաւորին ձերբակալութենէն առաջ սկսեր էին։

—Գիտէք, ըսաւ Արամիս, որ մեր բարեկամ Մօրտօնդն է որ այս փոքրիկ գործին եթէ ոչ սակարկութիւնը գէթ առաջարկութիւնը ըրաւ։

—Գիտնալ պէտք ես, ըսաւ տ'Արդանեան, որ ուր որ ձեռքիս տակ իյնայ ան, պիտի սպաննեմ։

—Է՛հ, թո՛ղ այդ խնդիրը, ըսաւ Ատօս, այնպիսի ապիրա՜տ մը...։

—Բայց ճիշդ ապիրատ մը ըլլալուն համար է որ զանիկա պիտի սպաննեմ, վրայ բերաւ տ'Արդանեան։ Ա՛հ, սիրելի բարեկամ, ես քու կամքդ կը կատարեմ ըստ բաւականին, դուն ալ պէտք է որ իմինիս ներողամիտ ըլլաս. ասկէ զատ այս անգամ, թէ հաճելի թուի քեզ այս թէ ոչ, քեզի կը յայտնեմ որ այն Մօրտօնդը իմ ձեռքովս պիտի սպաննուի։

—Եւ իմ ձեռքովս, ըսաւ Բորթօս։

—Եւ իմ ձեռքովս, ըսաւ Արամիս։

—Սրտաշարժ համաձայնութիւն, գոչեց տ'Արդանեան, և մեզի պէս բարի ոստանիկներու շատ կը յարմարի։ Երթանք շրջան մը ընենք քաղաքը. այն Մօրտօնդն անգամ չորս կողմը տիրած մշուշէն մեզի չպիտի ճանչնայ չորս քայլ հեռուէն։ Երթանք քիչ մը մշուշ խմենք։

—Այո՛, ըսաւ Բորթօս, այդ կերպով գարեջուր խմած կ'ըլլանք։

ԻԱ.

ԴԱՏԱՍՏԱՆ

Հետեւեալ օրը բազմաթիւ պահապան զօրքեր կը տանէին Շարլ Ա.ը այն բարձր ատեանին առջեւ որ զայն պիտի դատէր։

Ամբոխը լեցուեր էր փողոցները ու պալատին մօտաւոր տուները. ուստի գրեթէ այն չորս բարեկամները առաջին քայլերը առին որ նոյն կենդանի պատին յարուցած անանց արգելքին առջեւ կեցան. Ժողովրդեան մէջէն քանի մը կորովի և կռուասէր մարդիկ մինչեւ անգամ Արամիսը հրեցին այնքան ուժգին՝ որ Բորթօս իր ահագին կռուփը վերցուց և հացագործի մը ալիւրոտ դէմքին իջեցուց, որ խեղճին գոյնը փոխեց և արիւնով ծածկուեցաւ, հասած խաղողի ողկոյզի մը պէս ճզմուելով։ Այս գործը մեծ աղմուկ հանեց, երեք մարդիկ Բորթօսի վրայ յարձակիլ ուզեցին, բայց Ատօս մէկը վանեց, միւսը տ'Արդանեան, և Բորթօս ալ երրորդը իր գլխին վրայէն վար նետեց։ Կախամարտութեան սիրահար քանի մը անգլիացիք մեծ արժէք տուին գործողութեան որ այնքան արագ և գլուրաւ կատարուեր էր և ծափահարեցին։ Քիչ մնաց որ Բորթօս ու իր բարեկամները՝ փոխանակ զարնուելու՝ ինչպէս որ սկսեր էին վախնալ, յաղթանակաւ պիտի տարուէին, բայց մեր չորս ուղեւորները՝ որ միշտ կը վախնային թէ բանէ մը երեւան չելլեն, այս յաղթութեան պատիւէն խոյս տալու յաջողեցան։ Սակայն այս հերակլեան յանդիմանութենէն բան մը չահեցան, այսինքն ամբոխը բացուեցաւ իրենց առջեւ պահ մը առաջ իրենց անկարելի երեւցած արդիւնքը ստացան, և պալատին մօտեցան։

Բոլոր Լոնտոնի ժողովուրդը դատարանին վերնատուները կը խուժէին, ուստի երբ չորս բարեկամները վերնատան մը մէջ մտնելու յաջողեցան, առաջին երեք բազմարանները արդէն լեցուած գտան։ Այս կէտ անպատեհութիւն

մըն էր ինքզինքնին անյայտ պահելու փափաքող մարդոց համար. ուստի իրենց տեղերը նստան այն չափով զոհ ըլլալով, միայն Բօրթօս կանգուն մնաց, վասնզի իր կարմիր վերարկուն և կանաչ ստնապանը ցոյց տալ կ'ուզէր և կը ցուէր որ առաջին կարգը չէր գտնուեր։

Ամֆիթատրոնի ձևով դրուեր էին նստարանները և իրենց տեղէն չորս բարեկամները բոլոր ժողովին վրայ կը նայէին։ Դիպուածը այնպէս բերեր էր որ չորս բարեկամները ճիշտ մէջտեղի վերնատունը մտեր էին և այսպէս Շարլի համար պատրաստուած աթոռին դէմ առ դէմ կը գտնուէին։

Առաւօտեան ժամը տասներմէկին Թագաւորը դրան սեմին վրայ երևցաւ։ Պահապան զօրքով շրջապատեալ ներս մտաւ, բայց գլուխը գոց և հանդարտ դէմքով, ամէն կողմ անխռովութեամբ ակնարկ մը ուղղեց, որպէս թէ հրաւէր հպատակաց ժողովի մը նախագահել կ'ուզէր և ոչ թէ ստամբակ ատեանի մը ամբաստանութեանց պատասխանել։

Դատաւորները՝ որ կը չփանային Թագաւոր մը խոնարհելու մասին, յայտնապէս իրենց սահմանեալ իրաւունքը գործածելու կը պատրաստուէին։ Հետևապէս՝ պահապան մը եկաւ Շարլի ըսելու թէ՝ սովորութիւն է որ ամբաստանեալ մը դատաւորներու առջև գլուխը բանայ։

Շարլ՝ առանց բառ մը արտասանելու՝ թաղեայ գըլխարկը գլխուն վրայ ինկցուց, զոր միւս կողմը դարձուց։ Յետոյ երբ պահապանը հեռացաւ, նախագահին դիմացը դըրուած թիկնաթոռին վրայ նստաւ, իր կօշիկները մտրակելով ձեռքը բռնած մէկ եղէգնով։

Բարրի որ իրեն կ'ընկերանար՝ իր ետևը կեցաւ կանգնած։

Տ'Արդանեան, փոխանակ այս արարողութիւնը տեսնելու, Աթօսին կը նայէր, որուն դէմքը կը ցոլանար Թագաւորին ամէն այլայլութիւններէն զոր ինքն իր վրայ իշխելով իր դէմքէն կը վանէր։ Աթօսին, այս պաղ և հանդարտ մարդուն վրդովումը զինքը սոսկացուց։

—Կը յուսամ, ըսաւ անոր ականջին ծռելով, որ Նորին

Վեհափառութենէն օրինակ կ'առնես և այս վանդակին մէջ յիմարաբար ինքզինքդ սպաննել չես տար։

—Անհո՛գ եղիր, ըսաւ Աթօս։

—Հա՛, հա՛, շարունակեց տ'Արդանեան, կ'երևայ թէ բանէ մը կը վախնան, վասնզի ահա պահապան զօրաց վաշտը կը կրկնապատկեն. գեղարդներ ունէինք միայն, ահաւասիկ հրացաններ։ Այժմ ամէնուն համար զէնք կայ. գեղարդները միջավայրի ունկնդիրներուն համար է, հրացանները ալ մեզի դէմ։

—Երեսուն, քառասուն, յիսուն, եօթանասուն մարդ, ըսաւ Բօրթօս նորեկները համրելով։

Է՛հ. ըսաւ Արամիս, և բարկութենէն գեղնեցաւ. վասնզի ճանչցեր էր Մօրտօնդը՝ որ սուրամերկ Թագաւորին ետևէն հրացանակիրները կ'առաջնորդէր, այսինքն վերնատուններուն դիմացը։

—Արդեօք ճանչցա՞ն մեզ, շարունակեց տ'Արդանեան։ Այն ատեն չուտ մը պիտի նահանջեմ։ Բնաւ հոգս չէ, և ի՛նչ տեսակ մահ որ կ'ուզեն թո՛ղ տան ինձ, բայց կը փափաքիմ իմ ընտրած մահուամբս մեռնիլ։ Արդ՝ չեմ սիրեր տուփի մը մէջ հրացանի բռնուիլ։

—Ո՛չ, ըսաւ Արամիս, մեզ չտեսաւ ան, Թագաւորին կը նայի միայն։ Թշուառակա՛ն լիրբը, ի՛նչ աչքով կը նայի անոր։ Արդեօք մեզ ատելուն չափ Նորին Վեհափառութիւնն ալ կ'ատէ՞։

—Տէ՛ր վկա՛յ, ըսաւ Աթօս, որ մինակ անոր անունն ու ստացուածքը կողոպտեց։

Ճշմարիտ է, ըսաւ Արամիս, բայց լռութի՛ւն, ահա նախագահը որ Թագաւորին կը խօսի։

Արդարև՝ Պրատշա նախագահը կը հարցաքննէր օգոստափառ ամբաստանեալը։

—Ստուա՛րտ, ըսաւ անոր, մտիկ ըրէք ձեր դատաւորներուն անուանական կոչումը և այս ատեանին ուղղեցէք ձեր ունեցած դիտողութիւնները։

Թագաւորը՝ որպէս թէ այս խօսքը իրեն չէին ուղղեր, գլուխը միւս կողմը դարձուց։

Նախագահը սպասեց, և որովհետև պատասխան մը չեկաւ, պահ մը լռութիւն տիրեց։

Որոշեալ հարիւր վաթսուն անդամներէն, եօթանասուն երեքը միայն կարող էին պատասխանել, վասնզի միւսները այսպիսի գործի մը դաւակցութենէ զարհուրելով, անմասն մնացեր էին։

—Կոչումս, կը կրկնեմ, ըսաւ Պրոտչա՝ չտեսնելու զարնելով ժողովին երեք հինգերորդի բացակայութիւնը։

Եւ սկսաւ յաջորդաբար կոչել ներկայ և բացակայ անդամները։ Ներկայ գտնուողները հզօր կամ տկար ձայնով մը կը պատասխանեին, իրենց կարծիքը յայտնելու ունեցած արիութեան համեմատ։ Երկու անգամ կրկնուած բացակայ անուններուն կարճատև լռութիւն մը կը հետևէր։

Ֆէրֆաքս գնդապետին անունը ըստ կարգի կոչեցին և ասոր հետևեցաւ կարճ այլ հանդիսական լռութիւն մը որմէ կ՚իմացուէր այսպիսի անդամներու բացակայութիւնը, որ անձամբ այն դատաստանին չէին ուզեր մասնակից գտնուիլ։

--Ֆէրֆաքս գնդապե՛տը կրկնեց Պրոտչա։

—Ֆէրֆա՞քս, պատասխանեց ծաղրալի ձայն մը որուն արծաթի հնչիւնէն հասկցուեցաւ թէ կնոջ մը ձայնն էր, այնքան անխելք չէ այստեղ գտնուելու համար։

Որոտալից քրքիջով մը ընդունեցին այս խօսքերը այնպիսի յանդգնութեամբ արտասանուած զոր կիները իրենց տկարութենէն կը քաղեն, տկարութիւն մը որով ամէն վրէժխնդրութենէ ազատ կը մնան։

—Կնոջ մը ձայնն է այս, գոչեց Արամիս։ Ա՛հ, հաւատամ վկա՛յ, ի՛նչ որ ուզեն կուտայի եթէ նորատի և սիրուն է։

Եւ աստիճանին վրայ ելաւ որպէսզի վերնատան մէջ տեսնելու ջանայ թէ ձայնը ո՛ւսկից եկաւ։

—Հոգի՛ս վկայ, ըսաւ Արամիս, չքնա՛ղ կին մըն է այն. նայէ անգամ մը, տ՚Արդանեան, ամէն մարդ անոր կը նայի, և թէև Պրոտչայի ակնարկը դժգուն է, բնաւ գոյնը չնետեց։

—Նոյնինքն Լէտի Ֆէրֆաքսն է, ըսաւ տ՚Արդանեան, միթէ կը յիշե՞ս զանիկա, Բօրթօս, իր ամուսնոյն հետ Քըրոմվէլի տունը տեսանք։

Պահ մը ետք այս տարօրէն դիպուածէն խանգարուած հանդարտութիւնը վերահաստատուեցաւ, և կոչումը շարունակուեցաւ։

—Այս ապիրատները նիստը պիտի վերցնեն, երբ տեսնեն որ անդամներու մեծամասնութիւն չկայ, ըսաւ Լա Ֆէր կոմսը։

—Դուն չե՞ս ճանչնար զանոնք, Աթօս. դիտէ՛ անգամ մը Մօրտօնդի ժպիտը. տե՛ս ինչպէս կը նայի թագաւորին։ Միթէ այս ակնարկը այնպիսի մարդո՞ւ մըն է որ իր որսը ձեռքէ հանելու երկիւղ մը կը յայտնէ։ Ո՛չ, ո՛չ, գոհունակ ատելութեան, յագենալու ապահով վրէժխնդրութեան մը ժպիտն է։ Ա՛հ, անիծեա՛լ իժ, ինձ համար երջանիկ պիտի ըլլայ այն օրը որ կարող պիտի ըլլամ ակնարկէ զատ՝ քեզի հետ ուրիշ բանով մը հանդիպիլ։

—Թագաւորը արդարև գեղեցիկ է, ըսաւ Բօրթօս, ասկէ զատ՝ տե՛ս թէև կալանաւոր է, ի՛նչպէս մաքուր հագուած է։ Իր գլխարկին փետուրը գէթ քսանըհինգ ոսկի կ՚արժէ, նայէ՛ անոր, Արամիս։

Կոչումը աւարտելէն յետոյ, նախագահը հրամայեց որ ամբաստանութեան գիրը կարդան։

Աթօս գեղնեցաւ. իր յոյսը նորէն պարապ ելաւ։ Թէև դատաւորները բաւական թուով չէին, դատը պիտի շարունակէին, ուրեմն թագաւորը կանխաւ դատապարտեալ էր։

—Արդէն ըսի քեզի, Աթօս, յարեց տ՚Արդանեան ուսերը բարձրացնելով, բայց դուն միշտ կը տարակուսիս։ Հիմակ բոլոր քաջութիւնդ ժողվէ և մտիկ ըրէ, առանց բարկանալու կ՚աղաչեմ, այն ամէն սոսկալի բաները զոր սևազգեստ մարդը ազատօրէն և արտօնութեամբ պիտի ըսէ իր թագաւորին։

Արդարև՝ երբեք ասկէ աւելի կոշտ ամբաստանութիւն մը, երբեք աւելի ցած նախատինք, երբեք արիւնալի հարցաքննութիւն մը դեռ եւս չէին աղարտած արքայական վեհափառութիւնը։ Մինչև այն ատեն շատ համարեր էին թա-

թագաւորները սպաննելու, բայց գէթ անոնց դիակներուն վատներ էին նախատինք։

Շարլ Ա. ամբաստանին ձայնը մտիկ կ'ընէր մասնաւոր ուշադրութեամբ մը, անտես անցնելով նախատինքը, միտքը պահելով գանգատները, և երբ ատելութիւնը չափազանց կը զեղէր, երբ ամբաստանը կանխաւ դահիճ կը դառնար, արհամարհանաց ժպիտով մը կը պատասխանէր։ Արդարև՝ անտանելի և էական բան մըն էր այս անբաղդ թագաւորին համար տեսնել որ իր բոլոր անխոհեմութիւնները որոգայթի կերպարանքով և իր սխալմունքը իբրև յանցանք կը ներկայացնէին։

Տ'Արդանեան որ արժանի եղած արհամարհանքով կը թողուր որ այս նախատինքներու հեղեղը վազէ, դարձնել իր ուշիմ միտքը ամբաստանին քանի մը մեղադրանքներուն վրայ կեցուց։

—Սա իրաւ է, ըսաւ ան, որ եթէ անխոհեմութեան և թեթևամտութեան համար պատիժ կայ, այս հէք թագաւորը պատիժի արժանի է։ Բայց կ'երևի ինձ որ այս պահուս կրածը չատ անագորոյն է։

—Սակայն, պատասխանեց Արամիս, պատժապարտ թագաւոր չկրնար ըլլալ, այլ իր պաշտօնեաները, վասնզի անգլիական սահմանադրութեան առաջին օրէնքն է. Թագաւորը չկրնար մեղանչել:

—Իսկ ես, կը խորհէր Բորթօս Մորտօնդի նայելով և միտքը անոր տալով, եթէ այս վիճակին վեհափառութիւնը խանգարել չըլլար, վերնատունէն վար պիտի ցատկէի, երեք ոստում ընելով Մորտօնդի վրայ պիտի իյնայի ու խեղդէի զայն. յետոյ սուրն պիտի բռնէի և անով պիտի հալածէի այն անշահ հրացանակիրները որ Փրանսայի հրացանակիրներու իբր թէ նմանիլ կ'ուզեն։ Նոյն պահուն տ'Արդանեան որ շատ ուշիմ և յարմար պարագայէ օգուտ քաղել գիտէ՝ թերևս միջոց գտնէր թագաւորը ազատելու։ Պէտք է որ այս մասին անոր խօսիմ։

Իսկ Աթօս, կրակուբոց դարձած, բուռերը ոլորած, իր յատուկ խայթուածքով չրթունքը արիւնոտած՝ իր նստարանին վրայ կը փրփրէր ու կը կատղէր այս ժողովրդային մըշտատև նախատինքներուն և արքայական երկար համբերութեան վրայ, և այս անպարտելի բազուկը, այս անսասան սիրտը դողդոջուն ձեռք մը և սարսուռ մարմին մը դարձեր էր։

Նոյն պահուն ամբաստանը իր պաշտօնը կ'աւարտէր սա խօսքով.

«Ներկայ ամբաստանութիւնը յանուն անգլիական ժողովրդեան կը ներկայացնենք։»

Այս խօսքին վրայ վերնատուններու մէջ մրմունջ մը ելաւ, և ուրիշ ձայն մը որ կնոջ ձայն չէր, այլ մարդու, առնական և զայրագին ձայն մը որ տ'Արդանեանի ետևէն գոռաց.

—Սո՛ւտ կը խօսիս, գոչեց այս ձայնը, և անգլիական ժողովրդեան ինը տասներորդը քու բոլոր ըսածներէդ կը սոսկայ։

Այս ձայնն Աթօսինն էր, որ՝ ինքզինքէն դուրս ելած, կանգնած և թևը երկնցած՝ այսպէս կը հարցափորձէր հասարակաց ամբաստանը։

Այս կշտամբանքներուն վրայ, թագաւոր, դատաւորներ, հանդիսատեսներ, ամէն մարդիկ իրենց աչքերնին դարձուցին չորս բարեկամներուն գտնուած վերնատունը։ Մորտօնդ ալ միւսներուն ըրածը ըրաւ և ճանչցաւ այն ազնուազգին որուն բոլորտիքը ոտք ելեր էին միւս երեք գաղղիացիները՝ տժգոյն և սպառնալից։ Իր աչքերը ուրախութենէն կը շողային, նոյն պահուն գտեր էր այն մարդիկը որոնց խուզարկութեան և մահուան նուիրեր էր իր կեանքը։ Մոլեգին շարժմամբ իր քովը կանչեց քսան հատ հրացանակիր, և իր մատովը ցոյց տալով այն վերնատունը ուր իր թշնամիները կը գտնուէին.

—Կրա՛կ ըրէք սա վերնատան, ըսաւ ան։

Բայց այն ատեն՝ մուկի պէս արագ՝ դ'Արդանեան Աթօսը մարմնոյն մէջտեղէն բռնելով՝ Բօրթօսն ու Արամիսը առնելով՝ աստիճաններէն վար ցատկեցին, նրբագաւիթներուն մէջ նետուեցան, սանդուղներէն արագ արագ վար իջան եւ ամբոխին մէջ անհետ եղան. մինչեւ սրահին ներքնակողմը հրացանները ծռած երեք հազար հանդիսականներու կը սպառնային, որոնց գթութեան աղաղակները եւ աղմկալի սարսափը կատարածի համար արդէն տրուած խանդը դադրեցուցին:

Չորս գաղղիացիները եւս ճանչցեր էր Շարլը. սրտին վրայ դրաւ ձեռքը որ անոր բաբախումները ճնշէ եւ միւսը աչքերուն վրայ որ իր բարեկամներուն սպանդը չտեսնէ:

Մօրտօն՝ գունատ եւ կատաղութենէն դողահար՝ սրահէն դուրս սրացաւ մերկ սուրը ձեռքը՝ տասը նիզակաւորներ հետը առնելով եւ ամբոխին մէջ սկսաւ փնտռել, հարցուփորձ ընել, հետեւելով, յետոյ վերադարձաւ առանց բան մը գտած ըլլալու:

Անբացատրելի էր վրդովը: Կէս ժամէն աւելի անցաւ եւ հազիւ կարող եղան իրարու խօսք հասկնալ: Դատաւորները կը կարծէին թէ ամէն մէկ վերնատուն գաւալու պատրաստ էին: Վերնատուններ գտնուող մարդիկ ալ կը տեսնէին որ հրացանները իրենց վրայ ուղղուած են, եւ երկիւղի ու հետաքրքրութեան մէջ տատանելով, մեծ ժխոր ու վրդովմունք կը հանէին:

Ի վերջոյ հանդարտութիւնը կրկին վերահաստատուեցաւ:

—Ի՞նչ ունիս ըսելու ինքզինքդ պաշտպանելու համար, հարցուց Պրոտշա Թագաւորին:

Այն ատեն դատաւորի քան ամբաստանեալի մը ձայնով՝ գլուխը միշտ ծածկուած, Շարլ ոտք ելլելով՝ չէ թէ առ խոնարհութիւն այլ տիրապետութիւն, ըսաւ.

—Ինձ հարցուփորձ ընելու տեղ՝ պատասխանէ՛: Նիւդալի մէջ ազատ էի, երկու ժողովրդոց հետ դաշինք մը կնքեր էի: Փոխանակ այս դաշինքը գործադրելու ձեր կողմէ,

ինչպէս որ ես կը գործադրէի, զիս սկովտիացւոց ձեռքէն ծախու առիք, չէ թէ սուղ, գիտեմ, եւ այս ալ ձեր կառավարութեան խնայողութեան պատիւ կը բերէ: Բայց գերիի մը գնով զիս ծախու առնելով միթէ կը յուսա՞ք որ ձեր թագաւորը ըլլալէն դադրեցայ. ո՛չ, ամենեւի՛ն: Ձեզի պատասխանելը այս բանս մոռնալ է: Ուստի չպիտի պատասխանեմ ձեզ որ զիս հարցուփորձ ընելու մասին ձեր իրաւունքը չարդարացնէք: Ձեզ պատասխան տալը իմ դատաւորներս տեղ դնել է ձեզ, եւ ես, ընդհակառակը, իբրեւ իմ դահիճներս կը նկատեմ ձեզ:

Եւ մեռելական լռութեան մէջ՝ Շարլ հանդարտ, վէս եւ միշտ գլուխը գոց՝ իր թիկնաթոռին վրայ նստաւ:

—Ինչո՞ւ համար հոս չեն իմ գաղղիացինե՛րս, մրմռաց Շարլ գոռոզութեամբ եւ իր նայուածքը դէպի այն վերնատունը դարձնելով ուր պահ մը երեւցեր էին, պիտի տեսնէին որ իրենց բարեկամը, մինչ կենդանի՝ արժանի է պաշտպանութեան, մինչ մեռած՝ արժանի պիտի ըլլայ արտասուքներու:

Բայց ընդունայն խուզարկեց ամբոխին խորունկները, եւ կերպով մը Աստուծմէ հայցեց այն մարդոց անուշ եւ սփոփիչ ներկայութիւնը, ուրիշ բան չտեսաւ բայց եթէ ապուշ եւ վեհերոտ դէմքեր, եւ ինքզինքը ատելութեան եւ վայրագութեան յարձակումներու ենթակայ գտաւ:

—Լա՛ւ, ուրեմն, ըսաւ նախագահը, դիտելով որ Շարլ անյողդողդ լռութիւն որոշեր է, թո՛ղ այդպէս ըլլայ, ձեզի պիտի դատենք ձեր լռութեան չնայելով. ամբաստանեալ էք իբրեւ մատնիչ, բռնապետ եւ մարդասպան: Վկաները պիտի գան վկայելու: Գացէք եւ յաջորդ նիստի մը մէջ պիտի կատարէք ինչ որ ասոր մէջ կատարելու կը մերժէք:

Շարլ ոտքի ելաւ եւ Բարրիի կողմը դառնալով, որ գունատ էր եւ քունքը քիրտով թաթաւեալ:

—Լա՛ւ ուրեմն, սիրելիդ իմ Բարրի, ըսաւ անոր, ի՞նչ ունիս եւ ո՞վ քեզի այդպէս կը վրդովէ:

—Ո՛չ, տէր իմ, ըսաւ Բարրի արտասուալի աչքերով և աղերսագին ձայնով, Վեհափա՛ռ տէր, սրահէն ելնելու ատեն ձախ կողմը մի՛ նայիք։

—Ինչո՞ւ համար, Բարրի։

—Թագաւո՛րդ իմ, մի՛ նայիք, կ'աղաչեմ ձեզ։

—Բայց ի՞նչ կայ, խօսէ՛ ուրեմն, ըսաւ Շարլ փորձելով նայելու պահակներու կարգին մէջէն՝ որոնք իր ետեւը կեցեր էին։

— Բան մը կայ. բայց չպիտի նայիք, Վեհափա՛ռ տէր, այնպէս չէ՞։ Սեղանի մը վրայ յանցաւորները գլխատելու համար տապար մը կայ դրուած։ Նողկալի է այս տեսքը, մի՛ նայիք անոր, Վեհափա՛ռ, կ'աղաչեմ ձեզ։

—Յիմարնե՛րը, ըսաւ Շարլ, միթէ զիս իրենց պէս վատ կը կարծեն։ Լաւ կանխաւ յայտնելու ինծի այդ բանը՝ շնորհակալ եմ, Բարրի։

Եւ ըստ որում դուրս ելնելու ժամը հասեր էր, Թագաւորը՝ իր պահնորդներուն հետեւելով՝ դուրս ելաւ։

Արդարեւ՝ դրան ձախ կողմը՝ չարագուշակ նշոյլով կը փայլէր, այսինքն նոյն կարմիր օթոցին գոյնով որուն վրայ տեսած էր, սպիտակ սակրը, որուն երկայն կոթը յղկուեր էր դահիճին ձեռքով։

Երբ Շարլ սակրին դիմացը հասաւ՝ կանգ առաւ, և ժպտելով,

—Հա՛, հա՛, ըսաւ ծիծաղելով, տապարը հնարագէտ խրտուիլակ մըն է և շատ արժանի անոնց որ չեն գիտեր թէ ինչ է ազատորդի մը. դուն ինծի երկիւղ չես ազդեր, դահճի՛ տապար, յարեց ձեռքը ունեցած բարակ եղէգնով զայն մտրակելով, և ահա քեզի կը զարնեմ, սպասելով համբերութեամբ և իբրև քրիստոնեայ որ այդ հարուածը ինծի հասուցանես։

Եւ իր ուսերը արքայական արհամարհանքով բարձրացնելով՝ իր ճամբան շարունակեց և ապշեցուց այն զօրքերը որ նոյն սեղանին շուրջը փութացեր էին որպէսզի տեսնեն

թէ զայն նշմարելով Թագաւոր ինչ կերպարանք պիտի առնէ, այն տապարը որ իր գլուխը մարմնէն պիտի զատէր։

—Ճշմարիտը, Բարրի, յարեց Թագաւորը հեռանալով, բոլոր այս մարդիկ, Աստուած թո՛ղ մեղք չսեպէ, կը կարծեն թէ Հնդկաստանցի բամպակի վաճառական մըն եմ, և չէ թէ ազատորդի մը որ վարժ է երկաթին փայլը տեսնելու։ Միթէ կ'երեւակայե՞ն որ մսավաճառի չափ ալ արժէք չունիմ։

Մինչդեռ այս խօսքը կ'ըսէր՝ դրան մօտ հասաւ, ժողովրդեան երկայն շարք մը կը տեսնուէր, հոն վերնատուները տեղ չկրնալով գտնել գէթ կը փափաքէր վայելել այս տեսարանին վերջը՝ որուն ամէնէն հետաքրքրական մասէն զրկուեր էր։ Թագաւորը տեսնելով այս անթիւ բազմութիւնը, որուն կարգերուն մէջ սպառնալից դէմքեր կ'երեւային, ակամայ հառաչ մը հանեց։

—Այս ո՛րչափ մարդիկ են, մտածեց ան, և սակայն անձնուէր բարեկամ մը չկայ անոնց մէջ։

Եւ մինչդեռ այս խօսքերը կ'ըսէր ինքնիրեն, տարակուսանքով և վհատութեամբ, ձայն մը այս խօսքերուն պատասխանելով ըսաւ անոր մօտ.

—Ողջոյն անկեալ Վեհափառութեա՛ն։

Թագաւորը իսկոյն դարձաւ արտասուալի աչքերով և սրտով։

Իր պահակ զինուորներէն մէկն էր որ իր գերի Թագաւորին անցնիլը տեսնելով ուզեր էր այս յետին յարգանքը անոր յայտնել։

Բայց նոյն միջոցին իսկ խեղճ մարդը տապաստ գետին ինկաւ սուրի երախակալի գունդով հարուածներ ուտելով։

Զարնողներուն մէջ Թագաւորը ճանչցաւ Կրօզլօ հարիւրապետը։

—Ափսո՛ս, ըսաւ Շարլ, ահա մեծ պատիժ մը խիստ թեթեւ յանցանքի համար։

Յետոյ սիրտը սեղմուած՝ իր ճամբան շարունակեց. բայց

հագիւ հարիւր քայլ առեր էր կատաղի մարդ մը՝ պահապան երկու զինուորներու մէջ ծռելով՝ Թագաւորին դէմքին թքաւ, ինչպէս երբեմն վատանուն և անիծեալ հրեայ մը Նազովրեցի Յիսուսին երեսին թքեր էր։

Որոտաձայն քրքիջներ և մթին տրտունջներ թնդացին միանգամայն. ամբոխը հեռացաւ, մօտեցաւ, մրրկալից ծովու պէս ծփաց, և Թագաւորին այնպէս երևցաւ որ շարժուն ալեաց մէջ Աթոսի շողշողուն աչքերուն փայլիլը կը տեսնէ։

Շարլ երեսը սրբեց և տխուր ժպիտով մը ըսաւ.

—Ողորմելի՜ն, քանի մը շիլինի համար այս բանը իմ հօրը անգամ պիտի ընէր։

Թագաւորը չէր սխալած. իրօք Աթոսն ու իր բարեկամները տեսեր էր, որ նորէն խումբերու հետ խառնուելով՝ վերջին ակնարկով մը կ'ուղեկցէին մարտիրոս Թագաւորին։

Երբ զինուորը Շարլի ողջոյն տուաւ՝ Աթոսի սիրտը ուրախութեամբ լեցուեցաւ, և երբ այն խեղճ մարդը ինքնիրեն եկաւ՝ իր գրպանին մէջ տասը ոսկի գտաւ, գումար մը զոր գաղղիացի ազատորդին անոր մէջ դրեր էր. բայց երբ վատ նախատողը գերի Թագաւորին երեսին թքաւ՝ Աթոս իր ձեռքը դաշոյնին տարաւ։

Բայց տ'Արդանեան անոր ձեռքը կեցուց և խռպոտ ձայնով մը ըսաւ անոր.

—Սպասէ՛։

Աթոս կանգ առաւ։

Տ'Արդանեան Աթոսի վրայ ծռեցաւ, Բորթոսի և Արամիսի նշան ըրաւ որ չհեռանան, և եկաւ մերկաթեւ մարդուն ետեւը կեցաւ, մինչդեռ ան իր վատահամբաւ կատակին վրայ կը ծիծաղէր տակաւին և մէկ քանի ուրիշ կատաղիներ անոր ըրածը կը գովէին։

Այս մարդը դէպի Միջնաքաղաքը գնաց։ Տ'Արդանեան Բորթոսի միշտ Աթոսին վրայ կռթնած՝ անոր ետեւէն գնաց և Արամիսի նշան ընելով որ իրեն ետեւէն գան։

Մերկաթեւ մարդը որ մսավաճառի մը տղան կ'երեւէր, երկու ընկերներու հետ զառիվայր, փոքրիկ և առանձին փողոց մը իջաւ որ գետին վրայ կը նայէր։

Տ'Արդանեան Աթոսին թեւը թողլով նախատողին ետեւէն կ'երթար։

Երբ Ջուրին մօտ հասան՝ այն երեք արդիկ գիտելով որ իրենց ետեւէն եկող կայ, կանգ առին, և յոռօրէն գաղղիացւոց նայելով՝ քանի մը խեղկատակութիւններ ըրին իրենց մէջ։

—Ես անգլիերէն չեմ գիտեր, Աթոս, ըսաւ տ'Արդանեան, բայց դուն գիտես, դո՛ւն և ինծի թարգմանի տեղ պիտի օգնես։

Եւ այս ըսելով՝ շտապեցին ու երեք մարդերէն անցան։ Բայց յանկարծ դառնալով՝ տ'Արդանեան չիտակ մսավաճառ տղուն վրայ քալեց, որ կանգ առաւ և իր ցուցամատով անոր կուրծքին դպաւ ու իր բարեկամին ըսաւ.

—Կրկնէ՛ անոր սա ըսածս, Աթոս. «Դո՛ւն վատ եղար, դո՛ւն անզէն մարդ մը նախատեցիր, դո՛ւն Թագաւորդ երեսը պղծեցիր, դո՛ւն պիտի մեռնիս այժմ...։»

Աթոս՝ ճիւաղի պէս դեղնած՝ որուն դաստակէն բռներ էր տ'Արդանեան, այս տարօրինակ խօսքերը թարգմանեց մարդուն, որ սոյն չարագուշակ պատրաստութիւնները և տ'Արդանեանի ահռելի աչքերը տեսնելով, ուզեց ինքզինքը պաշտպանել։ Այս շարժումը տեսնելով Արամիս իր ձեռքը սուրին տարաւ։

—Ո՛չ, սուր պէտք չէ՛, ըսաւ տ'Արդանեան, սուրը ազնուականներուն համար է։ Եւ մսավաճառին կոկորդէն բռնելով.

—Բորթո՛ս, ըսաւ տ'Արդանեան, սա թշուառականին գլուխը պատռէ՛ մէկ կռուփի հարուածով։

Բորթոս իր սոսկալի թեւը վերցուց, զայն օդին մէջ հնչեցուց պարսատիկի կոթին պէս, և ծանր կռուփը վատին գլխին վրայ իջաւ խուլ ձայնով մը գլուխը խորտակեց։

Մարդը ինկաւ ինչպէս կ'իյնայ կով մը տապարին ներքեւ։

Իր ընկերները պոռալ ուզեցին, փախչիլ ուզեցին, բայց իրենց ձայնը քաշուեր էր, և իրենց ոտքերը կը կթոտէին։

—Սա եւս ըսէ՛ անոնց, Աթօ՛ս, շարունակեց տ'Արդանեան. «Այսպէս պիտի մեռնին անոնք որ կը մոռնան թէ շղթայակապ մարդ մը նուիրական գլուխ մըն է, և գերի թագաւոր մը երկիրս Տիրոջ ներկայացուցիչն է»։

Աթօս տ'Արդանեանի խօսքը կրկնեց։

Երկու մարդիկ համր և անկուած մազերով՝ իրենց ընկերին մարմնին վրայէն նայեցան որ սև արեան ալեաց մէջ կը լողար. յետոյ իրենց ձայնը և ոյժը գտնելով խոյս տուին ճիչ մը հանելով և իրենց ձեռքերը միացնելով։

—Արդարութիւնը տեղը եկաւ, ըսաւ Բօրթօս ճակատը սրբելով։

—Եւ հիմակ ըսաւ տ'Արդանեան Աթօսին, իմ վրաս մի՛ կասկածիր բնաւ և հանդարտ կեցիր. ես թագաւորին հոգը իմ վրաս կ'առնեմ։

ԻԲ.

ՈՒԱՅԹ-ՀԱԼ

Բարլամէնդը մահուան դատապարտեց Շարլը, ինչպէս որ դիւրին էր գուշակել։ Քաղաքական դատաստանները միշտ ունայն ձևեր են, վասնզի ամբաստանել տուող կիրքը միանգամայն դատապարտել կուտայ։ Այս է յեղափոխութեան սոսկալի տրամաբանութիւնը։

Թէպէտև մեր չորս բարեկամները այս դատապարտութեան կը սպասէին, դարձեալ վշտաբեկ մնացին։ Տ'Արդանեան որ այսպիսի ծայրագոյն վայրկեաններու մէջ աւելի հնարքներ գտնելու ճարտար էր, վերստին երդում ըրաւ որ

իր ձեռքէն եկածը պիտի ընէ որպէսզի այս արիւնահեղ եղերական վախճանը արգիլէ։ Բայց ի՞նչ միջոցներով։ Ամէն ինչ պարագաներու բերումէն կախում ունէր։ Մինչև որ որոշ յատակագիծ մը պատրաստուի, պէտք էր ամէն միջոց ի գործ դնել որպէսզի ժամանակ շահին և դատաւորներուն որոշման համաձայն միւս օր կատարուելիք գլխատութիւնը օր մը ետ ձգեն։ Այս միակ միջոցն էր Լօնտոնի դահիճը անհետ ընել։ Երբ անգամ մը դահիճը աներևոյթ ըլլար, մահավճիռը չպիտի գործադրուէր։ Ի հարկէ Լօնտոնի ամէնէն մօտաւոր քաղաքին դահիճը բերել պիտի տային, բայց առով գէթ օր մը կը շահէին և այսպիսի պարագայի մը մէջ օր մը թերևս փրկութիւն էր։ Տ'Արդանեան այս ամենադժուարին գործը իր վրայ առաւ։

Ուրիշ մէկ կարևորագոյն բանն ալ՝ Շարլ Ստուարտի ազդարարել էր թէ՝ զինքը ազատելու փորձ պիտի փորձեն, որպէսզի կարելի եղածին չափ իրեն պաշտպաններուն օգնէ, կամ գոնէ անոնց ճիգերուն հակառակ քայլ մը չառնէ։ Արամիս ալ այս վտանգաւոր պաշտօնը ստանձնեց։ Շարլ Ստուարտ խնդրեր էր որ Ժիւքսօն եպիսկոպոսին հրաման տրուի որ Ուայթ-Հալի բանտը իրեն այցելութեան գայ։ Նոյն իրիկունն իսկ Մօրտօնդ եպիսկոպոսին տունը գացեր էր թագաւորին կրօնական փափաքը յայտնելու, նոյնպէս Քրօմվէլի թոյլտուութիւնը։ Արամիս միտքը դրաւ եպիսկոպոսէն խնդրել, կամ սպառնալով կամ համոզելով, որ թողու զինքը բանտը մտնել իր տեղը, եկեղեցական զգեստներով։

Ի վերջոյ Աթօս՝ պարագաներուն համեմատ Անգլիայէն հեռանալու միջոցները խորհիլ յանձն առաւ, թէ՛ յաջողութեան և թէ ձախողութեան ժամանակ։

Գիշերը հասեր էր, ժամը տասնըմէկին պանդոկը գտնուելու ժամադիր եղան, և ամէն մէկը ճամբայ ելաւ իր վտանգաւոր պաշտօնը կատարելու համար։

Ուայթ-Հալ պալատը երեք հեծելազօր գունդով պահպանուած էր, և մանաւանդ Քրօմվէլի անդուլ մտատանջու-

թեամբը, որ կ'երթար կուգար, և իր զօրապետները կամ գործակալները կը ղրկէր։

Թագաւորը՝ իր սովորական սենեակին մէջ միայնակ, որ երկու մոմերու լոյսով լուսաւորուած էր, մահուան դատապարտեալ Թագաւորը իր անցեալ մեծաշուք ճոխութեան կը նայէր տրտմագին, ինչպէս որ մարդ յետին ժամուն կեանքի նկարը աւելի փայլուն և անուշ կը գտնէ։

Բարրի իր տիրոջմէն բնաւ չէր հեռացած, և անոր դատապարտութենէն ի վեր դադրած չէր լալէ։

Շարլ Ստուարտ արմուկը սեղանի մը վրայ դրած՝ չքնաղ դրամի մը կը նայէր որուն վրայ իրարու քով նկարուած էին իր կնոջը և աղջկան նկարները։ Նախ Ժիւքսոնի կը սպասէր, յետոյ նահատակութեան։

Երբեմն իր միտքը կը յառէր այն գաղղիացի քաջ ազատորդիներուն՝ որ իրմէ հարիւր մղոնով հեռու կ'երևէին իրեն առասպելական, ցնորական արարածներ, և այն պատկերներուն նման զոր մարդ երազին մէջ կը տեսնէ և երբ արթննայ աներևոյթ կ'ըլլայ։

Եւ արդարև Շարլ երբեմն կը հարցնէր ինքնիրեն թէ արդեօք բոլոր տեսած բաները երազ չէի՞ն, կամ գէթ ցնորային տենդի մը արդիւնքը։

Այս խորհրդով ոտք կ'ելնէր, քանի մը քայլ կ'առնէր որպէս թէ իր թմրութիւնը փարատէ, մինչև պատուհանը կ'երթար. բայց խոլոյն պահակաց հրացաններուն շողալը կը տեսնէր իր պատուհանին ներքև։ Այն ատեն կը ստիպուէր խոստովանիլ թէ իրօք արթուն էր և թէ արիւնոտ երազը իրական էր։

Այն ատեն Շարլ նորէն լռութեամբ թիկնաթոռին կողմը կը դառնար, կը նստէր, սեղանին վրայ կը գնէր իր արմուկը, և գլուխը ձեռքերուն մէջ առած կը խորհէր։

— Ափսո՜ս կ'ըսէր ինքնիրեն, գոնէ եթէ իբրև խոստովանահայր ունենայի եկեղեցիին այն լոյսերէն մէկը որու ոգին կեանքի ամէն խորհուրդները, մեծութեան բոլոր ստոր-

նութիւնները թափանցած է, կարելի է որ անոր ձայնը իմ հոգւոյս մէջ ոլորացող ձայնը խեղդէր։ Բայց թանձրամիտ քահանայ մը պիտի ունենամ, որուն ասպարէզը ու բաղդը կործանեցի իմ թշուառութեանս համար։ Պիտի խօսի ինծի Աստուծոյ և մահուան վրայ ինչպէս խօսած է ուրիշ հոգեվարքներու, առանց հասկնալու որ այս արքայական հոգեվարը յափշտակիչին գահ մը կը թողու երբ իր որդիք այլևս հաց չունին։

Յետոյ՝ իր շրթունքներուն տանելով պատկերը հետզհետէ կը մրմնջէր իր զաւակներուն անունները։

Ինչպէս որ արդէն ըսինք, մշուշապատ և մութ գիշեր մըն էր։ Մօտակայ եկեղեցիին ժամացոյցը կը հնչէր։ Երկու մոմին լոյսերը նոյն մեծ և բարձր սենեակին մէջ կը սփռէին այլանդակ նշոյլներով լուսաւորուած ուրուականներ։ Այս ուրուականները Շարլ Թագաւորին նախնիքն էին որ իրենց ոսկեզօծ շրջանակներէն դուրս կ'ելլէին. այս նշոյլներն ալ մարող ածուխի կապուտակ և շողշողուն լոյսերն էին։

Ահագին տրտմութիւն մը դրաւեց Շարլի միտքը։ Իր ճակատը երկու ձեռքերուն մէջ պարուրեց, մտածեց այն աշխարհի վրայ որ այնքան գեղեցիկ կ'երևի երբ մարդ անկէ հեռանայ, կամ երբ նա մեզմէ մեկնի. միտքը բերաւ զաւակներուն անուշ և գորովիկ գգուանքը, մանաւանդ երբ զաւակներէն հեռի է վերստին չտեսնելու պայմանաւ. յետոյ իր կինը յիշեց, ազնիւ և քաջասիրտ արարած մը որ զինքը մինչև վերջին վայրկեան քաջալերեր էր։ Իր ծոցէն հանեց ադամանդէ խաչը ու Զանգապանի չիգղը, զոր Թագուհին այն վեհանձն գաղղիացւոց ձեռքով ղրկեր էր իրեն, և զանոնք համբուրեց. յետոյ՝ մտածելով որ անիկա պիտի տեսնէր միայն այն առարկաները երբ ինքը գերեզմանին մէջ պաղ և խեղեալ պիտի պառկած ըլլայ, իր սրտին մէջ զգաց այնպիսի սառնագին սարսափ մը զոր մահը մեզի կը ղրկէ իբրև իր առաջին վերարկուն։

Այն ատեն Թագաւորը այն սենեակին մէջ՝ որ իրեն այն-

քան արքունական յիշատակներ կը բերէր, ուր այնքան պալատականներ և շողոքորթութիւններ անցեր էին, միայն իր քովը ունենալով վշտալից սպասաւոր մը որուն տկար հոգին չէր կարող զօրացնել իր հոգին, իր արիութիւնը սոյն տկարութեան, սոյն մթութեան, սոյն ձմեռային ցրտութեան հաւասար բերաւ, և պէ՞տք է ըսել, այս թագաւորը որ այնքան մեծ, վսեմ էր երբ մեռաւ, և համբերատարութեան ժպիտը ունէր իր շրթներուն վրայ, այս թագաւորը առտուրին մէջ արտօսր մը սրբեց որ սեղանին վրայ ինկեր էր և ոսկեհիւս գորգին վրայ կը փայլէր։

Յանկարծ նրբագաւիթներու մէջ մարդու քայլեր լսուեցան, դուռը բացուեցաւ, ջահերը սենեակը լեցուցին ծխոտ լոյսով մը և եկեղեցական մը, եպիսկոպոսական զգեստներ հագած ներս մտաւ և անոր ետեւէն երկու պահակներ, որոնց Շարլ հրամայական շարժում մը ըրաւ։

Այս երկու պահակները քաշուեցան. սենեակը նորէն իր առաջին մթութիւնը առաւ։

– Ժիւքսօ՛ն, գոչեց Շարլ, Ժիւքսօն։ Շնորհակալ եմ, վերջին բարեկամս. շատ յարմար ժամանակին եկար։

Եպիսկոպոսը շեղակի ակնարկ մը նետեց և մտայոյզ երևելով այն մարդուն վրայ որ վառարանին անկիւնը նստած կը հեծէր՝

—Օ՛ն, Բարրի, ըսաւ թագաւորը, մի՛ լար, ահաւասիկ Աստուած որ մեզի կուգայ։

—Եթէ Բարրին է, ըսաւ եպիսկոպոսը, վախնալիք բան մը չունիմ։ Այսպէս, տէր իմ, ներեցէք ինձ Ձեր Վեհափառութիւնը ողջունել և անոր ըսել թէ ո՞վ եմ և ի՞նչ պատճառաւ եկեր եմ։

Շարլ այս տեսքին՝ այս ձայնին անտարակոյս պիտի գոչէր, բայց Արամիս անոր շրթներուն վրայ դրաւ մատը և խորին ակնածութեամբ բարեւեց Անգլիոյ թագաւորը։

—Ասպե՛տը, մրմռաց Շարլ։

—Այո՛, Վեհափառ, ընդմիջեց Արամիս ձայնը բարձրա-

ցնելով, այո՛, Ժիւքսօն եպիսկոպոսը, Քրիստոսի հաւատարիմ ասպետը, որ Ձեր Վեհափառութեան հրամանին համեմատ եկած է։

Շարլ ձեռքերը միացուց. ճանչցեր էր Հէրպլէյը. ապուշ, անշունչ կը մնար՝ այս մարդոց առջև որ՝ թէև օտարականներ էին, և ուրիշ շարժառիթ չունէին՝ բայց եթէ իրենց յատուկ խղճին թելադրած պարտաւորութիւն մը, այսպէս ժողովրդեան մը կամքին և թագաւորի մը ճակատագրին դէմ կը մաքառէին։

—Դո՛ւն, ըսաւ անոր, դո՛ւն ի՞նչպէս մինչև հոս հասար։ Աստուա՛ծ իմ, եթէ քեզ ճանչնան, մահդ պիտի գտնես։

Բարրի կանգնած կեցեր էր, բոլոր իր արտաքին տեսքը պարզ և խորին հիացման մը երևոյթը կը յայտնէր։

—Դուն իմ վրայ մի մտածեր, տէր իմ, ըսաւ Արամիս՝ շարժումով թագաւորին լռութիւն պահանջելով, դուն մինակ ինքզինքիդ վրայ խորհէ, բարեկամներդ կը հսկեն, ինչպէս որ կը տեսնես. չգիտեմ տակաւին թէ ի՞նչ պիտի ընենք. բայց չորս գիմագրաւ մարդիկ շատ բան կարող են ընել։ Աս այժմ, այս գիշեր աչքդ մի գոցեր. բանի մը վրայ մի՛ զարմանար և ամէն բանի պատրաստ գտնուէ՛։

Շարլ գլուխը ցնցեց։

—Բարեկա՛մ, ըսաւ, գիտես որ ժամանակը շատ սուղ է, և եթէ գործել կ'ուզէք պէտք է որ շտապէք։ Գիտե՞ս արդեօք որ վաղը ժամը տասնին պիտի մեռնիմ։

—Վեհափա՛ռ տէր, մինչև այն ատեն բան մը պիտի անցնի որ գլխատութիւնն անկարելի պիտի ընէ։

Թագաւորը զարմացմամբ նայեցաւ Արամիսին։

Նոյն պահուն իսկ՝ թագաւորին պատուհանին ներքև՝ այլանդակ աղմուկ մը լսուեցաւ, աղմուկ մը որ կրնայ հանել փայտ կրող սայլ մը երբ զայն դարձնեն։

—Կը լսե՞ս, ըսաւ թագաւորը։

Այս աղմուկին հետևեցաւ վշտագին ճիչ մը։

—Մտիկ կ'ընեմ, ըսաւ Արամիս, բայց չեմ հասկնար թէ

ի՞նչ է այս աղմուկը, մանաւանդ աղաղակը։

—Այս աղաղակը չգիտեմ թէ ո՛վ հանեց, ըսաւ Թագաւորը, բայց անոր բուն պատճառը հիմակ պիտի բացատրեմ քեզի։ Գիտե՞ս արդեօք որ այս պատուհանէն դուրս պիտի գլխատուիմ, յարեց Շարլ իր ձեռքը երկարելով այն մթին և ամայի վայրը, որ միայն զինուորներով և պահակներով լեցուեր էր։

—Այո՛, Վեհափա՛ռ տէր, ըսաւ Արամիս, գիտեմ։

—Լա՛ւ ուրեմն, այն բերուած փայտերը գերաններ ու տախտակներ են որով իմ գլխատուելութեան բեմս պիտի շինեն։ Անտարակոյս բեռը վար առնելու ատեն գործաւոր մը ինքզինքը վիրաւորած պիտի ըլլայ։

Արամիս ակամայ դող ելաւ։

—Կը տեսնես, ըսաւ Շարլ, որ անօգուտ է աւելի խօս յամառիլ, դատապարտուած եմ, թո՛ղ որ իմ բաղդս կրեմ։

—Վեհափա՛ռ տէր, ըսաւ Արամիս պահ մը վրդովուած հանդարտութիւնը ստանալով, կարող են անոնք բեմ կանգնելու բայց չպիտի կարենան դահիճ մը գտնելու:

—Ի՞նչ ըսել կ'ուզես, հարցուց Թագաւորը։

—Կ'ուզեմ ըսել թէ այս ժամուս, Վեհափա՛ռ տէր, դահիճը յափշտակուած է կամ հրապուրուած. վաղը բեմը պատրաստուած պիտի ըլլայ, բայց դահիճը պիտի չգտնուի, և այն ատեն գլխատուելութիւնը միւս օրուան պիտի թողուն։

—Լա՛ւ ուրեմն, ըսաւ Թագաւորը:

—Լա՛ւ ուրեմն, ըսաւ Արամիս, վաղը քեզ կը փախցնենք գիշերայն։

—Ի՞նչ կերպով. գոչեց Թագաւորը՝ որու դէմքը լուսաւորուեցաւ յակամայից ուրախութեան փայլակով մը։

—Ո՛հ, պարոն, մրմռաց Բարրի ձեռները կցած, օրհնեա՛լ եղիք, դո՛ւք և ձերինները։

—Ինչպէս, կրկնեց Թագաւորը, պէտք է որ գիտնամ որպէսզի ի հարկին քեզ օգնեմ։

—Վեհափա՛ռ տէր, բան մը չգիտեմ, ըսաւ Արամիս,

բայց մեր չորսէն ամէնէն ճարտարը, ամէնէն քաջասիրտը ամէնէն անձնուէրը ըսաւ ինծ բաժնուելու ատեն. «Ասպե՛տ, ըսէ՛ Թագաւորին որ վաղը ժամը տասնին իրիկուան զինքը բանտէն պիտի փախցնենք»։ Քանի որ այսպէս ըսաւ, ըսածը պիտի կատարէ անշուշտ։

—Այդ վեհանձն բարեկամին անունը յայտնէ՛ ինձ, ըսաւ Թագաւորը, որպէսզի մշտանև երախտագիտութիւն մը տածեմ անոր համար, թէ՛ յաջողի և թէ ոչ։

—Տ'Արդանեանն է, Վեհափա՛ռ տէր, նոյն ինքն որ քիչ մնաց պիտի ազատէր ձեզ երբ Հէրիսօն գնդապետն անպատեհ ներս մտաւ։

—Իրաւ հրաշալի մարդիկ էք դուք, ըսաւ Թագաւորը, և եթէ այսպիսի բաներ ինծ պատմէին չպիտի հաւատայի։

—Հիմակ, Վեհափա՛ռ տէր, վրայ բերաւ Արամիս, մտիկ ըրէք ինծ։ Վայրկեան մը մի՛ մոռնաք որ ձեր ազատութեան համար կը հսկենք. ձեզ մօտեցողներուն ամէնէն թեթև շարժումը, ամէնէն թեթև երգը, ամէնէն թեթև նշանը, ամէն ինչ վերջապէս լրտեսեցէք, մտիկ ըրէք, մեկնեցէք։

—Ո՛հ, ասպե՛տ, գոչեց Թագաւորը, ի՞նչ կրնամ ըսել ձեզ. սրտիս խորէն բխած բառ մը իսկ չպիտի կարենար իմ երախտագիտութիւնս յայտնել։ Եթէ յաջողիք, չպիտի ըսեմ որ Թագաւոր մը կ'ազատէք, ո՛չ, ինչպէս որ կը տեսնեմ այժմ, Գլխատութեան բեմէն տեսնել Թագաւորութիւնը, կ'երդնում որ չնչին բան է, այլ ամուսին մը իր կնկան համար պիտի պահէք, հայր մը իր զաւակաց համար։ Ասպե՛տ, տո՛ւր ձեռքըդ, բարեկամի մը ձեռքն է այս, բարեկամ մը որ մինչև ետին շունչը ձեզ պիտի սիրէ։

Արամիս Թագաւորին ձեռքը համբուրել կ'ուզէր, բայց Թագաւորը անորը սեղմեց և իր սրտին վրայ կրթնցուց։

Նոյն պահուն մարդ մը ներս մտաւ առանց դուռը զարնելու, Արամիս իր ձեռքը քաշել ուզեց բայց Թագաւորը չթողուց։

Ներս մտնողը կէս քահանայ, կէս զինուոր մաքրակրօն-

ներէն մին էր, որոնց տեսակը Բրօմլէյի մօտ կը վխտար։

—Ի՞նչ կ'ուզես, պա՛րոն, ըսաւ անոր Թագաւորը:

—Կը փափաքիմ իմանալ թէ Շարլ Ստուարտի խոստովանանքը աւարտեցա՞ւ, ըսաւ Նորեկը։

—Ի՞նչ փոյթ է, ըսաւ Թագաւորը. մենք կրօնակից չենք։

—Ամէն մարդիկ եղբայր են, ըսաւ մաքրակրօնը։ Իմ եղբայրներէս մին պիտի մեռնի, և եկայ զայն մահուան յորդորելու։

—Բաւակա՛ն է, ըսաւ Բարրի, Թագաւորը քու յորդորներուդ պէտք չունի։

—Վեհափա՛ռ տէր, ըսաւ Արամիս մեղմօրէն, հետը անուշ վարուեցէք, անշուշտ լրտես մըն է։

—Վերապատուելի եպիսկոպոսէն ետք, ըսաւ Թագաւորը՝ յօժարակամ մտիկ պիտի ընեմ քեզ, պարոն։

Շլակն մարդը քաշուեցաւ գնաց, թէեւ Ժիւքսոնը դիտեց այնպիսի ուշադրութեամբ մը որ այս բանս Թագաւորին աչքէն չվրիպեցաւ։

—Ասպե՛տ, ըսաւ ան երբ դուռը գոցուեցաւ, կարծեմ թէ իրաւունք ունէիր և այս մարդը դէշ խորհրդով եկեր էր հոս. զգոյշ եղի՛ր որ դժբախտութիւն մը չհասնի քեզ դուրս ելնելու ատեն։

—Վեհափա՛ռ տէր, ըսաւ Արամիս, շնորհակալ եմ Ձեր Վեհափառութեան, բայց թո՛ղ հանգիստ ըլլայ, այս պատմուճանիս ներքեւ զրահ մը և դաշոյն ունիմ:

—Ուրեմն գնա՛, պարոն, և Աստուած քու հետդ ըլլայ, ինչպէս կ'ըսէի երբ Թագաւոր էի։

Արամիս դուրս ելաւ. Շարլ մինչեւ սեմը տարաւ զանիկա։ Արամիս օրհնութիւնը տուաւ չորս կողմ, որով պահակները խոնարհեցան, զինուորներով լեցուն նախասենեակներէն անցաւ, իր կառքը հեծաւ, իր երկու պահապաններով, որ իրմէ բաժնուեցան երբ եպիսկոպոսարանը հասաւ։

Ժիւքսոն անձկութեամբ կը սպասէր։

—Լա՛ւ ուրեմն, ըսաւ Արամիսը տեսնելով։

—Ամէն ինչ իմ փափաքիս համեմատ յաջողեցաւ. Լըրտես, պահապան, արքանեակ, ամէնքը զիս քու տեղդ առին, և Թագաւորը քեզ օրհնեց մինչեւ որ դուն զինքը օրհնես։

—Աստուած քեզ կը պաշտպանէ, ո՛րդեակ իմ, վասնզի քու օրինակդ ինձ յոյս և միանգամայն արիութիւն տուաւ։

Արամիս իր հագուստն ու վերարկուն առնելով դուրս ելաւ, և իմացուց Ժիւքսոնի որ վերստին անոր աջակցութեան պիտի դիմէ։

Այն ինչ փողոցին մէջ տասը քայլ առաւ որ դիտեց թէ մեծ վերարկուով մը պլլուած մարդ իր ետեւէն կուգայ, ձեռքը դաշոյնին վրայ դրաւ և կանգ առաւ. Մարդը չիտակ անոր վրայ եկաւ։ Այս մարդը Բօրթօսն էր։

—Սիրելի բարեկամ, ըսաւ Արամիս ձեռքը անոր կարկառելով։

—Կը տեսնես, սիրելիս, ըսաւ Բօրթօս, մեզմէ ամէն մէկը իր պաշտօնը ունէր. իմ պաշտօնս էր քեզ պահպանել, և քեզ կը պահպանէի։ Միթէ Թագաւորը տեսա՞ր։

—Այո՛, և ամէն ինչ կարգին է։ Հիմակ մեր բարեկամները ո՞ւր են։

—Ժամը տասնըմէկին պանդոկը ժամադիր եղած ենք։

—Ուրեմն պէտք է որ շտապենք. ըսաւ Արամիս։

Արդարեւ՝ Ս. Պօղոսի եկեղեցիին ժամացոյցը տասնուկէս կը զարնէր։

Սակայն՝ սրահետեւ երկու բարեկամները փութացին, ամէնէն առաջ հասան։

Անոնցմէ ետք՝ Աթօս ներս մտաւ։

—Ամէն ինչ յաջող է, ըսաւ ան դեռ ես իր բարեկամները իրեն հարցափորձ չըրած։

—Ի՞նչ ըրիր, ըսաւ Արամիս։

—Փոքրիկ նաւակ մը վարձու բռնեցի փեռեմեի պէս նեղ, ձկնորսակի պէս թեթեւ, մեզ ի Կրինիչ կը սպասէ. Շանց կըղզիին դիմացը. նաւաստի մը ունի և չորս նաւորդ, որ յիսուն

վրայ օդերկնի փոխարէն՝ երեք գիշեր հետզհետէ մեր հրամանին ներքեւ պիտի գտնուին։ Երբ անգամ մը Թագաւորին հետ նաւակը հասնինք, մակընթացութենէ օգտուելով՝ Թամիզ գետն ի վար կ'իջնենք, և երկու ժամու մէջ բաց ծովը կը գտնենք։ Այն ատեն՝ իբրեւ ճշմարիտ ծովահէններ, եզերքը կը քերենք, քարանձաւներու մէջ կը թաքչինք և երբ ծովն ազատ է, նաւին գլուխը դէպի Պուլօնիա կ'ուղղենք։ Եթէ սպաննուիմ, նաւատէրը Ռօժէ նաւապետ կ'անուանուի, և նաւակը՝ Փայլակ: Այս ծանօթութիւններով երկուքն ալ կարող էք գտնել։ Չորս ծայրերէն կապուած թաշկինակ մը ծանօթութեան նշան է։

Պահ մը ետք՝ տ'Արդանեան ալ ներս մտաւ։

—Պարպեցէ՛ք ձեր գրպանները, ըսաւ ան, և մինչեւ հարիւր լիրա սթերլին համրեցէք, վասնզի իմ գրպաններս... և տ'Արդանեան իր լիվլին պարապ գրպանները դարձուց։

Խնդրած գումարը իսկոյն ճարեցին. տ'Արդանեան դուրս ելաւ և քիչ յետոյ դարձաւ։

—Ահա՛, ըսաւ, լմնցաւ. ո՛ւֆ, սակայն քիչ նեղութիւն չքաշեցի։

—Միթէ դահիճը Լոնտոնէն հեռացա՞ւ, հարցուց Աթօս։

—Ա՛հ, ի՛նչ կ'ըսես. այդ միջոցը շատ ապահով չէր՝ կրնար մէկ դուռնէն դուրս ելնել և միւսէն ներս մտնել։

—Ո՞ւր է ուրեմն, հարցուց Աթօս։

—Շտեմարա՛նը։

—Ո՞ր շտեմարանը։

—Մեր պանդոկապետին շտեմարանը։ Մուսքըտօն սեմին վրայ նստած է և ահաւասիկ բանալին։

—Կեցցե՛ս, ըսաւ Արամիս։ Բայց այն մարդը ի՞նչպէս համոզեցիր հեռանալու։

—Ինչպէս որ կը համոզեն ամէն բան այս աշխարհիս մէջ, ստակով։ Սուղի նստաւ ինծի գործը, բայց հաւանութիւն տուաւ։

—Եւ ո՛րչափ ստակ գնաց բարեկամ, հարցուց Աթօս·

վասնզի գիտես որ, այժմ, անտուն և անտեղ հէք հրացանակիրներ ըլլալով, պէտք է որ մեր բոլոր ծախքերուն հաւասարապէս մասնակցինք։

—Տասներկու հազար ֆրանքի նստաւ ինծի գործը, ըսաւ տ'Արդանեան:

—Եւ ո՞ւր գտար այդ գումարը, հարցուց Աթօս, միթէ այդչափ ստակ ունէի՞ր։

—Հապա Թագուհիին նշանաւոր ադամանդը մոռցա՞ր ըսաւ տ'Արդանեան հառաչելով։

—Հա, ճշմարիտ է, ըսաւ Արամիս, մատդ տեսեր էի զայն։

—Ուրեմն Պ. Տէզէսարէն վերստին գնեցի՞ր, հարցուց Բօրթօս·

—Է՛հ, Աստուած իմ, այո՛, ըսաւ տ'Արդանեան, բայց վերը գրուած է որ այն ադամանդը չպիտի կարենամ պահել։ Ի՞նչ ընեմ. պէտք է հաւատալ որ ադամանդները մարդոց պէս իրենց համակրութիւններն ու հակակրութիւններն ունին. կ'երեւի թէ այն ադամանդը զիս կ'ատէ։

—Բայց, ըսաւ Աթօս, դահիճի մասին գործը թէեւ կարգին է, դժբախտաբար ամէն դահիճ իր օգնականը, իր սպասաւորն ունի, ես ի՞նչ գիտնամ։

—Եւ արդարեւ այն դահիճն ալ իրը ունէր, բայց բաղդը մեզի յաջող է։

—Ի՞նչ կերպով։

—Մինչդեռ կը կարծէի թէ երկրորդի մը հետ սակարկութեան պիտի մտնեմ, իմ ապիրատս բերին կոտրած զիստով մը։ Սաստիկ եռանդէն ծառան մինչեւ Թագաւորին պատուհաններուն ներքեւը ընկերացեր էր սայլին որ գերաններն ու տախտակները կը կրէր. այն գերաններէն մին ոտքին վրայ ինկեր և զայն խորտակեր էր։

—Ա՛հ, ըսաւ Արամիս, ուրեմն Թագաւորին սենեակէն լսած աղաղակս անո՛րն է։

—Հաւանական է, ըսաւ տ'Արդանեան, բայց որովհետեւ հեռատես մարդ է, մեկնելու ատեն խոստացաւ իր չորս հատ

փորձ և ճարտար գործաւորներ ղրկել որպէսզի միւս գործաւորներու օգնեն, և երբ իր վարպետին տունը դարձաւ, թէև վիրաւոր, իսկոյն Թոմ Լօ վարպետին գիր մը գրեց, որ իմ ատաղձագործ բարեկամներէս մին է, Ուայթ-Հօլ երթալու իր խոստումը կատարելու միջոցով: Ահաւասիկ բանբերի մը փոխարէն պիտի առնէր ան, և ինծի մէկ ոսկի փոխարէն ծախեց:

—Եւ ի՞նչ պիտի ընէիր այն նամակը, հարցուց Աթօս:

—Միթէ չե՞ս գուշակեր ըսաւ տ'Արդանեան ուշիմութեամբ փայլուն աչքերով:

—Հոգւոյս վրայ կ'ըսեմ, չեմ գուշակեր:

—Լա՛ւ ուրեմն, սիրելիդ իմ Աթօս, դուն որ Ճօնն Պուլի պէս անգլիերէն կը խօսիս, դուն վարպետ Թոմ Լօն ես, և մենք քու երեք ընկերներդ ենք. հիմակ հասկցա՞ր:

Աթօս ուրախութեան և զարմացման ճիչ մը արձակեց. սենեակ մը մտաւ փութով, գործաւորի զգեստները հանեց և չորս բարեկամները իսկոյն հագան զանոնք. վերջը պանդոկէն դուրս ելան, Աթօս սղոց մը ունենալով իր ձեռքը, Բօրթօս լծակ մը, Արամիս տապար մը և տ'Արդանեան ուռ մը ու զամեր:

Դահիճին սպասաւորին գիրը յանձնարարական մըն էր վարպետ ատաղձագործին առջև և կը հաւաստէր որ սպասած գործաւորները անոնք են:

ԻԳ.

ԳՈՐԾԱՒՈՐՆԵՐ

Կէս գիշերի մօտ Շարլ իր պատուհանին տակ մեծ դղրդիւն մը լսեց. ուրագի և տապարի հարուածներ, լծակի և սղոցի ճիչեր էին:

Մինչդեռ Թագաւորը հագուած անկողնին մէջ նստեր և քնանալու սկսեր էր, այս աղմուկը զինքը արթնցուց, և որովհետև այս աղմուկը իր նիւթական շառաչիւնէն զատ բարոյական և հոգեկան սոսկալի արձագանք կու տար իր հոգիին մէջ՝ առջի օրուան անհելի խորհուրդները վերստին հրջապատեցին զինքը: Խաւարին մթութեան և այն առանձնութեան մէջ անկարող եղաւ այս նոր տանջանաց հանդուրժել, որ դատապարտութեան ծրագրէն դուրս էր. ուստի Բարրին ղրկեց պահակին ըսելու թէ գործաւորներուն աղաչէ որ քիչ մը կամաց զարնեն և կարեկցին այն մարդուն որ վերջին անգամ կը քնանայ և որ իրենց թագաւորը եղած էր:

Պահակը իր տեղէն չարժիլ չուզեց, բայց թողուց որ Բարրին անցնի:

Երբ Բարրի պատուհանին մօտ հասաւ՝ պալատին շրջանը ընելէն ետք՝ տեսաւ անկատար տախտակամած մը պատշգամին հաւասարութեամբ, որուն վանդակը քակեր էին, և նոյն տախտակամածին վրայ սև կերպաս մը զամելու սկսեր էին:

Տախտակամածը որ պատուհանին բարձրութեան կը հասնէր, այսինքն քսան ոտքի չափ, երկու ստորին դատիկոններ ունէր: Որչափ որ զզուելի էր այս տեսքը Բարրիին, առաջ անցաւ և սոյն սգալի մեքենան շինող ութ կամ տասը գործաւորներուն մէջ փնտռեց անոնք որ իրենց աղմկով աւելի կը նեղէին Թագաւորը, և երկրորդ դատիկոնին վրայ երկու մարդ

տեսաւ որ լծակի մը միջոցաւ երկաթէ պատշգամի վերջին ծխնիները կը քակէին։ Այս գործաւորներէն մէկը՝ ճշմարիտ հսկայ մը, պատերը տապալելու գործածուած հինաւուրց բարապանի պաշտօնը կը վարէր։ Միւսը որ ծունկի վրայ եկեր էր՝ իրեն կը քաշէր քակուած քարերը։

Յայտնի էր որ ասոնք էին այն աղմուկը հանողները որոնցմէ Թագաւորը կը գանգատէր։

Բարրի ելնարանէն վեր ելաւ և անոնց մօտեցաւ։

—Բա՛րեկամներս, ըսաւ ան, արդեօք քիչ մը աւելի կամաց չէ՞ք կրնար աշխատիլ, կ'աղաչեմ։ Թագաւորը կը քնանայ, և քունի պէտք ունի։

Լծակովը զարնող մարդը կանգ առաւ և կիսովին դարձաւ. բայց որովհետև ոտքի վրայ էր՝ տախտակին մօտ մութը աւելի սաստիկ ըլլալուն Բարրի չկրցաւ անոր երեսը տեսնել։

Ծունկի վրայ եկած մարդն ալ դարձաւ, և ըստ որում իր ընկերէն աւելի վար ըլլալով՝ լապտերէն երեսը կը լուսաւորուէր, Բարրի կարող եղաւ զանիկա տեսնել։

Այս մարդը ակնապիշ նայեցաւ իրեն և մատին մէկը բերնին տարաւ։

Բարրի ետ քաշուեցաւ ապշած։

—Քա՛ջ է, քա՛ջ, ըսաւ գործաւորը լաւ անգլիերէն լեզուով, դարձի՛ր և ըսէ՛ Թագաւորին որ եթէ այս գիշեր գէշ կը քնանայ, վաղը գիշեր աւելի՛ լաւ քուն մը պիտի քաշէ։

Այս ծանր խօսքը՝ որ բառ առ բառ իմանալով՝ սոսկալի նշանակութիւն մը ունէին՝ երկու կողմերը ու ասորին դատկոնը աշխատող գործաւորներէն սոսկալի ուրախութեան մը աղաղակներով ընդունուեցան։

Բարրի վերադարձաւ, կարծելով թէ երազ կը տեսնէ։

Շարլ անհամբեր անոր կը սպասէր։

Այն միջոցին ու ներս մտաւ, դրան առջև կեցող պահակը բացուածքէն գլուխը անցուց հետաքրքիր տեսնելու համար թէ Թագաւորը ի՞նչ կ'ընէ։

Թագաւորը անկողնին վրայ դրեր էր արմուկը։

Բարրի դուռը գոցեց, և Թագաւորին երթալով երեսը ուրախութեամբ շողշողուն,

—Վեհափա՛ռ, ըսաւ ցած ձայնով մը, գիտէ՞ք արդեօք թէ որոնք են, այն գործաւորները որ այնչափ աղմուկ կը հանեն։

—Ո՛չ, ըսաւ Շարլ գլուխը թախծութեամբ դարձնելով, ինչպէս կ'ուզես որ այդ բանը գիտնամ. միթէ ես այն մարդիկը կը ճանչնա՞մ։

—Վեհափա՛ռ, ըսաւ Բարրի աւելի ցած ձայնով և իր տիրոջ անկողնին վրայ ծռելով, Լա Ֆէր կոմսն ու իր ընկերն են։

—Որ իմ գլխատութեան բե՞մս կը կանգնեն, ըսաւ Թագաւորը զարմանահար։

—Այո՛, և այն կանգնելու միջոցին ծակ մը կը բանան պատին մէջ

—Լռութի՛ւն, ըսաւ Թագաւորը իր չորս կողմը սարսափով նայելով, միթէ զանոնք տեսա՞ր։

—Անոնց խօսեցայ։

Թագաւորը իր ձեռքերը իրարու կցեց և աչքերը դէպի երկինք բարձրացուց յետոյ կարճ և ջերմագին աղօթք մը ընելով՝ իր անկողնէն վար իջաւ, պատուհանը գնաց և վարագոյրները բացաւ։ Պատշգամին պահակները հոն էին. յետոյ պատշգամէն անդին մթին դարաստան մը կը տարածուէր, և անոնց վրայ ստուերի պէս կ'անցնէին։

Շարլ չկրցաւ որոշակի բան մը նշմարել, բայց իր բարեկամներուն զարկած հարուածներուն պայթիւնը ոտքերուն ներքև զգաց. և այժմ մէն մի հարուած իր սրտին մէջ արձագանգ կը հանէր։

Բարրի չէր սխալած, և իրօք Աթոսը ճանչցած էր։ Արդարև նոյն ինքն էր որ Բորթոսին օգնութեամբը, ծակ մը կը փորէր, որուն մէջէն մէկ ատաղձը չեղակի պիտի անցընէր։

Այս ծակը կը հաղորդակցէր արքայական սենեակին ներքև գտնուող տեսակ մը տապանի մը հետ։ Երբ անգամ մը մարդ այս տապանին հասնէր, որ տեսակ մը խիստ ցած միջնասենեակի մը կը նմանէր, կարող էր լծակով և կացինի ու-

սերով՝ վերին տապանին մէկ տախտակը կը քակել. այն ատեն Թագաւորը նոյն բացուածէն վար կը սահէր, իր ազատարարներուն հետ տախտակամածին մէկ դարիկոնին կը հասնէր՝ որ լիովին ծածկուած էր սեւ կերպասով, ինքն ալ արդէն պատրաստուած գործաւորի մը հագուստով կը փաթթուէր, եւ առանց կեղծիքի, առանց երկիւղի՝ չորս ընկերներուն հետ վար կ'իջնէր։

Պահակները տախտակամածին համար աշխատող գործաւորները տեսնելով անշուշտ առանց կասկածի պիտի ձգէին որ անոնք անցնին երթան։

Ինչպէս որ արդէն ըսինք նաւակը պատրաստ էր:

Այս յատակագիծը լայն, պարզ եւ դիւրին էր, ինչպէս են անվեհեր արիութենէ բղխող ամէն բաները։

Ուրեմն Աթոս իր այնքան աղուոր, սպիտակ եւ նուրբ ձեռքերը կը պատռէր Բօրթոսին հիմէն քակած քարերը վերցնելով։ Արդէն կարող էր պատշգամին զարդը պճնող զարդերուն տակէն իր գլուխը անցնել։ Օրը չծագած ծակը պիտի աւարտէր եւ անհետ պիտի ըլլար տ'Արդանեանի ձեռքով գըրուած սրահակէ մը։ Տ'Արդանեան իբրեւ գաղղիացի բանուոր ներկայացեր էր, եւ գամերը ամենաճարտար զարդագործի պէս կը յարդարէր, Արամիս կերպասին աւելցածը կը կտրէր, որ մինչեւ գետինը կը կախուէր եւ որու ետեւէն տախտակամածին սատաղձը կը բարձրանար։

Տուներուն կատարը երեւցաւ առաւօտեան լոյսը։ Կրկահողի եւ ածուխի մեծ կրակի մը օգնութեամբ գործաւորները յաջողեր էին յունվարի 29էն մինչեւ 30ի գիշերը անցնել. իրենց գործին ամէնէն ժրաջանները ամէն վայրկեան կը դադրէին որ տաքնալու երթան։ Աթոս ու Բօրթոս միայն իրենց գործը չէին ձգած։ Ուստի արշալոյսին ծակը բացուեր էր։ Աթոս անկից մտաւ՝ հետը տանելով Թագաւորին սահմանուած զգեստները՝ որ սեւ կերպասի մը մէջ ծրարեր էին։ Բօրթոս անոր լծակ մը տուաւ, եւ տ'Արդանեան ներքին վարագոյր մը գամեց՝ որու ետեւէն անտես եղան ծակը ու ներս մտնողը, եւ այս շայլութիւնը՝ թէեւ մեծ, կարեւոր էր։

Աթոս միայն երկու ժամու աշխատանք ունէր Թագաւորին միանալու համար, եւ չորս բարեկամներուն գուշակութեան համեմատ՝ բոլոր օրը իրենցն էր, վասնզի դահիճը պահուելով, պիտի ստիպուէին երթալ Գրիսգոլինը կանչել։

Տ'Արդանեան գնաց իր շագանակագոյն զգեստը հագաւ, եւ Բօրթոս իր կարմիր վերարկուն. իսկ Արամիս Ժիւքսոնի տունը գնաց՝ որպէսզի՝ եթէ հնարին էր մինչեւ Թագաւորին մօտ մտնէ։

Երեքնին ալ ժամադիր եղեր էին Ուայթ-Հոլի հրապարակը գտնուելու ժամը երեքին որպէսզի անցած դարձածը տեսնեն։

Գլխատութեան բեմէն հեռանալէն առաջ՝ Արամիս Աթոսին գտնուած վայրին բացուածին մօտեցեր էր՝ որ յայտնի է թէ Շարլը տեսնելու համար նորէն պիտի աշխատի։

— Ուրեմն երթաս բարեաւ եւ քաջացի՛ր, ըսաւ Աթոս, իմացուր Թագաւորին թէ գործերը ինչ վիճակի մէջ են. ըսէ անոր որ երբ առանձին մնայ գետինը զարնէ, որպէսզի իմ աշխատութիւնս ապահովուած շարունակեմ։ Եթէ Բօրթոսի կարենար ինծի օգնել կրակարանին ստորին տախտակը բառնալով, որ անշուշտ երկաթէ սալաքար մը պիտի ըլլայ, այն ատեն գործը աւելի պիտի դիւրանար։ Դո՛ւն, Արամիս, դուն գործէ Թագաւորէն չհեռանալու։ Բարձր, շատ բարձր խօսէ՛, վասնզի դուռնէն ականջ պիտի դնեն։ Եթէ սենեակին ներքնակողմը պահնորդ մը կայ, առանց պայմանի սպաննէ՛ զանիկա. եթէ երկու հատ կան, թո՛ղ Բօրթոսին մէկը սպաննէ, իսկ միւսը դուն, եթէ երեք հատ կան, սպաննուէ՛ հոն, բայց Թագաւորը ազատէ։

— Անհո՛գ եղիր, ըսաւ Արամիս, երկու դաշոյն պիտի առնեմ, որպէսզի մէկը Բօրթոսին տամ։ Ա՞յսչափ է միայն ըսելիքդ։

— Այո՛, գնա՛. բայց Թագաւորին ըսէ՛ որ անպատեհ վեհանձնութիւն չցուցնէ։ Երբ որ դուք կռուիք, եթէ կռիւ պատահի, թո՛ղ ան փախչի։ Երբ անգամ մը կառքը իր գլխուն

վրայ նորէն ծածկուի, դուն, մեռած կամ կենդանի նոյն կառքին վրայ, դարձեալ գէթ տասը վայրկեան պիտի անցնի գտնելու համար այն ծակը ուսկից Թագաւորը փախած պիտի ըլլայ։ Նոյն տասը վայրկեանին մէջ՝ մենք բաւական ճամբայ պիտի կտրենք, և Թագաւորը պիտի ազատի։

—Աթո՛ս, ըսածդ պիտի ընեմ։ Ձեռքդ տո՛ւր, վասնզի թերևս նորէն չտեսնուինք։

Աթոս իր ձեռքերը Արամիսին վիզէն պլլեց և զայն համբուրեց։

—Այս քեզի համար է, ըսաւ ան։ Արդ՝ եթէ մեռնիմ, ըսէ տ'Արդանեանի որ զանիկա տղուս պէս կը սիրեմ և իմ կողմէ համբոյր տո՛ւր անոր։ Նոյնպէս համբուրէ մեր բարեսիրտ և արի Բորթոսը. երթաս բարեաւ։

—Մնաս բարեաւ, ըսաւ Արամիս։ Այժմ այնքան ստոյգ եմ որ Թագաւորը պիտի ազատի որչափ ստոյգ եմ ամէնէն անպատիր ձեռքը բռնել սեղմելու։

Արամիս թողուց Աթոսէն հեռացաւ, ըստ կարգի տախտակամածէն վար իջաւ և պանդոկը հասաւ երգի մը եղանակը սուլելով որ յօրինուած էր ի պատիւ Քրոմվէլի։ Իր միւս երկու բարեկամները գտաւ աղէկ կրակի մը մօտ սեղան նստած, որ Պօրտօի շիշ մը գինի կը խմէին և պաղ վառեակ մը կը կլլէին։ Բորթօս կ'ուտէր այն վատանուն ժողովականներուն դէմ անթիւ յիշոց արձակելով, տ'Արդանեան լուռ կը կերակրէր, բայց իր մտքին մէջ ամենայանդուգն յատակագիծներ շինելով։

Արամիս ի՛նչ որ որոշուեր էր անոր պատմեց. տ'Արդանեան գլխովը հաւանութիւն ցուցուց և Բորթօս ձայնովը։

—Կեցցէ՛, ըսաւ ան, սակայն փախուստի միջոցին նոյն վայրը պիտի գտնուինք. այն տախտակամածը Թագաւորական պատուական տեղ մըն է, և կրնանք նոյն տեղը անոր սպասել։ Տ'Արդանեան, ես, Կրիմօ և Մուսքըթօն, շատ դիւրաւ ութը հոգի կրնանք սպաննել. Պլէզուան չեմ յիշեր, միայն ձիերը պահելու յարմար է ան։ Ամէն մէկու համար եթէ երկու վայրկեան գտնենք, չորս վայրկեան կ'ընէ. Մուսքըթօն վայրկեան մը պիտի կորսնցնէ, կ'ընէ հինգ, այս հինգ վայրկեանին մէջ կրնանք մէկ քառորդ մղոնի չափ ճամբայ քալել։

Արամիս շուտով պատառ մը բան կերաւ, գաւաթ մը գինի խմեց և զգեստը փոխեց։

—Այժմ, ըսաւ, Նորին մեծապատուութեան տունը պիտի երթամ։ Բորթօ՛ս, զէնքը պատրաստել տալու գործը վրադ ա՛ռ, տ'Արդանեա՛ն, դահիճին վրայ լա՛ւ հսկէ։

—Հանգիստ եղի՛ր, Կրիմօ Մուսքըթօնի տեղը անցաւ և ոտքը անոր վրայ է։

—Ի՛նչ և է, հսկողութիւնը կրկնապատիկ ըրէք և վայրկեան մը անգործ մի՛ մնաք։

—Անգո՛րծ, սիրելիդ իմ, Բորթօսին հարցուր. չեմ ապրիր, անդադար ոտքի վրայ եմ, պարողի մը կերպարանն ունիմ։ Անօրէ՛ն, քանի՛ կը սիրեմ Ֆրանսան այս պահուս, և քանի՛ լաւ բան է յատուկ հայրենիք մը ունենալ, երբ ուրիշի հայրենեաց մէջ մարդ անհանգիստ է։

Արամիս հեռացաւ գնաց իր ընկերներէն ինչպէս որ թողեր էր Աթոսը, այսինքն զանոնք համբուրելով. յետոյ Ճիւքսոն եպիսկոպոսին տունը գնաց, և անոր իր խնդիրը առաջարկեց։ Ճիւքսոն յօժարամիտ յանձն առաւ Արամիսը իր հետ առնելու, վասնզի արդէն իմաց տուեր էր որ քահանայի մը պէտք պիտի ունենայ, հաւաստի ըլլալով որ Թագաւորը հաղորդ առնել պիտի ուզէ և հաւանական է որ Թագաւորը պատարագ լսելու պիտի փափաքի։

Ինչպէս առջի օրը Արամիսին պէս հագուած՝ եպիսկոպոսը կառքը նեծաւ։ Արամիս իր գունատութեամբն ու տրտմութեամբը աւելի ծպտեալ ըլլալով քան թէ սարկաւագի հագուստովը՝ անոր մօտ նստաւ։ Կառքը Ուայթ-Հալի դրան առջև կանգ առաւ. գրեթէ առաւօտեան ժամն ինն էր։ Ոչինչ փոխուած չէր երևեր. առջի օրուան պէս՝ նախասենեակներն ու գաւիթները պահակներով լի էին։ Երկու պահակներ Թագաւորին դրան առջև կը հսկէին, ուրիշ երկու հոգի ալ տախտակամածին դարակին վրայ՝ պատշգամին առ-

ջև կը հաջէին, այն դարակին ուր որ գլխատութեան կոճղը դրուած էր։

Թագաւորը յուսով լի էր. Արամիսը տեսնելով՝ այս յոյսն ուրախութեան փոխուեցաւ. Ժիւքսոնը համբուրեց նա, Արամիսին ձեռքը սեղմեց։ Եպիսկոպոսը իրենց առջի օրուան տեսակցութեան վրայ բարձրաձայն և ամէնուն առջև խօսիլ կեղծեց։ Թագաւորը պատասխանեց անոր որ նոյն օրուան խօսակցութեան մէջ ըսած խօսքերն անպատուղ չէ մնացեր. և թէ նոյնպիսի խօսակցութիւն մը ընել կը փափաքէր։ Ժիւքսոն դէպի հանդիսականները դարձաւ և աղաչեց որ զինքը թագաւորին հետ առանձին թողուն։

Ամէնքը քաշուեցան։ Այն ինչ դուռը վերստին գոցուեցաւ՝

—Վեհափա՛ռ, ըսաւ Արամիս արագօրէն, ազատեցաք՝ Լոնտոնի դահիճը աներևոյթ եղաւ. իր օգնականին ոտքը կոտրեցաւ երէկ Ձեր Վեհափառութեան պատուհանին ներքև։ Այն մեր լսած աղաղակն անորն էր։ Անշուշտ դահճին աներևութանալը գիտուած պիտի ըլլան, բայց Պրիսթօլ քաղաքը միայն դահիճ կը գտնուի, և կանչելու համար ժամանակ պէտք է։ Ուրեմն մինչև վաղուան օրը մերն է։

—Բայց Լա Ֆէր կոմսը ո՞ւր է, հարցուց թագաւորը՝

—Ձեզմէ երկու ոտք հեռու, Վեհափա՛ռ տէր։ Առէ՛ք կրակարանին ունելին և երեք անգամ զարկէք. անոր պատասխանը իսկոյն պիտի լսէք։

Թագաւորը դողդոջ ձեռքով մը երկաթը առաւ և հաւասար միջոցով երեք անգամ զարկաւ։ Իսկոյն խուլ և զգոյշ հարուածներ՝ տրուած նշանին պատասխանելով տախտակին ներքև հնչեցին.

—Այսպէս, ըսաւ թագաւորը, այն որ ինձ կը պատասխանէ այսպէս....։

—Լա Ֆէր կոմսն է, Վեհափա՛ռ, ըսաւ Արամիս։ Կը պատրաստէ այն ճամբան ուստի Ձեր Վեհափառութիւնը պիտի կարենայ խոյս տալ։ Պարրի ալ իր կողմէ՝ այս մարմարէ քարը պիտի վերցնէ, և անցք մը իսկոյն պիտի բացուի։

—Բայց, ըսաւ Պարրի, գործ մը չունիմ։

—Ա՛ռ այս դաշոյնը, ըսաւ Արամիս, միայն զգոյշ եղիր զանի շատ բթելու, վասնզի կրնայ ըլլալ որ քարէ զատ ուրիշ բան մը փորելու պէտք ունենաս։

—Ո՛հ, Ժիւքսո՛ն, ըսաւ Շարլ, դէպի եպիսկոպոսը դառնալով և անոր երկու ձեռքերը բռնելով, Ժիւքսո՛ն, միտքդ պահէ այն անձին աղերսն որ քու թագաւորդ եղաւ...։

—Որ դեռ ևս իմ թագաւորս է և միշտ պիտի ըլլայ ըսաւ, Ժիւքսոն իշխանին ձեռքը համբուրելով։

—Բոլոր կեանքդ մէջ այս տեսած ազատարարներդ համար աղօթէ՛, աղօթէ այն միւսին համար որ ոտիցդ ներքև կը ձայնէ, նոյնպէս ուրիշ երկուքի համար որ, ինչ կողմ որ գտնուին՝ կը հսկեն, հաւաստի եմ, իմ ազատութեանս համար։

—Վեհափա՛ռ տէր, պատասխանեց Ժիւքսոն, ձեր հրամանին պիտի հնազանդիմ։ Որչափ ատեն որ ապրիմ՝ ամէն օր Աստուծոյ աղօթք պիտի ընեմ Ձեր Վեհափառութեան այս հաւատարիմ բարեկամներուն համար։

Ականհատը քիչ մըն ալ աշխատութիւնը շարունակեց և կ'իմացուէր որ անդադար կը մօտենար։ Բայց յանկարծ անակնկալ աղմուկ մը վերնատունին մէջ հնչեց։ Արամիս ունելին բռնեց և ընդհատման նշանը տուաւ։

Այս աղմուկը կը մօտենար։ Քանի մը հաւասար և կանոնաւոր քայլերու աղմուկն էր։ Չորս մարդիկ անշարժ մնացին. ամէնուն աչքը դրան վրայ սևեռեցաւ, և դուռը ծանր ու հանդիսաւոր կերպով մը բացուեցաւ։

Երկու կարգ պահակներ կեցեր էին թագաւորին առջևի սենեակին մէջ. Բարլամէնթի մէկ պատգամաւորը սևեր հագած և չարագուշակ ծանրութեամբ մը, ներս մտաւ, թագաւորին բարև տուաւ, և մագաղաթ մը բանալով՝ կարդաց անոր մահավճիռը ինչպէս որ սովոր են ընելու այն դատապարտեալներուն որ գլխատութեան բեմը ելնելու կը պատրաստուին։

—Ի՞նչ կը նշանակէ այս, հարցուց Արամիս Ժիւքսոնի։

Ժիւքսոն նշան մը ընելով հասկցուց որ իրեն պէս բնաւ տեղեկութիւն մը չունի այս մասին։

—Ուրեմն այսօրուա՞ն համար է, հարցուց Թագաւորը այլայլութեամբ մը որ նշմարելի էր միայն Ժիւքսոնի և Արամիսի։

—Միթէ արդէն ազդարարութիւն եղած չէ՞ր ձեզի, Վեհափա՛ռ, որ այս առտուան համար էր, պատասխանեց սեւազգեստ մարդը։

—Պիտի մեռնի՞մ ուրեմն, ըսաւ Թագաւորը, իբրև սովորական յանցաւոր մը Լոնտոնի դահիճին ձեռքով։

—Լոնտոնի դահիճը աներեւոյթ եղաւ, Վեհափա՛ռ, ըսաւ Բարլամէնդի պատգամաւորը, բայց անոր տեղը ուրիշ մարդ մը ներկայացաւ։ Ուստի գլխատութիւնը պիտի ուշանայ միայն այնչափ ժամանակ որչափ որ պէտք է ձեր աշխարհական և հոգեւոր գործերը կարգի դնելու համար։

Շարլ այս լուրը իմանալուն՝ այլայլութեան ուրիշ նշաններ չցուցուց բայց եթէ թեթև քրտինք մը որ իր մազերուն արմատը թրջեց։

Բայց Արամիս կապտագոյն դարձաւ։ Իր սիրտը այլեւս չէր զարներ. աչքը գոցեց և ձեռքը սեղանի մը վրայ կըրթնցուց։ Այս խորին վիշտը դիտելով Շարլ կարծես թէ իրենը մոռցաւ։

Դէպի անոր գնաց, և զայն համբուրեց։

—Ո՛ն, բարեկամ, ըսաւ անոր անուշ և տրտում ժպիտով մը։ քաջացի՛ր։

Յետոյ դէպի պատգամաւորը դառնալով։

—Պարո՛ն, ըսաւ, պատրաստ եմ։ Կը տեսնէք որ միայն երկու բան կը փափաքիմ և այս փափաքս կարծեմ թէ ձեզ չպիտի ուշացնեն. առաջինն է հաղորդութիւն առնել, երկրորդն է զաւակներս համբուրել և վերջին անգամ անոնց իմ հրաժարական բարեւս տալ։ Միթէ այս բանս պիտի ներուի՞ ինծի։

—Այո՛, Վեհափա՛ռ տէր, պատասխանեց Բարլամէնդի պատգամաւորը։

Եւ դուրս ելաւ։

Արամիս ինքզինքին գալով, եղունգը միսերուն մէջ կը կը մղէր, ահագին հեծեծանք մը հանեց իր կուրծքէն։

—Ո՛հ, տէր իմ, գոչեց ան Ժիւքսոնի ձեռքերը բռնելով, ո՞ւր է Աստուած, Աստուած ո՞ւր է։

—Որդեա՛կ իմ, ըսաւ եպիսկոպոսը հաստատամտութեամբ, չէք տեսնիր ընաւ զանիկա, վասնզի երկրիս կիրքը զայն կը ծածկեն։

—Որդեա՛կ իմ, ըսաւ Թագաւորը Արամիսին, մի՛ այդպէս սաստիկ վշտանար։ Դուն կը հարցնես թէ ի՞նչ կ'ընէ Աստուած. Աստուած քու անձնուիրութիւնդ ու իմ մարտիրոսութիւնս կը տեսնէ, և հաւատա՛ ինծի, մէկը և միւսը իրենց վարձքը պիտի ընդունին. ուստի այս անցած դարձածին համար չէ թէ զԱստուած այլ մարդիկը մեղադրէ՛, մարդիկ զիս մեռցնել կուտան, մարդիկ են որ քեզ կը լացնեն։

—Այո՛, Վեհափա՛ռ, ըսաւ Արամիս, այո՛, իրաւունք ունիք. պէտք է որ մարդիկը մեղադրեմ, և իրաւցնէ անոնցմէ համար պիտի պահանջեմ։

—Նստեցէ՛ք, Ժիւքսոն, ըսաւ Թագաւորը ծունր դնելով. վասնզի ձեզի կը մնայ ինծի մտիկ ընել, և ինծի ալ ձեզի խոստովանիլ։ Կեցի՛ր, պարոն, ըսաւ Արամիսին որ քաշուելու համար շարժում մը կ'ընէր, կեցի՛ր, Բարրի, բան մը չունիմ ըսելու, նոյն իսկ խոստովանանքի ատեն՝ որ ամենուն առջև ըսելու անկարող ըլլամ. կեցի՛ր, և մինակ վիշտ մը ունիմ, այս է որ ամբողջ աշխարհ չկրցաւ լսել զիս ինչպէս դուք և ձեզի հետ։

Ժիւքսոն նստաւ, և Թագաւորը՝ անոր առջև իբրև ամենահլու հաւատացեալ մը ծունր դնելով՝ իր խոստովանանքը սկսաւ։

ԻԴ.

ՅԻՇԵՑԷ՛Ք

Արքայական խոստովանանքն աւարտելով՝ Շարլ հաղորդ առաւ, յետոյ իր զաւակները ուզեց տեսնել։ Ժամը տասը կը զարնէր. ինչպէս որ ըսեր էր Թագաւորը, մեծ յապաղում մը չէր այս։

Սակայն ժողովուրդը արդէն պատրաստ էր. գիտէր որ գլխատութեան պայմանեալ ժամն էր տասը. պալատին կից փողոցներուն մէջ կը դիզուէր, և Թագաւորը կը սկսէր զանազանել այն հեռաւոր աղմուկը զոր ամբոխն ու ծովը կը հանեն, երբ մին կիրքերու մրրիկէն կը շարժի և միւսը փոթորիկներէն։

Թագաւորին զաւակները հասան. նախ երեւցաւ Շարլօտ իշխանուհին, ապա Կլօսէսդրի դուքսը, այսինքն գեղձան փոքրիկ օրիորդ մը, գեղանի և աչքերը արտասուքով թրջած, ապա ութը ինը տարեկան տղայ մը որուն չոր աչքը և արհամարհանօք բացած շրթունքը նայուածքին հպարտութիւնը կը յայտնէր։ Տղան բոլոր գիշեր լացեր էր, բայց բոլոր այն բազմութեան առջև չէր լար։

Շարլ այս երկու զաւակները՝ զոր երկու տարիէ ի վեր չէր տեսած՝ տեսնելուն սիրտը փղձկեցաւ, և մեռնելու պահուն զանոնք վերստին կը տեսնէր։ Արտասուք մը եկաւ աչքը և զայն սրբելու համար գլուխը յանկարծ դարձուց, վասնզի ուժեղ երեւիլ կ'ուզէր այն անձերու առջև որոնց տառապանքներուն և թշուառութեան այնպիսի կտակ մը կը թողուր։

Նախ Նորատի աղջկան խօսեցաւ. զանիկա իր մօտ քաշելով՝ ապսպրեց որ բարեպաշտութեան, համբերատարութեան և որդիական սիրոյ մէջ մնայ. վերջը՝ մէկէն միւսը անցնելով՝ Կլօսէսթրի փոքր դուքսը բռնեց և իր ծնկացը վրայ նստեցնելով՝ որպէս զի թէ սրտին վրայ զանիկա սեղմէ և թէ երեսը համբուրէ։

—Որդեա՛կ իմ, ըսաւ, հոս գալու ատենդ շատ մարդիկ տեսար փողոցներուն և նախասենեակներուն մէջ. այս մարդիկ հիմա հօրդ գլուխը պիտի կտրեն, այս բանը մի՛ մոռնար բնաւ։ Կարելի է օր մը, քեզ իրենց մօտ տեսնելով և իրենց իշխանութեան ներքև ունենալով, թագաւոր ընտրել ուզեն քեզ, Կալլէսի իշխանը կամ Եօրքի դուքսը դուրս ձգելով, որոնք քու մեծ եղբայրներդ են, և որոնց մին Ֆրանսա ու միւսը չգիտեմ ուր կը գտնուի. բայց դուն, որդեա՛կ իմ, բուն թագաւորը չես և միայն անոնց մահուամբը կրնաս ըլլալ։ Ուստի երդում ըրէ որ եթէ թագը ընծայեն պիտի մերժես, մինչև որ օրինաւորապէս նոյնին իրաւունք մը չստանաս, վասնզի, օրին մէկը, լաւ մտիկ ըրէ, որդեա՛կ իմ, օրին մէկը, եթէ այս բանը ընես, գլուխ և թագ, ամէն ինչ պիտի խորտակէին և այն օրը ինծի պէս հանդարտ և առանց խղճի խայթի չպիտի կարենաս մեռնիլ։ Որդեա՛կ, երդում ըրէ։

Պատանին իր փոքրիկ ձեռքը հօրը ձեռքին մէջ դրաւ և ըսաւ.

—Տէ՛ր, կ'երդնում Ձեր Վեհափառութեան...։

Շարլ ընդհատեց անոր խօսքը։

—Հանրի՛, ըսաւ, զիս հայրդ կոչէ։

—Հա՛յր իմ, աւելցուց պատանին, կ'երդնում որ՝ աւելի լաւ պիտի սիրեմ սպաննուիլ քան թէ թագաւոր ըլլալ։

—Շա՛տ լաւ, որդեա՛կ, ըսաւ Շարլ։ Այժմ գրկէ՛ զիս, դո՛ւն ալ, Շարլօ՛տ, և զիս բնաւ մի՛ մոռնաք։

—Ո՛հ, ո՛չ, երբե՛ք, երբե՛ք գոչեցին երկու մանուկները իրենց թեւերը թագաւորին վիզը փաթթելով։

—Մնաք բարով, ըսաւ Շարլ, մնաք բարով, զաւակներս։ Տարէ՛ք զանոնք, Ժիւքսօն. իրենց արցունքները թերեւս մեռնելու քաջութիւնս կորսնցնեն։

Ժիւքսօն հէք տղաքը իրենց հօրը գրկէն առաւ և անոնք բերողներուն ձեռքը յանձնեց։

Անոնց ետեւէն դուռներ բացուեցան և ամէն մարդ կըրցաւ ներս մտնել։

Թագաւորը՝ դէպի սենեակը տրչաւող պահակներու և հեքքիններու ամբոխին մէջ ինքզինք մինակ գտնելով՝ յիշեց որ Լա Ֆէր կոմսը իրեն շատ մօտ է, սենեակին յատակին ներքև է, զինքը տեսնելու անկարող և թերևս միշտ յուսալից:

Կը զգար որ Աթօսի համար ամենաթեթև շշուկը նշան մը չերևէր, և թէ ան վերստին գործի սկսելով՝ ինքզինքը չը մատնէ: Ուստի անշարժութիւն կեղծեց և բոլոր հանդիսատեսները իր օրինակէն հանդարտ մնացին:

Թագաւորը չէր սխալած. արդարև Աթօս իր ոտքերուն ներքև էր, մտիկ կ'ընէր, կը յուսահատէր որ նշանը չլսեր· անհամբերութենէն երբեմն կը սկսէր նորէն քարը քերթել, բայց վախնալով որ ձայնը կը լսուի, իսկոյն կանգ կ'առնէր:

Այս սոսկալի անգործութիւնը երկու ժամ տևեց: Մեռելական լռութիւն մը կը տիրէր արքայական սենեակին մէջ:

Այն ատեն Աթօս միտքը դրաւ ամբոխին ահագին դղըրդիւնէն վրդովուող մթին և անձայն անդորրութեան պատճառը իմանալ: Ծերպին ծակը գոցող վարագոյրը քիչ մը բացաւ, և տախտակամածին առաջին գաւիկանին վրայ իջաւ: Իր գլխուն վրայ՝ հազիւ չորս բթամատ հեռաւորութեամբ կը գտնուէր տախտակը որ գարակին ուղղութեամբ կը տարածուէր և գլխատութեան բեմը կը կազմէր: Այս աղմուկը զոր հեռուէն լսեր էր մինչև այն վայրկեանը, տխուր և սպառնալից, զինքը սարսափահար ցող հանեց: Մինչև յատակերտին ծայրը հասաւ, սև վարագոյրը մինչև աչքին բարձրութեամբը վերցուց և ձիաւորներ տեսաւ որ ահռելի մեքենային մօտ կեցեր էին, ձիաւորներէն անդին նիզակաւորներու շարք մը կար, նիզակաւորներէն անդին ալ հրացանակիրներ· իսկ հրացանակիրներէն անդին ժողովրդեան առաջին կարգերը՝ որ մթին ովկիանոսի նման, կ'եռար և կը մռնչէր:

—Ի՞նչ պատահեցաւ ուրեմն, հարցուց ինքնիրեն Աթօս դողդղալով. ժողովուրդը կը խռժէ, զինուորները զինուած են, և հանդիսատեսներուն մէջ՝ որ ամէնքն իրենց աչքը պատուհաններուն վրայ սևեռած են, կը տեսնեմ տ'Արդանեանը:

Ինչո՞ւ կը սպասէ, ինչ բանի կը նայի: Աստուա՛ծ իմ, արդեօք դահիճը իր ձեռքէն փախա՞ւ:

Ցանկարծ հրապարակին մէջ թմբուկը հնչեց խուլ և դամբանական ձայնով. ծանր և երկայն քայլերու շշուկ մը հընչեց իր գլուխին վրայ: Իրեն այնպէս երևցաւ որ ահագին թափօրի նման բան մը Ուայթ-Հալի տախտակները կը կոխեն. շատ չանցաւ նոյնիսկ յատակերտին տախտակներուն ճռռաչիւնը լսեց: Վերջին ակնարկ մը նետեց հրապարակին վրայ, և հանդիսականներուն դիրքէն հասկցաւ ինչ որ սրտին խորը մնացած յետին յոյս մը՝ կ'արգիլէր իրեն գուշակելու:

Հրապարակին աղմուկը բոլորովին դադրած էր: Ամէնուն աչքը Ուայթ-Հալի պատուհանին վրայ սևեռած էր. կէս բաց բերանները և անշունչ լռութիւնը կը յայտնէին որ ամէնքը սոսկալի տեսարանի մը կը սպասեն:

Այն քայլերու հնչիւնը՝ զոր Աթօս թագաւորին սենեակին յատակին տակ գտնուած տեղէն լսեր էր, իր գլուխին վրայի յատակերտին վրայ ալ կրկնուեցաւ, և յատակերտը ծանրութեան տակ ճնշուեցաւ, այնպէս որ տախտակները տարաբաղդ ազատորդիին գրեթէ գլխուն դպան: Անտարակոյս երկու կարգ զինուորներ էին որ իրենց սահմանեալ տեղը կը բռնէին:

Նոյն պահուն ազատորդիին խիստ ծանօթ մը, ազնիւ ձայն մը, իր գլխին վրայ սա խօսքերը արտասանեց.

—Պարո՛ն դնդապետ, ժողովրդեան խօսիլ կը փափաքիմ:

Աթօս ոտքէն մինչև գլուխը սարսուռ մը զգաց. իրօք գլխատութեան բեմին վրայէն խօսողը թագաւորն էր:

Արդարև՝ քանի մը կաթիլ գինի խմելէ ու կտոր մը հաց ուտելէ յետոյ՝ Շարլ՝ մահուան սպասելէն ձանձրացած, յանկարծ անոր դիմացը առնելու միտքը դրաւ և ընդառաջ երթալու նշան տուաւ:

Այն ատեն հրապարակին վրայ նայող պատուհանին փեղկերը լիովին բացեր էին և ընդարձակ պատուհանին խորէն ժողովուրդը կարող եղեր էր դիտելու դիմակաւոր մարդու մը

լռութեամբ առաջ անցնիլը, որուն ձեռքը գամուած տապարէն հասկցաւ որ դահիճն է։ Այս մարդը գլխատութեան կոճղին մօտեցեր էր և անոր վրայ իր տապարը դրեր էր։

Այս էր այն աղմուկը զոր ամէնէն առաջ Աթոս լսեր էր։

Յետոյ այս մարդուն ետևէն Շարլ Ստուարդ, անշուշտ գունատ, բայց հանդարտ և հաստատ քայլով մը քալելով՝ կը յառաջանար՝ երկուստէք երկու քահանայ և քանի մը բարձրաստիճան սպաներ ունենալով, որ գլխատութեան ներկայ գտնուելու պաշտօն ունէին, և իրենց պահապաններն էին երկու կարգ նիզակաւոր զինուորներ, որ գլխատութեան բեմին երկու կողմը շարուեցան։

Դիմակաւոր մարդուն տեսքը երկար շփոթ մը գրգռեր էր։ Ամէն մարդ հետաքրքիր էր իմանալու թէ այն անծանօթ դահիճը ո՞վ էր որ դիպուածով ժամանակին հասնելով ներկայացեր էր որպէսզի ժողովուրդին խոստացեալ սոսկալի տեսարանը տեղի ունենայ, երբ ժողովուրդը կարծեր էր թէ հետևեալ օրուան ձգուած էր։ Ուստի ամէն մարդ ակնապիշ դիտեր էր զանիկա, և ուրիշ բան չէին կրցած տեսնել բայց միայն այն դահիճը՝ որ միջահասակ մարդ մըն էր բոլորովին սևեր հագած, և արդէն բաւական տարիք կ'երևէր, վասնզի ալեխառն մօրուքին ծայրը դէմքը ծածկող դիմակին վարի կողմէն կ'երևէր։

Բայց թագաւորը այնքան հանդարտ, ազնիւ, արժանի երևելովը իսկոյն լռութիւնը վերահաստատուեր էր, այնպէս որ ամէնքը լսեցին ժողովրդեան խօսելու համար յայտնած փափաքը։

Այս խնդրոյն վրայ՝ այն անձը որու ուղղուած էր խնդիրը՝ անշուշտ հաստատական պատասխան մը տուած պիտի ըլլար, վասնզի թագաւորը հաստատուն և հնչուն ձայնով մը որ Աթոսին մինչև սրտին խորը թափանցեց, սկսաւ խօսիլ։

Իր ընթացքը ժողովրդեան կը բացատրէր և Անգլիոյ բարօրութեան համար անոր խորհուրդներ կուտար։

—Ո՛հ, կ'ըսէր Աթոս իւրովի, միթէ կարելի՞ է որ լսեմ և տեսածս տեսնեմ։ Միթէ կարելի՞ է որ Աստուած երկրիս վրայ իր ներկայացուցիչէն երես դարձուցած ըլլայ այն աստիճան որ այսպէս թշուառ մեռնի...։ Հապա ե՞ս որ զինքը չտեսայ, ե՛ս որ անոր հրաժարական բարևս չտուի։

Գլխատութեան կոճղին վրայ մահուան գործիքին ըրած ձայնին նման ձայն մը լսելի եղաւ։

Թագաւորը խօսքը ընդհատեց։

—Մի՛ դպիր տապարին, ըսաւ ան։

Եւ ապա խօսքը ձգած տեղէն շարունակեց։

Երբ ճառը աւարտեցաւ, կոմսին գլխուն վրայ սառնային լռութիւն մը տիրեց։ Ձեռքը ճակտին տարեր էր, և ճակտին ու ձեռքերուն մէջ քրտինքի կաթիլներ կը հոսէին, թէև օդը սառնագին էր։

Այս լռութիւնը յետին նշանն էր պատրաստութեանց։

Ճառը աւարտելէն վերջ թագաւորը գթառատ ակնարկ մը նետեր էր ամբոխին վրայ, և իր կրած շքանշանը հանելով, որ թագուհւոյն իրեն ղրկած բուն ադամանդեայ շիգն էր, ժիւքսօնի ընկերացող քահանային յանձնեց։ Վերջը դարձեալ ադամանդեայ փոքրիկ խաչ մը հանեց ծոցէն։ Շիգըին պէս այս ալ տիկին Հանրիէդի կողմէ եկած էր։

—Պարո՛ն, ըսաւ ան ժիւքսօնի ընկերացող քահանային դառնալով, այս խաչը մինչև վերջին վայրկեանը ձեռքս պիտի բռնեմ, պիտի առնես զայն երբ մեռնիմ։

—Այո՛, վեհափառ տէր, ըսաւ ձայն մը որուն Արամիսին ըլլալը ճանչցաւ Աթոս։

Այն ատեն, Շարլ՝ որ այդ կէտին գլուխը ծածկած էր, գլխարկը առաւ և իր քովը նետեց. յետոյ իր թիկնոցին բոլոր կոճակները մի առ մի քակելով, հանեց և գլխարկին մօտ նետեց։

Այն ատեն՝ որովհետև ցուրտ էր, իր տնային զգեստը խնդրեց, որ անմիջապէս տուին։

Բոլոր այս պատրաստութիւնները զարհուրելի հանդարտութեամբ կատարուեցան։

Կարծես թէ Թագաւորը իր անկողնին մէջ պիտի պառկէր և չէ թէ դագաղին մէջ։

Վերջապէս իր մազերը ձեռքովը վերցնելով։

—Միթէ ասոնք պիտի նեղե՞ն քեզ, պարոն, ըսաւ դահճին,. եթէ պիտի նեղեն, լարով մը կրնանք զանոնք ամփոփել։

Շարլ այս խօսքը արտասանեց այնպիսի նայուածքով մը որ կարծես թէ անծանօթին դիմակը թափանցել կ'ուզէր։ Այս նայուածքը այնքան ազնիւ, այնքան հանդարտ և անվեհեր էր որ այս մարդը ստիպուեցաւ գլուխը անդին դարձնելու՝ Բայց Թագաւորին խորունկ ակնարկին ետեւը Արամիսի հրատապ ակնարկը տեսաւ։

Թագաւորը տեսնելով որ չէր պատասխաներ՝ հարցումը կրկնեց։

—Բաւական է որ վիզէդ անդին տանիս մազերդ, պատասխանեց մարդը խուլ ձայնով մը։

Թագաւորը իր երկու ձեռքովը մազերը զատեց և կոճղին նայելով։

—Այս կոճղը շատ ցած է, ըսաւ ան, արդեօք աւելի բարձրը չգտնուիր։

—Սովորական կոճղն է, պատասխանեց դիմակաւոր մարդը։

—Միթէ կը կարծե՞ս թէ մէկ հարուածով գլուխս պիտի կտրես, հարցուց Թագաւորը։

—Կը յուսամ, պատասխանեց դահիճը։

Այս կը յուսամ խօսքին մէջ այնպիսի տարօրինակ շեշտ մը կար, որ ամէն մարդ սարսուռ մը զգաց Թագաւորէն զատ։

—Լա՛ւ է, ըսաւ Թագաւորը, և հիմակ, դահի՛ճ մտիկ ըրէ։

Դիմակաւոր մարդը քայլ մը առաւ դէպի Թագաւորը իր տապարին վրայ կրթնեցաւ։

—Չեմ ուզեր որ յանկարծակի զարնես, ըսաւ անոր Շարլ, ծունր պիտի դնեմ աղօթելու համար, այն ատեն դեռ մի՛ զարներ։

—Եւ ե՞րբ պիտի զարնեմ, հարցուց դիմակաւոր մարդը։

—Երբ վիզս կոճղին վրայ դնեմ և թեւերս երկնցնեմ ըսելով. «Յիշեցէք», այն ատեն համարձակ զա՛րկ։

Դիմակաւոր մարդը թեթեւ մը խոնարհութիւն ըրաւ։

—Ահա՛ւասիկ աշխարհէս հեռանալու վայրկեանը, ըսաւ Թագաւորը գլուխը շրջապատող անձերուն։ Պարո՛ններ, ձեզ փոթորիկին մէջ կը թողում և ձեզմէ առաջ կը դիմեմ այն հայրենիքը որ մրրիկ չունի։ Մնաք բարով։

Արամիսին նայեցաւ և անոր մասնաւոր գլխի շարժում մը ըրաւ։

—Հիմա, շարունակեց Թագաւորը, հեռացէ՛ք, կ'աղաչեմ, և թողէք որ մեղմիկ իմ աղօթքս ընեմ։ Դուն ևս հեռացի՛ր, ըսաւ դիմակաւոր մարդուն, միայն վայրկեանի մը չափ, և յետոյ դարձեալ քուկդ եմ. բայց յիշէ՛ որ նշան ընելուս պիտի զարնես։

Այն ատեն Շարլ ծնրադրեց, խաչ հանեց, իր բերանը տախտակներուն մօտեցուց որպէս թէ դարակը համբուրել կ'ուզէր, յետոյ մէկ ձեռքով տախտակին և միւսովը կոճղին վրայ կըրթնելով.

—Լա Ֆէ՛ր կոմս, ըսաւ ֆրանսերէն, միթէ այդտեղ ես, և կրնա՞մ խօսիլ։

Այս ձայնն Աթոսին սրտին զարկաւ շիտակ և սառած դաշոյնի պէս ծակեց զայն։

—Այո՛, Վեհափա՛ռ, ըսաւ դողդոջուն ձայնով։

—Հաւատարի՛մ բարեկամ, վեհա՛նձն սիրտ, ըսաւ Թագաւորը, չկրցայ ազատիլ, պէտք չէր որ ազատէի։ Այժմ սրբապղծութիւն մը իսկ գործեմ, պիտի ըսեմ։ Այո՛ մարդոց խօսեցայ, Աստուծոյ հետ խօսեցայ, քեզ վերջինը կը խօսիմ։ Նուիրական դատած մէկ դատս պաշտպանելու համար, իմ նախահայրերուս աթոռը կորսնցուցի, և իմ որդւոցս ժառանգութիւնը վատնեցի։ Մէկ միլիոն ոսկի կը մնայ ինծի. Նիւկասլի բերդին շտեմարաններուն մէջ թաղեցի զանոնք նոյն քաղքէն հեռանալու միջոցիս։ Դուն միայն գիտես որ այն

սակը կայ։ Այն սակը գործածէ երբ ժամանակը յարմար դատես իմ անդրանիկ որդւոյս մեծագոյն լաւութեան համար, և այժմ Լա Ֆէ՛ր կոմս, երթաս բարով ըսէ ինծի։

—Երթաս բարեաւ. սուրբ և մարտիրոս վեհափառութիւն թօթօվեց Աթոս սարսափէն սառած։

Պահ մը լռութիւն տիրեց և նոյն պահուն Աթոսին այնպէս երևցաւ որ թագաւորը ոտք կ'ելնէր և դիրքը կը փոխէր։ Յետոյ լեցուն և հնչական ձայնով մը, այնպէս որ զայն լսեն ոչ միայն գլխատութեան բեմէն, այլ նաև հրապարակէն։

—Յիշեցէ՛ք, ըսաւ թագաւորը։

Ու երբ այս բառը կ'աւարտէր սակրի հարուած մը տախտակամածը դղրդեց, կերպասէն փոշին ելաւ և հէք ազատորդին կուրցուց։ Յետոյ, որպէս թէ մեքենական շարժմամբ մը աչքերն ու գլուխը կը վերցնէր, տաք կաթիլ մը իր ճակտին վրայ ինկաւ։ Աթոս ահ ու դող զգալով ընկրկեցաւ, նոյն պահուն, կաթիլները սև ջրվէժ մը դարձան, որ տախտակին վրայ ժայթքեց։

Աթոս ևս ծունր դրած՝ քանի մը վայրկեան իբրև յիմար և անզօր մնաց։ Քիչ ատենէն ամբոխին մրմունջը հետզհետէ նուազելով՝ գիտեց որ կը հեռանար. պահ մը ևս անշարժ, համր և անհարեկ կեցաւ։ Այն ատեն դառնալով՝ գնաց ու իր թաշկինակին ծայրը մարտիրոս թագաւորին արեանը մէջ թաթաւեց. յետոյ ըստ որում ժողովուրդը հետզհետէ կը հեռանար, վար իջաւ, սև սաւանը պատռեց, երկու ձիերու մէջ սահեցաւ, ժողովրդեան պէս հագուած՝ անոնց խառնուեցաւ, և ինքը ամէնէն առաջ պանդոկը հասաւ։

Երբ սենեակը ելաւ, ինքզինքը հայելիի մը մէջ դիտեց, տեսաւ որ իր ճակտին վրայ լայն կարմիր նշան մը կայ արեան, ձեռքը ճակտին տարաւ, թագաւորին արեամբը թաթաւուն քաշեց զայն և մարեցաւ։

ԻԵ.

ԴԻՄԱԿԱՒՈՐ ՄԱՐԴԸ

Թէև իրիկուան ժամը չորս՝ մութ գիշեր էր, ձիւնը թանձր և սառնագին կը վազէր։ Արամիս ալ տուն դարձաւ և Աթոսը գտաւ՝ եթէ ոչ հոգեսպառ, գէթ լիովին չքացած։

Իր բարեկամին առաջին խօսքը լսելուն՝ կոմսը այն թըմբրութենէն ուր ինկեր էր, սթափեցաւ։

—Լա՛ւ ուրեմն ըսաւ Արամիս, կոյր ճակատագրէն յաղթուեցանք։

—Յաղթուեցա՛նք, ըսաւ Աթոս։ Ազնիւ և դժբաղդ թագաւորը։

—Միթէ վիրաւորուա՞ծ ես, հարցուց Արամիս։

—Ո՛չ, իրն է այս արիւնը։

Կոմսը ճակատը սրբեց։

—Ո՞ւր էիր ուրեմն։

—Տախտակամածին վրայ՝ ուր զիս ձգեցիր։

—Եւ միթէ ամէն բան տեսա՞ր։

—Ո՛չ. բայց ամէն բան լսեցի։ Աստուա՛ծ չընէ որ իմ անցուցած վայրկեանիս նման վայրկեան մը անցընեմ նորէն։ Միթէ մազերս ճերմկցած չե՞ն։

—Ուրեմն գիտե՞ս որ բնաւ քովէն չհեռացայ։

—Մինչև վերջին ժամը ձայնդ լսեցի։

—Ահա՛ ինձ տուած չիգը, ըսաւ Արամիս, ահա՛ իր ձեռքէն առած խաչս, կը փափաքէր որ թագուհիին տրուին ասոնք։

—Եւ ահաւասիկ թաշկինակ մը զանոնք ծրարելու համար։

Եւ գրպանէն հանեց թագաւորին արեանը մէջ թաթխած թաշկինակը։

—Հիմակ ի՞նչ ըրին անոր հէք դիակը, հարցուց Աթոս։

—Քրոմվէլի հրամանաւ արքայական շքով պիտի վերցնեն։ Մարմինը կապարեայ դագաղի մը մէջ դրին. բժիշկները

ղայն զժամելու հոգ կը տանին, և երբ իրենց գործը աւարտեն, թագաւորը ազապատ ժամուն մը մէջ պիտի դրուի։

—Հեգնութի՜ւն, մրմռաց Աթոս տրտմագին, արքայական շուք նուիրել այն անձին զոր սպաննեցի՜ն։

—Ասկից կը հետևի ըսաւ Արամիս, որ թագաւորը կը մեռնի, բայց թագաւորութիւնը չմեռնիր։

—Ափսո՜ս, ըսաւ Աթոս, թերևս աշխարհիս վերջին ասպետական թագաւորն էր այն։

—Օ՜ն, մի՛ վշտանար, կո՛մս, ըսաւ խոշոր ձայն մը սանդուղին վրայ, ուր կը թնդար Բորթոսի լայն քայլերը, մենք ամէնքնիս մահկանացու ենք, իմ դժբաղդ բարեկամներս։

—Ուշ կը հասնիս, սիրելիդ իմ Բորթոս, ըսաւ Լա Ֆէր կոմսը։

—Այո՛, ըսաւ Բորթոս, ճամբուս վրայ մարդիկ կային որ զիս ուշացուցին։ Կը պարէին այն թշուառները։ Անոնցմէ մէկուն վիզէն բռնեցի և կարծեմ թէ փոքր ինչ սաստիկ սեղմեցի։ Ճիշդ նոյն պահուն զինեալ զօրքեր հասան։ Բարեբաղդաբար այն մարդը որու հետ մասնաւորապէս գործ ունէի, քանի մը վայրկեան չկրցաւ խօսիլ։ Ասկէ օգուտ քաղելով փոքրիկ փողոց մը նետուեցայ։ Այս փոքրիկ փողոցը աւելի փոքր փողոց մը տարաւ զիս։ Այն ատեն մոլորեցայ։ Լոնտոնի քաղաքը չեմ ճանչնար, անգլիերէն չեմ գիտեր. կարծեցի թէ երբեք չպիտի գտնեմ ձեզ, և սակայն ահաւասիկ եմ։

—Բայց տ'Արդանեանը, ըսաւ Արամիս, միթէ չի տեսա՞ր բնաւ և արդեօք գլխուն բա՞ն մը եկաւ։

—Ամբոխը մեզ զատեց, ըսաւ Բորթոս, և թէև շատ ճիգ ըրի անոր միանալու բայց չկրցայ։

—Ո՛հ, ըսաւ Աթոս դառնապէս, ես տեսայ զանիկա. ամբոխին առաջին կարգը կեցեր էր, և ամէն բան տեսնելու համար սքանչելի դիրք մը բռնած էր, և որովհետև, ճիշդը ըսելով, հետաքրքրական էր տեսարանը, կ'երևի թէ մինչև վերջը կեցած էր որ ամէն բան տեսնէ։

—Ո՛հ, Լա Ֆէ՛ր կոմս, ըսաւ հանդարտ ձայն մը, թէև

արտորանքով գալէն խղդուած կ'երևէր, միթէ դո՞ւն ես բացակաները զրպարտողը։

Այս յանդիմանութիւնը Աթոսին սիրտը ծակեց։ Սակայն այն ապուշ և վայրագ ժողովուրդին մէջ տ'Արդանեանին իր վրայ ըրած ներգործութիւնը խորին էր, բաւական սեպեց պատասխանելու։

—Քեզ չեմ զրպարտեր, բարեկամդ իմ։ Այստեղ քու հոգդ կը տանէինք, և յայտնեցի թէ ուր էիր։ Դուն չես ճանչնար Շարլ թագաւորը, օտարական մըն էր քեզի համար, և զանիկա սիրելու ստիպուած չէիր։

Եւ այս ըսելով իր ձեռքը բարեկամին երկնցուց։ Բայց տ'Արդանեան չտեսնելու զարկաւ Աթոսին շարժումը ու ձեռքը վերարկուին ներքև պահեց։

Աթոս իր ձեռքը կամաց մը իրեն քաշեց։

—Ո՛ւֆ, յոգնած եմ, ըսաւ տ'Արդանեան, և նստաւ։

—Բաժակ մը Պորտոյի գինի խմէ, ըսաւ Արամիս սեղանի մը վրայէն շիշ մը առնելով և բաժակ մը լեցնելով, խմէ քիչ մը պիտի սփոփուիս։

—Այո՛, խմենք, ըսաւ Աթոս, որ Կասքոնին դժգոհութիւնն զգալով՝ կ'ուզէր իր բաժակը անոր բաժակին զարնել, խմե՛նք և տ'ս զարշելի երկրէն հեռանանք։ Նաւակը մեզ կը սպասէ գիտէք, այս իրիկուն փախչինք, այստեղ ուրիշ գործ մը չունինք ընելու։

—Շատ կ'աճապարես, պարոն կոմս, ըսաւ տ'Արդանեան։

—Այս արիւնալի հողը իմ ոտքս կ'այրէ, ըսաւ Աթոս։

—Ձիւնը այդ ներգործութիւնը չունի իմ վրաս, պատասխանեց Կասքոնը հանդարտօրէն։

—Բայց հիմա որ թագաւորը մեռած է, ի՞նչ կ'ուզես որ ընենք, ըսաւ Աթոս։

—Այսպէս, պարոն կոմս, ըսաւ տ'Արդանեան անհոգութեամբ, ուրեմն չե՞ս կարծեր թէ Անգլիոյ մէջ դեռ բան մը կայ քեզ ընելու։

—Ո՛չինչ, ո՛չինչ, ըսաւ Աթօս, եթէ ոչ երկնային բարութեան վրայ կասկածիլ և իմ յատուկ ոյժս քամահրել։

—Լա՛ւ ուրեմն, ըսաւ տ'Արդանեան, ես ապիկար, ես անմիտ արիւնարբուս, ես որ գլխատուութեան բեմէն երեսուն քայլ անդին գացի կենալու որպէսզի աւելի լաւ տեսնեմ այն ինծ անծանօթ թագաւորին գլխուն իյնալը, այն թագաւորը որ ինչպէս ինծի կ'երեւի, ինծ հանդէպ անտարբեր պիտի ըլլար, ես պարոն կոմսին համամիտ չեմ... ես պիտի մնամ այս տեղ։

Աթօս սաստիկ դեղնեցաւ, իր բարեկամին ամէն մէկ սաստը սրտին խորը կը հնչէր։

—Ա՛հ, Լոնտոն պիտի մնա՞ս, ըսաւ Բորթօս տ'Արդանեանի։

—Այո՛, պատասխանեց, հապա դո՞ւն։

—Իրաւի, ըսաւ Բորթօս փոքր ինչ Աթօսի և Արամիսի առջեւ շփոթելով, ճշմարիտը եթէ մնաս, որովհետեւ քեզի հետ եկայ, քեզի հետ պիտի մեկնիմ, և քեզի մինակ չպիտի թողում այս զզուելի քաղաքին մէջ։

—Շնորհակալ եմ, իմ պատուական բարեկամս։ Ուրեմն քեզի փոքրիկ գործ մը ունիմ առաջարկելու, և զայն միասին պիտի ի գործ դնենք երբ պարոն կոմսը մեկնի, այս գործին գաղափարը միտքս ինկաւ երբ մեր դիտուած տեսարանին կը նայէի։

—Ի՞նչ խորհուրդ է ատ, ըսաւ Բորթօս։

—Այսինքն կ'ուզեմ իմանալ թէ ո՞վ էր այն դիմակաւոր մարդը որ այնքան յօժարութեամբ թագաւորին վիզը կտրելու ներկայացաւ։

—Դիմակաւոր մա՛րդ, գոչեց Աթօս, ուրեմն դահիճը իր գտնուած տեղէն խոյս չտուա՞ւ։

—Դահի՞ճը, գոչեց տ'Արդեանեան, դեռ եւս շտեմարանին մէջն է, ուր կարծեմ թէ մեր պանդոկապետին գինիի շշերուն հետ կը խօսակցի։ Բայց միտքս բան մը բերի...

Տ'Արդանեան դէպի դուռը գնաց։

—Մուսքդօ՛ն, ըսաւ ան։

—Պարո՛ն, պատասխանեց ձայն մը որ կարծես թէ երկրին խորէն կ'ելնէր։

—Թո՛յլ տուր կալանաւորիդ. ըսաւ տ'Արդանեան, ամէն ինչ լմնցաւ։

—Բայց ըսաւ Աթօս, ո՞վ է ուրեմն այն թշուառը որ իր թագաւորին վրայ ձեռք երկնցուց։

—Դահճութեան սիրահար անձ մը որ, սակայն՝ դիւրութեամբ տապարը կը գործածէ, վասնզի, ինչպէս որ կը յուսար, ըսաւ Արամիս, հարուած մը միայն իրեն բաւական եղաւ։

—Միթէ անոր երեսը չտեսա՞ր, հարցուց Աթօս։

—Դիմակ մը ունէր, ըսաւ տ'Արդանեան։

—Բայց դո՞ւն որ անոր քովը կը գտնուէիր, Արամիս։

—Ալեխառն մօրուք մը տեսայ միայն որ դիմակին տակէն կ'երեւէր։

—Ուրեմն տարւո՞ք մարդ մըն էր արդեօք, հարցուց Աթօս։

—Ո՛հ, ըսաւ տ'Արդանեան, այդ բան մը չնշանակեր։ Երբ մարդ մը դիմակ մը կը դնէ, կրնայ նաեւ կեղծ մօրուք մըն ալ դնել.

—Շատ կը ցաւիմ որ անոր ետեւէն չգացի, ըսաւ Բորթօս։

—Լա՛ւ ուրեմն, սիրելիդ իմ Բորթօս, ըսաւ տ'Արդանեան, ահա այդ խորհուրդը իրօք միտքս ինկաւ.

Աթօս ամէն բան իմացաւ և ոտքի ելաւ։

—Ներէ ինծ, տ'Արդանեան, ըսաւ ան, ես Աստուծմէ կասկածեցայ, կրնայի նաեւ քեզմէ կասկածիլ։ Ներէ՛ ինծ, բարեկամ։

—Հիմակ պիտի տեսնենք այդ բանը, ըսաւ տ'Արդանեան կէս ժպիտով մը։

—Լա՛ւ ուրեմն, ըսաւ Արամիս։

—Լա՛ւ, ուրեմն աւելցուց տ'Արդանեան, մինչդեռ կը դիտէի չէ թէ թագաւորին՝ ինչպէս որ կը կարծէ պարոն

կոմսը, վասնզի գիտեմ թէ ինչ է մեռնելու դատապարտեալ մարդ մը, և թէեւ այս տեսակ բաներու վարժ ըլլալ պէտք էի, միշտ ինծ ցաւ կը պատճառեն, կը նայէի դիմակաւոր դահիճը, ինչպէս որ ձեզի ըսի այն խորհուրդը միտքս ինկաւ, այսինքն իմանալ թէ ո՞վ էր դահիճը։ Արդ՝ որովհետեւ իրարու թերին իրարմով կը լեցնենք, և իրար օգնութեան կը կոչենք, ինչպէս որ մարդ իր երկրորդ ձեռքը առաջինին օգնութեան կը կանչէ, մեքենապէս բոլորտիքս կը նայէի տեսնելու համար թէ արդեօք Բօրթօս նոյն տեղը չէ՞, վասնզի, Արամիս, գիտեցի որ դուն թագաւորին քովն ես, և դուն ալ, կո՛մս, գլխատութեան տախտակամածին վրայ պիտի ըլլայիր։ Եւ ահա ասոր համար քեզի կը ներեմ, աւելցուց ան, ձեռքը Աթոսին կարկառելով, վասնզի շատ վիշտ կրած պիտի ըլլաս։ Ուստի չորս կողմս կը նայէի երբ աջ կողմս գլուխ մը տեսայ որ ճեղքուած էր և աղէկ դէչ սեւ կերպասով կարկտած։ «Տէ՛ր վկայ, ըսի իւրովի, կ'երեւի ինծ թէ այս իմ ձեռքի կարկտանս պիտի ըլլայ, և ես զանձը տեղ մը տեսած պիտի ըլլամ։» Արդարեւ, այս նոյնինքն անբաղդ սկովտիացին էր, Բարրիի եղբայրը, գիտէք, այն որու վրայ փորձեր էր Կրօսլօ իր ոյժը ցոյց տալու, և երբ զանիկա գտանք արդէն գլխուն կէսը միայն մնացեր էր։

—Ճի՛շդ, ըսաւ Բօրթօս, սեւ հաւերու տէր մարդն էր այն։

—Դուն ինքդ ըսիր, նոյն ինքն էր, իմ ձախ կողմս գտնուող մարդու մը նշաններ կ'ընէր. դարձայ և պարկեշտ Կրիմօն ճանչցայ, որ ինծի պէս դիմակաւոր մարդը կը կլլէր աչքերովը։

—Ո՛հ, ըսի անոր։ Արդ՝ որովհետեւ այս վանկը պարոն կոմսին գործածած համառօտ բացատրութիւնն է երբ Կրիմօի կը խօսի. Կրիմօ հասկցաւ որ զինքը կը կոչեն, և կարծես թէ զսպանակէ մը շարժեալ դարձաւ, ինքն ալ զիս ճանչցաւ. այն ատեն՝ դիմակաւոր մարդուն կողմը երկարելով իր մատը։

—Հէ՛յ, ըսաւ։ Եւ ասով ըսել կ'ուզէր. Միթէ տեսա՞ր։

—Կը հարցնե՞ս, պատասխան տուի անոր։

Կատարելապէս իրարու միտք հասկցեր էինք։

Այն ատեն սկովտացիիս կողմը դարձայ. այն ևս խօսուն աչքեր ունէր։

Համառօտ, ամէն բան լմնցաւ, ինչպէս որ գիտէք, շատ ազալի կերպով մը։ Ժողովուրդը հեռացաւ. փոքր առ փոքր մութը կը կոխէր. հրապարակին մէկ անկիւնը քաշուեր էի Կրիմօի և սկովտացիին հետ՝ որուն նշան ըրեր էի մեզի հետ միանալու, և անկից կը նայէի դահիճին, որ արքայական սենեակը մտնելով՝ հագուստը կը փոխէր։ Իրենն ալ անշուշտ արիւնաթաթախ եղեր էր։ Ցետոյ սեւ գլխարկ մը դրաւ գլուխը, վերարկուով մը փաթթուեցաւ և անհետ եղաւ։ Գուշակեցի որ դուրս պիտի ելլէր և դրան դիմացը վազեցի կեցայ։ Արդարեւ՝ հինգ վայրկեան ետք, տեսանք զայն որ սանդուղէն վար կ'իջնէր։

—Միթէ ետեւէն գացի՞ր, գոչեց Աթոս։

—Կը հարցնե՞ս, ըսաւ տ'Արդանեան, և հաւատա՛ որ շատ դիւրին բան չէր։ Ամէն վայրկեան գլուխը կը դարձընէր. այն ատեն կը ստիպուէինք պահուելու կամ անտարբեր կերպարանք մը ցուցնելու. կրնայի անոր վրայ քալել և զանիկա սպաննել, բայց եսասէր չեմ. և այս ալ առիթ մըն էր ձեզի համար, Աթոս և Արամիս, կը պատրաստէի, քիչ մը ձեզ մխիթարելու համար։ Ի վերջոյ՝ Միջնաքաղաքին ամէնէն օձուտ փողոցներէն կէս ժամու չափ շրջելէն ետք՝ առանձին փոքրիկ տնակ մը հասաւ, և ո՛չ շշուկ մը, ո՛չ լոյս մը կը յայտնէին թէ հոն մարդ կը բնակի։

Կրիմօ իր լայն սնապանէն հրացանակ մը հանեց։

—Հէ՞յ, ըսաւ ան, ցոյց տալով մարդը։

—Ո՛չ, ըսի անոր և ձեռքը կեցուցի։

—Ինչպէս որ ըսի, ես յատուկ խորհուրդս ունէի։

Դիմակաւոր մարդը ցած դրան մը առջեւ կեցաւ և բանալի մը հանեց. բայց կղպանքին մէջ դնելէն առաջ՝ դար-

ձու որ տեսնէ թէ ետեւէն մարդ եկող կա՞յ: Ծառի մը ետին պըլեր էի, Կրիմօ՝ քարի մը ետեւ, սկովտիացին՝ որ պահուըտելու համար տեղ մը չկար, ճամբան փորին վրայ ինկաւ:

Անտարակոյս այն մարդը, կարծեց թէ մինակ է, վարընգի բանալիին կոինչը լսեցի, դուռը բացուեցաւ և ինքը աներեւոյթ եղաւ:

—Թշուառականը, ըսաւ Արամիս, երբ դուք դարձաք, անիկա փախած պիտի ըլլայ, և զինքը չպիտի գտնենք:

—Փարատէ կասկածդ, Արամիս, ըսաւ տ'Արդանեան, զիս ասկուրին չես ճանչնար:

—Սակայն, ըսաւ Աթոս, ձեր բացակայութեան ատեն...

—Լա՛ւ, իմ բացակայութեանս ատեն իմ տեղս բռնելու համար միթէ Կրիմօն և սկովտիացին չկայի՞ն: Ան՝ տանը մէջ տասը քայլ առնելէն առաջ՝ ես տանը չըջանն ըրեր էի: Մէկ դրան առջեւ՝ այն դուռը ուսկից ներս մտեր էր, սկովտիացիս կեցուցի նշան ընելով անոր որ եթէ զինակաւոր մարդը դուրս ելնէ՝ պէտք էր անոր գացած տեղը երթալ՝ մինչդեռ նոյն ինքն Կրիմօ ալ անոր ետեւէն պիտի երթար և մեր եղած տեղը պիտի գար սպասելու: Վերջապէս՝ Կրիմօն երկրորդ դրան առջեւ կեցուցի, միեւնոյն պատուէրը տալով և ահաւասիկ դարձայ: Որսը չրջապատուած է, հիմակ ո՞վ կ'ուզէ տեսնել որսորդութեան արշաւը:

Աթոս տ'Արդանեանի գիրկը մէջ նետուեցաւ, որ իր ճակատը կը սրբէր:

—Բարեկամ, ըսաւ ան, արդարեւ շատ բարեսիրտ ես որ ինձ ներեցիր. անիրա՛ւ եմ, հարիւր անգամ անիրաւ, և սակայն պէտք էր ինձ քեզ ճանչնալ. բայց մեր սրտին խորը չար զգացում մը կայ որ անդադար կը տարակուսի:

—Հը՛մ, ըսաւ Բորթոս, արդեօք գիտուածով դահիճը Պ. Բրոմլէյ ինքն է, որ գործը ապահով կատարուելուն վըստահ ըլլալու համար, ինքը անձամբ կատարելու յանձն առած է:

—Ե՛հ, չեմ կարծեր. Պ. Բրոմլէյ դէր ու կարճ է, մինչդեռ մեր մարդը բարակ, ձիգ և մեծ է քան փոքրահասակ:

—Կարելի է դատապարտեալ զինուոր մըն է որ այս պայմանաւ իրեն ազատութիւն շնորհած են, ըսաւ Աթոս, ինչպէս որ ըրին դժբաղդ Շալէի համար:

—Ո՛չ, ո՛չ, շարունակեց տ'Արդանեան, հետեւակ զինուորի մը չափաւոր քալուածքը չունի ան, և ոչ ձիավարժի քայլափոխը: Այն մարդը թեթեւոտն կ'երեւար և ազնուական ընթացք մը ունէր: Եթէ չեմ սխալիր, մեր գործը ազատորդիի մը հետ պիտի ըլլայ:

—Ազատորդի՜ մը, գոչեց Աթոս, անկարելի՛ բան, բոլոր ասպետական կարգին անպատուութիւն մը պիտի ըլլար:

—Ազնուա՜ր որսորդութիւն, ըսաւ Բորթոս ծիծաղով մը որ ապակիները թնդացուց, ազնուա՜ր որսորդութիւն:

—Միթէ միտքդ միշտ մեկնի՞լ է, Աթոս հարցուց տ'Արդանեանի:

—Ո՛չ, պիտի մնամ, պատասխանեց ազատորդին սպառնալից շարժումով մը որ բարեգուշակ չէր այն անձին համար որու կ'ուղղուէր այն:

—Ուրեմն, սուրե՛րը, ըսաւ Արամիս, սուրե՛րը, և վայրկեան մը չկորսնցնենք:

Չորս բարեկամները իսկոյն իրենց ասպետական զգեստները հագան, իրենց թուրերը կապեցին, Մուսքըթոնն ու Պըլեզուան վեր ղրկեցին, և պատուէր տուին որ պանդոկապետին հետ հաշիւ տեսնեն և մեկնելու պահուն պատրաստ գըտնուին, շատ հաւանական ըլլալով որ նոյն իրիկունը իսկ Լօնտօնէն մեկնին:

Գիշերը աւելի եւս մութցեր էր. ձիւնը շարունակ կը վազէր և կարծես թէ արքայասպան քաղաքին վրայ ընդարձակ պատանքի պէս կը տարածուէր. գրեթէ ժամն ութն էր, հազիւ փողոցներու մէջ քանի մը անցորդ կը տեսնուէին, ամէն մարդ առանձնակի և մեղմիկ կը խօսակցէին օրուան պատահած սոսկալի դէպքերուն վրայ:

Չորս բարեկամները՝ իսկոյն իրենց վերարկուներով փաթթուած՝ Միջնաքաղաքին բոլոր հրապարակներէն և փողոցներէն անցան, Միջնաքաղաք մը որ ցորեկը այնքան եռուզեռ էր

և նոյն գիշերը բոլորովին անապատ դարձեր էր։

Տ'Արդանեան կ'առաջնորդէր զանոնք, յաճախ իր դաշոյնով պատերուն վրայ բրած խաչերը ճանչնալ փորձելով. բայց գիշերը այնքան մութ էր որ այն նշանները հազիւ կ'երևէին։

Սակայն տ'Արդանեան իր գլխուն մէջ այնպէս լաւ դրոշմեր էր ամէն անկիւնաքար, ամէն աղբիւր, ամէն նշան, որ կէս ժամու չափ քալելէ յետոյ՝ իր երեք ընկերներուն հետ՝ առանձին տանը առջևը հասաւ։

Տ'Արդանեան պահ մը կարծեց թէ Բարրիի եղբայրը աներևոյթ եղեր էր, բայց կը սխալէր. կորովի սկովտիացին, իր լեռներու սառոյցներուն վարժ՝ անկիւնաքարի մը կռթներ էր և հիմէն կոտրած որձանի մը պէս՝ եղանակին խստութեանց անզգայ՝ թողած էր որ ձիւնը վրան ծածկէ. բայց երբ չորս մարդիկ մօտ եկան՝ ոտք ելաւ։

—Օ՛հ ըսաւ Աթօս, ահաւասիկ Բարրի մը։ Ճշմարիտ Աստուած, քաջասիրտ մարդիկ կարծուածին չափ հազուագիւտ չեն, ասիկա քաջալերութիւն մըն է։

—Մեր սկովտիացիին համար պատիւներ հիւսելու չփութանք, ըսաւ տ'Արդանեան. կարծեմ թէ այս թշուառականը իր յատուկ հաշուին համար կը գտնուի հոս։ Լսած եմ որ Թուիթ գետէն անդին ծնող պարոնները շատ քինախնդիր են. թող վարպետ Կրօզլօն զգոյշ ըլլայ. թերևս ձախորդ քառորդ մը անցնէ եթէ անոր հանդիպի։

Տ'Արդանեան իր բարեկամներէն զատուելով սկովտիացիին մօտեցաւ և ինքզինքը ճանչցուց քաղաքավարութեամբ։

Յետոյ նշան բրաւ միւսներուն որ դէպի իր կողմը գան։

—Լա՛ւ ուրեմն, ըսաւ Աթօս անգլիերէն խօսելով։

—Ո՛չ ոք դուրս ելաւ, պատասխանեց Բարրիին եղբայրը։

—Լա՛ւ, Բորթօ՛ս, այս մարդուն հետ կեցիր, դու ևս Արամի՛ս։ Տ'Արդանեան զիս Կրիմօի քովը պիտի տանի։

Կոմսը՝ ոչ նուազ ճարպիկ քան սկովտիացին, գոգաւոր ուռենիի մը փակեր էր և տեսակ մը խուղ բրած էր զայն։

Տ'Արդանեան, ինչպէս որ միւս պահնորդի մասին՝ նոյնպէս Կրիմօի համար պահ մը կարծեց թէ դիմակաւոր մարդը դուրս ելեր և Կրիմօն անոր ետևէն գացեր էր։

Յանկարծ գլուխ մը երևցաւ և սուլելու թեթև ձայն մը հանեց։

—Ո՛հ, ըսաւ Աթօս։

—Այո՛, պատասխանեց Կրիմօ անտարբերութեամբ։

Ուռենիին մօտեցան։

—Լա՛ւ ուրեմն, հարցուց տ'Արդանեան, արդեօք մարդ մը դուրս ելաւ։

—Ո՛չ, այլ միայն մարդ մը ներս մտաւ, ըսաւ։

—Մա՞րդ թէ կին։

—Մարդ մը։

Տ'Արդանեան պահ մը մտածելէ յետոյ՝ խօսեցաւ։

—Հա՛, հա՛, ըսաւ անտարբեր կերպով, ուրեմն երկու հոգի են։

—Կը փափաքէի որ չորս հոգի ըլլային, ըսաւ Աթօս, գէթ երկուստէք կռիւը հաւասար կ'ըլլար։

—Կարելի է որ չորս հոգի են, ըսաւ տ'Արդանեան։

—Ի՞նչպէս։

—Արդեօք անոնց մտնելէն առաջ չկրնար ըլլալ որ ուրիշ մարդիկ ալ ներսը կը սպասէին։

—Կրնանք նայիլ, ըսաւ Կրիմօ պատուհան մը ցոյց տալով՝ որուն փեղկերէն լոյսի քանի մը նշոյլներ կը սպրդէին։

—Իրաւ է, ըսաւ տ'Արդանեան, միւսներն ալ կանչենք։

Եւ տունին շրջանն ըրին Բորթօսին և Արամիսին նշան ընելու համար որ գան։

Անոնք ալ շտապաւ վազեցին։

—Միթէ բան մը տեսա՞ք, ըսին անոնք։

—Ո՛չ, բայց հիմակ պիտի տեսնենք, պատասխանեց տ'Արդանեան Կրիմօն ցոյց տալով, որ պատին խորտուբորդ տեղուանքը ճանկռթելով՝ գետնէն հինգ վեց ոտք վեր ելեր էր։

Չորս բարեկամները իրարու մօտ եկան։ Կրիմօ կատուի

մը ճարպիկութեամբ կը շարունակէր իր ելքը, վերջապէս յաջողեցաւ ակիչներէն մէկը բանալ որոնք փեղկերը լարելու կը ծառայեն երբ բաց ըլլան. նոյն միջոցին ոտքը քիւի մը մէջ գտաւ որ յենակէտ մը ըլլալու բաւական էր. վասնզի նշան մը ըրաւ որմէ կ'իմացուէր թէ իր նպատակին հասեր է։ Այն ատեն իր աչքը փեղկին ճեղքին մօտեցուց։

—Լա՛ւ, ուրե՞մն, հարցուց տ'Արդանեան։

Կրիմօ իր գոց ձեռքը ցուցուց միայն երկու մատները բաց թողլով։

—Խօսէ՛, ըսաւ Աթօս, նշաններդ չենք տեսներ։ Քանի՞ հոգի են։

Կրիմօ ինքն իր վրայ ճիգ մը ըրաւ։

—Երկու, ըսաւ ան, մին իմ դիմացս է, միւսը ինձ կռնակը դարձուցած է։

—Լա՛ւ։ Եւ ո՞վ է դիմացդ գտնուողը։

—Այն մարդը որուն անցնիլը տեսայ։

—Միթէ կը ճանչնա՞ս զայն։

—Կարծեցի թէ ճանչցայ զայն, և կը սխալէի. գէր և կարճ մարդ մըն է։

—Ո՞վ է, հարցուցին միասին և ցած ձայնով մը չորս բարեկամները։

—Օլիվիէ Քրոմվէլ զօրավարը։

Չորս բարեկամները իրարու երես նայեցան։

—Հապա միւ՞սը, հարցուց Աթօս։

—Նիհար և բարձրահասակ։

—Դահիճն է այն ըսին միաբերան տ'Արդանեան և Արամիս։

—Կռնակը միայն կը տեսնեմ, վրայ բերաւ Կրիմօ. բայց սպասեցէ՛ք, շարժում մը կ'ընէ, կը դառնայ, և եթէ դիմակը վար առած է, պիտի կարենամ զանիկա տեսնել... Ա՛հ։

Կրիմօ՝ որպէս թէ սրտին հարուած մը առնէր, երկաթէ ակիչը թողուց և խուլ հառաչ մը հանելով կռնակի վրայ ինկաւ։ Բօրթօս զայն թեւերուն մէջ առաւ։

—Միթէ տեսա՞ր զայն, ըսին չորս բարեկամները՝

—Այո՛, ըսաւ Կրիմօ մազերը տնկուած և քրտնաթոր ճակատով։

—Նիհար և բարձրահասակ մա՞րդը, ըսաւ տ'Արդանեան։

—Այո՛, այն մարդը։

—Եւ ո՞վ է ըսաւ Բօրթօս։

—Ա՛յն է, ա՛յն է, թօթօվեց Կրիմօ մեռելի պէս տժգոյն և իր դողդոջուն ձեռքով իր տիրոջ ձեռքը բռնելով։

—Ո՞վ է այն՝ հարցուց Աթօս։

—Մորտօնդ... պատասխանեց Կրիմօ։

Տ'Արդանեան, Բօրթօս և Արամիս ուրախութեան աղաղակ մը արձակեցին։

Աթօս դէպի ետեւը քայլ մը նետեց և ձեռքը ճակտին տարաւ։

—Կա՛յր ճակատագիր, մրմռաց ան։

ՎԵՐՋ ԵՐՐՈՐԴ ՀԱՏՈՐԻՆ